

ԱԵԼԻՏՍԱ

Արտատպված է՝ *Ս. Տոլստոյ, Ինժեներ Գարինի հիպերբոլիդը: Աելիտա, վեպեր, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1982:*

Պարզև Մարտիրոսյանի թարգմանությամբ:

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր Արշալույսի փողոցում երևաց մի տարօրինակ հայտարարություն. դա գորշ թղթի կտոր էր՝ փակցված ամայի տան ծեփաթափ պատին: Ամերիկյան թերթի թղթակից Արչիբալդ Սքայլսը այդտեղով անցնելիս տեսավ հայտարարության առաջ կանգնած չթե մաքուր շրջագգեստով դեռատի բոկոտն մի կին: Սա շրթունքները շարժելով կարդում էր: Կնոջ հոգնած ու համակրելի դեմքը զարմանք չէր արտահայտում, աչքերն անտարբեր էին, կապույտ, փոքր-ինչ խենթավուն: Նա ալիքաձև մազերի փունջը տարավ ականջի ետևը, մայրից վերցրեց կանաչիով լի զամբյուղը և անցավ փողոցի մյուս կողմը:

Հայտարարությունն ավելի մեծ ուշադրության էր արժանի: Սքայլսը հետաքրքրությունից կարդաց այն, ապա ավելի մոտեցավ, ձեռքով շփեց աչքերը և մի անգամ էլ կարդաց:

— Twenty three,— վերջապես շշնջաց նա, որ պետք է նշանակեր. «Սատանան տանի ինձ՝ իմ եղած-չեղածով»:

Հայտարարության մեջ ասված էր.

«Ինժեներ Մ. Ս. Լոսը ցանկացողներին հրավիրում է իր հետ օգոստոսի 18-ին թոչել Մարս մոլորակը: Անձնական բանակցությունների համար ներկայանալ երեկոյան ժամ 6-ից մինչև 8-ը: Ժղանովյան գետափ, տուն 11, բակում»:

Սա գրված էր պարզ ու հասարակ ձևով, քիմիական սովորական մատիտով:

Սքայլսը ակամայից բռնեց իր զարկերակը. սովորականի պես էր: Նայեց քրոնոմետրին. 192... թվականի օգոստոսի 17-ն էր, ժամը չորսն անց տասը րոպե:

Սքայլսը հանգիստ արիությամբ ամեն ինչ սպասում էր այդ խելացնոր քաղաքում: Բայց ծեփաթափ պատին մեխած հայտարարությունը վերին աստիճանի հիվանդագին ներգործեց նրա վրա:

Կարմիր Արշալույսի ամայի փողոցում փչում էր քամին: Բազմահարկ տները, որոնց լուսամուտների մի մասը ջարդված էր, մի մասն էլ տախտակով մեխած, թվում էին անմարդաբնակ, ոչ մի գլուխ դուրս չէր նայում:

Դեռատի կինը, զամբյուղը մայրին դրած, փողոցի մյուս կողմից նայում էր Սքայլսին: Կնոջ համակրելի դեմքը խաղաղ էր ու հոգնած:

Սքայլսի այտերի մկանները շարժվեցին: Նա հանեց մի հին ծրար և գրեց Լոսի հասցեն: Նույն պահին հայտարարության առաջ կանգ առավ շարքային զինվորի համազգեստով, բարձրահասակ

ու լայնաթիկունք մի մարդ: Նա գլխաբաց էր, մահուդե վերնաշապիկի վրա գոտի չէր կապել, ոտքերին փաթաթաններ կային: Պարապությունից ձեռքերը դրել էր գրպանները: Ամրապինդ ծոծրակը ձգվեց, երբ նա սկսեց կարդալ հայտարարությունը:

— Մի տես՝ որտեղից է բռնացրել, Մա՛րա... — գոհունակությամբ ասաց նա և իր արևախանձ, անհոգ դեմքը դարձրեց Սքայլսի կողմը: Նրա քունքի վրա սպիտակին էր տալիս մի շեղ սպի: Աչքերը բաց շագանակագույն էին և այն կնոջ աչքերի պես հրացայտ: (Ռուսական աչքերում Սքայլսը վաղուց արդեն նկատել էր այդ կայծը և նույնիսկ դրա մասին գրել էր մի հոդվածում. «... Նրանց աչքերում բացակայում է որոշակիությունը, մերթ ծադր կա այնտեղ, մերթ խելահեղ վճռականություն և, վերջապես, իրենց գերազանցությունը ցույց տվող մի անբացատրելի արտահայտություն, որը խիստ հիվանդագին է ազդում եվրոպացու վրա»):

— Այ թե մարդ վեր կենա ու թռչի դրա հետ, հենց այնպես, — նորից խոսեց զինվորը պարզամտորեն ծիծաղելով ու միաժամանակ ոտից գլուխ հայացքով արագ չափեց Սքայլսին:

Հանկարծ նա կկոցեց աչքերը, և ժպիտը չքացավ երեսից: Նրա ուշադրությունը գրավեց փողոցի մյուս մայթին, գամբյուղի մոտ անշարժ կանգնած կինը:

— Մաշա, ի՞նչ ես կանգնել: (Կինն արագ աչքով արեց): Դե, տուն կգնայիր, էլի:

Մաշան հազիվ շարժեց փոշոտ, մանրիկ ոտքերը, խորը շունչ քաշեց, կախեց գլուխը:

— Գնա՛, գնա՛, ես շուտ կգամ:

Կինը վերցրեց գամբյուղն ու գնաց: Զինվորը Սքայլսին ասաց.

— Ջորացրվել եմ որպես պահեստային՝ վիրավորվելու և կոնտուզիայի պատճառով: Շրջում ու հայտարարություններ եմ կարդում. սարսափելի է ձանձրույթը:

— Դուք ուզում եք գնալ այս հայտարարության ետևի՞ց, — հարցրեց Սքայլսը:

— Անպայման կգնամ:

— Բայց չէ՞ որ դա ցնդաբանություն է, ինչպե՞ս կարելի է հիսուն միլիոն կիլոմետր թռչել անօդ տարածության մեջ:

— Ինչ խոսք, որ հեռու է:

— Դա խաբեություն է կամ զառանցանք:

— Ամեն ինչ կարող է լինել:

Հիմա էլ Սքայլսն էր կկոցած աչքերով գնում զինվորին, որը նրան նայում էր այնպիսի հայացքով, որի մեջ թե՛ ծաղր կար և թե՛ իր գերազանցությունը ցույց տվող արտահայտություն: Սքայլսը կատաղեց բարկությունից և քայլերն ուղղեց դեպի Նևան: Գնում էր ինքնավստահ ու լայն-լայն քայլերով: Փոքրիկ զբոսայգում նա նստեց նստարանին և ձեռքը տարավ գրպանը, որտեղ հենց այնպես լցված էր թութոնը, ինչպես դա պատահում է հին ծխողների և գործարար մարդկանց մոտ: Բթամատի մի շարժումով լցրեց ծխամորձը, ծուխը ներս քաշեց և երկարեց ոտքերը:

Աղմկում էին պուրակի դարավոր լորինները: Օդը տաք էր ու տամուկ: Ավազաթմբին, որը միակն էր պուրակում, նստել էր պտավոր, կեղտոտ վերնաշապկով մի փոքրիկ տղա: Ըստ երևույթին, նա

վաղուց էր այդտեղ: Քամին մերթ ընդ մերթ բարձրացնում էր նրա շեկ ու փափուկ մազերը: Տղան բռնել էր բարակ պարանի մի ծայրից, որի մյուս ծայրը կապած էր ծեր ու գզգզված ագռավի ոտքին: Ագռավը նստել էր դժգոհ ու զայրացկոտ և ինչպես տղան, նայում էր Մքայլսին:

Հանկարծ, մի ակնթարթ, ասես թե մթագնեց Մքայլսի ուղեղը, և գլուխն սկսեց պտտվել: Արդյոք երազի մեջ չի՞ տեսնում այս բոլորը... Տղա, ագռավ, ամայի տներ, դատարկ փողոցներ, անցորդների տարօրինակ հայացքներ և մեխերով կպցրած հայտարարություն, որը հրավիրում է թռչել դեպի տիեզերական տարածություններ:

Մքայլը խորը ներս քաշեց թունդ ծխախոտի ծուխը, բաց արեց Պետրոզբաղի հատակագիծը և նրա վրա ծխամորձի ծայրով փնտրեց գտավ Ժդանովյան գետափը:

ԼՈՍԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Մքայլը մտավ ժանգոտ երկաթներով և ցեմենտի տակառիկներով լցված մի բակ: Երկաթալարերի խճճված կծիկների ու հաստոցների կոտրված մասերի արանքում, աղբակույտերի մեջ, նվազ խոտեր էին աճել: Բակի խորքում, բարձր մարագի փոշոտ լուսամուտների մեջ անդրադարձել էր մայրամուտը: Մարագի փոքրիկ դուռը կիսաբաց էր, շեմքին մի մարդ էր պզգզել և խառնում էր դույլի մեջ լցված ներկը: Մքայլսի այն հարցին, թե կարելի է տեսնել ինժեներ Լոսին, նա գլխով ցույց տվեց մարագի ներսը: Մքայլը ներս մտավ:

Մարագը թույլ էր լուսավորված, գծագրերով ու գրքերով լեցուն սեղանի վրա, թիթեղյա կոնաձև լուսամփոփի մեջ վառվում էր էլեկտրական լամպը: Մարագի խորքում, մինչև առաստաղը, փայտ էր դարսված: Հենց այստեղ էլ մի բանվոր բորբոքում էր բոցկլտացող քուրան: Խիտ փայտամածի արանքից փայլվում էր բազմաթիվ կտորներից պատրաստած մետաղյա գնդաձև մի մարմին: Դարբասի փեղկի բացվածքից երևում էին վերջալույսի ծիրանագույն շողերը և ծովից բարձրացող ամպերի քուլաները:

Քուրան բորբոքող բանվորը կիսաձայն ասաց.

— Ձեզ մոտ են եկել, Մստիսլավ Սերգենիչ:

Փայտերի ետևից հայտնվեց միաջահասակ, ամրակազմ մի մարդ: Նրա խիտ, գդակ հիշեցնող մազերը սպիտակ էին: Դեմքը երիտասարդի էր, սափրված, բերանը գեղեցիկ էր, խոշոր աչքերը՝ սևեռուն, անթարթ, որ ասես առաջ էին թռչում: Նա հագել էր կուրծքը բաց թողած քաթանե աղտոտվերնաշապիկ, կարկատած շավար, որը վերևից կապել էր թելով: Նրա ձեռքին կար մի կեղտոտված գծագիր: Մոտենալիս նա փորձում էր կռճկել վերնաշապիկի գոյություն չունեցող կռճակը:

— Դուք հայտարարությո՞ւնն եք կարդացել: Թոչե՞լ էք ուզում,— հարցրեց նա խուլ ձայնով և, Մքայլսին ցույց տալով սեղանի մոտի աթոռը, նստեց նրա դիմաց: Ցած դրեց գծագիրը և սկսեց լցնել ծխամորձը:

Սա էլ հենց Մստիսլավ Սերգենիչ Լոսն էր:

Աչքերը գետնին հառնելով, նա վառեց լուցկին, կրակը ներքևից լուսավորեց նրա առնական դեմքը, բերանի մոտի կնճիռները, լայն քթանցքերը, երկար ու թուխ թարթիչները: Մքայլը գոհ մնաց տեսածից: Նա բացատրեց, որ թռչելու միտք չունի, բայց քանի որ կարդացել է Կարմիր Արշալույսի

փողոցում փակցված հայտարարությունը, պարտք է համարում իր ընթերցողներին ծանոթացնել միջուկորակային հաղորդակցության այդ չափազանց արտասովոր և սենսացիոն նախագծին:

Լուսը լսում էր, նրանից չհեռացնելով իր վճիտ, անթարթ աչքերը:

— Ափսոս, որ դուք չեք ուզում ինձ հետ թոչել, ափսոս,— գլուխը տնքտնքացրեց նա,— մարդիկ խրտնում են ինձանից, ինչպես խելագարից: Չորս օր հետո ես կթողնեմ երկիրը, բայց մինչև հիմա ինձ ուղեկից չեմ կարողանում գտնել:— Նա նորից վառեց լուցկին, բաց թողեց ծխի մի քուլա:— Ի՞նչ տվյալներ են ձեզ պետք:

— Ձեր կենսագրության ամենաաչքի ընկնող կողմերը:

— Դա ոչ ոքի պետք չէ,— ասաց Լուսը,— ուշագրավ ոչինչ չկա: Գրել, կարդալ եմ սովորել վերջին կուպեկներով, տասներկու տարեկանից ապրել եմ սեփական քրտինքով: Երիտասարդություն, ուսման տարիներ, աշխատանք, ծառայություն. ոչ մի բան չկա, որ հետաքրքրական լինի ձեր ընթերցողների համար, ուշագրավ ոչինչ չունեմ, բացի... Լուսը հանկարծ խոժոռեց դեմքը, ցայտուն կերպով գծագրելով բերանի մոտի կնճիռները:— Այսպիսի բան է՝ ը... Այս մեքենայի վրա,— նա ծխամորձով ցույց տվեց փայտամածը,— վաղուց եմ աշխատում: Կառուցումն սկսել եմ երկու տարի առաջ: Ահա բոլորը:

— Մոտավորապես քանի՞ ամսում եք մտադիր կտրել Երկրի և Մարսի միջև եղած տարածությունը,— հարցրեց Սքայլսը՝ նայելով մատիտի ծայրին:

— Ինը կամ տասը ժամում կարծում եմ, ոչ ավել:

— Պահո՞ւ,— շարժելով այտուկները՝ վրա բերեց Սքայլսը և կարմրեց:— Ես ձեզ շատ երախտապարտ կլինեի,— ավելացրեց նա կեղծ սիրալիրությամբ,— եթե դուք վստահություն ունենայիք իմ նկատմամբ և լուրջ վերաբերմունք՝ դեպի մեր ինտերվյուն:

Լոսն արմունկները դրեց սեղանին, իրեն պատեց ծխախոտի ծխով, որի միջից փայլում էին նրա աչքերը:

— Օգոստոսի 18-ին Մարսը կմոտենա Երկրին քառասուն միլիոն կիլոմետրով: Այդ տարածությունը ես պետք է թոչեմ: Ինչի՞ց է դա բաղկացած: Առաջինը՝ երկրագնդի մթնոլորտի բարձրությունից, որը յոթանասունհինգ կիլոմետր է: Երկրորդը՝ մոլորակների միջև եղած անօդ տարածությունից, որը քառասուն միլիոն կիլոմետր է: Երրորդը՝ Մարսի մթնոլորտի բարձրությունից, որը կազմում է վաթսուներեց կիլոմետր: Իմ թռիչքի համար կարևոր է միայն մթնոլորտի այդ հարյուր քառասուն կիլոմետրը:

Նա վեր կացավ, ձեռքերը խոթեց շավարի գրպանները: Գլուխը կորավ խավարի ու ծխի մեջ, լուսավորված էին միայն բաց կուրծքը և մինչև արմունկները քշտած մագոտ ձեռքերը:

— Սովորաբար թռիչք են համարում թռչունի, սավառնակի, ընկնող տերևի թռիչքը: Բայց սա ոչ թե թռիչք է, այլ լող՝ օդի մեջ: Իսկական թռիչքը անկումն է, երբ մարմինը շարժվում է իրեն հրող ուժի ազդեցության տակ: Օրինակ՝ հրթիռը: Անօդ տարածության մեջ, ուր դիմադրություն չկա, ուր թռիչքին ոչինչ չի խանգարում, հրթիռը կշարժվի վերաբնակարան արագությամբ, ըստ երևույթին, այնտեղ ես կարող եմ մոտենալ լույսի արագությանը, եթե չխանգարեն մագնիսական ներգործությունները: Իմ ապարատը կառուցված է հենց հրթիռի սկզբունքով: Երկրի և Մարսի մթնոլորտում ես թոչելու եմ հարյուր քառասուն կիլոմետր: Վերելքով ու վայրէջքով դա ինձնից կլիալի

մեկ ու կես ժամ: Մեկ ժամ ինձ հարկավոր է, որպեսզի դուրս գամ Երկրի ձգողականությունից: Այնուհետև, անօդ տարածության մեջ ես կարող եմ թռչել ցանկացած արագությամբ: Բայց երկու վտանգ կա. չափից դուրս արագությունից կարող են պայթել արյունատար անոթները, և երկրորդ, եթե ես հսկայական արագությամբ մտնեմ Մարսի մթնոլորտը, ապա այնպիսի ուժգին հարված կստանամ, որ կարծես թե խրվում եմ ավազի մեջ: Մի ակնթարթում ապարատը և այն ամենը, ինչ որ կա նրա մեջ, գազի կվերածվեն: Միջաստղային տարածությունում սլանում են դեռ չծնված կամ արդեն մեռած աշխարհների, մոլորակների բեկորներ: Մտնելով օդի մեջ, նրանք վայրկենապես վառվում են: Օդը գրեթե անթափանց զրահի նման է: Թեև Երկրի վրա նա, ինչպես երևում է, արդեն մի անգամ ձեռքվել է:

Լուսը գրպանից հանեց ձեռքերը, դրեց սեղանին, լամպի տակ, և մատները բռունցք արեց:

— Միբիբում, հավերժական սառույցների մեջ, ես մամոնտներ եմ հայտնաբերել, որոնք սատկել են երկրաշարժերի ժամանակ: Նրանց ատամների արանքում խոտ կար: Նրանք արածել են այնտեղ, որտեղ հիմա սառույցներով է պատած: Ես կերել եմ նրանց միսը: Դրանք դեռ նեխած չէին, որովհետև սառել էին մի քանի օրում և մնացել ձյան տակ: Երևի երկրագնդի առանցքի շեղվելը տեղի է ունեցել ակնթարթորեն: Երկիրը բախվել է երկնային մարմինների հետ, կամ ունեցել ենք երկրորդ արբանյակը, որը լուսնից փոքր է եղել: Մենք ձգել ենք նրան, և նա ցած է ընկել, ջարդել երկրագնդի կեղևը ու շեղել առանցքը: Կարող է պատահել որ հենց այդ հարվածից էլ Ատլանտյան օվկիանոսում ոչնչացել է Աֆրիկայից դեպի արևմուտք ընկած մայրցամաքը: Ուրեմն, որպեսզի չփոշիանամ Մարսի մթնոլորտը մտնելիս, ես պետք է կարողանամ արգելակել արագությունը: Դրա համար էլ անօդ տարածությունում կատարվելիք ամբողջ թռիչքը ինձնից կխլի վեց, յոթ ժամ: Մի քանի տարի հետո Մարս մեկնելը ավելի հեշտ կլինի, քան Մոսկվայից Նյու Յորք թռչելը:

Լուսը հեռացավ սեղանի մոտից և միացրեց հոսանքը:

Լսվեց մի թույլ չխկոց , և թշալով վառվեցին աղեղային լամպերը: Սքայլը տախտակե պատերի վրա տեսավ գծագրեր, դիագրամներ, քարտեզներ, օպտիկական ու չափիչ գործիքների թարեքներ, զրահագզեսուներ, պահածոների կույտեր, մորթե հագուստեղեն և մարագի անկյունում եռոտանու վրա դրված աստղադիտակը:

Լուսն ու Սքայլը մոտեցան փայտերով շրջապատված մետաղյա ձվաձև գնդին: Սքայլը աչքաչափով որոշեց, որ ձվաձև ապարատի բարձրությունը կլինի ոչ պակաս, քան ութ ու կես մետր, իսկ տրամագիծը՝ վեց մետր: Դրսի կողմից ապարատի միջնամասով անցնող պողպատե գոտին վահանակի նման ոլորածն իջնում էր ներքևի մասը: Դա պարաշյուտային արգելակն էր, որը մթնոլորտի մեջ ընկնելիս մեծացնելու էր ապարատի դիմադրողականությունը: Պարաշյուտի տակ գտնվում էր երեք փոքրիկ, կլոր դուռ, դրանք մուտքի դռնակներ էին: Ձվաձև ապարատի ցածի մասը վերջանում էր նեղ բկով, որը փաթաթված էր հակառակ կողմեր ձգվող կրկնակի պողպատալարով: Դա բուֆերն էր, որը գետնին կպչելու ժամանակ մեղմացնելու էր հարվածը...

Մատիտը թխկթխկացնելով մետաղյա եզրակարերին, Լուսն սկսեց բացատրել միջմոլորակային նավի մանրամասնությունները: Ապարատը կառուցված էր առաձգական ու դժվարահալ մետաղից, ներսից պինդ ամրացված էր երկաթաձողերով ու թեթև կցակապերով: Դա արտաքին պատյանն էր, որի ներսում տեղավորված էր կաշվե, թաղիքե և ռեզինե վեց շերտանոց երկրորդ պատյանը: Այս երկրորդ կաշվեպատ ձվի մեջ տեղավորված էին դիտումների ու շարժման սարքերը, թթվածնով լի բաքերը, ածխաթթու կլանող արկղերը, ու պարենի դատարկ պարկերը: Դիտումների համար հարմարեցված էին ապարատի ներսից դուրս եկող հատուկ «աչքեր», որոնք իրենցից ներկայացնում էին պրիզմայաձև ապակիներ ունեցող կարճ խողովակներ:

Շարժիչ մեխանիզմը տեղավորված էր ապարատի ներքևի մասում, որը փաթաթված էր մետաղալարով: Բուկը ձուլված էր աստղաբաշխական բրոնզի ամրությանը գերազանցող մետաղից և ներսից ուներ ուղղահայաց ակոսներ: Այդ ակոսները դեպի վեր գնալով լայնանում էին և միանում այսպես կոչված պայթեցնող խցերին: Ամեն մի խցում ընդհանուր մագնետոյից անցկացված էր կայծ արձակող մոմ և սնուցիչ խողովակ: Ինչպես որ մոտորի գլանների մեջ բենզին է լցվում, ճիշտ այդպես էլ պայթեցնող խցերը սնվում են ուլտրալիդիտով, դա անսովոր ուժ ունեցող պայթուցիկ նյութերի մանր փոշի է, որն ստացվել է Պետրոգրադի N գործարանի լաբորատորիայում:

Ուլտրալիդիտի ուժը գերազանցում էր այդ բնագավառում եղած բոլոր հանրահայտ նյութերին: Պայթման կոնը անչափ նեղ է: Որպեսզի այդ կոնի առանցքը համընկնի բկի ուղղահայաց ակոսների առանցքներին, պայթեցման խուց եկող ուլտրալիդիտը բաց է թողնվում մագնիսական դաշտի միջով:

Ընդհանուր գծերով այսպիսին էր շարժիչ մեխանիզմի սկզբունքը. պարզ ասած դա հրթիռ էր: Ուլտրալիդիտի պաշարը հարյուր ժամվա համար էր: Պակասեցնելով կամ ավելացնելով մեկ վայրկյանում կատարվող պայթյունների թիվը, կարելի էր կարգավորել ապարատի վերելքի և վայրէջքի արագությունը: Ապարատի ներքևի մասը զգալիորեն ծանր էր վերևի մասից, դրա համար էլ, ընկնելով մոլորակների ձգողական ոլորտում, ապարատն անընդհատ կպտտվեր իր բկի շուրջը:

— Ո՞ւմ միջոցներով է կառուցված ապարատը, — հարցրեց Սքայլսը:

Լոսը փոքր-ինչ զարմացած նայեց նրան:

— Հանրապետության միջոցներով:

Լոսն ու Սքայլսը վերադարձան սեղանի մոտ: Կարճատև լռությունից հետո Սքայլսը անվստահորեն հարցրեց.

— Դուք հույս ունեք Մարսի վրա կենդանի էա՞կ գտնել:

— Դա ես կտեսնեմ օգոստոսի 19-ին, ուրբաթ օրն առավոտյան:

— Ճամփորդական տպավորությունների յուրաքանչյուր տողի համար ես ձեզ կտամ տասը դոլար: Որպես ավանս՝ պատվիրում եմ վեց ֆելիետոն՝ երկուհարյուրական տողից, չեկը կարող էք ստանալ Ստոկհոլմում: Համաձա՞յն եք:

Լոսը ծիծաղեց և գլխի շարժումով համաձայնության նշան արեց: Սքայլսը նստեց սեղանի անկյունում չեկը գրելու:

— Ափսո՛ս, ափսո՛ս, որ դուք չեք ուզում թռչել ինձ հետ: Ախր դա ըստ էության, այնքան մոտ է, ավելի մոտ, քան, օրինակ՝ ոտքով մինչև Ստոկհոլմ գնալը, — ասաց Լոսը, ծխամորձից բաց թողնելով թանձր ծուխը:

ՈՒՂԵԿԻՑԸ

Լոսը կանգնել էր մենակ՝ ուսով հենված բաց դարբասի կողափայտին: Ծխամորձը հանգել էր:

Դարբասից մինչև Ժդանովյան գետափ ամայի էր: Գետի մյուս կողմում կանգնած էին Պետրովյան կղզու ծառերը, որոնց ետևում դանդաղ մարում էր տխուր վերջալույսը: Մայրամուտի շողերով երիզված երկարավուն ամպերը նման էին երկնքի կանաչավուն ջրերում ընկած կղզյակների: Ամպերից վեր կանաչին էր տալիս երկինքը, որտեղ վառվում էին մի քանի աստղեր: Լռություն էր տիրում հինավուրց Երկրում:

Բանվոր Կուզմինը մի անգամ էլ խառնեց դույլի մեջ լցրած ներկը, ապա ինքն էլ մոտեցավ բաց դարբասին ու վառվող ծխախոտը նետեց խավարի մեջ:

— Դժվար է բաժանվել Երկրից,— ասաց նա ցածր ձայնով:— Անգամ տնից մարդ դժվարությամբ է բաժանվում: Գյուղից մինչև երկաթգիծ ես գնում, մի տասն անգամ ետ ես նայում: Թեև խրճիթդ ծղոտով է ծածկված, բայց էլի քոնն է, քո օջախը: Երկրից հեռանալը, օ՛, շատ դժվար բան է...

— Թեյը եռում է,— ասաց մյուս բանվորը՝ Խոխլովը,— Կուզմի՛ն, արի թեյ խմենք:

— Այդպե՛ս,— հառաչեց Կուզմինը և գնաց դեպի հնոցը: Մռայլադեմ Խոխլովն ու Կուզմինը նստեցին հնոցի մոտ դրված արկղերին և սկսեցին թեյ խմել: Նրանք զգուշությամբ կտրում էին հացը, ոսկրափշերից մաքրում ապխտած ձուկը և հանգիստ ծամում: Կուզմինը, տմբտմբացնելով մորուքը, կիսաձայն ասաց.

— Ափսոսում եմ նրան: Այդպիսի մարդիկ հիմա գրեթե չկան:

— Իսկ դու հիմիկվանից սուգ մի անի:

— Ինձ մի օղաչու պատմել է, որ ինքը ութ վերստ վեր էբարձրացել, և չնայած ամառ է եղել, բայց ապարատում յուղը սառել է: Բա որ ավելի բարձր թռչեն: Այնտեղ ցուրտ է, մուր ու խավար:

— Իսկ ես ասում եմ, որ հիմիկվանից սուգ մի անի,— մռայլ կրկնեց Խոխլովը:

— Նրա հետ ոչ ոք չի ուզում թռչել, չեն հավատում: Երկու շաբաթ է արդեն, որ հայտարարությունը իզուր կախված է մնացել:

— Իսկ ես հավատում եմ:

— Տեղ կհասնի՞ օ՛:

— Հենց բանն էլ այն է, որ կհասնի: Այ, էն ժամանակ Եվրոպայում կխառնվեն իրար:

— Ո՞վ կխառնվի:

— Ո՞վ, ով որ խառնվի: Դե ա՛ն, կե՛ր... Մարսը ո՞ւմն է, սովետներինը:

— Հա, ա՛յ թե լավ բան կլինի:

Կուզմինն ավելի հարմար տեղավորվեց արկղի վրա: Լոսը մոտեցավ, նստեց ու վերցրեց թեյի բաժակը, որից դեռ գոլորշի էր բարձրանում:

— Խոխլով, չե՞ք համաձայնվի ինձ հետ թռչել:

— Ոչ, Մստիսլավ Սերգենիչ,— պատասխանեց Խոխլովը,— չեմ համաձայնվի, վախենում եմ:

Լոսը ծիծաղեց, մի կուր թեյ խմեց ու դարձավ Կուզմինի կողմը:

— Իսկ դո՞ւք, սիրելի բարեկամ:

— Մստիսլավ Սերգենիչ, ես ուրախությամբ կթռչեի, բայց կինս հիվանդ է... բա երեխաներս, ինչպե՞ս թողնեմ նրանց:

— Այդպե՛ս... Ինչպես երևում է մենակ եմ թռչելու,— ասաց Լոսը, ցած դրեց դատարկ բաժակը, ափով սրբեց շրթունքները և շարունակեց.— շատ քիչ մարդիկ են ուզում հեռանալ Երկրից:— Նա նորից ծիծաղեց՝ օրորելով գլուխը:— Երեկ մի օրիորդ էր եկել: Կարդացել էր հայտարարությունը: «Լավ, ես ձեզ հետ կթռչեմ,— ասում էր նա,— տասնինը տարեկան եմ, երգում եմ, պարում, կիթառ նվագում: Երկրի վրա այլևս ապրել չեմ ուզում, հոգնել եմ հեղափոխություններից: Վերադարձի համար թույլտվություն պետք չէ՞ »: Երբ վերջացավ մեր խոսակցությունը, օրիորդը նստեց ու սկսեց լաց լինել: «Դուք ինձ խաբեցիք,— ասում էր նա,— ես կարծում էի, թե ավելի մոտ տեղ ենք թռչելու»: Հետո ներկայացավ բամբակյան, քրտնքոտ ձեռքերով մի երիտասարդ: Նա ասում էր. «Դուք ինձ ապուշի տե՞ղ եք դնում, ինչ է, հնարավոր չէ Մարս թռչել: Ինչի՞ հիման վրա եք նման հայտարարություններ կախում պատից»:

Հազիվհազ հանգստացրի նրան:

Լոսն արմունկով հենվեց ծնկներին և սկսեց նայել վառվող ածուխներին: Նրա դեմքը այդ րոպեին խիստ հոգնածություն էր արտահայտում, իսկ ճակատը կնճռոտված էր: Երևում էր, որ կամքի երկարատև լարումից հետո նա այժմ հանգստանում էր ամբողջ էությանը: Կուզմինը գնաց ծխախոտ բերելու: Խոխվովը հազալով ասաց.

— Մստիսլավ Սերգենիչ, մի՞ թե թռչելը ձեզ համար սարսափելի չէ:

Լոսը քարածխի կրակից տաքացած աչքերը դարձրեց նրա կողմը:

— Ոչ, ինձ համար սարսափելի չէ: Ես համոզված եմ, որ հաջող վայրէջք կկատարեմ: Իսկ անհաջողության դեպքում հարվածը կլինի ակնթարթային և ոչ մի ցավ չեմ զգա: Մարսափելու ուրիշ բան կա: Պատկերացրեք, որ իմ հաշվումները սխալ են դուրս գալիս, և ես չեմ ընկնում Մարսի ձգողականության մեջ, այլ անցնում եմ նրա կողքով: Վառելանյութի ու թթվածնի պաշարը ինձ երկար ժամանակ կբավարարի: Եվ ահա ես թռչում եմ խավարի մեջ: Իսկ առջևումս մի աստղ է փայլում: Հազար տարի հետո իմ փայտացած դիակը կընկնի նրա հրեղեն օվկիանոսը: Բայց այդ հազար տարվա ընթացքում խավարի մեջ կթռչի իմ դիակը: Իսկ կենդանությանս ժամանակ էլ միշտ պիտի փակված մնամ այդ տուփի մեջ, ամբողջ տիեզերքում մեն-մենակ, անհույս ու լքված: Մահը չէ, որ սարսափելի է, այլ մենակությունը, անհույս մենակությունը հավիտենական խավարի մեջ: Սա, իրոք, սարսափելի է: Բոլորովին չեմ ուզում մենակ թռչել:

Լոսն աչքերը կկոցելով, նայեց ածուխներին ու լռեց: Շեմքին երևաց Կուզմինը և կիսաձայն ասաց.

— Մստիսլավ Սերգենիչ, ձեզ մոտ մարդ է եկել:

— Ո՞վ է,— Լոսը ոտքի կանգնեց:

— Ինչ-որ մի կարմիրբանակային է հարցնում:

Կուզմինի ետևից մարագ մտավ բլուզը բաց թողած այն մարդը, որը Կարմիր արշալույսի փողոցում կարդում էր հայտարարությունը: Նա գլխի թեթևակի շարժումով բարևեց Լոսին, մի հայացք գցեց փայտամածի կողմը և մոտեցավ սեղանին:

— Ձեզ ուղեկի՞ց է պետք:

Լոսն աթոռը մոտեցրեց նրան և նստեց դիմացը:

— Այո, ուղեկից եմ փնտրում: Մարս պիտի թռչեմ:

— Գիտեմ, հայտարարության մեջ ասված էր: Քիչ առաջ ինձ ցույց տվին այդ աստղը, ինչ խոսք, որ հեռու է: Պայմաններն ինչպիսի՞ք են, ուզում եմ իմանալ, փող-մող տալի՞ս եք:

— Ընտանիք ունե՞ք:

— Ամուսնացած եմ, երեխաներ չունեմ:

Անձանոթը եղունգներով գործնականորեն թխկթխկացնում էր սեղանին և հետաքրքրությամբ նայում շուրջը: Լոսը համառոտակի ծանոթացրեց թռիչքի պայմաններին և նախագոյշացրեց կյանքը վտանգի ենթարկելու հնարավորության մասին: Նա առաջարկեց ապահովել ընտանիքը և որպես ռոճիկ նախապես փող ու մթերք տալ: Կարմիրբանակայինը գլխով էր անում, համաձայնվում, բայց լսում էր ցրված:

— Իսկ ձեզ հայտնի՞ է,— հարցրեց նա,— այնտեղ մարդի՞կ են ապրում, թե՞ հրեշներ:

Լոսն ամուր քորեց ծոծրակն ու ծիծաղեց:

— Ըստ իս, այնտեղ մարդիկ պետք է լինեն, մոտավորապես մեզ նման: Կգնանք, կտեսնենք: Ահա թե բանն ինչ է. արդեն մի քանի տարի է, ինչ Եվրոպայի և Ամերիկայի խոշոր ռադիոկայաններն սկսել են անհասկանալի ազդանշաններ ընդունել: Սկզբում կարծում էին, թե դրանք երկրագնդի մագնիսային դաշտերում առաջացող մրրիկների հետքեր են: Բայց խորհրդավոր հնչյունները բավականաչափ նման են այբբենական ազդանշանների: Ինչ-որ մեկը համառորեն ուզում է խոսել մեզ հետ: Որտեղի՞ց է: Առայժմ հայտնի է, որ բացի Մարսից, մյուս մոլորակների վրա կյանք գոյություն չունի: Ազդանշանները կարող են լինել միայն Մարսից: Նայեք Մարսիքարտեզին, այն ցանցի պես պատած է ջրանցքներով,— և նա ցույց տվեց Մարսի գծագիրը, որ կախված էր փայտաշեն պատից:— Ըստ երևույթին, այնտեղ հնարավորություն կա վիթխարի հզորության ռադիոկայաններ ստեղծելու համար: Մարսն ուզում է խոսել Երկրի հետ: Առայժմ մենք չենք կարող պատասխանել այդ ազդանշաններին: Բայց մենք կթռչենք ըստ այդ հրավերի: Դժվար է ենթադրել, որ Մարսի վրայի ռադիոկայանները կառուցված լինեն հրեշների ձեռքով, այսինքն՝ այնպիսի էակների, որոնք մեզ նման չեն: Մարսն ու Երկիրը կողք կողքի պտտվող շատ փոքր գնդեր են: Նույն օրենքներն են թե՛ մեզ և թե՛ նրանց համար: Տիեզերքով մեկ սփռված է կյանքի փոշին, նույն սպորները իջնում են թե՛ Մարսի, թե՛ Երկրի և թե՛ սառչող բյուրավոր աստղերի վրա: Ամենուրեք ծնվում է կյանքը, և ամեն տեղ էլ իշխում է մարդանման մի արարած, չի կարելի ավելի կատարելագործված կենդանի ստեղծել, քան մարդն է:

— Կգամ ձեզ հետ,— վճռականորեն ասաց կարմիրբանակայինը,— իսկ իրերով ե՞րբ գամ:

— Վաղը: Ես պետք է ձեզ ծանոթացնեմ ապարատի հետ: Ձեր անո՞ւնը, հայրանո՞ւնը և ազգանո՞ւնը:

— Գուսև, Ալեքսեյ Իվանովիչ:

— Զբաղմո՞ւնքը:

Գուսևը ցրված նայեց Լոսին, ապա աչքերը հառեց սեղանը թխկթխկացնող իր մատներին:

— Ես գրագետ եմ,— ասաց նա,— ավտոմեքենայից քիչ ու միչ հասկանում եմ: Սավառնակով թռել եմ որպես դիտորդ: Տասնութ տարեկանից պատերազմելով եմ զբաղված: Ահա և իմ ամբողջ զբաղմունքը: Վիրավորվել եմ: Հիմա էլ պահեստի զինվոր եմ:— Հանկարծ նա ավիով շփեց գլուխը և ծիծաղեց:— Է՛, ինչե՛ր են եղել էս յոթ տարվա ընթացքում: Խղճով ասած, էս հիմա պետք է գունդ ղեկավարեի, անհանգիստ բնավորություն ունեմ: Հենց որ ռազմական գործողությունները դադարում են, տեղումս հանգիստ նստել չեմ կարող, ինքս ինձ ուտում եմ: Իմ մեջ ամեն ինչ թունավորված է: Կամ խնդրում եմ, որ տեղ-մեղ գործուղեն, կամ հենց էնպես գլուխս առնում մի տեղ եմ կորչում (նա նախ շփեց գլուխը և ծիծաղեց):— Չորս հանրապետություն եմ հիմնել և հիմա դրանց քաղաքներն էլ չեմ հիշում: Մի անգամ հավաքեցի երեք հարյուր հոգի, գնացինք Հնդկաստանն ազատագրելու: Բայց տեղ չհասած՝ մնացինք լեռներում, ընկանք բքի մեջ, փլվածքի տակ, սպանեցինք ձիերին: Այնտեղից քչերս վերադարձանք: Երկու ամիս մնացի Մախնոյի մոտ: Ման գալ էի ուզում... Բայց բանդիտների հետ չկարողացա յուր գնալ... Մտա կարմիր բանակ: Կիևից քջեցինք լեհերին, էդ ժամանակ էս Բուդյոննու մոտ հեծյալ զինվոր էի արդեն: «Վարչական կտա՛ս»: Վերջին անգամ վիրավորվեցի, երբ վերցրինք Պերեկոպը: Դրանից հետո մեկ տարուց մի քիչ պակաս թավալ էի գալիս մի հիվանդանոցից մյուսը: Դուրս գրվեցի, ո՞ր կորչեի: Հենց էդ ժամանակ էս աղջիկը պատահեց՝ ամուսնացա: Կինս լավն է, խղճում եմ նրան, բայց տանն ապրել չեմ կարող: Գյուղ գնամ՝ հայրս ու մայրս մեռած են, եղբայրներս՝ սպանված, հողը մնացել է անտեր: Քաղաքում գործ չի ճարվում: Ոչ մի տեսակի պատերազմ հիմա չկա ու խոսք էլ չկա, որ կլինի: Մստիսլավ Սերգեևիչ, խնդրում եմ ինձ վերցնեք ձեզ հետ: Մարսի վրա էս ձեզ պետք կգամ:

— Դեհ, շատ ուրախ եմ,— ասաց Լոսը, նրան մեկնելով իր ձեռքը,— ցտեսություն մինչև վաղը:

ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐ

Ամեն ինչ պատրաստ էր Երկրից մեկնելու համար: Բայց հետագա երկու օրվա ընթացքում նրանք ստիպված էին, համարյա անքուն, զբաղվել ապարատի ներսի դատարկ բարձիկների մեջ մանր-մունր բաներ դարսելով: Մտուզեցին սարքերն ու գործիքները: Քանդեցին ապարատի շուրջը դարսած փայտերն ու կտուրի մի մասը:

Լոսը Գուսևին ցույց տվեց շարժիչ մեխանիզմը և ամենակարևոր սարքերը: Պարզվեց, որ Գուսևը ճարպիկ ու աչքաբաց մարդ է:

Թռիչքը նշանակեցին մյուս օրը, երեկոյան ժամը վեցին: Ուշ երեկոյան Լոսը բաց թողեց բանվորներին ու Գուսևին, հանգցրեց էլեկտրական լույսը, վառ թողնելով միայն սեղանի լամպը, և առանց հանվելու պառկեց երկաթյա մահճակալին, որ դրված էր մարագի անկյունում, եռոտանի պատվադիտակի ետևը:

Գիշերը խաղաղ էր ու աստղալից: Լոսի քունը չէր տանում. ձեռքերը գլխատակին դրած, նայում էր աղջամուղջին: Երկար ժամանակ նա ազատ շունչ չէր քաշեր: Եվ այժմ, Երկրում մնալու վերջին գիշերը, նա դատարկեց իր սիրտը. լաց եղավ, տանջվեց:

Նա վերհիշեց... Կիսամութ սենյակ... Մումի դիմաց դրված է մի գիրք: Դեղերի հոտ, օդը ծանր է: Հատակին, գորգի վրա, տաշտակ կա: Երբ կանգնում ու անցնում էս տաշտակի կողքով, պատի վրա ստվերդ գնում ու գալիս է վշտահար տեսքով: Ի՛նչ տանջալից է: Անկողնում պառկած է նա, ով թանկ է աշխարհից: Կատյան է, նրա կինը, որը շնչում է արագ-արագ, թույլ: Բարձի վրա փռված են նրա խճճված մազերը: Վերմակի տակ ծնկները վեր են բարձրացված: Կատյան հեռանում է նրանից:

Բոլորովին փոխվել է նրա այնքան սիրունիկ ու դուրեկան դեմքը, որը վարդագույն է, անհանգիստ: Նա ձեռքերը հասնել է վերմակի տակից ու մատներով տրորում է եզրը: Լոսը նորից ու նորից վերցնում է կնոջ ձեռքը, դնում վերմակի տակ:

«Դեհ, բաց արա աչքերդ, նայիր, մնաս բարով ասա ինձ»: Կատյան աղիողորմ, հազիվ լսելի ձայնով ասում է. «բաց լուս, բաց լուս»: Այս մանկական, հազիվ լսելի ու աղիողորմ ձայնը ուզում է ասել. «Բայց լուսամուտը»: Վախից ավելի սարսափելին կարեկցանքն է դեպի Կատյան, դեպի նրա ձայնը: «Կատյա, Կատյա, նայիր»: Լոսը համբուրում է նրա այտերը, ճակատը, փակ կոպերը: Կատյայի կոկորդը դողում է, կուրծքը անհանգիստ ելևէջում, մատները կպել են վերմակի եզրին: «Կատյա, Կատյա, ի՞նչ եղավ քեզ»: Չի պատասխանում: Ձեռքից գնում է... Ելնում է արմունկների վրա, բարձրացնում է կուրծքը, ասես թե ներքևից հրում էին նրան, տանջում: Սիրունիկ գլուխը ետ է թեքվում... Կատյան թուլացած ընկնում է անկողնուն: Ծնոտը իջնում է կրծքին: Լոսը, հուսահատությունից ցնցվելով, գրկում է նրան ու սեղմում իրեն:

— ...Ոչ, ոչ, ոչ. մահվան հետ հաշտվել չի լինի:

Լոսն իջավ մահճակալից, սեղանից վերցրեց ծխախոտատուփը, ծխեց ու որոշ ժամանակ քայլեց մուրձ մարագում: Հետո նա բարձրացավ աստղադիտակի սանդուղքին և օբյեկտիվի միջով գտավ Մարսը, որն արդեն բարձրացել էր Պետրոգրադի վրա: Լոսը երկար ժամանակ նայում էր պարզ երևացող փոքրիկ գնդիկին, որը թեթևակի թրթռում էր օկուլյարի խաչաձև թելերի արանքում:

... Նա նորից պառկեց... Հիշողությունը աչքերի առջև պատկերեց մի ուրիշ տեսարան: Կատյան նստած է բլրակի վրա, խոտերի մեջ: Հեռվում, ակեծածան դաշտերից այն կողմ, երևում են Ջվենիգորոդի ոսկեփայլ կետերը: Ցիները սավառնում են հացահատիկի, հնդկացորենի արտերի վերևում: Կատյան շոգից թուլացել է: Լոսը՝ կողքին նստած, կրծում է խոտի ցողունը և նայում նրա խարտյաշ գլխին, արևահար ուսին, որը շրջագգեստի ծածկած տեղերում սպիտակ է մնացել և շերտաձև երևում է, երբ Կատյան կտրուկ շարժումներ է անում: Կատյայի մոխրագույն, գեղեցիկ աչքերում նույնպես ցիներ են սավառնում: Տասնութամյա աղջիկը լուռ նստել է ու չի խոսում: «Ոչ, սիրելիս,— մտածում է Լոսը,— ես ավելի կարևոր գործ ունեմ, քան այս բլրակի վրա ձեզ սիրաբանելը: Ձեր ցանցը չեմ ընկնի, ձեր ամառանոցն էլ ոտք չեմ դնի»:

Ա՛խ, աստված իմ: Ինչպես անմտորեն ձեռքիցս բաց թողեցի ամառային այդ տաք օրերը: Կանգնեցնե՛լ էր պետք ժամանակը: Էլ ետ չե՛ս բերի այդ օրերը, էլ ետ չե՛ն գա...

Լոսը նորից իջավ մահճակալից, վառեց լուցկին, ծխեց ու սկսեց քայլել: Բայց փայտաշեն պատի երկարությամբ քայլելն էլ ճնշում էր նրան, իրեն զգում էր այնպես, ինչպես փոսն ընկած զագանը:

Լոսը բաց արեց դուռը և նայեց վերևում առկայծող Մարսին:

«Այնտեղ էլ ինքդ քեզանից չես ազատվի, թեկուզ Երկրի սահմաններից այն կողմ, մեռնելուց հետո էլ: Ինչի՞ էր պետք ճաշակել այդ թույնը՝ սերը: Կապրելի անվրդով. չե՞ որ կյանքի թափառող սերմերն ու սառած բյուրեղները սավառնում են եթերում, սավառնում են նիրհի մեջ: Ո՛չ, պետք է ընկնել ու ծաղկել, զարթնել տենչալու համար, սիրել, միաձուլվել, մոռանալու դադարել միայնակ սերմ լինելուց: Եվ այդ ամբողջ կարճատև անուրջը նրա համար է, որպեսզի նորից գա մահ, անջատում և սառցե բյուրեղների սավառնում»:

Լոսը երկար կանգնեց դռների մեջ: Քնած Պետրոգրադի վրա մերթ արնագույն, մերթ կապույտ և մերթ էլ աղամանդագույն երանգներով փայլփիում էր Մարսը: «Նոր, սքանչելի աշխարհ,— մտածում էր Լոսը,— գուցե արդեն վաղուց մեռած կամ ֆանտաստիկ, ծաղկող ու կատարյալ...

Այնտեղից էլ երբեմն գիշերով բազմաթիվ աստղերի մեջ պիտի նայեմ ու գտնեմ իմ հարազատ աստղը... Կմտաբերեմ փոքրիկ բարձունքը, թռչող ցիներին և այն գերեզմանը, որտեղ պառկած է Կատյան... Եվ դրանից իմ վիշտը կթեթևանա...»

Միայն լուսադեմին Լոսը կարողացավ գլուխը դնել բարձին ու քնել: Նրան արթնացրեց գետափով անցնող գումակի դողոյունը: Լոսը բաց արեց աչքերն ու շփեց դեմքը: Գիշերային տեսիլքներից դեռևս չաթափված նրա աչքերը անմիտ հայացքով նայում էին պատերին փակցված քարտեզներին և ապարատին: Լոսը խորը շունչ քաշեց և, արդեն լրիվ արթնացած, մոտեցավ ծորակին ու գլուխը թրջեց սառը ջրով: Ապա վերարկուն գցեց ուսին և քայլերն ուղղեց դեպի իր բնակարանը, որտեղ կես տարի առաջ մեռել էր Կատյան:

Այստեղ նա լվացվեց, սափրվեց, հագավ մաքուր սպիտակեղեն ու նոր զգեստ, նայեց, թե փա՞կ են արդյոք բոլոր լուսամուտները: Տունն ասես անմարդաբնակ լիներ, ամենուրեք փոշի էր: Նա բաց արեց ննջասենյակի դուռը, որտեղ Կատյայի մահից հետո երբեք չէր գիշերել: Իջած վարագույրների պատճառով ննջասենյակում գրեթե մութ էր, միայն ցուլում էր Կատյայի հանդերձապահարանի հայելին: Դուռը կիսաբաց էր:

Լոսը հոնքերը կիտեց, ապա ոտքերի ծայրերի վրա մոտեցավ և ամուր ծածկեց այն: Հետո փակեց ննջասենյակի դուռը, դուրս եկավ բնակարանից, կողպեց շքամուտքի դուռը և տափակ բանալին դրեց բաճկոնակի գրպանը:

Այժմ նա արդեն ամեն ինչ վերջացրել էր և պատրաստ էր մեկնելու:

ԱՅՂ ՆՈՒՅՆ ԳԻՇԵՐԸ

Այդ գիշեր Մաշան երկար սպասեց իր ամուսնուն: Մի քանի անգամ պրիմուսի վրա տաքացրեց թեյը: Կաղնե բարձր դռների ետևում լուռ էր ու երկյուղալի:

Գուսնն ու Մաշան ապրում էին երբեմնի շքեղ, իսկ այժմ լքված այդ հսկայական տան մի սենյակում: Հեղափոխություն ժամանակ տերերը լքել էին այդ տունը: Չորս տարվա ընթացքում անձրևները, ձմռան բուքն ու քամիները շատ էին փչացրել ներսը:

Սենյակը ընդարձակ էր, առաստաղի ոսկեփայլ փորագրությունների ու ամպերի միջև թռչում էր մի փարթամ կին, որն ամբողջ դեմքով ժպտում էր նրան: Նրան շրջապատել էին թևավոր քերովբեները:

«Տեսնում ես, Մաշա,— միշտ ասում էր Գուսնը՝ ցույց տալով առաստաղը,— ի՛նչ ուրախ կին է. վեց շունչ էլ երեխա ունի, ա՛յ, սա կնի՛կ է»:

Ոսկեջրած, առյուծի թաթերով մահճակալի վերևում կախված էր սեղմած շուրթերով մի դիմանկար, որը սպիտակ կեղծամ ուներ, իսկ բաճկոնի վրա աստղեր կային: Գուսնը նրան «Գեներալ Տոպտիգին» էր ասում: «Դրա ձեռքից բան չէր պրծնի, հենց որ մի բան իր ուզածով չէր, իսկույն ոտի տակ կտար: Մաշան վախենում էր այդ նկարին նայել: Սենյակի միջով ձգվում էին վառարանի թիթեղյա խողովակները, որոնք մրոտել էին պատը: Թարեքների վրա և այն սեղանին, որի վրա Մաշան պատրաստում էր իրենց աղքատիկ կերակուրը, ամեն ինչ կարգին էր ու մաքուր:

Քանդականախշ կաղնե դուռը բացվում էր դեպի լուսավոր դահլիճը: Նրա ջարդված պատուհանները տախտակներով էին մեխած, առաստաղը տեղ-տեղ փուլ էր եկել: Այստեղ գիշերները հաճախ ոռնալով ման էր գալիս կատաղի քամին, և վազվզում էին առնետները:

Մաշան նստած էր սեղանի մոտ: Թշուում էր պրիմուսի բոցը: Քամին հեռվից բերում էր ժամացույցների զանգերի տխուր ձայները. ժամը երկուսն էր: Գուսերը դեռ չկար: Մաշան մտածում էր.

«Ի՞նչ է փնտրում, ի՞նչն է պակաս: Ամեն ինչ ուզում էգտնել, անհանգիստ հոգի ունի, Այոշա, Այոշա... գոնե մի անգամ փակեր աչքերը, պառկեր կողքիս: Մի՛ փնտրի, իմ կարեկցանքից ավելի թանկ բան չե՛ս գտնի»:

Մաշայի թարթիչների վրա արցունքներ երևացին: Առանց շտապելու նա սրբեց կաթիլները և ձեռքը հենեց այտին: Գլխի վերևում թռչում, բայց տեղից չէր շարժվում ուրախ քերովբեներով շրջապատված երջանիկ կինը: Մաշան ինքն իրեն ասում էր. «Եթե ես նրա նման լինեի, Այոշան մոտիցս ոչ մի տեղ էլ չէր գնա»:

Գուսերը նրան ասել էր, որ հեռու տեղ է գնում, բայց թե ո՞ւր, Մաշան չգիտեր և վախենում էր հարցնել: Մաշան ինքն էլ էր նկատել, որ այս օտարոտի սենյակի անդորրության մեջ, առանց նախկին ազատության, Գուսերի համար իր հետ ապրելը դժվար է ու անտանելի: Քնի մեջ ինչ-որ բաներ էր տեսնում, կրճտացնում ատամները, մոնչում խուլ ձայնով, ապա նստում է անկողնու մեջ և անհանգիստ շնչում: Ատամները սեղմված են իրար, դեմքն ու կուրծքը քրտինքի մեջ կորած: Նորից է պառկում, թավալ գալիս անկողնում և քնում, իսկ առավոտյան զարթնում է ամբողջովին մոռալ, չգիտեր թե ինչ աներ:

Մաշան հարազատ մորից ավելի հաշտ ու սիրալիր էր նրա հետ, և դրա համար էլ Գուսերը սիրում ու խղճում էր նրան: Բայց հենց որ առավոտ էր գալիս, նա մտածում էր, թե ուր գնա:

Մաշան ծառայում էր և այնտեղից ուտելիք էր բերում տուն: Հաճախ նրանք բոլորովին փող չէին ունենում: Գուսերը զանազան գործեր էր բռնում, բայց շուտով թողնում էր: «Ծերունիներն ասում են, թե Չինաստանում ոսկե սեպ կա,— ասում էր նա,— սեպե՛ր, թե՛ յ, այդպիսիք այնտեղ չկան, բայց այդ երկիրը իրոք որ մեզ համար դեռ անհայտ է: Մաշա, ես Չինաստան կգնամ, նայեմ, թե ինչ կա, ինչ չկա»:

Մաշան վշտահար սպասում էր այն պահին, երբ կգնար Գուսերը: Աշխարհում նրանից բացի Մաշան ոչ ոք չուներ: Տասնհինգ տարեկանից գործակատար էր աշխատել խանութներում, հետո զանազապահ՝ փոքրիկ շոգենավերում: Ապրել էր մենակ, անուրախ կյանքով:

Գուսերի հետ նա ծանոթացավ մեկ տարի առաջ, տոներին՝ զբոսայգու նստարանի վրա: Գուսերը նրան ասաց. «Տեսնում եմ մենակ եք նստած, թույլ տվեք ձեզ հետ ժամանակ անցկացնել, մենակ տխուր է»:

Մաշան նայեց նրան. հիանալի դեմք ուներ, աչքերը պայծառ էին, բարի և ժուժկալ: «Դեմ չեմ»,— կարճ պատասխանեց նա, և այսպես նրանք մինչև իրիկուն զբոսնեցին միասին: Գուսերը կոիվների, արշավանքների ու հեղաշրջումների մասին այնպիսի բաներ էր պատմում, որ ոչ մի գրքում չկար գրված: Հետո նա Մաշային ուղեկցեց մինչև տուն ու այդ օրվանից էլ սկսեց նրան հաճախակի այցելել: Մաշան հեզ ու խոնարհ հանձնվում էր նրան: Իսկ երբ սիրեց, հանկարծ ամբողջ էությունը զգաց, որ նա իրեն հարազատ է: Այստեղից էլ սկսվեցին նրա տանջանքները...

Ջուրը եռաց: Մաշան պրիմուսի վրայից իջեցրեց թեյնիկը և նորից լռեց: Վաղուց էր, ինչ նրան թվում էր, որ դատարկ դահլիճի դռան ետևում ինչ-որ խշշոց կա: Բայց այնպես տխուր էր, որ դրա վրա ուշադրություն չէր դարձնում: Բայց այժմ պարզորոշ լավում էր ինչ-որ մեկի ոտքերի քստքստոցը:

Մաշան արագ բաց արեց դուռը և դուրս հանեց գլուխը: Լուսամուտներից մեկով դահլիճ էր ընկել փողոցի լապտերի լույսը, որը աղոտ լուսավորում էր ցածրադիր սյուները, նրանց վրա

առաջացնելով ուռուցիկ խալեր: Նրանց արանքում Մաշան նկատեց մի այլգարդ ծերունու, որը գլխաբաց, երկար վերարկուով կանգնել, վիզը երկարացրել ու նայում էր իրեն: Մաշայի ծնկները վախից թուլացան:

— Ի՞նչ եք անում այստեղ,— հարցրեց նա շշուկով:

Ծերուկը ավելի ձգեց վիզը և շարունակեց նայել: Ապա ցուցամատով սպառնաց: Մաշան ուժեղ շրխկացրեց դուռը. սիրտը անհանգիստ խփում էր: Նրա ականջին հասան հեռացող ոտնաձայներ: Հավանական է ծերուկը շքամուտքի աստիճաններով ներքև էր իջնում:

Շուտով դահլիճի մյուս կողմից լսվեցին ամուսնու արագ, ուժգին ոտնաձայները: Գուսերը, մրտաված շորերով, ուրախ-ուրախ ներս մտավ:

— Ջուր լից՝ լվացվեմ,— ասաց նա, արձակելով օձիքի կոճակները,— վաղը մեկնում ենք, մնաս բարով: Թեյնիկը տա՞ք է: Հրաշալի է:— Նա լվաց երեսը, վիզը, ձեռքերը՝ մինչև արմունկները, սրբվեց և դարձավ կնոջ կողմը,— չեմ կորչի, կվերադառնամ: Յոթ տարի ինձ գնդակն ու սվինը չկարողացան սպանել: Մեռնելու ժամը հեռու է, անվանս դիմաց դեռ նշան չեն արել: Մեկ է՝ մեռնելուց չես պրծնի. մեռնելը որ եկավ, ճանճն էլ քացի տա՝ կմեռնես:

Նա նստեց սեղանի մոտ, վերցրեց մի խաշած կարտոֆիլ, կճպեց, կտրեց, աղ ցանեց վրան:

Վաղվա համար պատրաստիք երկու ձեռք մաքուր վերնաշապիկ, վարտիք, փաթաթաններ, օճառամանը չմոռանաս, հա՛, բիզն էլ դիր: Ի՞նչ է, դու նորից լա՞ց ես եղել:

— Վախեցա,— պատասխանեց Մաշան ետ շրջվելով,— միշտ մի ծերուկ է գալիս, մատով սպառնում: Այլո՞չա, մի գնա:

— Զէ՛ մի, չգնամ, ինչ է թե մի ծերուկ մատով վախեցրե՞լ է:

— Դա դժբախտության նշան է, Այլո՞չա:

— Ափսո՛ս, որ գնում եմ, թե չէ ես էդ ծերուկի հետ կարգին կխոսեի: Դա անպայման նախկին տեղացիներից է, որ գիշերները թափառում է, քչփչում և այդպես ապրում:

— Այլո՞չա, դու էլի կվերադառնա՞ս ինձ մոտ:

— Որ ասացի կգամ, ուրեմն կգամ: Թյո՛ւ, էս ինչ անհանգիստ կնիկ էս:

— Հեռո՞ւ ես գնում:

Գուսերը սուլեց և գլխով ցույց տվեց առաստաղը, ապա ծիծաղեց այքերով ու տաք թեյ լցրեց ամանի մեջ:

— Գնում եմ ամպերից էն կողմ, Մաշա, կթո՞չեմ ա՛յ, էս կնկա պես,— և նա ցույց տվեց առաստաղի նկարը:

Մաշան միայն կախեց գլուխը: Գուսերը հորանջեց և սկսեց հանվել: Կինը անաղմուկ հավաքեց ամանները և նստեց գուլպաները կարկատելու: Առանց այքերը վեր բարձրացնելու, նա կարկատում էր: Իսկ երբ հանեց շորերը և մոտեցավ անկողնուն, Գուսերը ձեռքը դրել էր կրծքին, հանգիստ փակել այքերն ու քնել էր: Մաշան պառկեց կողքին և նայեց ամուսնուն: Մաշայի այտերով արցունք էր

հոսում: Այլոշան այնպե՛ս թանկ էր նրա համար, իր խռովահույզ սրտում նա այնպե՛ս շատ էր կարոտում նրան... «Ո՞ւր է թռչում, ի՞նչ է փնտրում»:

Լուսաբացին Մաշան վեր կացավ, մաքրեց ամուսնու շորերը, հավաքեց մաքուր սպիտակեղենը: Գուսեր արթնացավ, թեյ խմեց, կատակներ արեց, շոյեց Մաշայի թշերը, հետո սեղանին դրեց փողի մի մեծ կապոց, պարկը գցեց ուսը, մի պահ կանգ առավ շեմին, ապա մոտեցավ ու համբուրեց նրան:

Այդպես էլ Մաշան չիմացավ, թե նա ուր է գնում:

ԹՈՒՂՔ

Լուսի արհեստանոցի առջևի ազատ տարածության վրա սկսեց ժողովուրդ հավաքվել: Գալիս էին գետափնյա փողոցից, վազում էին Պետրոպլյան կղզու կողմերից, միանում էին բազմությանը, նայում արևին, որն ամպերի արանքից բաց էր թողել իր փարթամ ճառագայթները: Սկսվեցին խոսակցությունները.

— Ինչո՞ւ են հավաքվել, մարդ են սպանե՞լ:

— Հիմա Մարս են թռչելու:

— Այ թե ինչի՛ հասանք, էդ էր մնացել պակաս:

— Դուք ի՞նչ եք ասում: Ո՞վ է թռչելու:

— Երկու ավազակ են բանտից բերել, որ մտցնեն պողպատե գնդի մեջ և փորձի համար՝ հայդե՛ դեպի Մարս:

— Վերջ տվեք էդ փչոցներին, է՛:

— Ա՛խ, սրիկաներ, մարդկանց չեն էլ խղճում:

— Այսինքն էդ ո՞ւմ ես ասում:

— Իսկ դու, քաղաքացի, շառո՞քաշիր:

— Իհարկե, սա ծաղրուծանակ է:

— Դե, ժողովուրդն էլ է հիմար, աստված իմ:

— Ժողովուրդն ինչո՞ւ է հիմար: Էդ դու որտեղի՞ց հնարեցիր:

— Էդ խոսքերի համար հենց քեզ պետք էր Մարս ուղարկել:

— Վերջ տվեք, ընկերներ: Այստեղ իսկական պատմական իրադարձություն է տեղի ունենում, իսկ դուք, սատանան էլ չի հասկանում, թե ինչ եք ասում:

— Իսկ ի՞նչ նպատակի համար են Մարս ուղարկում:

— Ներեցեք, այստեղ նոր մեկն ասում էր, թե քսանհինգ փութ միայն ազիտացիոն գրականություն են բարձել, որ Մարս տանեն:

— Չէ, հետազոտության համար են գնում:

— Ի՞նչ հետազոտության:

— Ոսկու:

— Միանգամայն ճիշտ է, որպեսզի ոսկու ֆոնդը լրացնենք:

— Շա՞տ են մտադիր բերելու:

— Անսահման քանակությամբ:

— Քաղաքացի, չգիտե՞ս, մենք դեռ շա՞տ պիտի սպասենք:

— Հենց որ արևը մայր մտնի, նրանք կթռչեն:

Մինչև մութն ընկնելը շարունակվում էր խոսակցությունը: Անսովոր իրադարձությանն սպասող ամբոխի մեջ զանազան խոսակցություններ էին գնում: Վիճում էին, կովում, բայց չէին հեռանում:

Աղոտ մայրամուտը ծիրանագույն լույսով ողողել էր երկնքի մի մասը: Եվ ահա, դանդաղ, մարդկանց այս ու այն կողմ հեռացնելով, հայտնվեց Նահանգային գործկոմի մեծ ավտոմոբիլը: Մարագի լուսամուտները ներսից լուսավորվեցին: Բազմությունը լռեց և կամաց-կամաց առաջ շարժվեց:

Բոլոր կողմերից բաց, գամվածքների շարքերով փայլփլող ձվաձև ապարատը կանգնած էր մարագի կենտրոնում, ցեմենտից շինված փոքր-ինչ թեք հարթակի վրա: Դռնակի կլոր անցքից երևում էր պայծառ լուսավորված ներսը, որը պատած էր շեղանկյունաձև կտրված դեղին կաշվով:

Լոսն ու Գուսը հագել էին թաղիքե սապոգներ, ոչխարի մորթուց կարած կիսամուշտակ և ծածկել էին սավառնորդի կաշվե սաղավարտ: Գործկոմի անդամները, ակադեմիկոսները, ինժեներները, ժուռնալիստները շրջապատել էին ապարատը: Բարի երթի ճառերն արդեն ասվել էին, լուսանկարահանումները՝ կատարվել: Լոսը ուղեկցողներին շնորհակալություն հայտնեց ուշադրության համար: Նրա դեմքը գունատ էր, իսկ աչքերն ասես ապակուց էին շինված: Նա գրկեց Խոխլովին և Կուզմինին, ապա նայեց ժամացույցին:

— Ժամանակն է:

Ուղեկցողները լռեցին: Գուսը խոժոռեց հոնքերը և դռնակից ներս մտավ: Մտնելուն պես նա նստեց կաշվե բարձին, ուղղեց գլխարկը և կարգի բերեց կիսամուշտակը:

— Կանցնես կնոջս մոտ, չմոռանաս,— ձայն տվեց նա Խոխլովին և խիստ մռայլվեց:

Լոսը դեռ դանդաղում էր, գետնին էր նայում: Հանկարծ նա բարձրացրեց գլուխը և խուլ, հուզված ձայնով ասաց.

— Ես կարծում եմ, որ հաջող վայրէջք կկատարեմ Մարսի վրա: Համոզված եմ, որ կանցնի մի քանի տարի, և հարյուրավոր օդանավեր կսկսեն ակոսել աստղային տարածությունը: Մեզ միշտ առաջ է մղում որոնող հոգին, բայց առաջինը ե՛ս չեմ, որ պիտի թռչեի: Առաջինը ե՛ս չեմ, որ պիտի խորանայի երկնային գաղտնիքների մեջ: Ես ի՞նչ կգտնեմ այնտեղ: Ինքնամոռացում... Ամենից ավելի սա՛ է ինձ վրդովեցնում ձեզանից բաժանվելու այս պահին... Ո՛չ, ընկերներ, ես ո՛չ հանճարեղ շինարար եմ, ո՛չ խիզախորդ, ո՛չ էլ երազկոտ մարդ. ես վախկոտ եմ, ես փախստական եմ...

Լոսը հանկարծ խոսքը կտրեց, տարօրինակ հայացքով նայեց ուղեկցողներին. բոլորը լսել էին նրան՝ առանց հասկանալու: Նա սաղավարտը իջեցրեց մինչև աչքերը:

— Եվ, ի միջի այլոց, սա ոչ ոքի պետք չէ, ո՛չ ձեզ, ո՛չ ինձ: Հին սովորությունս է... Դրանք ես թողնում եմ այս մահճակալի վրա՝ մարագում... Ցտեսություն՝ և, ընկերներ, խնդրում եմ որքան կարելի է հեռու կանգնել ապարատից...

Այդ ժամանակ Գուսեր դռնակի միջից գոռաց.

— Ընկերներ, ես նրանց՝ Մարսի բնակիչներին, բոցավառ ողջույն կհաղորդեմ սովետական հանրապետությունից: Լիազորո՞ւմ եք:

Բազմությունը աղմկեց: Լսվեցին ծափահարություններ:

Լոսը շուռ եկավ և անմիջապես մտավ ապարատի մեջ՝ ետևից չրխկացնելով դռնակը: Ուղեկցողները միմյանց հրհրելով ու հուզված խոսակցելով մարագից վազեցին դեպի բազմությունը: Ինչ-որ մեկը ձայնը ծոր տալով բղավեց.

— Ջգո՛ւյշ, հեռացե՛ք, պատկե՛ք:

Այժմ արդեն հազարավոր մարդիկ լռության մեջ նայում էին մարագի պատուհանների քառանկյունաձև լույսերին: Մարագում լռություն էր: Խաղաղ էր նաև դրսում: Այսպես անցավ մի քանի րոպե: Մարդկանցից շատերը պատկեցին գետնին: Հանկարծ հեռվում բարձր խրխնջաց մի ձի: Մեկը անսովոր ձայնով գոռաց.

— Լռե՛ք:

Մարագի մեջ խլացնող թնոյուն ու չխկչխկոց լսվեց: Դրանց հաջորդեցին ավելի ուժեղ ու որոշակի հարվածներ: Դողողաց գետնին: Մարագի կտուրն ի վեր դուրս ցցվեց մետաղյա մի բուրջ մարմին և ամպերը ծածկեց ծուխ ու փոշով: Չխկչխկոցն ավելի սաստկացավ: Մև ապարատն ամբողջ հասակով երևաց կտուրի վրա և կախվեց օդում. ասես չափսն էին վերցնելու: Պայթյունները վերածվեցին մի անընդմեջ ոռնոցի, և չորս սաժենանոց մետաղյա ձուն հրթիռի թեքությամբ վեր սլացավ բազմության վրայով և ուղղություն վերցրեց դեպի արևմուտք: Ետևից ցուլացնելով կրակի մի լայն շերտ, ապարատը կորավ ամպերի ծիրանագույն և աղոտ հրացուլքում:

Միայն այդ ժամանակ ամբոխի միջից լսվեցին ձայներ, գլխարկներ վեր թռան, իսկ շատերն էլ վազեցին ու շրջապատեցին մարագը:

ՄԹԻՆ ԵՐԿՆՔՈՒՄ

Ամրացնելով մուտքի դռնակի պտուտակները, Լոսը նստեց Գուսերի դիմաց և սկսեց նայել նրա աչքերին, որոնք շանթում էին գերված թռչունի բիբերի պես:

— Թռչե՛նք, Ալեքսեյ Բվանովիչ:

— Արձակեք:

Այդ ժամանակ Լոսը ձեռքը տարավ դեպի ռեոստատի լծակը և թեթևակի պտտեց այն: Լսվեց մի խուլ հարված՝ այն առաջին չրխկոցը, որից ցնցվեց մարագի առջև հավաքված հազարանոց

բազմությունը: Լոսը միացրեց երկրորդ ռեոստատը: Խուլ թնդյուն լսվեց ոտքերի տակ, և ապարատի ցնցումներն այնպես ուժեղացան, որ Գուսը բռնեց նստատեղից ու չոեց աչքերը: Լոսը երկու ռեոստատներն էլ միացրեց: Ապարատը միանգամից պոկվեց տեղից: Հարվածներն սկսեցին մեղմանալ, ցնցումները պակասել: Լոսը բացականչեց.

— Բարձրան՝ մ ենք:

Գուսը սրբեց դեմքի քրտինքը: Արդեն սկսում էին շոգել: Հաշվիչը ցույց էր տալիս մեկ վայրկյանում հիսուն մետրարագություն, և դեռ սլաքը շարունակում էր առաջ շարժվել: Ապարատը սլանում էր շոշափողի ուղղությամբ, Երկրի պտույտին հակառակ: Կենտրոնախույս ուժը նրան տանում էր դեպի արևելք: Հաշվումների համաձայն հարյուր կիլոմետր բարձրության վրա ապարատը պետք է ուղղվեր և թռչեր Երկրի մակերևույթին ուղղահայաց անկյունագծով:

Շարժիչն աշխատում էր համաչափ, առանց ընդհատումների: Լոսն ու Գուսը արձակեցին իրենց կիսաբաճկոնների կոճակները, ծոծրակներին թեքեցին սաղավարտները: Էլեկտրականությունը հանգցրած էր, բայց դիտանցքների ապակիների միջով աղոտ լույս էր թափանցում ներս:

Հաղթահարելով թուլությունն ու սկսված գլխապտույտը, Լոսը ծնկի եկավ և դիտանցքից նայեց հեռացող Երկրին: Հսկայական, անծայր գոգավոր թասի նման փոված էր կապտամոխրագույն Երկիրը: Տեղ-տեղ, կղզիների պես, նրա վրա պառկել էին ամպերի շղթաները. դա Ատլանտյան օվկիանոսն էր:

Թասը քիչ-քիչ նեղանում ու իջնում էր ներքև: Աջ կողմը սկսեց արծաթի պես փայլել, իսկ մյուսը դեռ խավարի մեջ էր: Այժմ արդեն Երկիրը նմանվում էր դեպի անդունդը թռչող մի գնդի:

Գուսը կպել էր մյուս դիտանցքին ու պոկ չէր գալիս:

— Մնաս բարո՛վ, հայրենիք, ապրել ենք քո գրկում, արյուն ենք թափել,— ասաց նա:— Ապա ելավ չոքած տեղից, բայց հանկարծ երերաց ու ընկավ բարձի վրա: Քանդելով օձիքը, նա ասաց.

— Մեռնում եմ, Մստիսլավ Սերգենիչ, էլ ուժ չկա: Լոսը զգում էր, որ սիրտը խփում է արագ, ավելի արագ և ապա ոչ թե խփում, այլ սկսում է տանջալից կերպով թրթռալ: Արյունը խփեց դեպի քունքերը: Խավարեց աչքերի լույսը: Նա սողաց դեպի հաշվիչը, սլաքն անընդհատ բարձրանում էր ու բարձրանում, ցույց տալով անհավատալի արագություն: Վերջացավ օդի շերտը: Պակասեց ձգողականությունը: Կողմնացույցը ցույց էր տալիս, որ Երկիրը գտնվում է ուղիղ ներքևում: Ապարատը բռպե առ բռպե ավելացնում էր արագությունը և խելացնոր թռիչքով սլանում դեպի տիեզերական ցուրտ տարածությունները:

Լոսը, եղունգները ջարդելով, հազիվ արձակեց կիսամուշտակի օձիքը, սիրտը կանգնում էր:

Նա գիտեր, որ ապարատի և նրանում գտնվող մարմինների արագությունը կհասնի այնպիսի մի աստիճանի, որը զգալի չափով կազդի սրտի, արյան շրջանառության և ամբողջ օրգանիզմի կանոնավոր աշխատանքի վրա: Իմանալով այս, նա ժիրոսկոպներից մեկի արագության հաշվիչը (ապարատում երկու ժիրոսկոպ կար) էլեկտրական հաղորդալարերով միացրեց բաքերի ծորակներին, որոնք հարկ եղած պահերին պետք է բաց թողնեին մեծ քանակությամբ թթվածին և ամոնիակի աղեր:

Առաջինը սթափվեց Լոսը: Կուրծքը կտրտվում էր, գլուխը պտտվում, սիրտը աղմկում էր հուլի պես: Երևում ու չքանում էին մտքերը՝ արտասովոր, պարզ ու հստակ: Շարժումները թեթև էին ու կտրուկ:

Լոսը փակեց բաքերի ավելորդ ծորակներն ու նայեց հաշվիչին: Ապարատը թռչում էր մեկ վայրկյանում հիսուն վերստ արագությամբ: Լույս էր: Դիտանցքերից մեկով ուղիղ ներս էին ընկել արևի կուրացուցիչ ճառագայթները: Գուսեր պառկել էր երեսնիվար ու ցցել ատամները: Սառը, ապակենման աչքերը դուրս էին թռել ակնախորշերից:

Լոսը կծու աղ մոտեցրեց նրա քթին: Գուսեր խոր շունչ քաշեց ու թարթեց կոպերը: Լոսը բռնեց նրա թևատակերից և ուժ գործադրեց բարձրացնելու նրան, բայց Գուսերի մարմինը օդապարիկի պես կախված մնաց օդում: Նա բաց թողեց ձեռքերը, և Գուսեր դանդաղ իջավ հատակին, ոտքերը պարզեց դեպի վեր, արմունկները բարձրացրեց, հետո նստեց ոնց որ ջրում ու նայեց շուրջը:

— Մստիսլավ Սերգենիչ, ես հո խմած չե՞մ:

Լոսը նրան կարգադրեց, որ ելնի ու վերևի դիտանցքից դուրս նայի: Գուսեր կանգնեց, երբաց, ամբողջ հասակով մեկ ընկավ ապարատի ուղղաձիգ պատին և ճանճի պես կպավ նրան: Կոթնելով դիտանցքին, նա ասաց.

— Մուժ է, Մստիսլավ Սերգենիչ, այսինքն՝ ոչինչ չի երևում:

Լոսը մրոտած ապակի հագցրեց արևին ուղղված օկուլյարին: Պարզ գծագրումով արևի վիթխարի գիսառատ քուլանկախված էր դատարկ խավարի մեջ: Կոքերից թևերի պես տարածված էին երկու լուսեղեն մշուշազանգված, թանձր միջուկից դուրս էր գալիս մի շատրվան և սնկի ձև ընդունում: Դա տեղի էր ունենում այն ժամանակ, երբ անցնում էին արեգակնային մեծ-մեծ բծերը: Լուսավառ միջուկից հեռու գտնվում էին կրակի լուսեղեն օվկիանները, որոնք կենդանակերպ թևերից ավելի դժգույն էին. նրանք դուրս էին ժայթքում արևի միջից և պտտվում նրա շուրջը:

Լոսը դժվարությամբ կտրվեց այս տեսարանից: Նա չէր ուզում աչքերը հեռացնել տիեզերքի կենսաբեր կրակից: Նա կափարիչով ծածկեց դիտապակին: Մթնեց: Լոսը մոտեցավ հանդիպակաց կողմի դիտանցքին: Այստեղ մուժ էր: Նա դարձրեց օկուլյարը, և աստղերի կանաչավուն շողքից ծակծկվեցին նրա աչքերը: Բայց ահա դիտանցքից ներս ընկավ կապտագույն մի ուժեղ շողք, դա երկնային աղամանդն էր՝ Սիրիուսը, որը հյուսիսային երկնքի առաջին աստղն է:

Լոսը սողաց դեպի երրորդ դիտանցքը: Շուտ տվեց օկուլյարը, թաշկինակով մաքրեց և սկսեց նայել: Նայում էր շատ ուշադիր: Հանկարծ սիրտը կծկվեց, գլխի մազերը բիզ-բիզ կանգնեցին:

Իրենցից ոչ այնքան հեռու, նույնիսկ բոլորովին մոտ, խավարի մեջ լողում էին անորոշ սև կետեր: Գուսեր տագնապահար ասաց.

— Ինչ-որ մի բան է մեզ հետ թռչում:

Անորոշ կետերը դանդաղ հեռացան ներքև, դառնալով ավելի որոշակի ու պարզ մարմիններ: Վիստում էին բեկբեկուն թելեր: Եվ ահա վառ կերպով սկսեցին գծագրվել ժայռակատարների պատառոտված եզրերը: Ապարատն, ըստ երևույթին, մոտեցել էր երկնային մարմիններից մեկին, ընկել նրա ձգողականության մեջ և որպես արբանյակ պտտվում էր նրա շուրջը:

Դողացող ձեռքով Լոսը ցնցեց ռեոստատի լծակները և պտտեց մինչև վերջ. այդպես կարող էր պայթեցնել ապարատը: Լոսի ոտքերի տակ ամեն ինչ մոռնում էր ու դողդողում: Կետերը և երևացող պատառոտված ժայռերը արագորեն սկսեցին հեռանալ ներքև: Լուսավորված մակերեսը գնալով մեծանում ու մոտենում էր նրանց: Այժմ արդեն պարզ կարելի էր տեսնել ժայռերի պարզ ու երկար ստվերները, որոնք ձգվում էին լերկ ու անկենդան հարթության միջով:

Ապարատը թռչում էր դեպի ժայռերը, որոնք շատ մոտ էին և մի կողմից ողողված էին արևի լույսով: Լոսը մտածում էր (գիտակցությունը պարզ էր ու խաղաղ). «մեկ վայրկյան հետո ապարատն այլևս չի կարողանա պտտվել իր բլի շուրջ ևս մեկ վայրկյան՝ և մահ...»

Հանկարծ Լոսը այդ անկենդան հարթավայրում, ժայռերի մեջ, ատամնավոր աշտարակների փլատակներ նկատեց... Այնուհետև ապարատը սահեց սրածայր լերկ լեռների վրայով... Բայց այնտեղ, նրանց մյուս կողմում անդունդն էր՝ անտակ ու խավար: Անդունդի բզկտված և ուղղահայաց կտրվածքի վրա փայլփլում էին մետաղների երակները: Եվ ջախջախված անծանոթ մոլորակի բեկորը մնաց հեռվում ու շարունակեց հավերժություն տանող իր մեռելային ճանապարհը: Ապարատը նորից սլացավ մթին ամպերի ամայության միջով: Հանկարծ Գուսերը գոռաց.

— Լուսնի պես բան կա մեր առջևում:

Նա շուռ եկավ, հեռացավ պատից և, գորտի պես ձեռքերն ու ոտքերը տարածած՝ կախվեց օդում: Գուսերը հայիոյելով աշխատում էր կպնել պատին: Լոսը կտրվեց հատակից և նույնպես օդում կախված մնաց, դիտանցքի խողովակից բռնած՝ նա տեսնում էր Մարսի արծթափայլ, կուրացուցիչ սկավառակը:

ՎԱՅՐԷՋՔ

Մարսի արծաթավուն, տեղ-տեղ ամպերով ծածկված սկավառակը գնալով ավելի ու ավելի էր մեծանում: Շլացուցիչ կերպով պսպղում էին Հարավային բևեռի սառույցները: Բևեռից ներքև փոված էր ուռուցիկ մի մշուշազանգված: Արևելքում նա հասնում էր մինչև հասարակած, իսկ միջին միջօրեականի մոտ բարձրանում էր ավելի լուսավոր մի հարթություն, որը երկատվելով, սկավառակի արևմտյան ծայրում կազմում էր երկրորդ հրվանդանը:

Հասարակածի ուղղությամբ դասավորված էին պարզորոշերևացող հինգ սև կլոր կետեր: Դրանք իրար միացված էին ուղիղ գծերով, որոնք կազմում էին երկու հավասարակողմ և մեկ երկարասրուն եռանկյունիներ: Արևելյան եռանկյունու ստորոտը պարփակված էր կանոնավոր աղեղով: Նրա մեջտեղից մինչև ծայրի արևմտյան կետը անցնում էր երկրորդ կիսաշրջանը: Այս հասարակածային խմբից դեպի արևմուտք ու արևելք ցրված էին մի քանի գծեր, կետեր ու կիսաշրջաններ: Հյուսիսային բևեռը սուզվում էր մշուշի մեջ:

Լոսը անկշտում նայում էր գծերի այս ցանցին. ահա նրանք, աստղաբաշխներին խելքից հանող Մարսի հարափոփոխ, երկրաչափորեն ճիշտ ու առեղծվածային ջրանցքները: Այժմ արդեն Լոսը այդ պարզորոշ պատկերի տակ տարբերում էր երկրորդ, հազիվ նկատելի գծերի մի ուրիշ ցանց, որն ասես ջնջված լիներ:

Նա սկսեց իր ծոցատետրում գծագրել նրա մոտավոր պատկերը: Հանկարծ Մարսի սկավառակը ցնցվեց ու սկսեց լողալ դիտանցքի օկուլյարի մեջ: Լոսը նետվեց դեպի ռետոսատները:

— Ընկանք, Ալեքսեյ Իվանովիչ, ձգում են մեզ, վայր ենք ընկնում:

Ապարատը բկով շուռ եկավ դեպի մոլորակը: Լոսը պակասեցրեց և ապա բոլորովին դադարեցրեց շարժիչի աշխատանքը: Արագության փոփոխությունն այժմ արդեն պակաս վնասակար էր: Բայց

վրա հասավ մի այնպիսի տանջող լռություն, որ Գուսեր դեմքն առավ ձեռքերի մեջ ու սեղմեց ականջները:

Լոսը պառկել էր հատակին և նայում էր, թե ինչպես հետզհետե ավելի ու ավելի է մեծանում և ուռուցիկ դառնում արծաթափայլ սկավառակը: Թվում էր, թե սև անդունդից այժմ էլ հենց նա էր թռչում իրենց վրա:

Լոսը նորից միացրեց ռեոստատները: Ապարատը դողդողաց, հաղթահարելով Մարսի ձգողական ուժը: Վայրէջքի արագությունը դանդաղեց: Մարսն այժմ ծածկել էր ամբողջ երկինքը, աղոտացել, և նրա եզրերը թասի նման ուռուցիկ էին դարձել:

— Վերջին վայրկյանները սարսափելի էին. գլխապտույտ անկում էր: Մարսն էլ փակել էր ամբողջ երկինքը: Անսպասելիորեն քրտնեցին դիտանցքների ապակիները: Ապարատը ճեղքեց աղոտ հարթության վրայի ամպերը և, մոնչալով ու ցնցվելով, սկսեց դանդաղ իջնել:

— Արդեն գետնին ենք կաչում,— միայն հասցրեց բղավել Լոսը և անջատեց շարժիչը: Ուժեղ ցնցումից նա նետվեց դեպի պատը և շուռ եկավ: Ապարատը ծանրորեն նստեց գետնին ու շրջվեց կողքի վրա:

.

Ծնկներն ու ձեռքերը դողում էին, իսկ սիրտը թուլացել էր: Լոսն ու Գուսերը հապճեպորեն կարգի բերեցին ապարատի ներսը: Դիտանցքներից մեկի ճեղքից դուրս հանեցին կիսաշունչ դարձած մկնիկին, որ բերել էին Երկրից: Մուկը քիչ-քիչ կենդանացավ, վեր բարձրացրեց քիթը, սկսեց շարժել բեղերը և թաթերով լվանալ երեսը: Ուրեմն կյանքի համար օդը պիտանի էր:

Այդ ժամանակ նրանք քանդեցին մուտքի դռնակի պտուտակները: Լոսը, լիզելով շրթունքները, դեռևս խուլ ձայնով ասաց.

— Դե՛հ, Ալեքսեյ Իվանովիչ, շնորհավորում եմ հաջող տեղ հասնելու առթիվ: Դուրս գանք:

Նրանք հանեցին վալենկաներն ու կիսամուշտակները: Գուսերը մաուզերը կախեց գոտուց (գուցե պետք գա), ծիծաղեց և կրնկի վրա բացեց դռնակը:

ՄԱՐՍԸ

Դուրս գալով ապարատից, Լոսն ու Գուսերը տեսան փոթորկվող ծովի պես մուգ կապտագույն, շլացուցիչ, անհատակ երկինքը:

Հրաբորբ ու գիսառատ արևը կախվել էր Մարսի վրա: Կապույտ լույսի բյուրեղյա հոսանքները հորիզոնից մինչև զենիթ սառն էին, թափանցիկ...

— Ուրախ է սրանց արևը,— ասաց Գուսերը և փռշտաց:

Վերին աստիճանի շլացուցիչ էր լույսը այդ մուգ, կապույտ բարձրում: Կուրծքը թեթևակի ծակծկվում էր, արյունը խփում էր դեպի քունքերը, բայց շնչելը հեշտ էր. օդը մեղմ էր ու չոր:

Ապարատը ընկած էր նարնջագույն հարթության վրա: Հորիզոնը բոլորովին մոտ էր, ձեռքդ մեկնեիր՝ կհասներ: Հողը ամբողջովին ճաքճքված էր: Հարթության վրա ամենուրեք կանգնած էին կակտուսներ, որոնք մանուշակագույն ստվեր էին գցել գետնին: Փչում էր չոր քամի:

Լոսն ու Գուսերը երկար ժամանակ նայեցին իրենց շուրջը, ապա քայլեցին հարթավայրով: Քայլերը անսովոր կերպով հեշտ էր, թեև ոտքերը մինչև կռճերը թաղվում էին հողի մեջ: Պտույտ գործելով մի հաստաբուն ու բարձր կակտուսի շուրջը, Լոսը ձեռքը մեկնեց դեպի ծառը: Ձեռքը կպցնելուն պես կակտուսն այնպես սկսեց ճոճվել, որ ասես թե քամուց էր օրորվում: Հանկարծ մսալի, թխագույն ճյուղերը ձգվեցին դեպի նրա ձեռքը: Գուսերը կռշիկով խփեց արմատին.

— Ա՛խ դու, գարշելի:

Կակտուսը գետին տապալվեց՝ փշերը խրելով ավազի մեջ: Մոտ կես ժամ քայլեցին նրանք: Աչքերի առաջ միշտ նույն նարնջագույն հարթությունն էր փռված. կակտուսներ, մանուշակագույն ստվերներ, ճաքճքված գետին: Երբ թեքվեցին դեպի հարավ, և արևը մնաց կողքում, Լոսը սկսեց ուշադիր նայել, ասես ինչ-որ բան էր կռահում: Հանկարծ նա կանգ առավ, պզզեց, ապա ձեռքը խփեց ծնկանը:

— Ալեքսեյ Իվանովիչ, ախր հողը վարած է:

— Ի՞նչ ես ասում:

Եվ իրոք, պարզ երևում էին արտերի կիսացան լայն ակոսներն ու կակտուսների կանոնավոր շարքերը: Մի քանի քայլ հետո Գուսերի ոտքը կպավ մի սալաքարի, ու նա սայթաքեց: Քարի միջով բրոնզե մի մեծ օղակ էր անցկացված, որից պարան կար կապած: Լոսը քորեց կզակը, աչքերը փայլեցին:

— Ալեքսեյ Իվանովիչ, դուք ոչինչ չեք հասկանում:

— Դե տեսնում եմ, որ մենք ցանած արտի մեջ ենք գտնվում:

— Իսկ օղակն ինչի՞ համար է:

— Սատանան գիտե, թե ինչու են սալաքարի վրա օղակ հագցրել:

— Նրա համար, որ կապեն բակենները: Տեսնո՞ւմ եք խիստունջերը: Մենք գտնվում ենք չորացած ջրանցքի հատակին:

Գուսերն ասաց.

— Այո, ճշմարիտ է... Ջրի հարցն էստեղ դժվար է:

Նրանք շուտ եկան դեպի արևմուտք և քայլեցին ակոսների միջով: Հեռվում դաշտի վրա բարձրացել սավառնում էր կրետի պես կախ ընկած մարմնով մի թռչուն, որը ջղաձգորեն թափահարում էր թևերը: Գուսերը մի պահ կանգ առավ, ձեռքը դրեց ստորճանակին: Բայց թռչունը վեր ճախրեց և փայլփլելով թանձր կապույտում թաքնվեց մոտիկ հորիզոնի ետևը:

Գնալով կակտուսները ավելի բարձր, խիտ ու փարթամ էին դառնում: Հարկ էր լինում զգուշորեն անցնել նրանց փշոտ թավուտով: Ոտքի տակից փախչում էին քարափի մոդեսների նման կենդանիներ, որոնք վառ նարնջագույն էին, ունեին բազմաթիվ ոտքեր և աստամնաձև ողնաշար:

Լայնատերև թփուտների թավուտում նրանք մի քանի անգամ սայթաքեցին, մի կողմ էին նետվում ինչ-որ խոզանակաձև կծիկներ: Այստեղով զգույշ անցան:

Կակտուսները վերջացան կավճի պես սպիտակ գառիթափի եզրին, որը, ինչպես երևում էր, պատած էր հնամենի տաշած սալերով: Ճեղքերում ու սալաքարերի արանքներում կախ էին ընկել չորացած մամուռի թելիկները: Այդ սալերից մեկի միջով ճիշտ այնպիսի օղակ էր անցկացված, ինչպիսին քիչ առաջ նրանք տեսան արտի մեջ: Ողնաշարավոր մողեսները հանգիստ ննջում էին արևկողի ընկած:

Լոսն ու Գուսերը զառիվայրով վեր բարձրացան: Այստեղից երևում էր մի բլրաշատ հարթություն, որը դարձյալ նարնջագույն էր, բայց ավելի գունատ: Տեղ-տեղ ցաք ու ցրիվ ընկած էին լեռնային սոճիների նման գաճաճ ծառերի խմբեր: Մպիտակին էին տալիս ուրվագծվող ավերակներ ու քարակույտեր: Հեռվում, հյուսիսարևմտյան կողմում, բարձրանում էր մի լեռնաշղթա, որի սրածայր ու անհավասար կատարները թեժ կրակի լեզուների էին նմանվում: Գագաթներին պսպղում էր ձյունը:

— Ետ դառնանք, պետք է հաց ուտել, հանգստանալ,— ասաց Գուսերը,— հալից կընկնենք, էստեղ ոչ մի շնչավոր արարած էլ չկա:

Նրանք մի քիչ էլ կանգնեցին: Հարթավայրը ամայի էր ու տխուր, և դրանից էլ մարդու սիրտը նեղվում էր:

— Այ թե մոլորվեցի՛նք,— ասաց Գուսերը:

Նրանք իջան զառիվայրով, գնացին դեպի ապարատը և երկար ժամանակ կակտուսների մեջ փնտրում էին այն:

Հանկարծ Գուսերը շնջաց.

— Ահա՛, էնտե՛ղ է:

Եվ իր սովորության համաձայն անմիջապես ատրճանակը դուրս քաշեց պատյանից:

— Հե՛յ,— բղավեց նա,— ով կա ապարատի մոտ, ես ձեր է՛ն... կկրակեմ:

— Ո՞ւմ վրա եք գոռում:

— Տեսնո՞ւմ եք, ապարատը փայլում է:

— Այո, հիմա արդեն տեսնում եմ:

— Իսկ էնտե՛ղ, նրանից աջ՝ մեկը նստած է:

Վերջապես Լոսը տեսավ, ու նրանք սայթաքելով վազեցին դեպի ապարատը: Ապարատի մոտ նստած էակը մի կողմ քաշվեց, ապա թռչկոտեց կակտուսների մեջ, վեր ցատկեց, տարածեց թաղանթավոր երկար թևերը, ճայթուտով օդ բարձրացավ ու կիսաշրջան անելով սավառնեց նրանց գլխավերևում: Դա հենց այն էր, որին նրանք քիչ առաջ թռչունի տեղ էին դրել: Գուսերը ատրճանակն ուղղեց, որ տեղն ու տեղը սպանի թռչող գագանին: Բայց Լոսը խփեց նրա ձեռքին ու ցած գցեց ատրճանակը:

— Խեղդ թոցրե՛լ էս, ինչ է,— գոռաց նա:— Դա մարսեցի է...

Գլուխը վեր ցցելով, բերանը բաց, Գուսեր նայում էր զարմանալի էակին, որը պտույտներ էր կատարում բաց կապտավուն երկնքում: Լուսը հանեց թաշկինակը և սկսեց թափահարել դեպի տարօրինակ թռչունը:

— Մասիսլավ Սերգեևիչ, զգույշ եղեք, հանկարծ նա այնտեղից մեզ վրա բան-ման չշրմփացնի:

— Պահե՛ք ատրճանակը, ասում եմ:

Մեծ թռչունը ցածրացավ: Այժմ արդեն պարզ երևում էր մարդակերպ էակը, որը նստել էր թռչող ապարատի թամբին: Մինչև գոտկատեղը նրա մարմինը կախված էր օդում: Ուսերին հավասար թափահարվում էին երկու շարժական թևերը: Թևերի տակ, առջևում, պտտվում էր մի ստվերավոր սկավառակ, որն, ըստ երևույթին, օդային պտուտակ էր: Թամբի ետևում ապարատի պոչն էր՝ երկճյուղանի դեկով: Ամբողջ ապարատը դյուրաշարժ էր ու ճկուն, ինչպես կենդանի արարածը:

Ահա նա չքվեց հերկերի կողմը՝ մի թևը ներքև, մյուսը՝ վերև: Թվաց, թե մարսեցու գլխին երկար շքոցով ձվաձև գլխարկ կար դրած, աչքերին՝ ակնոցներ: Դեմքը աղյուսի գույն ուներ, նեղ էր, կնճռոտ ու սուր քթով: Նա բաց արեց մեծ բերանը և ինչ-որ բան ծղրտաց: Հետո սկսեց արագ-արագ թափահարել թևերը և ցածրանալ: Իջնելով գետնին, նա թամբից ներքև ցատկեց ու մոտ երեսուն քայլ հեռու փախավ նրանցից:

Մարսեցին միջահասակ էր, հագել էր դեղին, լայն շոր: Նրա սմբած ոտքերը ծնկներից վեր պինդ փաթաթված էին: Նա բարկացած ցույց էր տալիս ընկած կակտուսները: Բայց երբ Լոսն ու Գուսերը առաջացան դեպի նա, վերջինս աշխույժ կերպով ցատկեց թամբի վրա ու այնտեղից սպառնաց իր երկար մատով: Ապա գրեթե առանց թափ առնող վազքի, միանգամից վեր սավառնեց, անմիջապես նորից ներքև իջավ և ցույց տալով ջարդված բույսերը՝ շարունակեց բարկանալ իր ծվծվան, բարակ ձայնով:

— Տխմար, նեղանում է,— ասաց Գուսերը և գոռաց մարսեցու վրա:— Բավական է գոռոռաս, շան լակոտ: Վազիր մեզ մոտ, բան չենք անի:

— Ալեքսեյ Իվանովիչ, վերջ տվեք հայհոյելուն, նա ռուսերեն չի հասկանում: Նստեք, թե չէ՝ մոտ չի գա:

Լոսն ու Գուսերը նստեցին տաք հողին: Լոսն սկսեց ցույց տալով հասկացնել, որ ուտել ու խմել է ուզում: Գուսերը ծխախոտ վառեց, ներս քաշեց ծուխը և թքեց մի կողմ: Մարսեցին որոշ ժամանակ նայեց նրանց ու դադարեց բղավել, բայց դեռ բարկացած սպառնում էր մատիտի նման երկար մատով: Ապա թամբից արձակեց պարկը և գցեց մարդկանց կողմը: Հետո պտույտներով շատ վեր բարձրացավ, արագ հեռացավ դեպի հյուսիս, ծածկվեց հորիզոնի ետևում:

Պարկի մեջ կային երկու մետաղյա տուփ և հեղուկով լցված մի սադրիկ աման: Գուսերը բաց արեց տուփերը. մեկի մեջ սուր հոտ արձակող քաղցրեղեն կար, իսկ մյուսում՝ ռահատ լոխումի նման մածուցիկ կտորներ: Գուսերը հոտ քաշեց:

— Թյո՛ւ, տեսեք, թե ինչ են ուտում:

Նա ապարատից դուրս բերեց իրենց մթերքի զամբյուղը, հավաքեց ջարդված կակտուսի չոր կտորները, վառեց: Թեթև ծուխ բարձրացավ, կակտուսները վառվում էին առանց բոցի, բայց ջերմությունը ուժեղ էր: Տաքացրին տուփի միջի աղած միսը, ամբողջ ուտելիքը փռեցին մաքուր սրբիչի վրա: Ուտում էին ազահաբար, նոր միայն զգացին, որ անտանելի կերպով քաղցած են:

Արևը գտնվում էր գլխավերևում, քամին հանդարտել էր, շոգ էր: Նարնջագույն հողաթմբի վրայով սողում էր մի բազմոտանի գազանիկ... Գուսերը մի կտոր պաքսիմատ գցեց նրա կողմը: Գազանիկը բարձրացրեց եռանկյունաձև պոզավոր գլուխն ու տեղում կարծես քարացավ:

Լուսը մի ծխախոտ խնդրեց և, ձեռքը այտին հենած, կողքի ընկավ ու սկսեց ծխել:

— Ալեքսեյ Իվանովիչ,— ծիծաղելով ասաց նա,— գիտե՞ք, թե ինչքան ժամանակ է բան չենք կերել:

— Երեկ իրիկվանից, Մասիալավ Սերգենիչ, թռչելուց առաջ ես կարտոֆիլ կերա:

— Միրելի բարեկամս, ես ու դուք չենք կերել քսաներեք թե քսանչորս օր:

— Քանի՞ ...

— Երեկ Պետրոգրադում օգոստոսի տասնուրթն էր, իսկ այսօր Պետրոգրադում սեպտեմբերի տասնմեկն է: Ահա թե ինչպիսի հրաշքներ են լինում:

— Մասիալավ Սերգենիչ, եթե գլուխս էլ կտրեք, ես դա չեմ հասկանա:

— Դե ես էլ լավ չեմ հասկանում, թե ինչու է այդպես: Մենք թռանք ժամը յոթին... Հիմա, ինչպես տեսնում եք, ցերեկվա ժամը երկուսն է: Այս ժամացույցով տասնինը ժամ առաջ մենք թողեցինք Երկիրը: Իսկ այն ժամացույցով, որ մնաց իմ արհեստանոցում, անցել է մոտ մեկ ամիս: Դուք նկատե՞լ եք, երբ գնացքով տեղ եք գնում, քնում եք, գնացքը կանգնում է, դուք կամ արթնանում եք անհաճո զգացումից, կամ քնի մեջ սկսում եք տանջվել: Դա լինում է այն պատճառով, որ երբ վագոնը կանգ է առնում, ձեր ամբողջ մարմնի մեջ տեղի է ունենում արագության դանդաղեցում: Դուք պառկած եք վագոն վագոնում, ձեր սիրտը խփում է, և ձեր ժամացույցն ավելի արագ է աշխատում, քան եթե պառկած լինեիք անշարժ վագոնի մեջ: Տարբերությունը աննկատելի է, որովհետև արագությունը շատ փոքր է: Ուրիշ բան է մեր թռիչքը: Ճանապարհի կեսը մենք անցանք գրեթե լույսի արագությամբ: Այստեղ տարբերությունը զգալի է: Քանի որ մենք թռել ենք անօդ տարածության մեջ, սրտի աշխատանքն ընթացքի ու արագությունը միմյանց նկատմամբ մի ամբողջություն են կազմել ապարատի հետ. ամեն ինչ նրա հետ համաչափ առաջ է ընթացել: Բայց եթե ապարատի արագությունը հինգ հարյուր հազար անգամ գերազանցել է Երկրի մարմինների շարժման սովորական արագությանը, ապա իմ սրտի աշխատանքի արագությունը մեկ վայրկյանում կլինի մեկ խփոց, ըստ ապարատում եղած ժամացույցի, մեծացնելով հինգ հարյուր հազար անգամ, նշանակում է իմ սիրտը թռիչքի ժամանակ մեկ վայրկյանում խփում էր հինգ հարյուր հազար անգամ, ըստ Պետերբուրգում մնացած ժամացույցի: Իմ սրտի խփոցների, գրպանումս եղած ճշգրիտ ժամաչափի սլաքների շարժման և իմ ամբողջ մարմնի զգացողության համաձայն, մեր ճամփորդությունը տևել է տասնինը ժամ: Եվ իրոք դա տևել է տասնինը ժամ: Բայց պիտեբրու սրտի խփոցների և Պետրոպավլովյան ամբոցի ժամացույցի սլաքների շարժման համաձայն, մեր թռիչքի օրից անցել է ավելի քան երեք շաբաթ: Հետագայում կարելի կլինի մեծ ապարատ պատրաստել, վերցնել ուտելիքի, թթվածնի և ուլտրալիդդիտի կես տարվա պաշար և խենթուկ մարդկանց առաջարկել. ձեզ դուր չէ՞ն գալիս այս օրերը, ուզում եք ապրել հարյուր տարի հետո՞: Դրա համար պետք է կես տարվա համբերություն կուտակել, որ նստած մնաք այս տուփի մեջ: Բայց դրա փոխարեն ի՞նչ կյանք կլինի, է՞... Դուք կցատկեք հարյուր տարվա վրայից: Եվ նրանց լույսի արագությամբ կես տարով ուղարկել միջաստղային տարածությունները: Կկարոտեն, մորուքավոր մարդիկ կդառնան, իսկ երբ վերադառնան՝ Երկրում Ոսկեդար կլինի: Եվ այդ ամենը, այժմ, երբևէ այդպես էլ կլինի:

Գուսերը հառաչեց, չրթացրեց լեզվով և շատ զարմացավ:

— Մստիսլավ Սերգենիչ, իսկ ի՞նչ եք մտածում այս խմիչքի մասին, չե՞նք թունավորվի:

Նա մարսեցու սրվակից ատամներով դուրս քաշեց խցանը, լեզվով համտես արեց հեղուկն ու թքեց. կարելի էր խամել: Մի քիչ կոնծեց ու չպչպացնելով բերանը, ասաց.

— Մեր մադերային է նման:

Փորձեց Լոսը: Հեղուկը թանձր էր, մի քիչ քաղցր և ծաղիկների ուժեղ հոտ էր բուրում: Փորձելով նրանք խմեցին սրվակի կեսը: Երակներով տաքություն և հատկապես թեթև ուժ անցավ, բայց գլուխները նորից պայծառ մնացին:

Լոսը վեր կացավ, ձգվեց, ուղղվեց. նրա համար լավ էր, թեթև, տարօրինակ այս օտար երկնքի տակ, անհրական, զարմանահրաշ: Կարծես թե նրան դուրս էին նետել աստղային օվկիանի ալիքները, նորից էր ծնվել մի նոր ու չճաշակած կյանքով:

Գուսեր ուտելիքներով զամբյուղը ետ տարավ ապարատի մեջ, ամուր փակեց դռնակը, գլխի սաղավարտը թեքեց մինչև ծոծրակը և ասաց.

— Լավ է, Մստիսլավ Սերգենիչ, մեր գալու համար չեմ փոշմանել:

Որոշվեց նորից գնալ դեպի ափը և բլրաշատ հարթությունում ման գալ մինչև մութն ընկնելը:

Ուրախ գրուցելով նրանք քայլեցին կակտուսների միջով, երբեմն երկար ու թեթև թռիչքներով ցատկելով նրանց վրայից: Քիչ հետո թփուտների միջից սպիտակին էին տալիս առափնյա զառիվայրի քարերը:

Հանկարծ Լոսը կանգնեց: Զգվանքի թեթև սարսուռ անցավ նրա մեջքով: Երեք քայլի վրա, գետնի փարթամ թփերի ետևից նրան էին նայում մեծ, կիսախուփ շեկ կոպերով աչքեր, որ ասես ձիու աչքեր լինեին: Նայում էին լարված ու կատաղի չարությամբ:

— Ինչո՞ւ կանգնեցիք,— հարցրեց Գուսերը և այդ պահին ինքն էլ նկատեց աչքերը ու, առանց մտածելու, անմիջապես կրակեց նրանց վրա. փոշի բարձրացավ: Աչքերն անհետացան:— Միա մի զզվելի արարած ևս,— Գուսեր շուռ եկավ և նորից կրակեց սարդի մեծ ոտքերով, սրընթաց փախչող, մուգ դարչնագույն, ցանցառ շերտերով գեր մարմնի վրա: Դա մի հսկայական սարդ էր, որպիսիք Երկրի վրա լինում են միայն խոր ծովերի հատակին: Սարդը կորավ մացառուտների մեջ:

ԼՔՎԱԾ ՏՈՒՆԸ

Ափից մինչև մոտակա ծառակույտը Լոսն ու Գուսերը քայլում էին խանձված, մուգ դարչնագույն հողերի միջով, ցատկոտում փուլ եկած նեղ ջրանցքների վրայով, շրջանցում ցամաքած լճակները: Տեղ-տեղ կիսով չափ լցված ավազե ջրափոսերում դուրս էին ցցվել բեռնանավակների ժանգոտած կմախքները: Անկենդան ու տրտում հարթության վրա տեղ-տեղ փայլվում էին մոտ մեկ մետր տրամագծով ուռուցիկ սկավառակներ: Այդ սկավառակների արտացոլված շողերը ձգվում էին ատամնավոր սարերից և բլուրների վրայով ընկնում դեպի ծառակույտերն ու ավերակները:

Երկու բլուրների արանքում բարձրանում էր գաճաճ, ճյուղատարած ծառերի մուգ դարչնագույն տաղավարը: Այդ ծառերի ճյուղերը հաստակեղև էին, ամուր, տերևները հիշեցնում էին մանր

քարաքոսեր, ծառաբները կոնգոմաշատ էին ու ջլուտ: Բացատում, ծառերի միջև փշացանցերի կտորներ էին կախված:

Մտան փոքրիկ անտառը: Գուսերը կոացավ ու բռթեց ոտքով. հողի տակից դուրս գլորվեց մարդկային մի կոտրված գանգ, որի ատամների մեջ մետաղ էր փայլում: Անտառակում հեղձուցիչ տոթ էր, մամռակալված ճյուղերը խղճուկ ստվեր էին նետել: Քամի չէր խաղում: Մի քանի քայլ հետո նրանք նորից հանդիպեցին ուռուցիկ սկավառակին, որը ամրացված էր մետաղե կլոր հորի հիմքին: Անտառակի եզրին երևում էին ավերակներ. աղյուսե հաստ պատեր, որ ասես պայթյունից էին քարուքանդ եղել, խիպարի սարեր, ծոված ծայրերով կախ ընկած երկաթյա գերաններ:

— Տները պայթեցված են, Մստիսլավ Մերգենիչ,— ասաց Գուսերը:— Այստեղ, ըստ երևույթին, կարգին գործ են տեսել: Դե էդ բաները մեզ ծանոթ են:

Աղբակույտի վրա երևաց մի մեծ սարդ և ճաքճքված պատի եզրով ներքև փախավ: Գուսերը կրակեց: Սարդը վեր թռավ և մեջքի վրա ընկավ գետնին: Նույն պահին, մուգ շագանակագույն փոշի բարձրացնելով, տան կողմից դեպի ծառերը վազեց երկրորդ սարդը և, ընկնելով փշե ցանցի մեջ, սկսեց թփրտալ, աշխատելով դուրս քաշել ոտքերը:

Գուսեն ու Լոսը մացառուտից դուրս եկան և բլուրն ի վար իջան դեպի երկրորդ անտառակը, այնտեղ, ուր հեռվից երևում էին աղյուսե շինություններ և հարթ կտուրով մի քարաշեն տուն, որը մյուսներից բարձր էր: Բլրակի ու ավանի միջև դրված էին մի քանի սկավառակներ: Յուրջ տալով դրանք, Լոսն ասաց.

— Ամենայն հավանականությամբ սրանք ջրմուղի, օդաճնշման խողովակների ու էլեկտրական լարերի հորեր են: Եվ այս բլուրն էլ, ըստ երևույթին, լքված են:

Նրանք մագլցելով անցան փշե ցանցը, ոտքով կտրեցին փոքր անտառը և մոտեցան լայն, սալաքարերով պատած մի բակի: Բակի խորքում կանգնած էր մռայլ ճարտարապետություն ունեցող մի տարօրինակ տուն: Նրա արտասովոր հարթ պատերը վերևում նեղանում էին և վերջանում սև արնագույն քարե մեծ քիվով: Պատերի մեջ լուսամուտների համար բացված էին երկար, նեղ ու խոր անցքեր, որ ասես ճեղքեր լինեին: Գնալով նեղացող երկու թեփուկավոր այուն մուտքի վերևում պահել էին բրոնզե խորաքանդակը՝ փակ աչքերով մի հանգուցյալի կերպարանք: Շենքի ամբողջ լայնքով շինված հարթ սանդուղքները տանում էին դեպի ցածրադիր ու ամրակուռ դուռը: Սողացող բույսերի չորացած թելերը կախվել էին պատերի մուգ սալիկների արանքներում: Տունը հիշեցնում էր մի վիթխարի դամբարան:

Գուսերը փորձեց ուսով հրել մետաղյա դուռը: Դուռը ճոռալով ներքև տապալվեց: Նրանք անցան նախասրահը և մտան մի բարձր դահլիճ: Այստեղ լույսը թափանցում էր գմբեթի ապակու միջով: Դահլիճը գրեթե դատարկ էր: Մի քանի շուռ եկած աթոռակներ, փոշոտ, սև սփռոցով մի ցածրիկ սեղան, քարե հատակին՝ ջարդված ամաններ, դռների մոտ՝ սկավառակներով, գնդիկներով ու մետաղյա ցանցով թնդանոթանման, բայց շատ տարօրինակ տեսքով մի մեքենա: Այդ ամենը ծածկված էր փոշու շերտով:

Փոշոտ լույսը ընկել էր դեղնավուն, ոսկեցայտ պատերին: Վերևում պատերը գոտևորված էին մոզակիլայի լայն շերտով: Ամենայն հավանականությամբ, դա պատկերում էր պատմական մի իրադարձություն՝ դեղնամորթ էակների պայքարը կարմրամորթների դեմ: Երևում էր մինչև գոտկատեղը ծովի ալիքների մեջ ընկղմված մի մարդկային կերպարանք, այդ նույն կերպարանքը թռչում էր նաև աստղերի միջև: Ուրիշ նկարներ պատկերում էին ճակատամարտեր, գիշատիչ

գագանների հարձակումներ, տարօրինակ կենդանիների հոտեր, որ քշում էին հովիվները, ապա կենցաղի, որսի, պարի, ծննդյան ու թաղման տեսարաններ: Այս մոզաիկայի մռայլ գոտին միանում էր դռների վերև պատկերված հսկայական կրկեսի շինությանը:

— Տարօրինակ է, տարօրինակ,— կրկնում էր Լուսը, բարձրանալով բազմոցի վրա, որ ավելի լավ տեսնի մոզաիկան,— հասկանում եք, ամենուրեք կրկնվում է մարդկային գլխի նույն հետաքրքրական պատկերը, շատ տարօրինակ է...

Այդ ժամանակ Գուսերը պատի մեջ հագիվ նշմարվող մի դուռ նկատեց: Այդ դուռը բացվում էր ներսի սանդուղքի վրա, որը տանում էր փոշեխառն լույսով ողողված մի լայն, կամարակապ միջանցք: Միջանցքի պատերի երկայնքով ու որմնախորշերում կանգնած էին քարե ու բրոնզե կերպարանքներ, իրաններ, գլուխներ, դիմակներ, գանգեր: Մարմարով բրոնզով զարդարված շքադռները նրան տարան ներսի սենյակները:

Գուսերը նայեց կողքերի ցածրիկ, նեխահոտ, թույլ լուսավորված սենյակները: Մեկում ցամաքած ջրավազան կար, որի մեջ փոված էր մի սատկած սարդ: Մյուսում՝ փշոված մի հայելի, որ բռնում էր պատերից մեկը, հատակին՝ փտած ջնջոցների մի կույտ, շրջված կահույք, իսկ պահարաններում՝ զգզված շորեր:

Երրորդ սենյակի բարձրադիր տեղում, երդիկի տակ, որ տեղից լույսն էր ընկնում, կար մի լայն պառկելատեղ: Այնտեղից կիսով չափ կախված էր մի մարսեցու կմախք: Ամենուրեք կատաղի պայքարի հետքեր էին երևում: Անկյունում ընկած էր երկրորդ կմախքը:

Այստեղ, աղբերի մեջ, Գուսերը գտավ ծանր մետաղից շինված մի քանի նախշած իրեր, որոնք, ըստ երևույթին, կանացի գործածության իրեր էին և գունավոր քարից շինված փոքրիկ ամաններ: Նա կմախքի փտած հագուստի վրայից հանեց փոքրիկ շղթայով միմյանց միացված երկու մեծ մուգ ոսկեգույն քարեր, որ ասես ներսից լույս էին արձակում: «Պետք կգա,— ասաց ինքն իրեն Գուսեր,— Մաշային կնվիրեմ...»

Լուսը նայում էր միջանցքի քանդակները: Մարսեցիների սրաքիթ գլուխների, ծովային հրեշների պատկերների, նախշուն դիմակների, էտրուսկյան սափորների գծագրերի ու նկարների նմանվող ծեփված վազերի մեջ նրա ուշադրությունը գրավեց մի կիսանդրի: Դա զգզված մազերով, անհամաչափ ու դաժան դեմքով մի մերկ կնոջ քանդակ էր: Նրա սրածայր ստիները կախ էին ընկել երկու կողմի վրա: Գլուխը փաթաթված էր աստղիկներից շինված ոսկե օղակապով, որը ճակատի վրա վերածվում էր նուրբ կոնագծի: Ներսում կային երկու գնդիկներ՝ սուտակից և կարմրաաղյուսագույն: Զգայուն ու տիրական դիմագծերում կար ինչ-որ ծանոթ և անհիշելի մի հուզմունք:

Արձանի կողքին, պատի մեջ սևին էր տալիս ցանկապատով փակված ոչ այնքան մեծ մի որմնախորշ: Լուսը մատները կոխեց ճաղերի արանքը, բայց ցանկապատը չընկավ: Նա վառեց լուցկին և որմնախորշի մեջ, փտած բարձի վրա մի ոսկե դիմակ տեսավ, որի վրա պատկերված էր լայն այտուսկրերով ու աչքերը հանգիստ փակած մի մարդկային դեմք: Լուսնաձև բերանը ժպտում էր: Քիթը սուր էր՝ կտուցի պես: Ճակատին, հոնքերի միջև, ճպուռի աչքի մեծությամբ մի ուռուցք կար: Դա այն գլուխն էր, որը մոզաիկայով պատկերված էր առաջին դահլիճում:

Լուսը վառեց կես տուփ լուցկի և հուզմունքով նայում էր զարմանալի դիմակին: Երկրից մեկնելուց ոչ շատ առաջ տեսել էր նման դիմակների լուսանկարներ, իսկ այդ դիմակները վերջերս էին գտնվել Նիգերիայի ափերին գտնվող հսկայական քաղաքների ավերակները պեղելիս: Դա Աֆրիկայի այն

մասն է, որտեղ ենթադրում են անհետացած առեղծվածային մարդացեղի կուլտուրայի հետքերը գտնել:

Միջանցքի կողքի դռներից մեկը կիսաբաց էր: Լուսը մտավ ճաղավոր բազրիքներով շատ բարձր ու երկար մի սենյակ: Ներքևում ու վերևում դասիկոնների վրա դրված էին հարթ պահարաններ ու երկարաձիգ թարեքներ, որոնց վրա փոքր ու հաստ գրքույկներ էին շարված:

Դրոշմներով ու ոսկե նախշերով զարդարված գրքակոնակները միատեսակ գծերով ձգվում էին գորշ պատի երկայնքով: Պահարաններում կային մետաղյա գլանիկներ, ինչպես նաև փայտե ու կաշեկազմ հսկայական գրքեր: Պահարաններից, թարեքներից ու գրադարանի մութ անկյուններից քարացած աչքերով նայում էին մարսեցի գիտնականների կնճռոտված ու ճաղատ գլուխները: Սենյակում դրված էին մի քանի նստարան, բարակ ոտքերի վրա կանգնած մի քանի արկղ, որ կողքերից կլոր էկրաններ ունեին:

Շունչը պահած՝ Լուսը նայում էր բորբոսի ու դիակի հոտ արձակող այս գանձարանին, որտեղ լռել ու գրքերում թաքնվել էր Մարսի վրայով անցած հազարամյակների իմաստությունը:

Նա զգույշ մոտեցավ գրադարակին և սկսեց բաց անել գրքերը: Թղթերը կանաչավուն էին, տառերը՝ երկրաչափական գծագրերի նման և տպագրված էին թույլ դարչնագույն ներկով: Գրքերից մեկում մեքենաների գծագրեր կային: Լուսը դա դրեց գրպանը, որ ազատ ժամերին նայի: Մետաղյա գլանիկներում դրված էին դեղնավուն, եղունգի շփումից ձայն ձայնագրող գործիքի գլանին, բայց մակերեսը ապակու պես հարթ էր: Այդպիսի գլանիկներից մեկը դրված էր էկրանավոր արկղիկի վրա, որն, ըստ երևույթին, պատրաստել էին լիցքի համար, բայց տան կործանման ժամանակ դեն էին նետել:

Հետո Լուսը բաց արեց սև պահարանը, վերցրեց պատահած կաշեկազմ, թեթև ու փափուկ գրքերից մեկը, որ կրծոտել էին որդերը, և թևքով զգույշ սրբեց վրայի փոշին: Նրա մաշված ու դեղնած թերթերը զիզզազ դասավորությամբ անընդհատ վերևից ներքև էին գնում: Մեկը մյուսին հաջորդող էջերը ծածկված էին եղունգի մեծությամբ գունավոր եռանկյունիներով: Դրանք անցնում էին ձախից դեպի աջ ու ընդհակառակը, գնում էին զիզզազ գծերով, մեկ ընկնելով ու մեկ իրար կպած և փոփոխվում էին թե՛ գույնով և թե՛ ձևով: Մի քանի էջ հետո եռանկյունիների միջև հայտնվեցին գունավոր շրջանակներ, որոնք փոխում էին իրենց ձևն ու գույնը: Եռանկյունիներն սկսեցին այնպես դասավորվել, որ առաջանում էին պատկերներ: Գույների հյուսվածքն ու երանգները և եռանկյունիների, շրջանակների, քառակուսիների ու բարդ ֆիգուրների ձևերը վազվզում էին մի էջից մյուսը: Լուսի ականջին սկսեց հասնել հազիվ լսելի, նուրբ ու սքանչելի մի երաժշտություն:

Նա ծածկեց գիրքը և գրադարակին հենված՝ երկար ժամանակ կանգնել էր անսովոր կախարդանքից հուզված ու շշմած. դա երգող գիրք էր:

— Մասիսլավ Սերգեևիչ,— ամբողջ տունը դողդացնելով լսվեց Գուսևի ձայնը,— այստեղ եկեք, շո՛ւտ:

Լուսը միջանցք դուրս եկավ: Միջանցքի ծայրին, դռների մեջ կանգնել էր Գուսևը և վախեցած ժպտում էր:

— Մի նայեք, թե ինչ է կատարվում նրանց մոտ:

Նա Լուսին տարավ նեղ, կիսամութ մի սենյակ: Դիմացի պատի մեջ կար քառակուսի, մեծ ու փայլատ հայելի, որի առջև դրված էին մի քանի աթոռ ու թիկնաթոռ:

— Տեսնում եք, լարից գնդիկ է կախված, կարծում եմ, որ ոսկուց է, ասի պոկեմ, և նայիր, թե ինչ ստացվեց:

Գուսերը քաշեց գնդիկից: Հայելին լուսավորվեց, երևացին աստիճանաձև վիթխարի տներ, մայր մտնող արևի շողերով՝ փայլփլող լուսամուտներ, փողփողացող դրոշակներ: Մենյակով մեկ տարածվեց ամբոխի խուլ բվվոց: Ծածկելով քաղաքի ուրվապատկերը, հայելու մեջ վերևից ներքև սահեց մի թևավոր սովեր: Հանկարծ կրակի բռնկումով լուսավորվեց էկրանը, մի կարճ ճայթյուն լավեց սենյակի հատակի տակից, և մշուշապատ հայելին հանգավ:

— Կարճ միացում, լարերն այրվեցին,— ասաց Գուսերը:

— Պետք է գնալ, Մստիսլավ Մերգենիչ, շուտով գիշերը վրա կհասնի:

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Տարածելով նեղ ու մշուշապատ թևերը, բոցավառ արեգակը թեքվել էր մայրամուտ:

Կիսախավար, այժմ արդեն ավելի ամայի և վայրի թվացող հարթավայրով Լոսն ու Գուսերը շտապում էին դեպի ջրանցքի ափը: Արևն արագ հեռացավ դաշտի մոտակա ծայրի ետևը և չքացավ: Մայրամուտը ողողվեց կուրացուցիչ, ալ հրացույթով: Արևի ճառագայթները, որ լուսավորել էին երկնքի կեսը և արագ-արագ ծածկվում էին գորշ մոխրով, մարեցին: Երկնակամարն ասես անթափանցելի դարձավ:

Մոխրագույն վերջալույսում Մարսի վրա երևաց մի մեծ, կարմիր աստղ, որ ասես կատաղած աչք լիներ: Մի քանի ակնթարթ խավարը լցվել էր միայն նրա մոռյլ ճառագայթներով:

Բայց արդեն անչափ բարձր երկնագմբեթով մեկ սկսեցին դուրս թափվել աստղերը, շողշողուն ու կանաչավուն համաստեղությունները, որոնց սառը ճառագայթները աչք էին ծակծկում: Մռայլատես աստղը ծագելուն պես սկսեց պայծառանալ:

Հասնելով ափ, Լոսը կանգ առավ և, ձեռքով ցույց տալով այդ աստղը, ասաց.

— Երկիրն է:

Գուսերը հանեց սաղավարտը, սրբեց ճակատի քրտինքը: Երկարացնելով վիզը, նա սկսեց նայել համաստեղությունների արանքում երևացող իր հեռավոր հայրենիքին: Նրա դեմքը թախծոտ էր, սմբած:

— Երկի՛ր,— կրկնեց նա:

Նրանք այդպես երկար կանգնեցին հինավուրց ջրանցքի ափին, աստղերի աղոտ լույսի մեջ հազիվ նշմարվող կակտուսների հարթության մոտ:

Բայց ահա հորիզոնի գծի ետևից երևաց մի լուսավոր մանգաղ, որն ավելի փոքր էր, քան լուսնինը, և սկսեց բարձրանալ կակտուսների դաշտի վրա: Լայնատերև բույսերի երկար ստվերները ընկել էին գետնին:

Գուսերը արմունկով հրեց Լոսին:

— Մի մեր ետևը նայիր:

Նրանց ետևում, բլրաշատ հարթության, պուրակների ու ավերակների վերևում փայլում էր Մարսի երկրորդ արբանյակը: Նրա կլոր, դեղնավուն սկավառակը, որ նույնպես փոքր էր լուսնից, թեքվել էր դեպի ատամնավոր սարերը: Բլուրների մեջ ցոլցում էին մետաղյա սկավառակները:

— Էս էլ գիշերը,— շնչաց Գուսևը,— ասես երագում լինի:

Նրանք ափից զգույշ իջան ներքև՝ դեպի կակտուսների թփուտները: Ոտքերի տակից մի կողմ նետվեց ինչ-որ մեկի ստվերը: Երկու լուսինների ցոլքի միջով վազեց մի բրդոտ կծիկ, որը կրճտացնում էր ատամները, ծղրտում բարակ ու անտանելի սուր ձայնով: Շարժվում էին կակտուսների փայլվիտ տերևները: Լուսի ու Գուսևի դեմքերին կաշում էր ցանցի նման առաձգական սարդոստայնը:

Հանկարծ գիշերը լցվեց շողոքորթ ու ճղճղան ոռնոցով և միանգամից կտրվեց: Ամեն ինչ պապանձվեց: Գուսևն ու Լուսը զզվանքից ու սարսափից ցնցված՝ մեծ-մեծ ոստյուններով վազեցին դաշտի միջով, բարձր թռչկոտելով կենդանացած բույսերի վրայից:

Վերջապես ծագող մանգաղի լույսի մեջ փայլվեց ապարատի պողպատե արտաքինը: Մոտ վազեցին: Նստեցին ու սկսեցին հևալ:

— Չէ, գիշերով էս էսպիսի տեղեր գնացողը չեմ,— ասաց Գուսևը, բաց արեց դռնակը և մտավ ապարատը:

Լուսը դեռ դանդաղում էր: Ականջ էր դնում, նայում շուրջը: Եվ ահա նա նկատեց, որ աստղերի արանքում ֆանտաստիկ տեսքով լողում է նավի թևավոր ստվերը:

ԼՈՍԸ ՆԱՅՈՒՄ Է ԵՐԿՐԻՆ

Օդային նավի ստվերը չքացավ: Լուսը ելավ թրջված ապարատի վրա. ծխամորճ էր ծխում ու նայում աստղերին: Մի բարակ սարսուռ անցավ մարմնով: Իսկ Գուսևը չարչարվում էր ապարատի ներսում: Նա խոսում էր քթի տակ, գնում գտած իրերը և թաքցնում: Հետո նա գլուխը դուրս հանեց դռնակից ու ասաց.

— Ինչ էլ որ դուք ասեք, Մստիսլավ Սերգեևիչ, էս բոլորը ոսկի է, իսկ քարերն էլ գին չունեն: Այ թե կնիկս կուրախանա՝

Նա գլուխը նորից ներս քաշեց և քիչ հետո բոլորովին լռեց: Երջանիկ մարդ էր Գուսևը:

Բայց Լուսը քնել չկարողացավ, նստած նայում էր աստղերին, ծծում ծխամորճը: Սատանան գիտե, թե սա ինչ բան է, Մարսի վրա որտեղի՞ց կարող էին ընկնել ճպուռի աչքին նմանվող իրենց երրորդ տարբերիչ աչքերով այդ ոսկյա դիմակները: Հապա մոզաիկան, ծովում կործանվող ու աստղերի միջև թռչող հսկանե՞րը: Իսկ այլաբանական նշաննե՞րը, սուտակե երկրագո՞ւնդն ու աղյուսագույն Մա՞րսը, երկու աշխարհների վրա իշխելու նշաննե՞րը: Հապա երգող գի՞րքը, մշուշապատ հայելու մեջ երևացող տարօրինակ քաղա՞քը: Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ այս ամբողջ աշխարհը լքված ու անտեսություն է մատնված:

Լուսը՝ կրունկին խփելով, դատարկեց ծխամորճը: Երանի թե ցերեկն ավելի շուտ գար: Հավանական է մարսեցի օդաչուն ինչ-որ տեղ բնակավայր ցույց կտա: Կարող է պատահել, որ մարսեցիները հիմա էլ փնտրում են իրենց, և աստղերից առաջ երկնքում սավառնող նավը հենց ուղարկված էր իրենց ետևից:

Լուսը հայացքով զննեց երկինքը: Կարմրավուն աստղի՝ Երկրի, լույսը աղոտացել էր: Երկիրը մոտենում էր զենիթին, և նրանից եկող շողիկը ուղիղ նրա սիրտն էր խոցում:

Անքուն գիշերին մարագի դռանը կանգնած Լուսը նույնպիսի սառը թախիժով նայում էր Մարսին: Դա նախանցյալ գիշերն էր: Ընդամենը մի օր ու գիշեր էր բաժանում նրան այդ պահից, Երկրից:

Երկիր, Երկիր, մերթ ամպերի մեջ, մերթ էլ լույսի ցուլքերում երևացող կանաչ, փարթամ ու ջրառատ Երկիր, ու չնայած զավակների նկատմամբ անխնա ու դաժան, բայց և այնպես սիրելի հայրենիք...

Սառցե սառնությամբ ճնշվում էր նրա ուղեղը: Երկրի այդ կարմրավուն գունդը ասես ջերմ սիրտ լիներ... Մարդը և նույնիսկ օրաճանճը վայրկենապես կյանքի են կոչվում, իսկ ինքը իր խելացնոր կամքով բաժանվեց հայրենիքից և հիմա հուսալքված, սատանայի պես մենակ նստած է ամայության մեջ: Ահա և նա՝ մենակությունը: Դու ա՞յդ էիր ուզում: Ազատվեցի՞ր ինքդ քեզանից...

Լուսը սարսուռից ցնցեց ուսերը: Ապա ծխամորճը դրեց գրպանը, մտավ ապարատն ու պառկեց խոնփացող Գուսևի կողքին: Այդ հասարակ մարդը չդավաճանեց հայրենիքին, թռավ այդքան հեռու, իններորդ երկինքը և այստեղ իրեն զգում է այնպես, ինչպես այնտեղ՝ իր տանը... Քնած է հանգիստ, մաքուր խղճով:

Ջերմից ու խոնջությունից Լուսը ննջում էր: Երագում նա գտավ իր մխիթարությունը: Տեսավ երկրային գետի ափը, քամուց աղմկող կեչիներ, ամպեր, ջրի մեջ ընկած արևի շող, գետի հակառակ ափին՝ լուսավոր ու փայլվիլուն շորերով մի մարդ, որ ձեռքով էր անում նրան, կանչում: Լուսին ու Գուսևին արթնացրեց օդային պտուտակների ուժգին աղմուկը:

ՄԱՐՍԵՑԻՆԵՐԸ

Ոլորված մանվածքի նմանվող վարդագույն ամպերի կուրացուցիչ շարանները ծածկել էին վաղորդյան երկինքը: Մերթ երևալով մուգ կապտագույն լուսաբացատներում, մերթ էլ անհետանալով վարդագույն ամպերի շարանների ետևը, ցած էր իջնում արևի ճաճանչներով ողողված մի թռչող նավ: Նրա եռակայն կմախքի տեսքը հիշեցնում էր վիթխարի բզեզի: Երեք գույգ սրածայր թևեր էին մեկնված նրա կողքերից:

Նավը ճեղքեց ամպերը և արծաթագույն փայլով կախվեց կակտուսների վրա: Նրա ծայրերի կարճ կայների վրա ուժգնորեն մոնչում էին ուղղահայաց պտուտակները և չէին թողնում, որ նավը ներքև իջնի: Հանկարծ կողքերից փոքրիկ սանդուղքներ բացվեցին, և նավը նստեց նրանց վրա: Պտուտակները կանգ առան:

Աստիճաններով ներքև վազեցին վտիտ կերպարանքով մարսեցիները: Նրանք դրել էին ձվաձև ու միատեսակ գլխարկներ, հագել էին արծաթագույն լայն բաճկոններ, որոնց հաստ օձիքները ծածկել էին վիզն ու դեմքի ներքևի մասը: Բոլորի ձեռքին էլ զենք կար, որ նման էր մեջտեղում սկավառակ ունեցող կարճ ավտոմատ հրացանի:

Գուսեր խոժոռած դեմքով կանգնել էր ապարատի կողքին: Ձեռքը մատուցերին դրած նայում էր, թե ինչպե՞ս մարսեցիները երկու շարք էին կանգնում: Նրանց գենքերը փողերով ընկած էին ծալած ձեռքերի վրա:

— Սրիկաները գենքը կնկա պես են բռնել,— փնթփնթաց նա քթի տակ:

Լոսը ձեռքերը կրծքին դրած կանգնել ու ժպտում էր: Նավից վերջինը իջավ ցած թափվող մեծ ծալքերով սև խալաթ հագած մի մարսեցի: Նրա բաց գլուխը ճաղատ էր, ելունդներով ծածկված: Անմագ, նեղ դեմքը երկնագույն էր:

Խրվելով փխրուն հողի մեջ, նա անցավ երկշարք կանգնած զինվորների մոտով: Նրա դուրս ընկած, պսպղուն, սառցային աչքերը կանգ առան Գուսերի վրա.

Հետո նա սկսեց նայել միայն Լոսին: Մոտենալով նրանց, մարսեցին վեր բարձրացրեց լայն թևքի մեջ կորած փոքրիկ ձեռքը և բարակ, սառը ձայնով դանդաղ ասաց թռչնային բառ.

— Տալցետլ:

Ավելի լայնացան նրա աչքերը ու լուսավորվեցին սառը հուզմունքով: Նա կրկնեց թռչնային բառը և հրամայողական եղանակով ցույց տվեց երկինքը: Լոսը ասաց.

— Երկիր:

— Երկիր, դժվարությամբ կրկնեց մարսեցին, վեր բարձրացնելով ճակատի մաշկը: Գլխի ելունդները սևացան: Գուսեր իրար կպցրեց ոտքերը, հագաց և բարկացկոտ ասաց,

— Մովետական Ռուսաստանից ենք, ռուսներ ենք մենք: Ձեզ մոտ ենք եկել, ուրեմն, բարև ձեզ,— նա ձեռքը տարավ դեպի շքոցը,— մենք ձեզ չենք նեղացնի, դուք էլ մեզ մի նեղացրեք...— Եվ դառնալով դեպի Լոսը, ավելացրեց,— Մստիսլավ Մերգենիչ, նա մեր լեզվով ոչինչ էլ չի հասկանում:

Մարսեցու երկնագույն, մտախոհ դեմքը անշարժ էր, միայն թեք ճակատին, հոնքերի միջև, լարվածությունից սկսեցին դուրս գալ կարմրավուն բշտիկներ: Ձեռքի թեթև շարժումով նա ցույց տվեց արևը և տարօրինակ հնչող, բայց արդեն ծանոթ ձայնով կամաց ասաց.

— Սոացր:

Նա ցույց տվեց հողը և պարզեց ձեռքերը, ասես թե գունդ էր գրկում:

— Տումա:

Մատնացույց անելով իր ետևում կիսաշրջանաձև կանգնած զինվորներից մեկին, նա ցույց տվեց Գուսերին, իրեն, Լոսին և ասաց.

— Շոխո:

Նույն կերպ նա տվեց մի քանի առարկաների անունները և լսեց նրանց անվանումը Երկրի լեզվով: Մոտենալով Լոսին նա հանդիսավոր կերպով մատնեմատը կպցրեց նրա ճակատին, հոնքերի մեջտեղում եղած փոսիկին: Լոսը թեքեց գլուխը՝ ի նշան ողջույնի: Երբ մոտեցան իրեն, Գուսերը շքոցը քաշեց աչքերը.

— Այսպես են վարվում վայրենիների հետ:

Մարսեցիին մոտեցավ ապարատին և երկար, զսպած զարմանքով, ապա, ըստ երևույթին, հասկանալով նրա կառուցման սկզբունքը, հիացմունքով զննեց հսկայական պողպատե ձուն, որը այրուքի կեղևով էր ծածկված: Հանկարծ նա ձեռքերն իրար խփեց, շուտ եկավ դեպի զինվորները և, բռնեցնեցները երկինք բարձրացնելով, սկսեց արագ-արագ խոսել նրանց հետ:

— Ահու,— պատասխանեցին զինվորները ոռնացող ձայնով:

Նա ձեռքը դրեց ճակատին, խորը շունչ քաշեց, զսպեց հուզմունքը և շրջվելով դեպի Լոսը, արդեն առանց սառնության, մի փոքր մթամած ու խոնավ աչքերով նայեց նրա աչքերի մեջ:

— Ահու,— ասաց նա,— ահու ուտարա շոխո, դացիա Տումարա գեո Տալցետլ:

Դրանից հետո նա ձեռքով ծածկեց աչքերը և խոնարհվեց:

Ուղղվելուց հետո մոտ կանչեց մի զինվորի, վերցրեց նրա նեղ դանակը և սկսեց ապարատի կեղևի վրա գծել մի ձվաձև մարմին, վրան՝ մի փոքր տանիք, իսկ կողքին՝ զինվորի կերպարանք: Գուսնը, որ նրան նայում էր ուսի վրայով, ասաց.

— Առաջարկում է ապարատի շուրջը վրաններ խփել կապահակ դնել: Միայն թե, Մստիսլավ Սերգենիչ, մեր իրերը չգողանան, ախր դռնակները փակ չունեն:

— Վերջ տվեք հիմարություններին, Ալեքսեյ Իվանովիչ:

— Ախր այնտեղ գործիքներ կան, հագուստ... Իսկ ես միայն, ա՛յ, էն փսլնքոտ զինվորից եմ վախենում, նրա մոռթոթ ամենից ավելի անհուսալի է:

Մարսեցիին այս խոսակցությունը լսում էր ուշադրությամբ ու հարգանքով: Լոսը նշաններով նրան հասկացրեց, համաձայն է ապարատը թողնել հսկողության տակ: Մարսեցիին սուլիչը մոտեցրեց իր մեծ ու բարակ շրթունքներով բերանին: Նավից պատասխանեցին նման զիլ սուլոցով: Այդ ժամանակ մարսեցիին սկսեց սուլելով ինչ-որ ազդանշաններ տալ: Մեջտեղի ավելի բարձր կայմի ծայրին բարձրացան մազի պես բարակ լարի կտորներ, և լսվեցին կայծերի ճարձատյուններ:

Մարսեցիին Լոսին ու Գուսնին ցույց տվեց նավը: Զինվորները մոտեցան ու կանգնեցին նրանց շուրջը: Գուսնը նայեց նրանց, քմիծաղ տվեց, գնաց դեպի ապարատը, այնտեղից դուրս բերեց սպիտակեղենով ու մանր-մունր բաներով լցված երկու պարկ, ուժեղ հրեց դռնակը և ապարատը ցույց տալով զինվորներին, ձեռքը շրիկացրեց մատուցելին, սպառնաց մատով, սպառնազին ծամածռեց բերանը:

Մարսեցիները ապուշ կտրած հետևում էին այդ շարժումներին:

— Է՛հ, Ալեքսեյ Իվանովիչ, մենք կամ գերի ենք կամ հյուր, ոչ մի տեղ շարժվել չենք կարող,— ասաց Լոսը, ծիծաղեց, պարկը զցեց ուսը, և նրանք գնացին դեպի նավը:

Կայմերի վրա ուժգին աղմուկով պտտվում էին ուղղահաս պտուտակները: Թները ցածրացան: Աշխատեցին շարաժիչները: Հյուրերը, գուցե և գերիները, ճոճվող սանդուղքով մտան նավեզր:

ԱՏԱՄՆԱՎՈՐ ԼԵՌՆԵՐԻ ԱՅՆ ԿՈՂՄԸ

Նավը մեծ բարձրության վրա թռչում էր հյուսիսարևմտյան ուղղությամբ: Լոսն ու ճաղատ մարսեցին մնացին տախտակամածին: Գուսեր գնաց նավի ներսը՝ զինվորների մոտ:

Լուսավոր, ծղոտագույն նավախցում նա նստեց գործովի թիկնաթոռին ու որոշ ժամանակ նայում էր սուրուլիկ քթերով վտիտ զինվորներին, որոնք թռչունների պես թարթում էին շեկ աչքերը: Հետո նա հանեց իր նվիրական թիթեղյա ծխախոտատուփը, որից յոթ տարի չէր բաժանվել ռազմաճակատում, շրխկացրեց կափարիչի վրա և ծխախոտ առաջարկեց:

— Ծխենք, ընկերներ:

Մարսեցիները վախով թափահարեցին գլուխները: Բայց և այնպես մեկը մի գլանակ վերցրեց, գննեց, հոտ քաշեց և դրեց սպիտակ շալվարի գրպանը: Երբ Գուսեր ծխում էր, զինվորները մեծագույն սարսափով նրանից ետ-ետ էին քաշվում և քչփչում թռչունի ձայնով:

— Շո՛խո, տա՛ն տա՛ վրա, շո՛խո-օմ:

Նրանց կարմրավուն սուրուլիկ դեմքերը զարգանդով հետևում էին, թե ինչպես էր «շոխոն» ծուխ կուլ տալիս: Քիչ-քիչ նրանք հոտ քաշեցին և հանգստանալով նորից մոտեցան նրան:

Գուսեր առանձնապես դժվարություն չէր քաշում, որ մարսեցիների լեզուն չգիտե. իր նոր բարեկամներին նա սկսեց պատմել Ռուսաստանի, պատերազմի, հեղափոխության, իր քաջագործությունների մասին:

— Գուս, դա իմ ազգանունն է: Ինձ ասում են Ալեքսեյ Իվանովիչ: Ես ոչ միայն գունդ, այլև հեծյալ դիվիզիա եմ ղեկավարել: Ես սարսափելի հերոս եմ, սուսկալի: Իմ տակտիկան է՝ գնդացիր-մնդացիր հաշվի չառնել, թուրք մերկացնել, «դիրքերդ կտաս թե չէ, շուն-շան որդի» գոռալ ու սրի քաշել: Ես էլ ամբողջովին սրի եմ քաշված, բայց թքած դրա վրա: Մեզ մոտ ռազմական ակադեմիայում նույնիսկ հատուկ առարկա են անցնում: «Ալեքսեյ Գուսևի ջարդի մեթոդը»: Չե՞ք հավատում: Ինձ կորպուս առաջարկեցին:— Գուսեր եղունգով մի կողմ տարավ սաղավարտը, քորեց ականջի ետևը,— ոչ, կներեք, զգվել եմ: Յոթ տարի կովել եմ, գոնե մեկին զայրացրած լինեմ: Եվ ահա Մստիսլավ Մերգենիչը կանչում է ինձ և աղերսում. «Ալեքսեյ Իվանովիչ, առանց ձեզ Մարս չեմ թռչի»: Այսպես, ուրեմն, բարև ձեզ:

Մարսեցիները զմայլված լսում էին: Մեկը դարչնագույն և մուսկատի հոտ արձակող հեղուկով մի տափաշշիկ բերեց: Գուսեր պարկից դուրս բերեց կես շիշ սպիրտ, որ վերցրել էր Երկրից: Մարսեցիները խմեցին և սկսեցին օրորվել: Գուսեր խփում էր նրանց մեջքին, աղմկում: Հետո գրպաններից սկսեց հանել զանազան մանր-մունր անպետք բաներ և առաջարկեց փոխանակել: Փոքրիկ դանակի, մատիտի կտորի, հրացանի փամփուռտից սարքած զարմանալի վառիչի փոխարեն մարսեցիները նրան ուրախությամբ տալիս էին ոսկյա իրեր:

Այդ ժամանակ Լոսը, արմունկով հենված նավի բազրիքին, նայում էր ներքևում ավելի ու ավելի հեռացող, տրտում և բլրաշատ հարթությանը: Նա ճանաչեց այն տունը, որտեղ երեկ եղել էին: Ամենուրեք փոված էին նույնպիսի ավերակներ, ծառակղզյակներ, ձգվում էին ցամաքած ջրանցքներ:

Ցույց տալով այդ անմարդաբնակ վայրը, Լոսը հասկացրեց, որ ուզում է իմանալ, թե ինչո՞ւ այդ ամբողջ Երկիրը լքված է ու անկենդան: Ճաղատ մարսեցու դուրս ընկած աչքերը հանկարծ չարությամբ լցվեցին: Նա նշան արեց, և նավը վեր բարձրացավ, աղեղնաձև պտույտ կատարեց սավառնեց դեպի ատամնավոր լեռների գագաթները:

Արևն ավելի բարձրացավ, չքացան ամպերը: Ոռնում էին շարժիչները, դարձումների ու վերելքների ժամանակ ճոնչում, շարժվում էին ճկուն թևերը, շաչում էին ուղղահայաց պտուտակները: Լոսը նկատեց, որ բացի պտուտակների բվկոցից և թևերի ու ակոսավոր կայքերի մեջ վիտացող քամու սուլոցից, ուրիշ ոչ մի ձայն չէր լսվում. մեքենաներն աշխատում էին անաղմուկ: Նույնիսկ մեքենաներն էլ չէին երևում: Միայն պտուտակների առանցքների վրա դառնում էին ուժամեքենայի պատյանի նման կլոր տուփեր, և առջևի ու ետևի կայմերի գագաթին ճարձատում էին արծաթե լարերից շինված երկու ձվածիր զամբյուղներ:

Լոսը մարսեցուն հարցնում էր առարկաների անունները և գրի առնում: Հետո գրպանից հանեց գծագրեր ունեցող գրքույկը, որ վերցրել էր ավերված շենքի գրապահարանից և խնդրեց արտասանել երկրաչափական տառերի հնչյունները: Մարսեցին զմայլված նայեց այդ գրքին: Նրա աչքերը նորից սառեցին, բարակ շրթունքները ծածկվեցին զզվանքով: Նա Լոսի ձեռքից զգուշորեն վերցրեց գիրքը և դեն շարսեց:

Բարձրությունից ու օդի նոսրությունից սկսեց ճնկվել Լոսի կուրծքը, աչքերն արտասուքով ծածկվեցին: Այդ նկատելով, մարսեցին ցածրանալու նշան արեց: Լայն, ոլորապտույտ լեռնաշղթան ձգվում էր հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք: Նավի ստվերը ներքևում թռչում էր ճաքճքված, բայց միաժամանակ հանքաքարերի ու մետաղների երակներով պատած ձորալանջերով, քարաքոսով ծածկված գառիվայրերով և ընդհատվում էր մշուշապատ վիհերում կամ թխպիկով ծածկում պսպղուն սառցե լեռնագագաթներն ու հայելանման սառցադաշտերը: Այդ աշխարհը վայրի էր ու անմարդաբնակ:

— Լիզիազիբա,— գլխով անելով դեպի լեռները, ասաց մարսեցին և բաց արեց փայլուն մետաղե մանր ասամները:

Նայելով ներքևի ապառաժներին, որ շատ տխուր կերպով նրան հիշեցնում էին ջախջախված մոլորակի անկենդան բնությունը, Լոսը խոր ձորի մեջ տեսավ քարերի վրա շուռ տված նավի կմախք, որի շուրջը ցիրուցան թափված էին արծաթագույն մետաղի կտորներ: Ավելի հեռու, ժայռակատարի ետևից բարձրանում էր երկրորդ նավի ջարդված թևը: Աջ կողմում գրանիտե սրածայր գագաթին շամփրված՝ կախ էր ընկել երրորդ, ամբողջովին այլանդակված նավը: Ամենուրեք այդ տեղերում երևում էին հսկայական թևերի, ջարդված կմախքների, կախ ընկած կողերի մնացորդներ: Դա ճակատամարտի վայր էր եղել. ասես դևեր էին տապալված այդ լերկ ապառաժների վրա:

Լոսը թեքվեց հարևանի կողմը: Մարսեցին նստել էր՝ խալաթը վզի մոտ պահած և հանգիստ նայում էր երկնքին: Նավին ընդառաջ թռչում էին ուղիղ գծով ձգվող երկարաթև թռչուններ: Ահա նրանք վեր սլացան, մուգ կապույտում շողշողացրին իրենց դեղին թևերը և շուռ եկան: Հետևելով նրանց ցածրացող թռիչքին, Լոսը տեսավ ժայռերի մեջ գտնվող մի կլոր լիճ, որի ջուրը սև էր: Ափերին գանգուր թփուտներ էին կպած: Իսկ ջրի մոտ դեղին թռչուններ էին նստել:

Լիճն սկսեց ալեկոծվել, եռալ: Նրա մեջտեղից վեր բարձրացավ ջրի ուժեղ հոսանք և վերևում տարածվելով ներքև թափվեց: — Սոսա,— հանդիսավոր կերպով շնջաց մարսեցին:

Լեռնաշղթան վերջացավ: Հյուսիս-արևմուտքում տապի թափանցիկ, երերուն հոսանքի միջից երևում էին վառ դեղին հարթություններ, փայլում էին բազմաթիվ ջրավազաններ: Մարսեցին ձեռքը մեկնեց դեպի մշուշապատ, հրաշալի հեռուները և լայն ժպիտով ասաց.

— Ազոբա:

Նավը մի քիչ վեր բարձրացավ: Խոնավ, հաճելի օդը խփեց դեմքին, դժժաց ականջների մեջ: Ագորան փովել էր լայն, պայծառ հարթության վրա: Ջրառատ առուններով, նարնջագույն բույսերի սաղարթներով և ծիծաղկոտ ու վառ դեղին մարգագետիններով ծածկված Ագորան, որ բերկրանք է նշանակում, նմանվում էր այն գարնանային մարգագետիններին, որոնք հեռավոր մանկության տարիներին մարդ տեսնում է երազի մեջ:

Ջրանցքների վրա լողում էին մետաղյա լայն բեռնանավեր: Ափերի երկայնքով ցրված էին սպիտակ տնակներն ու այգիների նախշուն ծառուղիները: Ամենուրեք քարշ էին գալիս մարսեցու կերպարանքներ: Ոմանք էլ պոկվում էին տափակ կտուրներից և չղջիկի պես թևածուր ջրերից ու պուրակներից այն կողմ: Ամենուրեք մարգագետիններում շողշողում էին լճակներ, փայլվում էին առվակներ: Հիանալի աշխարհ էր Ագորան:

Հարթության ծայրին արևաշող ծփանքով խաղում էր մի հսկայական ջրատարածություն, ուր գնում էին բոլոր ջրանցքների ոլորապտույտ շարքերը: Նավը թռչում էր այդ ուղղությամբ, և Լոսը վերջապես տեսավ մի ուղիղ ու մեծ ջրանցք, որի հեռավոր ափը սուզվում էր խոնավ մշուշի մեջ: Իսկ դեղնագույն պղտոր ջրերը դանդաղ հոսում էին քարե զառիվայրի երկայնքով:

Նրանք երկար թռան: Եվ ահա ջրանցքի վերջում ջրից սկսեց վեր բարձրանալ պատի հարթ եզրը, որի ծայրերը գնում էին մինչև հորիզոնի ետևը: Գնալով պատը մեծանում էր: Արդեն երևում էին շարվածքի հսկայական զանգվածները, որոնց ճեղքերում աճել էին թփեր ու ծառեր: Նրանք մոտեցան մի վիթխարի կրկեսի, որը լիքն էր ջրով: Շատ տեղերում ջրի վրա բարձրանում էին փրփրակատար շատրվաններ:

— Ռո,— ասաց մարսեցին՝ հանդիսավոր բարձրացնելով մատը:

Լոսը գրպանից դուրս բերեց ծոցատետրը և գտավ Մարսի սկավառակի վրա երեկվա հապճեպորեն գծագրած կետերն ու գծերը: Նկարը նա մեկնեց հարևանին և ցույց տվեց ներքև՝ կրկեսը: Մարսեցին գննեց կնճռոտված դեմքով, հասկացավ, ուրախ տմբամբացրեց գլուխը և ճկույթի եղունգով նշան արեց գծագրի կետերից մեկը:

Գլուխն ավելի շատ կախելով, Լոսը տեսավ կրկեսից բաժանվող երկու ուղիղ և մեկ ծուռումուռ գնացող ջրանցքներ, որ ափեափ լի էին ջրով: Ահա և գաղտնիքը: Մարսի սկավառակի վրայի կլոր կետերը կրկեսներ էին, եռանկյունագծերն ու կիսաշրջանագծերը՝ ջրանցքներ: Բայց ինչպիսի՞ էակներ կարող էին կառուցել այդ կիկլոպյան պատերը: Լոսը նայեց իրեն ուղեկցողին: Մարսեցին, դուրս ցցելով ներքևի շրթունքը, ձեռքերը վեր տարածեց դեպի երկինք:

— Տառ խացիսա ոռ խամագացիտլ:

Նավն այժմ անցնում էր խանձված հարթության վրայով: Այստեղ էր գտնվում կարմրավարդագույն, շատ լայն, չորրորդ ցամաքած ջրանցքի ծաղկափթիթ հունը, որն ասես թե ամբողջովին ծածկված էր բուսականության կանոնավոր շարքերով: Ըստ երևույթին, դա ջրանցքների երկրորդ ցանցի գծերից մեկն էր, որ երևում էր Մարսի սկավառակի աղոտ նկարում:

Հարթությանը հաջորդեցին համաչափ ցածրիկ բլրակներ: Նրանց ետևում սկսեցին երևալ ցանցապատ աշտարակների երկնագույն ուրվագծեր: Նավի միջին կայմի վրա վեր ձգվեցին հաղորդալարերի կտորները և սկսեցին կայծեր արձակելով ճարձատեյ: Բլուրներից այն կողմ սկսեցին վեր բարձրանալ աստիճանաձև շենքերի, ցանցապատ աշտարակների նորանոր ուրվագծեր: Հսկայական քաղաքն իր արծաթավուն ստվերով դուրս եկավ արևային մշուշի միջից:

Մարտեցին ասաց.

— Սոացերա:

ՍՈԱՑԵՐԱ

Սոացերայի երկնագույն ուրվագծերը, տափակ տանիքների ելուստները, կանաչապատ, ցանցավոր պատերը, լճակների ձվաձև հայելիները և լճակների ետևից բարձրացող թափանցիկ աշտարակները, որ գնալով ավելի ու ավելի մեծ տարածություն էին զբաղեցնում, ընկղմվել էին մշուշապատ հորիզոնի ետևում: Նավին ընդառաջ բազմաթիվ սև կետեր էին թռչում քաղաքի վրա:

Ծաղկափթիթ ջրանցքը մնաց հյուսիսում: Քաղաքից դեպի արևելք փոված էր խճաքարերի կույտերով ծածկված, փորփրված ու ամայի մի դաշտ: Նրա ծայրում, գետնի վրա պարզ, երկար ստվեր նետելով՝ բարձրանում էր մի վիթխարի արձան:

Քարակերտ, մերկ մարդը կանգնել էր ամբողջ հասակով, ոտքերը միացրած, ձեռքերը սեղմած նեղ կոնքերին: Ակոսավոր գոտին պահում էր դուրս ցցված կուրծքը, արևի տակ աղոտ կերպով փայլում էր ականջավոր սաղավարտը, որ պսակված էր ձկան ողնաշարի պես սուր կատարով: Փակ աչքերով ու դուրս ցցված այտուկներով նրա դեմքը ժպտում էր լուսնաձև բերանով:

— Մագացիտլ,— ասաց մարտեցին և ցույց տվեց երկինքը:

Արձանից այն կողմ, հեռվում երևացին կրկեսի հսկայական ավերակներն ու ակվեդուկի փուլ եկած կամարները: Ուշադրությամբ զննելուց հետո Լոսը հասկացավ, որ հարթավայրի խճաքարերի կույտերը, բլրակներն ու փոսերը հնագույն քաղաքի մնացորդներ են: Նոր քաղաքը՝ Սոացերան, սկսվում էր փայլվիլուն լճի այն կողմից և ձգվում այդ ավերակներից դեպի արևմուտք:

Երկնքում եղած սև կետերը մոտեցան ու մեծացան: Դրանք հարյուրավոր մարտեցիներ էին, որ նրանց ընդառաջ էին գալիս թևավոր նավակներով ու թամբերով, պարուսիներ թռչուններով ու պարաշուտավոր զամբյուղներով:

Առաջինը ճախրելով հասավ ու կտրուկ շրջան գծելով նավի վրա կախվեց պսպղուն, ոսկյա, ձյուռանման քառաթևու սիգարի նման նեղ մի մարմին: Այնտեղից նավի կառամատույցն էին թափվում ծաղիկներ ու գույնզգույն թղթի կտորներ, կախ էին ընկնում հուզված դեմքեր:

Լոսը ոտքի ելավ և պարանից բռնելով հանեց սաղավարտը: Քամին բարձրացրեց նրա սպիտակ մագերը: Խցիկից դուրս եկավ Գուսեր և կանգնեց նրա կողքին: Նավակներից փնջերով ծաղիկներ էին թռչում նրանց վրա: Մոտ թռչող մարտեցիների երկնագույն, մերթ էլ թուխ կամ աղյուսագույն դեմքերին կար հուզմունք, հիացմունք, սարսափ:

Այժմ դանդաղ սավառնող նավի գլխավերևից, առջևից, կողքերից ու ետևից թռչում էին հարյուրավոր օդային կառքեր: Ահա վերևից ներքև սահեց մի պարաշուտավոր զամբյուղ, որի մեջ նստած զոլավոր գդակով գիրուկ մարտեցին ձեռքով էր անում նրանց: Ահա աղոտ կերպով երևաց կոշտուկապատ մի դեմք, որ նայում էր խողովակի միջով: Ահա մտահոգ հայացքով, ցաք ու ցրիվ մագերով և սուրուլիկ քթով մի մարտեցի, որը թևավոր թամբին նստած պտտվում էր նավի առջև, Լոսին մեկնեց ինչ-որ պտտվող մի արկղ: Նրանց մոտեցավ ամբողջովին ծաղիկների մեջ կորած գործովի մի նավակ, որի մեջ կային մեծ-մեծ աչքերով երեք գունատ կանացի դեմքեր, երկնագույն գլխաթասակներ, վեր-վեր թռչող երկնագույն թևքեր, ոսկեհյուս վզնոցներ:

Կապույտ օդում եղած պտուտակների երգը, նավի թևերի մեջ մտնող քամու աղմուկն ու սուր սուլոցները, ոսկու շողշողումն ու հագուստների խայտաբղետությունը, իսկ ներքևում գրոսայգիների ծիրանագույն, մերթ արծաթավուն, մերթ էլ դեղձան թփերը, որ փայլվում էին աստիճանաձև տների լուսամուտներին ընկած արևի շողերի անդրադարձումից, կարծես այդ ամենը երագում լիներ: Գլուխ էր պտտվում: Գուսնը նայեց շուրջը և շնջաց:

— Պա՛հ, մի տես է, ի՛նչ քաղաք է:

Նավը սլացավ բարձր այգիների վրայով և թեթևասառի իջավ մեծ ու կլոր հրապարակը: Նույն պահին երկնքից սիսեռի նման ներքև թափվեցին հարյուրավոր նավակներ, զամբյուղներ, թևավոր թամբեր ու թրմփալով նստեցին հրապարակի սպիտակ սալիկների վրա: Հրապարակից աստղաձև ձգվող փողոցներում աղմկում էր բազմությունը. վագում էինմարսեցիները, ծաղիկներ ու թղթեր նետում, թափահարում թաշկինակները:

Նավը նստեց բուրգի պես բարձր ու ծանրանիստ, սև-կարմիր քարից շինված մոայլ շենքի մոտ: Նրա լայն սանդուղքի վրա, տան մեկ երկրորդ բարձրությանը հասնող քառակուսի, վերևի մասում նեղացող սյուների միջև մարսեցիներ էին կանգնած: Նրանք բոլորն էլ սև խալաթներ էին հագել, կլոր գլխարկներ ծածկել. դա, ինչպես հետագայում իմացավ Լոսը, ինժեներների Բարձրագույն խորհուրդն էր, Մարսի համայն երկրների կառավարման բարձրագույն օրգանը:

Մարսեցի-ուղեկիցը Լոսին նշան արեց, որ սպասի: Զինվորները սանդուղքով վազեցին հրապարակ ու շրջապատեցին նավը՝ զսպելով սեղմվող ամբոխին: Գուսնը հիացմունքով նայում էր հուզված, խայտաբղետ հագուստներով հրապարակին, գլուխների վրա ճախրող թևերի բազմությանը, գորշավուն կամ սև կարմրավուն վիթխարի շենքին, կտուրներից այն կողմ երևացող թափանցիկ աշտարակներին:

— Այ քաղա՛ք, այ սա քաղաք է,— կրկնում էր նա ոտքերը գետնին խփելով:

Սանդուղքների վրայի սև խալաթավոր մարսեցիները մի կողմ քաշվեցին: Երևաց բարձրահասակ, կռացած մի մարսեցի, որը նույնպես սև խալաթ էր հագել, երկար, մոայլ դեմք ուներ և երկար ու նեղ մորուք: Նրա գլխարկի վրա ձկան ողնաշարի նմանվող ոսկյա կատար կար:

Իջնելով մինչև աստիճանների կեսը և հենվելով ձեռնափայտին, նա սև ու խոր ընկած աչքերով նայում էր Երկրի առաքյալներին: Լոսն էլ նրան էր նայում՝ ուշադիր, լարված:

— Ոնց որ դև լինի, աչքերն էլ ոնց է չռել,— փսփսաց Գուսնը, և շուտ գալով դեպի ամբոխը, անհոգ կերպով գոռաց.— Բարև ձեզ, ընկեր մարսեցիներ, մենք ձեզ մոտ եկել և ողջույններ ենք բերել Մովետական հանրապետությունից... Եկել ենք Բարի դրացիական հարաբերություններ հաստատելու համար...

Ամբոխը զարմացած շունչ քաշեց, սկսեց տրտնջալ, աղմկել, առաջ շարժվել: Մոայլ մարսեցին ափով բռնեց մորուքը և, աչքերը հառելով ամբոխի կողմը, աղոտ հայացքով դիտեց հրապարակը: Եվ նրա հայացքի ներքո սկսեց հանդարտվել գլուխների ալեկոծված ծովը: Նա շուտ եկավ դեպի աստիճանների վրա կանգնածները, մի քանի խոսք ասաց և ձեռնափայտը բարձրացնելով ցույց տվեց նավը: Այդ պահին մարսեցիներից մեկը վազեց դեպի նավը և սկսեց ցածր ձայնով և արագ-արագ խոսել նավեզրից իր կողմը թեքված ճաղատ մարսեցու հետ: Լսվեցին ազդանշանային սուլոցներ, երկու զինվոր վազեցին դեպի նավեզրը, աշխատեցրին պտուտակները: Նավը, ծանրորեն կտրվելով հրապարակից, քաղաքի վրայով սավառնեց դեպի հյուսիս:

ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՊՈՒՐԱԿՈՒՄ

Սուսերան մնաց հեռավոր բլրակների ետևը: Նավը թռչում էր հարթավայրի վրայով: Տեղ-տեղ երևում էին շինությունների միանման շարքեր, ճոպանուղիների սյուներ ու լարեր, հանքահորերի բացվածքներ, նեղ ջրանցքներով շարժվող բեռնված լաստանավեր:

Բայց ահա ծառերի սաղարթների միջից ավելի ու ավելի հաճախակի էին երևում վեր խոյացող ժայռագագաթները: Նավը ցածրացավ, անցավ կիրճի վրայով և վայրէջք կատարեց մարգագետնում, որը թեքությամբ իջնում էր դեպի մուգ ու փարթամ թփուտները:

Լոսն ու Գուսերը վերցրին պարկերը և իրենց ճաղատ ուղեկցի հետ քայլեցին մարգագետնով ներքև, դեպի պուրակը:

Ծառերի տակից ժայթքող ջրափռոցի գողից պսպղացող գանգուր խոտերի վրա ծիածան էր կապել: Սև ու սպիտակ, գաճաճ, երկարաբուրգ կենդանիների հոտը շարժվում էր լանջն ի վեր: Շուրջը լուռ էր ու խաղաղ: Հանդարտ քչքչում էր ջուրը: Փչում էր մեղմ քամին:

Երկարաբուրգ կենդանիները բարձրանում էին ծուլորեն, ճանապարհ տալով մարդկանց, և կանգ էին առնում, օրորվում արջի թաթերի նման ոտքերի վրա, ետ դարձնելով տափակ ու հեզաբարո մոռուները: Մարգագետին էին իջնում դեղին թռչունները և փքվելով թափահարվում ջրի ծիածանանման շատրվանի տակ:

Նրանք մոտեցան պուրակին: Փարթամ, վարսակախ ծառերը երկնագույն էին: Վերևի ճյուղերի վրա խշխշում էին խեժուտ տերևները: Բծավոր ծառաբների արանքից երևում էր հեռվում ծիացող լճի փայլվիլուն հայելին: Այս երկնագույն թավուտի դուրեկան ու գրգռիչ շոգը գլուխ էր պտտեցնում:

Պուրակում կային նարնջագույն ավազ շաղ տված բազմաթիվ արահետներ: Դրանց խաչմերուկների կլոր բացատներում, քարաքոսերի մեջ, կանգնած էին հին, երբեմն էլ ջարդված, ավազաքարե մեծ արձաններ: Թփուտներից վեր բարձրանում էին փլված սյուներ, կիկլոսյան պատերի մնացորդներ:

Շավիղը թեքվում էր դեպի լիճը: Քիչ հետո նրանց աչքի առջև բացվեց լճի մուգ կապույտ հայելին՝ հեռվում երևացող ժայռապատ լեռան փուլ եկած գագաթի հետ միասին: Թույլ էին բեկբեկվում ջրի մեջ անդրադարձած վարսակախ ծառերի ստվերները: Շողում էր պերճ արևը: Ափի ոլորանում, լիճը տանող մամռակալած աստիճանների կողքերից բարձրանում էին նստած դիրքով երկու վիթխարի արձաններ, որոնք ամբողջովին ծածկված էին սողացող բույսերով:

Սանդուղքի աստիճանների վրա երևաց մի մանկամարդ կին: Նրա գլխին դրված էր դեղին, սրածայր թասակ: Քնի մեջ հավերժ ժպտացող ծանրանիստ ու մամռապատ Մագացիտլի կողքին նա երևում էր պատանեկան նրբությամբ, սպիտակաերկնագույն: Նա սայթաքեց, բռնեց քարե ելուստից, գլուխը բարձրացրեց:

— Աելիտա,— շնչաց մարսեցին, թևքով ծածկեց աչքերը և Լոսին ու Գուսերին շավիղով տարավ դեպի թավուտ:

Շուտով նրանք դուրս եկան մի մեծ բացատ: Բացատի խորքում, թավ կանաչի մեջ, կանգնել էր մռայլ, թեք պատերով մի գորշ տուն: Տան առջևի ավազի աստղաձև փոքրիկ հրապարակից ուղիղ

շավիղները մարգագետնով ներքև էին ձգվում դեպի պուրակ, որտեղ ծառերի արանքում երևում էին քարաշեն ցածրիկ շինություններ:

Ճաղատ մարսեցին սուլեց: Տան անկյունից հայտնվեց գուլավոր խալաթով կարճահասակ, գիրուկ մի մարսեցի: Նրաբոսորագույն երեսը կարծես փայլեցրել էին կարմիր ճակնդեղով: Արևից կնճռոտելով դեմքը, նա մոտեցավ, բայց իմանալով, թե ովքեր են եկվորները, անմիջապես ծլկեց մի անկյուն: Ճաղատ մարսեցին նրա հետ խոսում էր հրամայական եղանակով, և գիրուկը վախից սփրթնած՝ շուռ եկավ, ցույց տալով անատամ բերանի միակ դեղնած ատամն ու հյուրերին առաջնորդեց տուն:

ՀԱՆԳԻՍ

Հյուրերին տարան լուսավոր, փոքրիկ, գրեթե դատարկ սենյակներ, որոնք նեղ լուսամուտներով նայում էին դեպի այգին: Ճաշասենյակի և ննջարանի պատերը ծածկված էին սպիտակ խսիրներով: Անկյուններում դրված էին ծաղկած ծառերով փոքրիկ տակառներ: Գուսնը գտավ, որ բնակարանը հարմար է. «Շատ փառահեղ է, ոնց որ զամբյուղների պահասենյակ լինի»:

Ձուլավոր խալաթով գիրուկը, որ տան կառավարիչն էր, բլբլացնելով դռնից դուռ էր վազում, դարչնագույն թաշկինակով սրբում գանգը, երբեմն էլ քարանում էր տեղում ու, կարծրացած աչքերը չռելով հյուրերի վրա, անձայն, արագ-արագ փսփսում էր աղերսանքի նման ինչ-որ բաներ:

Նա ջուր բաց թողեց ավազանի մեջ և Լոսին ու Գուսնին տարավ առանձին վաննաներ, որոնց տակից գոլորշու թանձր քուլաներ էին բարձրանում: Երբ տաք ու պղպջակավոր թեթև ջուրը կլավ Լոսի անչափ հոգնած մարմնին, այնպես հաճելի էր, որ քիչ մնաց քներ ջրի մեջ: Կառավարիչը նրա ձեռքից քաշելով դուրս բերեց վաննայից:

Լոսը հագիվհագ հասավ ճաշասենյակ, որտեղ սեղանը ծածկված էր բանջարեղենների, կարկանդակների, փոքրիկ ձվերի, մրգերի ափսեներով: Ընկույզի մեծության ճրթճրթացող հացի գնդիկները բերանի մեջ հալվում էին: Ոչ դանակ կար, ոչ էլ պատառաքաղ, միայն յուրաքանչյուր սկուտեղի վրա դրված էին մեկական փոքրիկ թիակներ: Կառավարիչը քար էր կտրել, տեսնելով, թե Երկրից եկած մարդիկ ինչպես էին խժռում ամենանուրբ ուտելիքները: Գուսնի ախորժակըբացվեց: Առանձնապես լավ էր գինին, որ թարմ ծաղիկների հոտ ուներ: Գինին գոլորշիանում էր բերանում, և ջերմ կայտառություն էր հոսում երակների մեջ:

Հյուրերին տանելով ննջասենյակ, կառավարիչը դեռ երկար ժամանակ հոգում էր նրանց մասին, վերմակներն էր վեր քաշում, բարձերն էր դնում գլխատակը: Բայց արդեն երկարատև ու սաստիկ քունը տիրել էր «սպիտակ հսկաներին»: Նրանք շնչում ու փնչացնում էին այնպես բարձր, որ դողդողում էին ապակիները, թրթռում էին անկյուններում դրված բոյսերը, և մահճակալները ճռճում էին նրանց գորեղ մարմինների տակ:

Լոսը բաց արեց աչքերը: Արհեստական կապտավուն լույսը ներս էր սփռվել երդիկից: Պատկելը տաք էր և հաճելի: «Ի՞նչ է պատահել: Որտե՞ղ եմ պառկած»: Բայց այդպես էլ գլխի չընկավ և մեծ բավականությամբ նորից փակեց աչքերը:

Սավառնում էին ճաճանչափայլ բծերը, ասես թե ջուր էր խայտում կապուտակ թփերի մեջ: Նախագգալով սքանչելի բերկրանք, մի սպասում, թե ուր որ է այդ լուսափայլ բծերից ինչ-որ բան պետք է անցնի իր անուրջների մեջ, նրան համակեց հրաշալի մի տազնապ:

Քնի մեջ ժպտալով, նա կիտեց հոնքերը, ճգնելով թափանցել այդ արևաշող, սահուն բծերի բարակ շղարշի ետևը: Բայց ավելի խոր քունը ամպով ծածկեց այն:

.

Լուսը նստեց անկողնու մեջ: Գլուխը կախ, նա որոշ ժամանակ մնաց այդպես նստած: Ապա ելավ, մի կողմ քաշեց վարագույրը: Նեղ լուսամուտից այն կողմ սառը լույսով վառվում էին հսկայական աստղեր, որոնց անձանոթ տեսքը սարսափելի ու տարօրինակ էր:

«Այո, այո, այո,— շնջում էր Լուսը,— ես Երկրի վրա չեմ: Մառը ամայություն, անձայր տարածություններ: Ես նոր աշխարհում եմ գտնվում: Ասենք թե՛ հա. Բայց չե՞ որ ես մեռած եմ: Կյանքը մնաց այնտեղ...— Նա եղունգներով ճանկեց կուրծքը, որտեղ սիրտն էր:

— Սա ո՛չ կյանք է, ո՛չ մահ: Կենդանի է ուղեղը, կենդանի է մարմինը: Բայց կյանքը մնաց այնտեղ...»:

Նա ինքն էլ չէր կարողանում հասկանալ, թե ինչու երկրորդ գիշերն էր, ինչ նրան այդպես անտանելի կերպով տանջում էր Երկրի կարոտը, ինչպես նաև կարոտը հենց իր նկատմամբ, որ ապրել էր այնտեղ, աստղերից այն կողմ: Ասես կտրվել էր կյանքի թելը, և նրա հոգին շնչահեղձ էր լինում օտար ու մթին ամայության մեջ:

Նա նորից թավալվեց բարձերի վրա:

.

— Ո՞վ կա այստեղ:

Լուսը վեր ցատկեց: Լուսամուտի մեջ ընկել էր այգաբացի շողքը: Ծղոտե փոքրիկ սենյակը ապշեցուցիչ մաքուր էր: Լուսամուտի ետևում շրշում էին տերևները, սուլում էին թռչունները: Լուսը ձեռքով շփեց աչքերը, խորը շունչ քաշեց:

Դուռը նորից կամաց թակեցին: Լուսը լայն բաց արեց դուռը, որի ետևում կանգնած էր զոլավոր գիրուկը, փորի վրա երկու ձեռքով բռնած երկնագույն ու ցողաշող ծաղիկների մի մեծ խուրձ:

— Ահու ուտարա Աելիտա,— շնջաց նա, մեկնելով ծաղիկները:

ՄՇՈՒՇԱՊԱՏ ԳՆԴԻԿԸ

Նախաճաշից հետո Գուսնն ասաց.

— Մստիսլավ Մերգենիչ, անգործության ենք մատնվել: Մատանան գիտե, թե ինչքան հեռու ենք եկել, և, խնդրեմ՝ նստել ենք մի խուլ անկյունում: Վաննաներում զովանալու համար ախր չարժեր թռչել այստեղ: Նրանք, իհարկե, մեզ չթողեցին քաղաք գնալ, այն մորուքավորը, հիշում եք, ինչպես էր հոնքերը կիտել: Օ՛հ, Մստիսլավ Մերգենիչ, զգուշացեք նրանից: Առայժմ մեզ հաց ու ջուր են տալիս, իսկ հետո՞ :

— Իսկ դուք մի շտապեք, Ալեքսեյ Իվանովիչ,— ասաց Լուսը, նայելով երկնագույն ծաղիկներին, որ բուրում էին մի քիչ դառը և դուրեկան հոտով,— կապրենք, կընտելանանք, և երբ կտեսնեն, որ վտանգավոր մարդիկ չենք, կթողնեն քաղաք մտնել:

— Մստիսլավ Սերգենիչ, չգիտեմ դուք ինչու, բայց այստեղ գովանալու համար չեմ եկել:

— Ըստ ձեզ, ուրեմն, մենք ի՞նչ պետք է ձեռնարկենք:

— Տարօրինակ է այդպիսի խոսք լսել ձեզանից, Մստիսլավ Սերգենիչ, չլինի՞ արդեն մի քաղցր բանի համ եք առել:

— Կովե՞լ եք ուզում:

— Չէ, ինչ կովել: Բայց նստել ու ծաղիկներից հոտ քաշել, դա մեզ մոտ՝ Երկրի վրա էլ կարելի էր, ինչքան սիրոդ ուզեր: Իսկ ես կարծում եմ, որ եթե առաջինը մենք ենք հայտնվել այստեղ, ուրեմն Մարսը հիմա մերն է, սովետական: Այդ գործը պետք է ամրապնդել:

— Խենթ եք դուք, Ալեքսեյ Իվանովիչ:

— Դեռ կտեսնենք, թե մեզանից ով է խենթը,— Գուսնն ուղղեց կաշվե գոտին, վեր քաշեց ուսերը և խորամանկորեն կկոցեց աչքերը:— Դա դժվար գործ է, ես ինքս եմ հասկանում, ախր մենք ընդամենը երկու հոգի ենք: Բայց, այ, հարկավոր է նրանցից մի թուղթ վերցնել, որ ուզում են մտնել Ռուսաստանի Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կազմում: Բհարկե, նրանք հանգիստ կերպով այդպիսի թուղթ մեզ չեն տա, բայց դուք ինքներդ տեսաք, որ Մարսի վրա ամեն բան չէ, որ կարգին է: Իմ աչքը դրան վարժված է:

— Ինչ է, հեղափոխություն՞ ւն եք ուզում անել.

— Ինչպես ասեմ, Մստիսլավ Սերգենիչ, այնտեղ կտեսնենք: Ախր մենք ինչո՞վ ենք վերադառնալու Պետրոգրադ: Ինչ է, չորացած սա՞րդ պիտի տանենք հետներս: Ո՛չ, վերադառնալ ու ներկայացնել գրությունը. խնդրեմ՝ Մարս մոլորակը միանում է Սովետական Ռուսաստանին: Այ էն ժամանակ Եվրոպայում աղմուկ կբարձրանա: Էստեղ միայն ոսկի է, ինքներդ եք տեսնում, նավերով հա կրիր: Բա՛, Մստիսլավ Սերգենիչ:

Լոսը մտածկոտ նայում էր նրան. չէր կարելի հասկանալ՝ Գուսնը կատա՞կ է անում, թե՞ լուրջ է խոսում: Նրա խորամանկ ու փոքր-ինչ պարզամիտ աչքերը ժպտում էին, բայց նրանցում ինչ-որ տեղ խենթություն էր թաքնվել:

Լոսն օրորեց գլուխը և, ձեռք տալով մեծ ծաղիկների թափանցիկ մոմի պես երկնագույն պասկաթերթերին, մտածկոտ ասաց.

— Իմ մտքովն էլ չի անցել, թե ինչի համար եմ թոչում Մարս: Թոչում եմ թոչելու համար: Կար ժամանակ, երբ մարդիկբեռնում էին նավերը, լողում հեռու՝ նոր երկրներ գտնելու համար: Ծովի այն կողմից երևում էին անհայտ ափեր, նավը մտնում էր գետաբերան, նավապետը հանում էր լայնեզր գլխարկը և երկիրը կոչում էր իր անունով: Հետո նա կողոպտում էր այդ ափը: Այո, դուք, իհարկե, իրավացի եք, լողալով նոր ափերի հասնելը դեռևս քիչ է. հարկավոր է նավը բեռնել գանձերով: Մեզ վիճակվում է տեսնել մի նոր աշխարհ: Եվ ինչպիսի՞ գանձ: Իմաստություն, իմաստություն, Ալեքսեյ Իվանովիչ, ահա թե ինչ պետք է տանել մեր նավով:

— Դժվար է ձեզ հետ լեզու գտնել, Մստիսլավ Սերգենիչ: Ծանր բնավորություն ունեք:

Լոսը ծիծաղեց:

— Ոչ, ես ծանր եմ միայն ինքս ինձ համար, իսկ մենք լեզու կգտնենք, սիրելի բարեկամ:

Դուրը ճոռաց: Վախից ու հարգանքից մի քիչ ծալելով ոտքերը, հայտնվեց կառավարիչը և նշաններով խնդրեց հետևել իրեն: Լուսը շտապ ոտքի ելավ և ավիով ետ տարավ սպիտակ մագերը: Գուսերը վճռականորեն ոլորեց ու ցցեց բեղերը: Հյուրերը անցան միջանցքով և աստիճաններով գնացին տան հեռավոր մասը:

Կառավարիչը թակեց մի ցածրիկ դուռ: Դռան ետևից լսվեց իսկ և իսկ մանկական մի փութկոտ ձայն: Լուսն ու Գուսերը մտան մի երկար ու սպիտակ սենյակ: Լույսի շողերը իրենց մեջ վիստացող փոշեհատիկներով առաստաղի լուսամուտներից ընկել էին մոզաիկ հատակին, որտեղ անդրադարձել էին գրքերի ուղիղ շարքերը, տափակ պահարանների արանքում կանգնած բրոնզե արձանները, սրառոտ, փոքր սեղանները, էկրանների թխպոտ հայելիները:

Դռնից քիչ հեռու կանգնած էր մոխրագույն մագերով մի մանկամարդ կին: Նա հագել էր սև շրջագգեստ, որը ծածկում էր նրա վիզն ու ձեռքերի դաստակները: Նրա վեր բարձրացրած մագերի վերևում, ոսկեկազմ գրքերին ընկած շողի մեջ պար էին գալիս փոշեհատիկները: Սա նա էր, որին երեկ լճափին մարսեցին Աելիտա կոչեց:

Լուսը խոնարհ գլուխ տվեց նրան: Առանց շարժվելու, Աելիտան նայում էր նրան իր մոխրագույն աչքերի մեծ-մեծբիբերով: Նրա սպիտակին տվող երկնագույն երեսը նկատելի կերպով դողում էր: Փոքր-ինչ վեր ցցված քիթը և երկարուկ բերանը նուրբ էին, ինչպես մանկանը: Զառիթափ բարձրացած մարդու պես էր շնչում նա, և նրա կրծքի վրա առաջանում էին սև ու նուրբ ծալքեր:

— Էլլիս ուտարա գեր,— թեթև, երաժշտական քնքուշ ձայնով, հագիվ լսելի շշնջաց նա և գլուխն այնքան ցած խոնարհեց, որ երևաց ծոծրակը:

Որպես պատասխան, Լուսը սեղմեց մատները, որոնք ճրթճրթացին: Ուժ գործադրելով և չզիտես ինչու, վերամբարձ ոճով ասաց.

— Երկրի առաքյալները ողջունում են քեզ, Աելիտա:

Ասաց ու կարմրեց: Գուսերը արժանապատվությամբ ավելացրեց.

— Ուրախ ենք ծանոթանալու համար. գնդապետ Գուսև, ինժեներ Մստիսլավ Սերգեևիչ Լուս: Եկանք շնորհակալություն հայտնելու աղ ու հացի համար:

Լսելով մարդկային խոսք, Աելիտան բարձրացրեց գլուխը, նրա դեմքն արդեն ավելի հանգիստ էր, բիբերը փոքր: Նա անխոս պարզեց ձեռքը, ավին ի վեր շուռ տվեց դաստակը և այդպես պահեց որոշ ժամանակ: Լուսին ու Գուսևին սկսեց թվալ, թե նրա ավիի մեջ հայտնվեց բաց կանաչավուն մի գնդիկ: Ապա Աելիտան արագ շրջեց ավիը և գրադարակների երկայնքով քայլեց դեպի գրադարանի խորքը: Հյուրերը հետևեցին նրան:

Այժմ արդեն Լուսը նկատեց, որ Աելիտան իր ուսերից էր, և առավոտվա իր ուղարկված ծաղիկների պես քնքուշ ու հեզահամբույր: Նրա լայն շրջագգեստի փեշերը սահում էին հայելափայլ մոզաիկայի վրայով: Շուռ գալով, նա ժպտաց, բայց աչքերը դարձյալ մնացին հուզմունքով ու տազնապով լի:

Նա ցույց տվեց լայն նստարանը, որ դրված էր կիսաշրջանաձև ու լայն սենյակում: Լուսն ու Գուսերը նստեցին: Աելիտան անմիջապես տեղավորվեց նրանց դիմաց, ընթերցասեղանի մոտ, ապա սեղանին դրեց արմունկները և սկսեց մեղմ ու ակնապիշ նայել հյուրերին:

Միաժամանակ այդպես լուռ մնացին նրանք... Քիչ-քիչ Լոսն սկսեց զգալ հանգստություն ու հաճույք: Այ, մարդ նստեր այսպես և հիացած նայեր այս սքանչելի ու անծանոթ աղջկան: Գուսերը շունչ քաշեց և կիսաձայն ասաց.

— Լավ աղջիկ է, շատ հաճելի աղջիկ է:

Այդ ժամանակ սկսեց խոսել Աելիտան: Այնպես հրաշալի էր նրա ձայնը, որ թվում էր, թե երաժշտական գործիքների ձեռք տվեցին: Հագիվ շարժելով շրթունքները, նա տող առ տող կրկնում էր ինչ-որ բառեր: Նրա մոխրագույն թերթերունքները մերթ փակվում էին ու մերթ էլ դանդաղորեն բացվում էին:

Նա նորից ափն ի վեր առաջ պարզեց ձեռքը: Եվ գրեթե այդ պահին էլ Լոսն ու Գուսերը նրա ափի մեջ տեսան խնձորի մեծության բաց կանաչավուն մի մշուշապատ գնդիկ: Իր ոլորտի ներսում նա անընդհատ շարժվում էր ու շողշողում:

Այժմ արդեն երկու հյուրերն ու Աելիտան ուշադրությամբ նայում էին այս օպալե թխպոտ խնձորին: Հանկարծ նրա միջի շիթերը կանգ առան՝ բաց թողնելով սև բծեր: Երկար նայելուց հետո Լոսը ճիչ արձակեց: Աելիտայի ափի մեջ գտնվում էր երկրագունդը պատկերող մի գնդիկ:

— Տալցետոլ,— ասաց Աելիտան, մատով ցույց տալով գնդիկը:

Գնդիկն սկսեց դանդաղ պտտվել: Երևացին Ամերիկայի և Ասիայի արևելյան ափերի ուրվագծերը: Գուսերը հուզվեց:

— Սա մենք ենք, մենք՝ ռուսներս,— ասաց նա, ցույց տալով Միբիրը:

Ոլոր-մոլոր ստվեր գցելով, իրար ետևից սահում էին՝ Ուրալի լեռնաշղթան, Վոլգայի ստորին հոսանքի թելիկը: Գծագրվեցին Սպիտակ ծովի ափերը:

— Այստեղ,— ասաց Լոսը և ցույց տվեց Ֆիննական ծոցը:

Աելիտան զարմացած նայեց նրան: Գնդիկը դադարեց պտտվել: Լոսը կենտրոնացավ, հիշողության մեջ պատկերվեց աշխարհագրական քարտեզի մի կտոր և անմիջապես, որպես նրա պատկերացումների արտահայտություն ու երևակայությունների մարմնավորում, մշուշապատ գնդիկի մակերևույթի վրա երևաց մի սև կաթիլ, որից բաժանվելով ձգվեցին երկաթուղագծերի թելերը, իսկ կանաչավուն դաշտի վրա գրված էր՝ «Պետրոգրադ»:

Աելիտան նայեց երկար ու ծածկեց գնդիկը, որն այժմ փայլվում էր նրա մատների արանքից: Նայելով Լոսին, Աելիտան օրորեց գլուխը:

— Օեյեո, խո սուա,— ասաց նա, և Լոսը հասկացավ, «ուշադրությամբ նայեք և վերհիշեք»:

Այդ ժամանակ Լոսն սկսեց վերհիշել Պետրոգրադի ուրվանկարը, գրանիտե գետեզերքը, Նևայի սառն ու կապուտակ ալիքները, նրանցում օրորվող նավակները, մշուշի մեջ վեր խոյացած Նիկոլայան կամուրջի երկար կամարները, գործարանների թանձր ծուխը, աղոտ մայրամուտի ծխանման ամպերը, թաց փողոցը, մանրածախ խանութի ցուցանակը, անկյունում կանգնած ծերուկ կառապանին:

Աելիտան ծնոտին հենված՝ լուռ նայում էր գնդին, որի մեջ լողում էին Լոսի հիշողությունները՝ մերթ որոշակի ու մերթ էլ գրեթե ջնջված: Առանձնացավ Բսակովյան տաճարի կիսափայլ գմբեթը, և

արդեն նրա փոխարեն երևացին ջրափի գրանիտե սանդուղքը, նստարանների կիսաշրջանը, տխուր նստած մի աղջիկ: Նրա դեմքն սկսեց դողալ, ապա չքացավ, իսկ նրա գլխավերևում երևացին խույրեր դրած երկու սֆինքս: Անցան թվերի շարքեր, նկարներ ու գծագրեր, երևաց հրավառ հնոցը, խոժոռադեմ Խոխլովը, որ կրակն էր բորբոքում: Աելիտան երկար ժամանակ նայում էր անձանոթ կյանքին, որը գնդի մշուշապատ շիթերի միջով անցնում էր նրա աչքերի առջևով: Բայց ահա պատկերներն սկսեցին խառնվել: Նրանցում համառորեն ներս էին խուժում ինչ-որ բոլորովին այլ գծագրումներով պատկերներ, դաշտեր, ծուխ, հրացույք, ցատկող ձիեր, ինչ-որ վազող ու վայր ընկնող մարդիկ: Ահա, ծածկելով ամեն ինչ, սկսեց սավառնել մորուքավոր, արնաշաղախ մի դեմք: Գուսերը աղմուկով շունչ քաշեց: Աելիտան տագնապալից շրջվեց նրա կողմը և անմիջապես շուռ տվեց ափը: Գունդը չքացավ:

Աելիտան նստեց մի քանի բույսեր արմուկներին հենված և աչքերը ձեռքերով ծածկած: Ապա ոտքի կանգնեց, դարակից վերցրեց գլաններից մեկը, հանեց միջի փոքրիկ լիսեռը և տեղավորեց էկրանավոր ընթերցասեղանի մեջ: Հետո նաձգեց թելը և կապույտ վարագույրով ծածկեց գրադարանի վերևի լուսամուտները: Ապա փոքրիկ սեղանը մոտեցրեց նստարանին և դարձրեց միացնող կոճակը:

Էկրանի հայելին լուսավորվեց, նրա վրա վերևից ներքև սահում էին մարսեցիների, անասունների, տների, ծառերի, կահ-կարասիների պատկերներ:

Աելիտան տալիս էր յուրաքանչյուր առարկայի անունը: Երբ նրանք շարժվում էին ու մոտենում միմյանց, նա ասում էր բայը: Երբեմն, երբ պատկերները միմյանց հաջորդում էին գունավոր նշաններով, ինչպես երգող գրքի մեջ, և լսվում էր հազիվ որսվող երաժշտական ֆրագ, Աելիտան տալիս էր գաղափարը:

Նա խոսում էր ցածր ձայնով: Առանց շտապելու սահում էին այդ տարօրինակ այբուբենի առարկաների պատկերները: Գրադարանի անդորրության և կապտավուն մթնշաղի մեջ Լոսին էին նայում մի գույգ մոխրագույն աչքեր: Աելիտայի ձայնը ուժգին ու քնքուշ հմայքով թափանցում էր Լոսի գիտակցության մեջ: Գլուխը պտտվում էր:

Նա զգաց, որ ուղեղն սկսում է պարզվել, կարծես թե նրա վրայից մշուշապատ քող էր բարձրանում, և նոր բառեր ու հասկացողություններ էին տպավորվում նրա հիշողության մեջ: Այդպես շարունակվեց երկար: Աելիտան ձեռքով շփեց ճակատը, շունչ քաշեց և հանգցրեց էկրանը: Լոսն ու Գուսերը ասես մշուշի մեջ էին նստած:

— Գնացեք և պառկեք քնելու, — ասաց Աելիտան հյուրերին այն լեզվով, որի հնչյունները դեռևս նրանց համար տարօրինակ էին, բայց իմաստն արդեն թափանցել էր նրանց մշուշապատ գիտակցության մեջ:

ՄԱՆԴՈՒՂՔԻ ՎՐԱ

Անցավ յոթ օր:

Հետագայում, երբ Լոսը մտաբերում էր այդ օրերը, դրանք պատկերանում էին որպես մի կապույտ աղջամուղջ, մի զարմանալի անդորրություն, որտեղ արթմնի ձգվում էին հրաշալի երազների շարանները:

Լոսն ու Գուսեր արթնացան վաղ առավոտյան: Լողանալուց և թեթև նախաճաշելուց հետո գնացին գրադարան: Շեմքի վրա նրանց դիմավորեցին Աելիտայի ուշադիր ու քնքշաբարո աչքերը: Նա ասում էր արդեն գրեթե հասկանալի բառեր: Անդորրության անարտահայտելի զգացում կար սենյակի լռության ու կիսախավարի մեջ, Աելիտայի մեղմ խոսքերում: Նրա խոնավացած, երազկոտ աչքերը պսպղուն գնդերի նման պտտվում էին ակնախոռոչներում: Էկրանի վրայով վազում էին ստվերները: Բառերը ակամայից թափանցում էին գիտակցության մեջ:

Բառերը (սկզբում միայն հնչյունները, ապա ասես մշուշի միջից եկող հասկացողությունները) քիչ-քիչ լցվում էին կյանքի հյութով: Այժմ, երբ Լոսն արտասանում էր Աելիտա անունը, դա նրան հուզում էր կրկնակի զգացմունքով. բառասկզբի թախծալի ԱԵ-ով, որը նշանակում է՝ «վերջին անգամ երևացող» և արծաթափայլ զգացում առաջացնող ԼԻՏԱ-ով, որը նշանակում է «աստղերի լույս»: Այդպես նոր աշխարհի լեզուն ամենանուրբ առարկայով մտնում էր գիտակցության մեջ:

Յոթ օր տևեցին այդ պարապմունքները: Դասերը տեղի էին ունենում առավոտները և մայրամուտից հետո՝ մինչև ուշ գիշեր: Վերջապես, Աելիտան շատ հոգնեց: Ութերորդ օրը հյուրերին չեկան արթնացնելու, և նրանք քնեցին մինչև երեկո:

Երբ Լոսը վեր կացավ անկողնուց, լուսամուտի մեջ երևում էին ծառերի երկար ստվերները: Միօրինակ, զրնգուն ձայնով գեղգեղում էր ինչ-որ մի թռչնակ: Լոսը արագ հագնվեց և, առանց արթնացնելու Գուսեին, գնաց գրադարան, բայց նրա թակոցներին ոչ ոք չպատասխանեց: Այդ ժամանակ Լոսը յոթ օրվա ընթացքում առաջին անգամ դուրս եկավ բակ:

Բացատր իջնում էր դեպի պուրակը, դեպի ցածրիկ շինությունները: Հուսահատ բառաչունով այնտեղ էր գնում դանդաղաշարժ, երկարաբուրդ անասունների հոտը: Դրանք շատ տարօրինակ կենդանիներ էին՝ կեսը արջի էր նման, կեսը՝ կովի: Մայրամուտ թեքված արևը ոսկեգոծել էր խոտերը և ամբողջ մարգագետինը ողողել ոսկեգույն ցողով: Լճի կողմն էին թռչում զմրուխտե կռունկները: Հեռվում երևում էր վերջալույսովողողված լեռնագագաթի ձյունապատ կոնը: Այդտեղ նույնպես անդորրություն էր իշխում, խաղաղության ու ոսկու մեջ մեռնող օրվա կնիքը:

Լոսը ծանոթ շավիղով գնաց դեպի լիճը: Երկու կողմերում կանգնած էին նույն վարսակախ երկնագույն ծառերը, բծավոր ծառաբներից այն կողմ նույն ավերակներն էին փռված, նույն մեղմ ու զովաշունչ օդն էր: Բայց Լոսին թվաց, որ նա հիմա է միայն տեսնում այդ սքանչելի բնությունը, կարծես նոր են բացվել նրա աչքերն ու ականջները. նա գիտեր առարկաների անունները:

Ճյուղերի միջից երևում էր բոցավառ լիճը: Բայց երբ Լոսը մոտեցավ ջրին, արևն արդեն մայր էր մտել, վերջալույսի բոցե լեզուները փախչում էին, երկնքի կեսը բռնկվել էր ոսկեղեն հրդեհով: Շուտով հրդեհը արագ-արագ ծածկվեց շղարշով, երկնակամարը մաքրվեց, մթնեց, և ահա վառվեցին աստղերը: Համաստեղությունների արտասովոր պատկերը անդրադարձել էր ջրում: Լճից ճառագայթող լույսի մեջ, սանդուղքի մոտ, սև կերպարանքով բարձրանում էին երկու քարե հսկա: Դրանք հազարամյակների պահակներ էին, որ նստել էին այստեղ, նայում էին համաստեղություններին:

Լոսը մոտեցավ սանդուղքին: Աչքերը դեռ չէին վարժվել արագորեն վրա հասնող մթությանը: Նա հենվեց արձանի պատվանդանին և շնչեց լճի տամուկ օդը, որ հագեցած էր ճահճային ծաղիկների դառնավուն հոտով: Աստղերը անդրադարձել էին լճում ու վետվետում էին, ջրի երեսը ծածկվել էր նուրբ մշուշով: Իսկ համաստեղությունները վառվում էին ավելի պայծառ, և այժմ պարզ երևում էին նիրհող ճյուղերը, փոքր, փայլփլուն քարերն ու նստած Մագաղիտի ժպտացող դեմքը:

Այսպես կանգնած՝ Լոսը երկար ժամանակ նայում էր, մինչև որ հոգնեց ու ցած սահեց քարի վրա հենած ձեռքը: Այդ ժամանակ Լոսը հեռացավ արձանից և նույն պահին էլ տեսավ ներքևում, սանդուղքի վրա նստած Աելիտային: Նա նստել էր անշարժ և նայում էր սև ջրում անդրադարձած աստղերին:

— Աիու տու իրա խասիսե, Աելիտա,— շնչաց Լոսը, հիացմունքով լսելով իր խոսքերի անսովոր հնչյունները: Նադրանք արտասանեց դժվարությամբ: Նրա ցանկությունն էր՝ կարո՞ղ եմ լինել ձեզ հետ: Այս օտար հնչյունները ինքնաբերաբար դուրս թռան նրա բերանից:

Աելիտան դանդաղորեն շրջեց գլուխն ու ասաց.

— Այո:

Լոսը նստեց նրա կողքին, աստիճանի վրա: Աելիտայի մազերը ծածկված էին սև կնգուղով: Աստղերի լուսի մեջ նկատելի էր դեմքը, բայց աչքերը չէին երևում, միայն աչքերի տակ մեծ-մեծ ստվերներ կային:

Հանդարտ ու սառը ձայնով նա հարցրեց.

— Դուք երջանի՞կ էիք այնտեղ՝ Երկրի վրա:

Լոսն անմիջապես չպատասխանեց, և ուշադրությամբ նայեց նրան: Աելիտայի դեմքը չէր շարժվում, թախիծով պատած բերանը սեղմված էր:

— Այո,— պատասխանեց նա,— այո, ես երջանիկ էի:

— Ինչո՞ւմն էր ձեր երջանկությունը Երկրի վրա:

Լոսը նորից նայեց նրան:

Երկրի վրա մեր երջանկությունը գուցե այն է, որ ընկնում ենք ինքնամոռացության մեջ: Ի սրտե երջանիկ է նա, ով ունի խորություն, համաձայնություն և կյանքի ծարավ՝ ապրելու նրանց համար, ովքեր տալիս են այդ խորությունը, համաձայնությունն ու բերկրանքը:

Այժմ Աելիտան շրջվեց նրա կողմը: Սկսեցին երևալ նրա խոշոր աչքերը, որ հիացած նայում էին սպիտակահեր այդ հսկա մարդուն:

— Այդպիսի երջանկություն գալիս է կնոջ նկատմամբ ունեցած սիրուց,— ասաց Լոսը:

Աելիտան շուտ եկավ: Նրա գլխի սրածայր թասակը դողդողում էր: Չգիտես՝ նա ծիծաղո՞ւմ էր, թե՞ լալիս: Լոսը տագնապալից շուտ ու մուտ եկավ մամռապատ սանդուղքի վրա: Աելիտան փոքր-ինչ կերկերուն ձայնով ասաց.

— Դուք ինչո՞ւ թողեցիք Երկիրը:

— Նա, որին ես սիրում էի, մեռավ,— ասաց Լոսը:— Ուժ չկար հուսահատությունը հաղթահարելու, կյանքն ինձ համար դարձավ անտանելի: Ես փախստական եմ ու վախկոտ:

Աելիտան թիկնոցի տակից հանեց ձեռքը, դրեց Լոսի խոշոր ձեռքին և անմիջապես նորից քաշեց թիկնոցի տակ:

— Ես գիտեի, որ իմ կյանքում լինելու է այս բանը,— ասես վարանելով կամաց ասաց նա:— Դեռ փոքրիկ աղջիկ էի, որ տարօրինակ երազներ էի տեսնում: Տեսնում էի բարձր ու կանաչ սարեր, վճիտ գետեր, որոնք նման չէին մեր գետերին: Եվ ամպեր, սպիտակ ու խոշոր, իսկ անձրևներն ասես ջրի հեղեղ լինեին: Տեսնում էի մարդ-հսկաներ: Ես կարծում, էի, թե կգժվեմ: Հետագայում իմ ուսուցիչն ասաց, որ դա աշխե է, երկրորդ տեսողություն: Մեր՝ Մագացիտլների սերունդներինս մեջ մի ուրիշ կյանքի հիշատակ է ապրում, աշխեն քնած է չծլած հատիկի պես: Աշխեն սարսափելի ուժ է, մեծ իմաստություն: Բայց ես չգիտեմ, թե ինչ բան է երջանկությունը:

Աելիտան թիկնոցի տակից հանեց ձեռքերը և երեխայի պես իրար խփեց: Նրա թասակը նորից դողդողում էր:

— Արդեն քանի տարի է, որ գիշերները ես գալիս եմ այստեղ, սանդուղքի վրայից նայում աստղերին: Ես շատ բան գիտեմ: Հավատացնում եմ ձեզ, ես այնպիսի բաներ գիտեմ, որոնք ձեզ երբեք չի կարելի իմանալ և պետք էլ չէ, որ գիտենաք: Բայց ես երջանիկ էի, որ մանկությանս տարիներին երազում տեսնում էի ամպեր, ամպեր, անձրևի հեղեղներ, կանաչ սարեր, հսկաներ: Ուսուցիչս ինձ նախազգուշացնում էր, որ ես կկործանվեմ:

Աելիտան երեսը դարձրեց դեպի Լոսը և հանկարծ ծիծաղեց:

Լոսը սարսափեց. այնպե՞ս գեղեցիկ էր Աելիտան, այնքա՛ն վտանգավոր: Փոքր-ինչ դառնավուն, բայց դուրեկան հոտ էր գալիս նրա թիկնոցից, ձեռքերից, երեսից, շնչառությունից:

— Ուսուցիչս ասում էր. «Խառն կկործանի քեզ»: Այս բառը վայրէջք է նշանակում:

Աելիտան շուռ եկավ և կնգուղը քաշեց աչքերը:

Մի պահ լռելուց հետո Լոսն ասաց:

— Աելիտա, ինձ պատմեք ձեր գիտեցածը:

— Դա գաղտնիք է,— ասաց նա,— բայց դուք մարդ եք, և ես պարտավոր եմ շատ բաներ պատմել:

Աելիտան բարձրացրեց դեմքը: Ծիր-Կաթինի երկու կողմերից մեծ-մեծ համաստեղությունները առկայծում ու շողշողում էին այնպես, կարծես թե հավերժության քամի էր անցնում նրանց վրայով: Աելիտան հառաչեց:

— Դե լսեք,— ասաց նա,— լսեք ինձ ուշադիր ու անվրդով:

ԱԵԼԻՏԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սրանից քսան հազարամյակ առաջ Տումայի, այսինքն՝ Մարսի վրա բնակվում էր Աոլ կոչվող մի նարնջագույն ժողովուրդ: Աոլները վայրենի ցեղեր էին և զբաղվում էին որսորդությամբ: Նրանք լափում էին հսկայական սարդեր և ապրում էին հասարակածային անտառներում ու ճահիճներում: Մեր լեզվում միայն մի քանի բառ է մնացել այդ ցեղերից: Աոլների մյուս մասը ապրում էր մեծ ցամաքի հարավային խորշերում: Այնտեղ կան աղի ու քաղցրահամ լճերով հրաբխային քարանձավներ: Բնակչությունը ձուկ էր որսում և կրում գետնի տակ, լցնում աղի լճերը: Ձմռան սառնամանիքներից պաշտպանվելու համար նրանք մտնում էին քարանձավների խորքը: Մինչև այսօր էլ այնտեղ դեռևս երևում են ձկան ոսկորներից գոյացած բլրակներ:

Առկների երրորդ մասը բնակվում էր հասարակածին մոտիկ գտնվող լեռների ստորոտներում, ամենուրեք, ուր գետնի տակից խմելու ջրի հեյզերներ էին դուրս ցայտում: Այդ ցեղերը կարողանում էին բնակարաններ կառուցել և բազմացնել երկարամազ անասուններ, կովում էին սարդակերների հետ և երկրպագում արնագույն Տալցետլ աստղը:

Ցեղերից մեկում, որն ապրում էր Ագորա երանավետ երկրում, հայտնվեց մի տարօրինակ շոխո: Նա հովվի որդի էր, մեծացել էր Լիզիազիրայի սարերում: Երբ լրացել էր նրա տասնյոթ տարին, իջել էր Ագորայի բնակավայրերը, անցել քաղաքից քաղաք և այսպես ասել.

«Երագումն երկինքը պատռվեց, և աստղ ընկավ: Ես հոտս քշեցի այնտեղ, ուր ընկավ այդ աստղը: Այնտեղ ես տեսա խոտերի վրա պառկած Երկնքի Որդուն: Նա բարձրահասակ էր, երեսը՝ սպիտակ, ինչպես բարձունքների ձյունը: Նա բարձրացրեց գլուխը, և ես տեսա, որ նրա աչքերից դուրս ենգալիս լույս ու մոլեգնություն: Ես վախեցա և ընկա երեսնիվար ու մեռածի պես երկար ժամանակ մնացի պառկած: Ես լսեցի, թե ինչպես Երկնքի Որդին վերցրեց իմ գավազանն ու քշեց հոտս, և գետինը դողում էր նրա ոտքերի տակ: Բացի այդ, ես լսեցի նրա բարձր ձայնը, նա ասում էր. «Դու պիտի մեռնես, քանի որ ես եմ այդպես ուզում»: Ես գնացի նրա ետևից, որովհետև ափսոսում էի անասուններիս: Վախենում էի մոտենալ նրան. նրա աչքերից կատաղի կրակներ էին ցայտում, և ամեն անգամ ես երեսնիվար գետնին էի ընկնում, որ կենդանի մնամ: Այդպես մենք գնացինք մի քանի օր և լեռներից հեռացանք դեպի մի անապատ:

Երկնքի Որդին գավազանով խփեց քարին, և ջուր դուրս եկավ: Անասուններն ու ես խմեցինք այդ ջրից: Եվ Երկնքի Որդին ինձ ասաց. «Եղիր իմ ստրուկը»: Այդ ժամանակ ես սկսեցի արածացնել նրա հոտը, իսկ նա ինձ կերակրի մնացորդներ էր տալիս»:

Այսպես էր ասում հովիվը քաղաքի բնակիչներին: Եվ ասում էր նաև հետևյալը.

«Հեզ ու խելոք թռչուններ և գազաններ են ապրում, որոնք չգիտեն, թե երբ է գալու իրենց վախճանը: Բայց արդեն գիշատիչ իխին իր սուր թևերը փռել է կռունկի վրա, սարդը ցանց է հյուսել, և սարսափելի չար աչքերը վառվում են մացառուտների միջից: Վախեցեք: Դուք չունեք այնպիսի ամուր պատեր, որ պաշտպանվեք, դուք չունեք այնպիսի երկար ոտքեր, որ փախչեք չափց: Երկնքում ես կրակե գծեր եմ տեսնում, և Երկնքի չար Որդին ընկնում է ձեր գյուղերը: Նրա աչքը Տալցետլի կրակի պես կարմիր է»:

Ագորայի խաղաղ բնակիչները լսելով այս խոսքերը ասի ու սարսափով վեր էին բարձրացնում ձեռքերը: Հովիվը ասում էր նաև հետևյալը.

«Երբ արնածարավ չան մացառուտների միջից աչքերով քեզ է փնտրում՝ ստվեր դարձիր, և նրա քիթը չի առնի քո արյան հոտը: Երբ իխին ընկնում է վարդագույն ամպերից, չքվիր, և իխի աչքերը իզուր կորոնեն քեզ խոտերի մեջ: Երբ երկու լուսինների՝ օլլոի ու լիտխայի լույսերի տակ, գիշերով չար սարդը՝ ցիտլին, ուստայնով է պարուրում քո խրճիթը, ստվեր դարձիր, և ցիտլին չի կարողանա բռնել քեզ: Ստվերդարձիր, Տումայի խեղճ գավակ: Միշտ չարությունը դեպի չարություն է տանում: Քեզանից վանիր ամեն մի չար բան: Թաղիր վատ արարքներդ քո խրճիթի շեմի տակ: Գնա դեպի մեծ Սոամի հեյզերը և վճարիր նրա տաք ջրով: Դու անտեսանելի կդառնաս Երկնքի Որդու աչքին, և իզուր նրա արնակալած աչքը կփնտրի քեզ»:

Ագորայի բնակիչները լսեցին հովիվին և շատերը նրա հետևից գնացին դեպի կլոր լիճը, դեպի մեծ Սոամի ջրերը:

Ոմանք հարցնում էին. «Ինչպե՞ս կարելի է չարությունը թաղել խրճիթի շեմի տակ»: Ոմանք վրդովված գոռում էին հովվի վրա. «Դու խաբում ես, ընչագուրկ աղքատներն են քեզ սովորեցրել, որ թմրեցնես մեր զգոնությունը և տիրանաս մեր խրճիթներին»: Ոմանք էլ պնդում էին. «Այդ գիժ հովվին տանենք և ժայռից գցենք տաք լիճը, թող ինքը ստվեր դառնա»:

Լսելով այդ խոսքերը, հովվի վերցնում է ուլան՝ փայտե շվին, որի ներքևում եռանկյունու վրա լարեր էին քաշված, նստում է զայրացածների, բորբոքվածների ու կասկածամիտների մեջտեղը և սկսում նվազել ու երգել: Նա այնպես հիանալի է նվագում ու երգում, որ պապանձվում են թռչունները, լռում քամին, գետնին են պառկում անասունների հոտերը, իսկ երկնքում կանգ է առնում արևը: Լսողներից ամեն մեկին այդ պահին թվում էր, թե նա իր վատ արարքները արդեն թաղել է խրճիթի շեմի տակ:

Երեք տարի խրատում էր հովվի: Իսկ չորրորդ ամռանը ճահիճներից դուրս եկան սարդակերները և հարձակվեցին Ագորայի բնակիչների վրա: Հովվի մի բնակավայրից մյուսն էր անցնում և ասում. «Մի անցեք ձեր շեմից, վախեցեք ձեր ներսում եղած չարությունից, վախեցեք մաքրությունը կորցնելուց»: Նրան լսում էին, և եղան այնպիսիները, որոնք չէին ուզում դիմադրել սարդակերներին, և այդ վայրենիներն էլ նրանց սպանեցին հենց իրենց խրճիթների շեմի վրա: Այդ ժամանակ քաղաքի ավագները խորհրդակցեցին և հովվին բարձրացրին ժայռի վրա ու այնտեղից նետեցին լիճը:

Հովվի ուսմունքը դուրս եկավ Ագորայի սահմաններից և տարածվեց հեռու-հեռու: Նույնիսկ ծովածոցերի բնակիչները ժայռերի վրա քանդակեցին նրան՝ ուլա նվագելիս: Եղել էնաև այնպես, որ ուրիշ ցեղերի առաջնորդները մահապատժի են ենթարկել հովվի երկրպագուներին, որովհետև նրա ուսմունքը համարում էին անմիտ ու վտանգավոր: Եվ ահա վրա հասավ մարգարեության իրագործման ժամը: Այն ժամանակվա տարեգրության մեջ ասված է.

«Քառասուն ցերեկ և քառասուն գիշեր Տումայի վրա Երկնքի Որդիներ էին ընկնում: Տալցետլ աստղը դուրս էր գալիս վերջալույսից հետո և վառվում էր անսովոր լույսով, ասես զայրացած աչք լիներ: Երկնքի Որդիներից շատերը մեռած էին ընկնում, շատերը ջախջախվում էին ժայռերի վրա, խեղդվում հարավային օվկիանոսում, բայց շատերն էլ կենդանի էին ընկնում Տումայի վրա»:

Այդպես է պատմում տարեգրությունը Մագացիտլների մեծ վերաբնակության մասին, այսինքն՝ երկրի ցեղերից մեկի, որը ջրհեղեղից կործանվել է սրանից քսան հազարամյակ առաջ:

Մագացիտլները թռչում էին բրոնզե ձվաձև ապարատներով, որոնք շարժվում էին մատերիայի տրոհման ուժով: Քառասուն օրվա ընթացքում նրանք թողեցին Երկիրը:

Բազմաթիվ հսկայական ձվեր են կորել աստղային տարածության մեջ, շատ շատերը ջարդուփշուր են եղել Մարսի մակերևութին հասնելիս: Շատ քչերն են անվնաս իջել հասարակածային մայր ցամաքի հարթավայրի վրա:

Տարեգրությունն ասում է.

«Նրանք դուրս էին գալիս ձվերի միջից: Երկնքի Որդիներն ունեին բարձր հասակ, սև մազեր, դեղին ու տափակ երեսներ: Նրանց մարմինը, գոտկատեղից վերև, ինչպես նաև ծնկները, ծածկված էին բրոնզե զրահով: Մաղավարտները սուր կատար ունեին և առջևի մասով ծածկում էին դեմքը: Երկնքի Որդու ձախ ձեռքում կար մի կարճ սուր, իսկ աջում՝ բանաձևերով թղթագալարներ, որոնք կործանեցին Տումայի՝ աղքատ ու տղեղ ժողովրդին»:

Այդպիսիք են եղել Մագացիտլները, այդ դաժան ու հզոր ցեղերը: Երկրի վրա, այսինքն՝ այն մայր ցամաքում, որն իջել է օվկիանոսի հատակը, նրանք տիրել են Հարյուր Ոսկե Դարբասների քաղաքը:

Այստեղ դուրս գալով բրոնզե ձվերից, նրանք մտել են Առլների բնակավայրերը և վերցրել են իրենց ցանկացածը, իսկ դիմադրողներին սպանել: Նրանք անասունների հոտերը քշել են դեպի հարթավայրերը և սկսել են ջրհորներ փորել: Հետո վարել են դաշտերը և գարի ցանել: Բայց ջրհորներում ջուր քիչ կար, և չոր ու անբերրի հողում փչացան գարու սերմերը: Այդ ժամանակ նրանք Առլներին առաջարկեցին գնալ դեպի հարթավայրը, փորել ոռոգիչ ջրանցքներ և կառուցել ջրամբարներ:

Շատերը լսեցին նրանց և գնացին փորելու: Ունանք էլ ասացին. «Եկեք չլսենք և սպանենք այդ եկվորներին»:

Առլների գորքերը դուրս եկան հարթավայր և ամպի պես ծածկեցին այն:

Եկվորները քիչ էին: Բայց նրանք ժայռի պես ամրապինդ էին, օվկիանոսի ալիքների պես հզոր, մրրիկի պես կատաղի: Նրանք ցրեցին ու ոչնչացրին Առլների գորքը, փռջի դարձրին բնակավայրեր: Ցան ու ցիր եղան անասունների հոտերը: Ճահիճներից դուրս եկան վայրագ չաերը և քրքրեցին կանանց ու երեխաներին: Այդ դիակ ուտողները այնպես չաղացան, որ այլևս չկարողացան թռչել: Վրա հասավ աշխարհի վերջը:

Այդ ժամանակ հիշեցին նախագուշակությունը. «Տումայի խեղճ գավակ, աներևույթ դարձիր, և Երկնքի Որդու արնակոխ աչքը իզուր կփնտրի քո ստվերը»: Շատ Առլներ գնացին դեպի մեծ Սոամի ջրերը: Շատերը հեռացան լեռները՝ հույս ունենալով մթին անձավներից լսել չարիքներից մաքրող ուլայի երգը: Շատերն էլ իրար մեջ բաժանեցին իրենց ունեցվածքը: Մեկը մյուսի և իրենց մեջ էին փնտրում բարին և երգերով ու ուրախության արցունքներով ողջունում էին այդ բարին: Լիզիազիրային սարերում հովվին հավատացողները կառուցեցին Սրբազան Դուռը, որի տակ պառկել էր չարիքը: Անմարելի խարույկների երեք օղակ էր պահպանում Սրբազան Դուռը:

Առլների գորքը կործանվեց: Անտառներում ոչնչացվեցին սարդակերները: Իսկ մնացածները դարձան ստրուկներ: Բայց մագացիտլները ձեռք չտվին հովվի ուսմունքի հավատացյալներին, չկպան Սրբազան Դռանը, չմոտեցան Սոամի ջրերին, չմտան լեռնային քարանձավների խորքը, որտեղ կեսօրինթափառիկ քամին խորհրդավոր հնչյուններ էր արձակում: Դա հովվի ուլայի ձայնն էր:

Այդպես բոլորեցին շատ ու շատ տխուր և արյունալի տարիներ:

Եկվորների հետ կանայք չկային և դրա համար էլ նվաճողները պիտի մեռնեին՝ առանց սերունդ թողնելու: Եվ ահա այն լեռներում, որտեղ թաքնվել էին Առլները, հայտնվեց համբավաբեր՝ Մագացիտլի գեղեցիկ տեսքով: Նա առանց սրի ու առանց սաղավարտի էր: Ձեռքում գավազան էր բռնել, որից թել կար կապած: Նա մոտեցավ Սրբազան Դռան կրակներին և դիմեց քարանձավներից այդտեղ հավաքված Առլներին:

«Գլուխս բաց է, կուրծքս՝ մերկ, սրով քրքրեք ինձ, եթե սուտ ասեմ: Մենք հզոր ենք: Մենք տիրեցինք Տալցետլ աստղը: Մենք թռել անցել ենք Ծիր Կաթին կոչվող աստղային ճանապարհը: Մենք նվաճեցինք Տուման և ոչնչացրինք մեր թշնամի ցեղերին: Մենք սկսեցինք կառուցել ջրամբարներ ու մեծ ջրանցքներ, որպեսզի ջուր հավաքենք և ոռոգենք Տումայի այս անբերրի դաշտերը: Մենք կկառուցենք Սոացերա մեծ քաղաքը, որ նշանակում է արևային բնակավայր, մենք կյանք կտանք բոլոր նրանց, ովքեր ապրել են ուզում: Բայց մեր մեջ կին չկա, և մենք պիտի մեռնենք, չկատարելով

նախատեսածը: Ձեր կույսերին մեզ կնության տվեք, և մենք նրանց հետ միասին հզոր ցեղ կստեղծենք, որը կբնակվի Տումայի մայր ցամաքում: Մեզ մոտ եկեք, օգնեցեք, որ կառուցենք»:

Համբավաբերը թելով կապած գավազանը դրեց կրակի մոտ և նստեց դեմքը դեպի Սրբազան Դուռը: Նրա աչքերը փակ էին: Եվ բոլորը նրա ճակատի վրա տեսան երրորդ աչքը, որը ծածկված էր թաղանթով, ասես բորբոքված լիներ:

Առլները խորհրդակցեցին և միմյանց ասացին. «Սարերում կերը չի հերիքում անասուններին, քիչ է նաև ջուրը: Ձմռանը մենք կառենք անձավներում: Ուժեղ քամիները մեր խրճիթները կքշեն դեպի անտակ ձորերը: Լսենք համբավաբերին և վերադառնանք մեր հայրենական հին օջախները»:

Առլները դուրս եկան լեռնային անձավներից և գնացին Ազորայի դաշտավայրը՝ առջևից քշելով անասունների հոտերը: Մագացիտլները կնության վերցրին Առլների կույսերին, և նրանցից ծնվեց երկնագույն Գոր ցեղը: Այդ ժամանակ էլ սկսվեցին տասնվեց վիթխարի Ռո կրկեսների շինարարությունը: Այդ կրկեսներում ձնհալքի ժամանակ կուտակվում էր ջուրը: Անբերրի դաշտերում փորվեցին ոռոգիչ ջրանցքներ:

Մոխիրների միջից ծնվեցին Առլների նոր բնակավայրեր: Դաշտերը առատ բերք տվեցին:

Վեր բարձրացան Սոացերայի պատերը: Մագացիտները կրկեսների ու պատերի շինարարության ժամանակ օգտագործեցին խոշոր ամբարձիչ մեքենաներ, որոնց շարժման մեջ էին դնում զարմանալի մեխանիզմները: Մագացիտլները գիտելիքների ուժով կարողացան մեծ-մեծ քարեր տեղափոխել և զարկ տալ բույսերի աճին: Նրանք իրենց գիտելիքները գրեցին գունավոր բծերով ու աստղաձև նշաններով գրքերի մեջ:

Երբ մեռավ Երկրից եկած վերջին առաքյալը, նրա հետ էլ կորավ նաև գիտությունը: Միայն քսան հազարամյակ հետո մենք՝ Գոր ցեղերի սերունդներս, նորից սկսեցինք կարդալ Ատլանտների գաղտնիքները:

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մթնշաղին Գուսերը պարապությունից չիմանալով ինչ անել, գնաց սենյակները շրջելու: Տունը մեծ էր, կառուցված էր ամուր՝ ձմռանն այդտեղ ապրելու համար: Կային բազմաթիվ անցարաններ, սանդուղքներ, դատարկ դահլիճներ, մեռելային լռության մեջ թաղված պատկերասրահներ: Գուսերը շրջում էր, կողքերը նայում ու հորանջում.

«Մատանաները հարուստ են ապրում, բայց և այնպես տխուր է»:

Տան հեռավոր մասում լսվեցին ձայներ, խոհանոցային դանակների չիկոցներ, ամանեղենի գնդոցներ: Կառավարչի ճղճղան ձայնը կերկերում էր թռչնային բառերով, ինչ-որ մեկին հայիտում էր նա: Գուսերը գնաց խոհանոց, որը ցածրիկ ու կամարակապ սենյակ էր: Նրա խորքում թավաներից վերև բոցկլտում էր ձեթի կրակը: Գուսերը կանգնեց շեմին ու հոտքաշեց: Կառավարիչն ու խոհարարուհին, որ վիճում էին միմյանց հետ, լռեցին և փոքր-ինչ վախով գնացին կամարների խորքը:

— Ձեզ մոտ հրեշներ կան, հրեշներ,— ռուսերեն ասաց նրան Գուսերը,— սալօջախի վրա խուփ դրեք, է՛իս, բարբարոսներ, և դեռ մարսեցիներ եք:

Ձեռքը թափահարելով նրանց վախեցած դեմքերի կողմը, նա դուրս եկավ սև արտասանդուղք: Նստեց քարե աստիճաններին, գրպանից հանեց նվիրական ծխախոտատուփն ու ծխեց:

Բացատի ներքևում, անտառեզրին փոքրիկ հովիվը վազելով ու գոռոռալով դեպի աղյուսաշեն մարագն էր քշում խուլ ձայնով բառաչող անասուններին: Այնտեղի բարձր աճած խոտերի միջի արահետով դեպի հովիվն էր գալիս մի կին, որ երկու դույլով կաթ էր տանում: Քամին խփում էր նրա վերնագգեստին, վառ շիկագույն մազերի վրա խաղացնում ծիծաղելի գլխարկի ծոպքը: Ահա նա կանգ առավ, ներքև դրեց դույլերը և սկսեց հևալ, ինչ-որ միջատից արմունկով ծածկելով դեմքը: Քամին բարձրացրեց նրա փեշը: Նա պզգեց, ապա կանգնեց: Ծիծաղելով վերցրեց դույլերը և նորից վազեց: Նկատելով Գուսևին, նա ուրախ բաց արեց իր սպիտակ ատամները:

Գուսևը նրան ասում էր Իխոշկա, թեև անունը Իխա էր: Նա կառավարչի ազգականուհին էր, համարձակ, մուգ կապտագույն մաշկով մի չաղլիկ աղջիկ:

Նա աշխուժորեն վազեց Գուսևի մոտով և քիթը կնճռոտեց նրա կողմը: Գուսևը պատրաստվեց շրմփացնելու նրա հետևից, բայց զսպեց իրեն: Նստեց, ծխեց ու սպասեց նրան:

Եվ իրոք, Իխոշկան շուտով նորից հայտնվեց, իր հետ բերելով մի զամբյուղ ու մի դանակ: Նստեց Երկնքի Որդուց մի քիչ հեռու և սկսեց բանջարեղեն մաքրել: Նրա խիտ թերթերունքները վեր ու վար էին շարժվում: Ամեն ինչից երևում էր, որ ուրախ աղջիկ է:

— Ինչո՞ւ ձեզ մոտ, Մարսի վրա, կնանիք ինչ-որ կապտագույն են,— ռուսերեն ասաց Գուսևը նրան:— Տխմար ես դու, Իխոշկա, կյանքը ոնց որ պետքն է չես հասկանում:

Իխան պատասխանեց նրան, և Գուսևը, ասես երազի միջից, հասկացավ նրա խոսքերը:

— Դպրոցում ես սուրբ պատմությունն եմ սերտել. այնտեղ գրված էր, որ Երկնքի Որդիները չար են: Գրքերում այլ բան է ասվում: Իրականում ուրիշ բան է ստացվում: Երկնքի Որդիները բոլորովին էլ չար չեն:

— Այո, բարի են,— ասաց Գուսևը, կկոցելով մի աչքը: Իխան քահ-քահ ծիծաղեց: Կլեպը դուրս թռավ դանակի տակից:

— Իմ քեռին ասում է, թե դուք, Երկնքի Որդիներդ, կարող եք հայացքով էլ սպանել: Բայց ես ինչ-որ դա չեմ նկատում:

— Մի՞ թե: Իսկ դուք ի՞նչ եք նկատում:

— Լսեցեք, դուք ինձ մեր լեզվով պատասխանեք,— ասաց Իխոշկան,— ախր ձեր լեզվով ես չեմ հասկանում: Իսկ ձեր լեզվով երբ խոսում եմ, անկապ բան է դուրս գալիս:

— Դուք ի՞նչ ասացիք:— Իխան դանակը ցած դրեց, որովհետև թուլացել էր ծիծաղից.— Ըստ իս, ձեզ մոտ՝ Կարմիր Աստղի վրա, ամեն ինչ այստեղինի պես է:

Այդ ժամանակ Գուսևը հազաց ու մոտեցավ նրան: Իխան վերցրեց զամբյուղը և հեռու քաշվեց: Գուսևը հազալով նորից մոտեցավ: Իխան ասաց.

— Աստիճաններին քսվելով շորերդ կտրորեք:

Գուցե Իխան ինչ-որ ուրիշ բան ասաց, բայց Գուսևը հենց այդպես էլ հասկացավ:

Նա բուրբովին մոտ նստեց Իխոշկային: Իխան թեթև հոգոց քաշեց: Կախեց գլուխը և ավելի ուժեղ հառաչեց: Այդ ժամանակ Գուսերը արագ նայեց շուրջը և գրկեց նրա ուսերը: Իխան անմիջապես մի կողմ թեքվեց և չռեց աչքերը: Բայց Գուսերը պինդ համբուրեց նրա շրթունքները: Իխան ինչքան ուժ ուներ զամբյուղն ու դանակը սեղմեց իրեն:

— Այ եղպես, Իխոշկա:

Իխան վեր թռավ ու փախավ:

Գուսերը նստած մնաց: Շփում էր բեղիկները և ծիծաղում: Արևը մայր մտավ: Դուրս թափվեցին աստղերը: Նա հանկարծ նկատեց, որ գաղտագողի սանդուղքին է մոտենում ինչ-որ երկար ու բրդոտ մի գազանիկ և ֆոսֆորափայլ աչքերով նայում Գուսերին: Գուսերը շարժվեց: Գազանիկը ֆշշաց և ստվերի պես անհետացավ:

— Այո, այս դատարկ բաներին բայց և այնպես պետք է վերջ տալ,— ասաց Գուսերը, ուղղեց գոտին և մտավ տուն: Միջանցքում նրա առջև հայտնվեց Իխոշկան և գլխով ինչ-որ բան հասկացրեց: Գուսերը մատով նշան արեց, և նրանք քայլեցին միջանցքով: Գուսերը լարվածությունից կնճռոտելով դեմքը՝ մարսերեն ասաց.

— Դու, Իխոշկա, հենց իմացիր. եթե մի բան լինի՝ ես քեզ հետ կամուսնանամ: Դու լսիր ինձ: (Իխան երեսը դարձրեց դեպի պատը և գլուխը կախեց: Գուսերը նրան ետ քաշեց պատից և ամուր բռնեց ձեռքից): Քիթդ պատին մի՛ կացրու, ես դեռ չեմ ամուսնացել: Լսիր, ես՝ Երկնքի Որդիս, դատարկ բաների համար չեմ, որ այստեղ եմ եկել: Ես մեծ գործեր եմ նախատեսել ձեր մուլորակի վրա կատարելու: Բայց այստեղ ես նոր մարդ եմ, կարգը չգիտեմ: Դու ինձ պիտի օգնես: Միայն թե չխաբես, հա՛: Հիմա դու ինձ ասա, թե ով է մեր տերը:

— Մեր տերը,— պատասխանեց Իխան դժվարությամբ հասկանալով Գուսերի տարօրինակ խոսքերը, Տումայի համայն երկրների տիրակալն է:

— Այ քեզ բա՛ն,— Գուսերը կանգ առավ ու քորեց ականջի ետևը:— Ստո՞ւմ ես: Այդ դեպքում ի՞նչ է նրա պաշտոնական անունը, թագավո՞ր, թե՞ մի ուրիշ բան: Ի՞նչ է նրա պաշտոնը:

— Նրա անունը Տուսկուր է: Նա Աելիտայի հայրն է: Նա Բարձրագույն խորհրդի մեծն է:

— Այդպե՛ս: Հասկանալի է:

Գուսերը որոշ ժամանակ քայլում էր անխոս:

— Ահա թե ինչ, Իխոշկա, էն մյուս սենյակում ևս կաթնագույն հայելի եմ տեսել: Հետաքրքիր է նրա մեջ նայելը: Ցույց տուր ինձ, թե ինչպես են միացնում:

Նրանք մտան նեղ ու կիսախավար մի սենյակ, որտեղ ցածրիկ բազկաթոռներ կային: Պատի մեջ սպիտակին էր տալիս մշուշապատ հայելին: Գուսերը բազմեց Էկրանի մոտի բազկաթոռին: Իխան հարցրեց.

— Ի՞նչ կցանկանար տեսնել Երկնքի Որդին:

— Ինձ ցույց տուր քաղաքը:

— Հիմա գրշեր է, բուրբ տեղերում էլ աշխատանքն ավարտված է, ֆաբրիկաներն ու խանութները փակ են, հրապարակները՝ դատարկ: Գուցե որևէ տեսարա՞ն կնայեք:

— Տեսարան ցույց տուր:

Իխան միացուցիչը խրեց թվածածկ տախտակի մեջ և բռնելով երկար լարի ծայրը, գնաց դեպի բազկաթոռը, որտեղ Երկնքի Որդին նստել էր՝ ոտքերը մեկնած:

— Մասսայական զբոսանք է,— ասաց Իխան և քաշեց լարը:

Լսվեց ուժեղ աղմուկ: Դա ամբոխի հազարաձայն մռայլ խոսակցություն էր: Հայելին լուսավորվեց: Բացվեց կամարակապ ապակե կտուրների անհամար հեռապատկեր: Լույսի ճառագայթների լայն խրճերը ընկել էին հսկայական պլակատներին, արձանագրություններին, գույնզգույն ծխաքուլաներին: Ներքևում վիստում էին գլուխներ՝ ր, գլուխներ՝ ր, գլուխներ՝ ր: Ինչ-որ մի տեղ չղջիկի պես վերուվար էին թռչում թևավոր մարմիններ: Ապակե կամարները, խաչաձև ընկած լույսի ճառագայթներն ու ամբոխի հորձանքը հեռացան հայելու խորքը և կորան փոշոտ ու ծխոտ մշուշում:

— Ի՞նչ են անում նրանք,— բացականչեց Գուսեր բարձր ձայնով, այնքան որ մեծ էր աղմուկը:

— Նրանք թանկարժեք ծուխ են շնչում: Դուք տեսնո՞ւմ եք ծխաքուլաները. դա խավրայի տերևների ծուխն է: Դա թանկարժեք ծուխ է, որը համարվում է անմահության ծուխ: Ով շնչում է այդ ծուխը, անսովոր բաներ է տեսնում. թվում է, թե երբեք չի մեռնի: Այնպիսի՝ հրաշքներ կարելի է տեսնել ու հասկանալ: Շատերը լսում են ուլայի հնչյունները: Ոչ ոք իրավունք չունի խավրան ծխել իր տանը: Դրա համար մահվան կենթարկվեն: Միայն Բարձրագույն խորհուրդն է ծխել թույլ տալիս, ամբողջ տարում ընդամենը տասներկու անգամ են այս տան մեջ վառում խավրայի տերևները:

— Իսկ այ էնտեղ ի՞նչ են անում:

— Նրանք պտտեցնում են թվածածկ անիվներ: Այսօր ամեն ոք կարող է մտքում թիվ պահել, նա, ով կգուշակի այդ թիվը, ընդմիջտ կազատվի աշխատանքից: Բարձրագույն խորհուրդը նրան կնվիրի գեղեցիկ տուն, դաշտ, տասըհատ անասուն և թևավոր նավակ: Գուշակելը մեծ երջանկություն է:

Բացատրելուց հետո Իխան նստեց բազկաթոռի արմնկակալին: Գուսեն անմիջապես գրկեց նրա մեջքը: Իխան փորձեց ազատվել, բայց հանդարտվեց և անշարժ նստած մնաց: Գուսերը շատ հիացավ մշուշոտ հայելու մեջ երևացող հրաշքներով: «Ախ, դուք, սատանաներ, ախ, անպիտաններ»: Հետո նա խնդրեց, որ Իխան էլի բան ցույց տա:

Իխան իջավ բազկաթոռից և հանգցնելով հայելին, երկար ժամանակ զբաղված էր թվածածկ տախտակի մոտ. միացուցիչները չէին ընկնում անցքերի մեջ: Իսկ երբ վերադարձավ ու նստեց բազկաթոռի արմնկակալին, ձեռքի մեջ պտտեցնում էր լարերից սարքված մի գնդիկ: Նրա փոքրիկ դեմքը թեթևակի այլալված էր: Գուսերը շոյեց աղջկան վերնից ներքև և ծիծաղեց: Այդ ժամանակ Իխայի աչքերում սարսափ երևաց:

— Աղջի, մարդու գնալուդ իսկական ժամանակն է:

Իխոշկան մի կողմ դարձրեց աչքերը և խորը հառաչեց: Գուսեր սկսեց շոյել նրա մեջքը, որը դյուրագգայուն էր, ինչպես կատվինը:

— Ախ դու, հոգիս, գեղեցկուհիս, կապույտս:

— Նայեք, սա ավելի հետաքրքիր է,— բոլորովին թուլացած շշնջաց նա և ձգեց լարը:

Լուսավորված հայելու կեսը ծածկեց ինչ-որ մեկի մեջքը: Լսվեց մի սառը ձայն, որ դանդաղ բառեր էր արտասանում: Մեջքը երեբաց ու հայելու տեսադաշտից մի կողմ քաշվեց: Հայելու խորքում Գուսեր տեսավ քառակուսի սյուների վրա նստած մեծ կամարի մի մասը և ոսկետառ մակագրություններով ու երկրաչափական ֆիգուրներով ծածկված պատի մի կտոր: Ներքևում, սեղանի շուրջը, գլուխները կախ՝ նստել էին հենց այն մարսեցիները, որոնք մռայլ շենքի սանդուղքի վրա դիմավորեցին իրենց:

Դիպակով ծածկված սեղանի առաջ կանգնել էր Աելիտայի հայրը՝ Տուսկուրը: Շարժվում էին նրա բարակ շրթունքները, իսկ ոսկեկար խալաթի վրա տմբտմբում էր մորուքը: Տուսկուրն ամբողջովին ասես քարից սարքված լինեք: Մռայլ ու աղոտ աչքերը անշարժ նայում էին դեպի առաջ, ուղիղ հայելու մեջ: Տուսկուրը խոսում էր, և նրա ականջ ծակող խոսքերը թեն անհասկանալի, բայց սարսափելի էին: Ահա նա մի քանի անգամ կրկնեց «Տալցետլ» և այնպես իջեցրեց թղթագալարը բռունցքում պահած ձեռքը, որ ասես թե հարվածում էր: Նրա դիմացը նստած լայն ու դժգույն երեսով մարսեցին կատաղած վեր կացավ, ճերմակ պատի գույն ստացած աչքերով նայեց Տուսկուրին և գոռաց.

— Ոչ թե նրանք, այլ դո՛ւ:

Իխոշկան ցնցվեց նստած տեղում: Թեև նա հայելուն դեմ առ դեմ էր նստած, բայց ոչինչ չտեսավ ու չլսեց. Երկնքի Որդու խոշոր ձեռքը շոյում էր նրա մեջքը: Երբ հայելու մեջ գոչյուն լսվեց, և Գուսերը մի քանի անգամ հարցրեց. «Ինչի՞ մասին, ինչի՞ մասին են նրանք խոսում», Իխոշկան ասես նոր միայն արթնացավ, բաց արեց բերանը և ուշադրությունը հառեց դեպի հայելին: Հանկարծ նա աղիողորմ ճիչ արձակեց և ուժեղ քաշեց լարը:

Հայելին հանգավ:

— Ես սխալվեցի... Ես պատահաբար միացրի... Ոչ մի շոխ չի կարող լսել Բարձրագույն խորհրդի գաղտնիքները, — Իխոշկայի ատամները իրար էին խփվում: Նա մատները խրեց շիկակարմիր մազերի մեջ և հուսաբեկ շնջաց.— Ես սխալվեցի: Ես մեղավոր չեմ: Ինձ կարտաքսեն քարանձավների ու հավերժական ձյունների մեջ:

— Ոչինչ, ոչինչ, Իխոշկա, ես ոչ ոքի չեմ ասի,— Գուսերը նրան իրեն հպեց և շոյեց անգորակական կատվի մազերի պես փափուկ ու տաք մազերը: Իխոշկան հանդարտվեց, փակեց աչքերը:

— Ախ, հիմարիկս, ախ, երեխա: Դու ոչ էն է գազան ես, ոչ էն է՝ մարդ: Իմ կապտագույն հիմարիկ:

Նա քորեց Իխայի ականջի ետևը, համոզված լինելով, որ դա նրան հաճելի է: Իխոշկան հավաքեց ոտքերը և կծկվեց: Նրա աչքերը փայլեցին քիչ առաջ տեսած գազանիկի աչքերի պես: Գուսերը փոքր-ինչ սարսափեց:

Այդ ժամանակ լսվեցին Լուսի և Աելիտայի ոտնաձայները: Իխոշկան իջավ բազկաթոռից և թույլ-թույլ գնաց դեպի դուռը:

Հենց այդ գիշերը, ննջարան մտնելով, Գուսերը Լուսին ասաց.

— Մեր գործերը բոլորովին լավ վիճակի մեջ չեն, Մստիսլավ Սերգենիչ: Էնտեղ ես համոզեցի էն աղջկան, և նա միացրեց հայելին: Եվ ինչ, մենք ընկանք հենց այնտեղ, որտեղ նիստ էր անում Բարձրագույն խորհուրդը: Քիչումիչ հասկացա: Պետք է միջոցներ ձեռք առնենք, մեզ կսպանեն դրանք, Մստիսլավ Սերգենիչ, հավատացեք ինձ, դրանով էլ ամեն ինչ կվերջանա:

Լուր լսում էր ու չէր լսում: Երազկոտ հայացքով նա նայում էր Գուսևին: Հետո գլուխն առավ ձեռքերի մեջ:

— Կախարդություն է, Ալեքսեյ Իվանովիչ, կախարդություն: Հանգրեք լույսը:

Գուսևը մի պահ կանգնեց և մռայլ շնջաց.

— Այդպես:

Եվ գնաց քնելու:

ԱԵԼԻՏԱՅԻ ԱՌԱՎՈՏԸ

Աելիտան վաղ էր արթնացել և պառկել էր արմունկներին հենված: Նրա լայն, բոլոր կողմերից բաց անկողինը, ըստ սովորության, դրված էր ննջարանի կենտրոնի բարձրադիր տեղում: Առաստաղի բարձր ու մարմարապատ երդիկից ընկել էր առավոտյան շողարձակ լույսը: Ննջարանի պատերը, որ ծածկված էին գունատ մոզաիկայով, մնացել էին կիսախավարի մեջ: Լույսի սյունը ընկել էր միայն ձյան պես սպիտակ սավանների, բարձերին, ձեռքերի վրա թեքված Աելիտայի մոխրագույն գլխին:

Գիշերը նա վատ էր անցկացրել: Անհանգիստ ու սարսափելի երազներ էին անվերջ անցնում նրա փակ աչքերի առջև: Ամբողջ գիշեր նա քնի մեջ տեսել էր հոգեմաշ պատկերներ և կես քուն, կես արթուն մտածել, ինչպիսի անօգուտ երազներ են:

Երբ երդիկը լուսավորվեց վաղորդյան արևով, ու լույսը ընկավ նրա անկողնու վրա, Աելիտան շունչ քաշեց, լրիվ արթնացավ և անմիջապես պառկեց անշարժ: Նրա ուղեղը պարզվել էր, բայց արյան միջով դեռ անհանգիստ տազնապ էր հոսում: Դա շատ վատ էր, շատ վատ...

«Արյան անհանգստություն, գիտակցության մթազնում, անտեղի վերադարձ դեպի վաղուց ապրած օրերը: Արյան անհանգստությունը դա վերադարձ է դեպի ձորերը՝ հոտերի ու խարույկների մոտ: Գարնան քամի, տազնապ և ծնունդ: Ծնել ու մեծացնել էակների մահվան համար, պահել ու թաղել, և ահա նորից տազնապ, մայրերի տանջանք: Կյանքի անպետք ու կույր երկարաձգում»:

Այսպես էր խորհում Աելիտան, և նրա մտքերը թեն իմաստուն էին, բայց անհանգստությունը չէր անցնում: Այդ ժամանակ նա ելավ անկողնուց, հագավ գործովի կոշիկները, մերկ ուսերին գցեց խալաթը, գնաց լողարան, հանվեց, մազերը ոլորեց ու հագուցեց և մարմարապատ աստիճաններով սկսեց իջնել ավազանի մեջ:

Ներքևի աստիճանին նա կանգ առավ, հաճելի էր կանգնել լուսամուտից ընկած արևի լուսավոր ճաճանչների մեջ: Ճառագայթների երերուն անդրադարձումները խաղում էին պատի վրա: Աելիտան նայեց կապտավուն ջրի մեջ և այնտեղ տեսավ իր անդրադարձումը, լույսի ճառագայթը ընկել էր նրա փորին: Արհամարհանքով դողում էր վերին շրթունքը: Աելիտան նետվեց գով ավազանի մեջ:

Լողանալը թարմացրեց նրան, մտքերը վերադարձան դեպի օրվա հոգսերը: Ամեն առավոտ նա խոսում էր հոր հետ, և դա սովորույթ էր դարձել: Փոքրիկ էկրանը դրված էր նրա արդուզարդի սենյակում:

Աելիտան նստեց հարդարանքի սեղանի հայելու մոտ, կարգի բերեց մազերը, նախ հոտավետ յուղով, ապա ծաղկահյութով օժեց դեմքը, վիզն ու ձեռքերը, հոնքերի տակից նայեց ինքն իրեն, կիտեց հոնքերը, սեղանը մոտեցրեց էկրանին և միացրեց թվածածկ տախտակը:

Մշուշապատ հայելու մեջ երևաց հոր ծանոթ առանձնասենյակը. գրքերի պահարաններ, պտտվող քարտագրամներ ու գծագրեր: Ներս մտավ Տուսկուրը, նստեց սեղանի մոտ, արմունկով մի կողմ հրեց ձեռագրերը և հայացքով գտավ Աելիտայի աչքերը: Երկար ու բարակ շրթունքների անկյունից նա ժպտաց աղջկան:

— Ինչպե՞ս ես քնել, Աելիտա:

— Լավ: Տանն ամեն ինչ լավ է:

— Ի՞նչ են անում Երկնքի Որդիները:

— Նրանք գոհ ու հանգիստ են: Նրանք դեռ քնած են:

— Շարունակո՞ւմ ես նրանց հետ լեզվի դասերը:

— Ոչ: Ինժեներն ազատ խոսում է: Նրա ուղեկիցն էլ բավարար գիտելիքներ ունի:

— Նրանք դեռ չե՞ն ուզում հեռանալ իմ տանից:

— Ոչ, ոչ... օ՛ ոչ:

Աելիտան շատ արագ-արագ էր պատասխանում: Տուսկուրի աղոտ աչքերը զարմանալիորեն լայնացան: Նրա հայացքի տակ Աելիտան սկսեց ետ-ետ գնալ, մինչև որ նրա մեջքը կպավ բազկաթոռի թիկնակին: Հայրը ասաց.

— Ես քեզ չեմ հասկանում:

— Ինչո՞ւ չես հասկանում: Հայր, ինչո՞ւ դու ամեն ինչ չես ասում ինձ: Դու ի՞նչ ես մտադիր անել նրանց հետ: Ես քեզ խնդրում եմ:

Աելիտան չվերջացրեց. Տուսկուրի դեմքը այլալվեց, ասես կատաղության կրակ անցավ նրա վրայով: Հայելին հանգավ: Բայց Աելիտան դեռ երկար ժամանակ նայում էր մշուշապատ մակերևույթին, տեսնում էր հոր դեմքը, որը սարսափելի էր ինչպես իր, այնպես էլ բոլոր կենդանի արարածների համար:

— Դա սոսկալի է,— շնչաց Աելիտան,— դա զարհուրելի բան կլինի:— Նա թափով վեր կացավ, բայց թուլացած թևերով նորից նստեց:

Խռովահույզ տազնապը ուժգնորեն տիրապետեց նրան: Աելիտան լայնացած բիբերով հայելու մեջ նայում էր իրեն: Տազնապը դժժում ու կատաղի կերպով վազում էր արյան միջով: «Ինչ վատ բան, բոլորովին իզուր բան կլինի դա»:

Իր կամքից անկախ, ինչպես այդ գիշերվա երազում, նրա առջև կանգնեց Երկնքի Որդին՝ խոշոր, ձյան պես սպիտակ մազերով, հուզված, անհասկանալիորեն փոխված, երկրի արևով ու երկրի խոնավությամբ հագեցած, մերթ տխուր ու մերթ էլ հեզ աչքերով և մուր անդունդի պես սարսափելի, ամպրոպաբեր ու կործանող բանականությամբ:

Աելիտան դանդաղ շարժում էր գլուխը: Միրտը խփում էր խուլ ու սարսափելի կերպով: Թվածածկ տախտակի վրա կռանալով, նա միացրեց ձողիկները: Խավար հայելու մեջերևաց բազկաթռոռի վրա, բազում բարձերի մեջ ննջող կնճռապատ մի ծերունի: Փոքրիկ պատուհաններից լույսն ընկել էր նրա սմբած ձեռքերին, որ դրված էին խավոտ վերմակի վրա: Ծերունին ցնցվեց, ուղեց ակնոցը, ապակիների վերևից նայեց էկրանին և ժպտաց.

— Ի՞նչ կասես, զավակս:

— Ուսուցիչ, ես տագնապի մեջ եմ,— ասաց Աելիտան,— ուղեղս մթազնում է: Ես դա չեմ ուզում, ես վախենում եմ, բայց ես չեմ կարող:

— Քեզ անհանգստացնում է Երկնքի Որդի՞ն:

— Այո: Նրա մեջ ինձ անհանգստացնում է այն, ինչը ես չեմ կարող հասկանալ: Ուսուցիչ, ես հենց նոր խոսեցի հորս հետ: Նա անհանգիստ էր: Ես զգում եմ, որ Բարձրագույն խորհրդում պայքար է գնում: Ես վախենում եմ, որ խորհուրդը կարող է ահավոր որոշում ընդունել:

— Դու հենց նոր ասացիր, որ Երկնքի Որդին անհանգստացնում է քեզ: Ավելի լավ կլինի, եթե նա բոլորովին կորչի:

— Ոչ:— Աելիտան սա ասաց արագ, կտրուկ և հուզված: Ծերուկը նրա հայացքի տակ խոժոռեց դեմքը և կնճռոտված բերանով ծամծմեց.

— Ես վատ եմ հասկանում քո մտքերի ընթացքը, Աելիտա, քո մտքերի մեջ իրական ու հակասական բան կա:

— Այո, ես զգում եմ դա:

— Ահա անարդարության լավագույն ապացույց: Ամենավեհ միտքը լինում է պարզ, անխռով ու ոչ հակասական: Ես կանեմ այնպես, ինչպես դո՛ւ և ես ուզում և կխոսեմ հորդ հետ: Նա էլ կրքոտ մարդ է, և դա կարող է նրան հանգեցնել դատողությանն ու արդարությանը չհամապատասխանող արարքի:

— Հույսս քեզ վրա է:

— Հանգստացիր, Աելիտա, և ուշադիր եղիր... Նայիր հոգուդ խորքը: Ի՞նչն է քեզ անհանգստացնում: Քո արյան մեջ հնուց մնացել է կյանքի երկարացման ծարավը, հենց դա էլ պղտորում է քո արյունը:

— Ուսուցիչ, ինձ անհանգստացնում է ուրիշ բան:

— Ինչպիսի վեհ զգացմունքով էլ նա հուզի, քո մեջ կարթնանա կինը, և դու կկործանվես: Միայն սառը դատողությունը, Աելիտա, միայն ճարպով ու հոտով հագեցած մարմնի անխուսափելի կործանման գիտակցությունը, միայն սպասողականությունը, երբ քո հոգին, արդեն կատարյալ դարձած, որն այլևս կարիք չի զգում խղճուկ կենսափորձին, կհեռանա գիտակցության սահմաններից ու կդադարի գոյություն ունենալուց. ահա սա է երջանկությունը: Իսկ դու վերադարձ ես ուզում: Վախեցիր այդ գայթակղությունից, զավակ իմ: Ընկնելը, սարից ցած գլորվելը հեշտ է, բայց վերելքը դանդաղ և դժվար է լինում: Խելացի եղիր:

Աելիտան լսեց ու խոնարհեց գլուխը...

— Ուսուցիչ,— հանկարծ ասաց նա, և նրա շրթունքները դողացին, աչքերը լցվեցին թախիծով,— Երկնքի Որդին ասում է, որ Երկրի վրա նրանք գիտեն ինչ-որ մի բան, որը բարձր է

գիտակցությունից, բարձր է գիտելիքներից, բարձր է խելքից: Բայց թե ինչ է դա, ես չհասկացա: Դրանից է իմ անհանգստությունը: Երեկ մենք լճակի մոտ էինք, երևաց Կարմիր Աստղը, նա ձեռքով ցույց տվեց այն և ասաց. «Նա շրջապատված է սիրո մշուշով: Այն մարդիկ, որ գիտեն ինչ բան է սերը, չեն մեռնում»: Թախիժը կտրտում է կուրծքս, ուսուցիչ:

Ծերուկը մոայլվեց և երկար ժամանակ լուռ մնաց. միայն անդադար շարժվում էին նրա չորացած ձեռքերի մատները:

— Լավ,— ասաց նա,— Երկնքի Որդին թող քեզ տա այդ գիտությունը: Քանի դեռ դու չես իմացել ամեն ինչ, մի անհանգստացնի ինձ: Զգույշ եղիր:

Հայելին հանգավ: Մենյակում լռություն տիրեց: Աելիտան ծնկներից վերցրեց թաշկինակը և սրբեց երեսը: Հետո նայեց իրեն՝ ուշադիր, խստահայաց: Նրա հոնքերը վեր բարձրացան: Նա բաց արեց մի փոքր տուփ, կոացավ վրան ու սկսեց ինչ-որ բան փնտրել: Գտավ ու վիզն անցկացրեց թանկագին մետաղի մեջ շրջանակված հրաշալի ինդրի գազանիկի փոքրիկ թաթը, որը հին սնտոխապաշտների ասելով դժվար բռայեներին միշտ օգնում է կանանց:

Աելիտան հառաչեց ու գնաց գրադարան: Լոսը վեր կացավ լուսամուտի մոտից և գիրքը ձեռքին ընդառաջ եկավ նրան: Աելիտան նայեց նրան. Լոսը մեծ էր, բարի, անհանգստացած: Զերմությամբ համակվեց Աելիտայի սիրտը: Նա ձեռքը դրեց կրծքին կախված գազանիկի թաթին և ասաց.

— Երեկ ես խոստացա ձեզ պատմել Ատլանտիդայի կործանման մասին: Նստեք և լսեք:

ԱԵԼԻՏԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

— Ահա թե մենք ինչ կարդացինք գունավոր գրքերում,— ասաց Աելիտան:

Այն հեռավոր ժամանակներում Երկրի վրա աշխարհի կենտրոնը համարվում էր Հարյուր Ոսկյա դարբասների քաղաքը, որն այժմ գտնվում է օվկիանոսի հատակում: Այս քաղաքից էր գալիս գիտության ու շոայլության գայթակղությունը: Նա իր կողմը գրավեց Երկրի վրա ապրող ցեղերին և նրանց մեջ վառեց նախնադարյան ազահությունը: Մի օր էլ երիտասարդ ժողովուրդը հարձակվեց իշխողների վրա և տիրացավ քաղաքին: Քաղաքակրթության լույսը ժամանակավորապես ընդհատվեց: Բայց եկավ ժամանակը, և նա բռնկվեց նոր պայծառությամբ, հաղթողների թարմ արյունով հարստացած: Անցան դարեր, և նորից քոչվորական հորդաները ամպի պես կախվեցին հավերժական քաղաքի վրա:

Հարյուր Ոսկյա դարբասների առաջին հիմնադիրները եղել են աֆրիկական Ձեմզե նեգր ցեղերը: Նրանք իրենց համարում էին կրտսեր ճյուղերը այն սևամորթների, որոնք շատ հին ժամանակներում բնակվել են Գվանդանա հսկայական մայր ցամաքում, որը կործանվել է Խաղաղ օվկիանոսի ալիքների մեջ: Սևամորթների փրկված մասը տրոհվեց բազմաթիվ ցեղերի: Նրանցից շատերը վայրենացան ու այլասերվեցին: Բայց և այնպես, նեգրերի արյան մեջ հոսում էր մեծ անցյալի հիշողությունը:

Ձեմզեի մարդիկ վիթխարի ուժ և բարձր հասակ ունեին: Նրանք աչքի էին ընկնում անսովոր հատկությամբ. հեռվից կարողանում էին զգալ իրերի բնույթն ու ձևը, այնպես, ինչպես մագնիսը զգում է ուրիշ մագնիսի ներկայությունը: Այդ հատկությունը նրանք ձեռք էին բերել արևադարձային անտառների մթին անձավներում ապրելու ժամանակ:

Փրկվելով գոյս տեսակի թունավոր ճանճերից, Ձեմզե ցեղը դուրս եկավ անտառներից ու շարժվեց դեպի արևմուտք, մինչև որ հանդիպեց բնակության հարմար վայրի: Դա բլրապատ մի սարահարթ էր, ուր ողողում էին երկու մեծ գետեր:

Այստեղ շատ պտուղներ ու վայրի թռչուններ կային, իսկ լեռներում՝ ոսկի, անագ և պղինձ: Անտառները, սարերն ու խաղաղ գետերը գեղեցիկ էին և գուրկ կորստաբեր տենդից:

Վայրի զազաններից պաշտպանվելու համար Ձեմզեի մարդիկ պատեր շարեցին և քարեր կուտակելով մեծ բուրգ սարքեցին՝ ի նշան այն բանի, որ այդ տեղը հաստատուն է արդեն:

Բուրգի վերևում նրանք այուն կանգնեցրին և վրան ամրացրին կլիտլ թռչունների փետուրների մի փունջ: Կլիտլ թռչունները այդ ցեղի մարդկանց ճանապարհորդության ընթացքում փրկեցին գոյս ճանճերից: Ձեմզեի առաջնորդները գլուխները զարդարեցին նրանց փետուրներով և թռչունների անուններով կոչեցին իրենց:

Սարահարթից դեպի արևմուտք թափառում էին կարմրամորթ ցեղեր: Ձեմզեի մարդիկ հարձակվեցին նրանց վրա, գերի վերցրին ու ստիպեցին հողը վարել, բնակարան կառուցել, հանքաքար ու ոսկի հայթայթել: Քաղաքի փառքը գնաց հեռուները, դեպի արևմուտք և ահ ու սարսափի մեջ զցեց կարմրամորթներին, որովհետև Ձեմզեի մարդիկ ուժեղ էին, կարողանում էին գուշակել հակառակորդի մտքերը և փայտի կտորներ նետելով հեռու տարածության վրա՝ մարդ սպանել: Ծառի կեղևներից պատրաստած մակույկներով նրանք լողում էին լայն գետերով և կարմրամորթներից հարկ հավաքում:

Ձեմզեի սերունդները քաղաքը գեղեցկացրին եղեգնածածկ, քարե կլոր շենքերով: Նրանք բրդից հոյակապ զգեստներ էին գործում և կարողանում էին մտքերը գրի առնել առարկաների պատկերման միջոցով: Այդ գիտությունը նրանք պահեցին հիշողությունների խորքում, որպես անհետացող քաղաքակրթության հնագույն հիշատակ:

Անցան դարեր: Եվ ահա արևմուտքում երևաց կարմրամորթների մեծ առաջնորդը: Նրա անունը Ուրու էր: Նա ծնվել էր քաղաքում, բայց պատանի հասակում գնացել էր տափաստանները՝ որսորդների ու քոչվորների մոտ: Ու հիմա, անհամար զորք հավաքած կովի էր եկել քաղաքի վրա:

Ձեմզեի սերունդները պաշտպանության համար գործադրեցին բոլոր գիտելիքները. թշնամուն խփում էին կրակով, նրանց վրա բաց էին թողնում կատաղած գոմեշների նախիրներ, նրանց խոցում էին կայծակի պես թռչող բումբերանգներով: Բայց կարմրամորթները թվով ու ազահությամբ գերազանցում էին: Նրանք տիրացան քաղաքին և կողոպտեցին այն: Ուրուն իրեն հոչակեց աշխարհի առաջնորդ: Նա իր զինվորներին հրամայեց ամուսնանալ Ձեմզեի աղջիկների հետ: Ձեմզեի կենդանի մնացած տղամարդիկ, որ թաքնվել էին անտառներում, վերադարձան քաղաք և սկսեցին ծառայել հաղթողներին:

Կարմիրները յուրացրին Ձեմզեի արվեստը, գիտությունն ու սովորույթները: Միախառնված արյունը տվեց մի շարք վարչարարներ ու նվաճողներ: Առարկաների բնույթն զգալու խորհրդավոր հատկությունը անցավ սերնդից սերունդ:

Ուրուի դինաստիայի զորապետերը ընդարձակեցին իրենց տիրապետությունը: Արևմուտքում նրանք ոչնչացրին քոչվորներին և Խաղաղ օվկիանոսի ափերին հողից ու քարից բուրգեր սարքեցին: Արևելքում նրանք նեղեցին նեգրերին: Նիգերիայի, Կոնգոյի և Միջերկրական ծովի ժայռոտ ափերին, այնտեղ, ուր այժմ Սահարայի անապատն է, նրանք ամուր բերդեր կառուցեցին: Դա

պատերազմների ու շինարարության ժամանակներն էին: Ջեմզեի երկիրը այն ժամանակ կոչվում էր Խամագան:

Նրանք քաղաքը շրջապատեցին նոր պարսպով, որն ուներ ոսկով երեսպատված հարյուր դարբաս: Ամբողջ աշխարհի ժողովուրդները ազահությամբ ու հետաքրքրությամբ հրապուրված՝ հոսում էին այստեղ: Շուկաներում թափառող բազմաթիվ ցեղերի մեջ, որոնք իրենց վրանները խփել էին քաղաքի պատերի տակ, երևացին նոր, անծանոթ մարդիկ: Նրանք մուգ ձիթենագույն էին, ունեին երկար, հրավառ աչքեր և կտուցի պես քիթ: Նրանք խելացի էին ու խորամանկ: Ոչ ոք չէր հիշում, թե նրանք ինչպես էին մտել քաղաք: Բայց մեկ սերունդ հետո Հարյուր Ոսկե դարբասների քաղաքի գիտությունն ու առևտուրը անցան այդ փոքրաթիվ ցեղի մարդկանց ձեռքը: Նրանք իրենց կոչում էին «Աամի որդիներ»:

Աամի որդիներից ամենախմաստունները կարդացին Ջեմզեի հնագույն արձանագրությունները և սկսեցին իրենց մեջ ունակություն զարգացնել իրերի էությունը տեսնելու համար: Նրանք կառուցեցին Քնած Նեգրի Գլուխը անունով մի ստորգետնյա տաճար և սկսեցին մարդկանց գրավել իրենց կողմը, բուժում էին հիվանդներին, բախտ էին գուշակում և հավատացյալներին ցույց էին տալիս մեռածների սովերները:

Աամի որդիները հարստությամբ ու գիտելիքների ուժով ձգտում էին երկրի կառավարմանը: Նրանք իրենց կողմը գրավեցին շատ ցեղերի և երկրի ծայրամասերում ու քաղաքում միաժամանակ ապստամբություն բարձրացրին հանուն նոր հավատի: Արյունահեղ պայքարում կործանվեց Ուրուի դինաստիան: Աամի որդիները գրավեցին իշխանությունը:

Այս հնագույն ժամանակներին գուգաղիպեց Երկրի առաջին ցնցումը: Շատ տեղերում լեռների միջից բոցեր ժայթքեցին, մոխրով ծածկվեց երկինքը: Ատլանտյան մայր ցամաքի հարավում մեծ տարածություններ սուզվեցին օվկիանոսը: Հյուսիսում ծովի հատակից վեր բարձրացավ մի ժայռոտ կղզի և միացավ ցամաքին: Այսպես առաջացավ եվրոպական հարթությունը:

Աամի որդիները իշխանության ամբողջ ուժը ուղղեցին կուլտուրա ստեղծելու այն բազմաթիվ ցեղերի մեջ, որոնք ընկճված էին եղել Ուրուի դինաստիայի օրոք: Աամի որդիները պատերազմներ չէին սիրում: Նրանք նավեր պատրաստեցին, դրանք զարդարեցին Քնած Նեգրի Գլխով և բեռնեցին համեմունքներով, գործվածքեղենով, ոսկով ու փղոսկրներով: Պաշտամունքին նվիրվածները վաճառականի ու գրբացի տեսքով մտան նավերը և գնացին հեռավոր երկրներ: Նրանք առևտուր էին անում և կախարդանքով ու դյութանքով բուժում էին հիվանդներին ու խեղանդամներին: Ապրանքները պահպանելու համար նրանք յուրաքանչյուր երկրում կառուցեցին բրգաձև մեծ տներ և նավից այնտեղ փոխադրեցին Քնածի Գլուխը: Այսպես էր հաստատվում նրանց պաշտամունքը: Եթե ժողովուրդը վրդովվում էր եկվորների դեմ, նավից դուրս էին գալիս մի ջոկատ կարմրամորթներ: Նրանք ունեին սարսափ տարածող բրոնզե զրահ, վահան և փետուրներով զարդարված բարձր սաղավարտներ:

Այսպես նորից ընդարձակվեց ու ամրացավ հնագույն աշխարհ Ջեմզեի տիրապետությունը: Հիմա նա կոչվում է Ատլանտիդա: Կարմրամորթների երկրի արևմտյան ծայրում հիմնադրվեց երկրորդ մեծ քաղաքը՝ Պոխտլիգուան: Ատլանտների առևտրական նավերը լողում էին մինչև արևելք, մինչև Հնդկաստան, որտեղ դեռ իշխում էին սևամորթները: Նրանք Ասիայի արևելյան ափերին առաջին անգամ տեսան դեղին ու տափակ երեսներով հսկաների, որոնք քարեր էին նետում իրենց նավերի մեջ:

Քնած Գլխի պաշտամունքը հայտնի էր բոլորին: Դա ուժի և իշխանության գլխավոր զենքն էր, բայց պաշտամունքի ներքին բովանդակությունն ու իմաստը պահպանվում էր որպես մեծագույն գաղտնիք: Ատլանտները աճեցնում էին Ջեմգեի իմաստության հատիկը և գտնվում էին դեռևս այն ճանապարհի սկզբում, որը ամբողջ ազգին տարավ դեպի կործանում:

Նրանք ասում էին այսպես.

«Իսկական աշխարհը անտեսանելի է, անշոշափելի, անլսելի, չունի համ ու հոտ: Իսկական աշխարհը դա բանականության շարժումն է: Այդ շարժման սկզբնական ու վերջնական նպատակը անհասկանալի է: Բանականությունը մատերիա է, ավելի պինդ, քան քարը, ավելի արագընթաց, քան լույսը: Բոլոր մատերիաների նման հանգիստ որոնելով, բանականությունը մի քիչ քնում է, այսինքն՝ դառնում է ավելի դանդաղկոտ, որը նշանակում է բանականության ու նյութի մարմնավորում: Քնի խորության որոշ աստիճանում բանականությունը մարմնավորվում է կրակի, օդի, ջրի և հողի մեջ: Այս չորս տարրերից առաջանում է տեսանելի աշխարհը: Առարկան ժամանակավորապես խտացված բանականություն է: Առարկան խտացված բանականության ոլորտի կորիզն է և նման է կլոր կայծակի, որի մեջ թանձրանում է ամպրոպաբեր օդը:

Բյուրեղների մեջ բանականությունը գտնվում է լիակատար հանգիստ վիճակում: Իսկ միջաստղային տարածությունում բանականությունը լիակատար շարժման մեջ է: Մարդը կամուրջ է բանականության այդ երկու վիճակի միջև: Բանականությունը մարդու միջով է հոսում դեպի տեսանելի աշխարհը: Մարդու ոտքերը աճում են բյուրեղներից, փորը արև է, աչքերը աստղեր են, գլուխը մի թաս է, որի եզրերը տարածվում են ամբողջ տիեզերքով մեկ:

Մարդը աշխարհի տիրակալն է: Նրան են ենթարկվում բնությունն ու շարժումները: Նա նրանց կառավարում է ուժով, որը դուրս է գալիս նրա բանականությունից և նման է կավե ամանի ճեղքից եկող լույսի ճառագայթին»:

Այսպես էին ասում Ատլանտները: Հասարակ ժողովուրդը չէր հասկանում նրանց ուսմունքը: Ոմանք անասուններ էին պաշտում, ոմանք՝ մեռածների ստվերներ, ոմանք՝ կուռք, ոմանք էլ՝ գիշերային խշռոցը, որոտ ու կայծակ կամ գետնին առաջացած փոսը: Անհնար ու վտանգավոր էր պայքարել նման բազմատեսակ սնտոիապաշտության դեմ:

Այդ ժամանակ քուրմերը, որոնք կազմում էին ատլանտների վերնախավը, հասկացան, որ հարկավոր է մտցնել պարզ ու հասկանալի, բոլորի համար միասնական մի պաշտամունք: Նրանք սկսեցին կառուցել հսկայական ոսկեգոծ տաճարներ, և դրանք նվիրել արևին, որը արարիչն ու տիրակալն է ամենայն կյանքի, բարկության ու կենարարության, մեռնողի ու նորից ծնվողի:

Արևի պաշտամունքը շուտով ընդգրկեց ամբողջ Երկիրը: Հավատացյալների մեջ շատ մարդկային արյուն թափվեց: Հեռավոր Արևմուտքում կարմրամորթների մեջ արևը փետուրներով ծածկված օձի կերպարանք ընդունեց: Հեռավոր Արևելքում մեռածների ստվերների տիրակալ արևը ընդունեց թռչունի գլխով մարդու կերպարանք:

Աշխարհի կենտրոնում՝ Հարյուր Ոսկյա Դարբասների քաղաքում, կառուցվեց աստիճանավոր բուրգ և այնտեղ տարվեց Քնածի Գլուխը: Բուրգն այնքան բարձր էր, որ ամպեր էին կուտակվում նրա գագաթին: Բուրգի պատվանդանի մոտ, հրապարակի վրա, կանգնեցվեց մարդու կերպարանքով և առյուծի մագիլներով, թևավոր, ոսկյա մի ցուլ: Նրա տակ վառվում էր անշեջ կրակը:

Գիշերահավասարի օրը, ժողովրդի ներկայությամբ, մերկ կանանց պարի և ձվաձև թմբուկների հարվածների հնչյուններիտակ գերագույն քուրմը՝ Արևի Որդին, մեծն կառավարիչը, սպանեց քաղաքի ամենագեղեցիկ պատանուն և նրան այրեց ցուլի որովայնի մեջ:

Արևի Որդին քաղաքի ու երկրի անսահմանափակ տիրակալն էր: Նա կառուցեց ամբարտակներ և անցկացրեց ոռոգիչ ջրանցքներ: Մարդկանց բաժանեց խանութներում լցված հագուստն ու սնունդը, նշանակեց, թե ում ինչքան հող ու անասուն է հարկավոր: Նրա հրամանները կատարում էին բազմաթիվ աստիճանավորներ: Ոչ ոք չէր կարող ասել. «Մա իմն է», որովհետև ամեն ինչ պատկանում էր արևին: Աշխատանքը սրբազան բան էր համարվում, իսկ ծուլությունը պատժվում էր մահով: Գարնանը Արևի Որդին առաջինն էր դաշտ դուրս գալիս և եզներով վարում հողը ու եգիպտացորեն ցանում:

Տաճարները լիքն էին հացահատիկով, գործվածքեղենով, համեմունքներով: Ատլանտների նավերը, որոնց ծիրանագույն առագաստների վրա նկարված օձերը բերանով պահում էին արևը, ակոսեցին բոլոր գետերն ու ծովերը: Վրա հասավ երկարատև խաղաղություն: Մարդիկ մոռացան սուր բռնելու ձևը:

Եվ ահա Ատլանտիդայի վրա արևելքից ամպեր կախվեցին:

Ասիայի արևելյան բարձրավանդակներում ապրում էր դեղնագույն դեմքով ու շիլ աչքերով ուշկուրների ուժեղ ցեղը: Նրանք ենթարկվում էին մի կնոջ, որը օժտված էր դիվային հատկություններով: Նրա անունը Մու Խուտամ Լու էր, որ նշանակում է «Լուսնի հետ խոսող»:

Մու Խուտամ Լուն ուշկուրներին ասում էր.

«Ես ձեզ կառաջնորդեմ մի երկիր, որտեղ արևը կախվում է լեռնային կիրճի մեջ: Այնտեղ այնքան ոչխար է արածում, որքան աստղ կա երկնքում: Այնտեղ հոսում են կումիսի գետեր, կան այնպիսի բարձր յուրտեր, որ ամեն մեկի մեջ կարելի է ուղտերի նախիր տեղավորել: Այնտեղ դեռ ոտք չեն դրել ձեր ձիերը, և դուք դեռ սաղավարտով ջուր չէք հանել այնտեղի գետերից»:

Ուշկուրները իջան բարձրավանդակներից և հարձակվեցին դեղնամորթ քոչվոր ցեղերի վրա, ընկճեցին նրանց և դարձանգորապետներ: Նրանք ասում էին հաղթվածներին. «Մեր ետևից եկեք արևի երկիրը, որը ցույց է տալիս Մու Խուտամ Լուն»:

Աստղերին երկրպագող քոչվորները երազկոտ ու անվեհեր մարդիկ էին: Նրանք քանդեցին յուրտերը և հոտ ու նախիրը քշեցին դեպի արևմուտք: Մեկը մյուսի ետևից անցնում էին տարիները: Առջևից շարժվում էր ուշկուրների հեծելազորը, որը հարձակումներ էր կատարում, կռվում, կործանում քաղաքները: Հեծելազորի ետևից դանդաղ գնում էին անասունների հոտերը և այն սայլակները, որոնց վրա կանայք ու երեխաներ էին նստած: Քոչվորները անցան Հնդկաստանի մոտով և տարածվեցին արևելաեվրոպական դաշտավայրում:

Շատերը մնացին լճերի ափերին, իսկ ավելի ուժեղները շարունակեցին ճանապարհը դեպի արևմուտք: Միջերկրական ծովի ափերին նրանք կործանեցին ատլանտների առաջին գաղութը և պարտվածներից իմացան, թե որտեղ է գտնվում արևի երկիրը: Մու Խուտամ Լուն այստեղ մեռավ: Մազերի հետ միասին նրանք հանեցին նրա գլխի կաշին և ամրացրին մի երկար ձողի վրա: Այդ դրոշմով նրանք էլի առաջ գնացին, մինչև հանդիպեցին մի ծովի: Այսպես նրանք հասան Եվրոպայի ծայրը և այստեղ, լեռների բարձունքից տեսան ավետյաց երկիրը: Այն օրվանից, երբ ուշկուրները առաջին անգամ իջան բարձրավանդակից, անցել էր հարյուր տարի:

Քոչվորներն սկսեցին կտրել անտառները և լաստանավեր սարքել: Լաստանավերով նրանք անցան աղի ու տաք գետը: Ոտք դնելով Ատլանտիդայի նվիրական հողը, քոչվորները հարձակվեցին սրբազան քաղաք Տուլեի վրա: Երբ նրանք մագլցեցին բարձր պատերը, քաղաքում զանգերն սկսեցին դողանջել. ձայնն այնպես հաճելի էր, որ դեղնամորթները չկործանեցին քաղաքը, չսպանեցին բնակիչներին, չթալանեցին տաճարները: Նրանք ուտելիքի ու հագուստի պաշար վերցրին և շարունակեցին առաջ գնալ դեպի հարավ-արևելք: Անասունների ու սայլերի բարձրացրած փոշին ծածկեց արևը:

Ի վերջո քոչվորների ճանապարհը կտրեց կարմրամորթների գորքը: Ատլանտները բոլորն էլ զարդարված էին ոսկով ու բազմագույն փետուրներով և քնքուշ ու գեղեցիկ տեսքունեին: Ուչկուրների հեծելագորը կոտորեց նրանց: Այդ օրվանից դեղնամորթները ատլանտների արյան հոտն առան և այլևս բարի չէին:

Հարյուր Ոսկե Դարբասների քաղաքից սուրհանդակներ ուղարկվեցին դեպի արևմուտք՝ կարմրամորթների մոտ, դեպի հարավ՝ նեգրերի մոտ, դեպի արևելք՝ Աամի ցեղերի մոտ, դեպի հյուսիս՝ կիկլոպների մոտ: Մարդկային զոհաբերություններ էին լինում: Տաճարների կատարների վառվում էին անշեջ կրակները: Քաղաքի բնակիչները ընկնում էին արյունալի զոհաբերությունների ժամանակ, տարվում էին մոլի պարերով ու զգայական հաճույքներով, գինի շատ խմելուց հարբում էին, շռայլում գանձերը:

Քուրմերն ու փիլիսոփաները պատրաստվում էին մեծ փորձության: Նրանք Մեծ Գիտության գրքերը տարան լեռների խորքն ու անձավները և թաղեցին գետնի տակ:

Սկսվեց պատերազմը: Նրա բախտը նախապես վճռված էր. ատլանտները կարողացան պաշտպանել միայն իրենց անբավ հարստությունը, քոչվորների մոտ կար նախնադարյան ազահություն և հավատք՝ ավետյաց երկրի նկատմամբ: Բայց և այնպես, պայքարը երկարատև ու արյունահեղ եղավ: Երկիրը ավերածության ենթարկվեց: Վրա հասան սովն ու համաճարակը: Զորքերը դես ու դեն էին վազվզում և կողոպտում այն ամենը, ինչ կարող էին: Հարյուր Ոսկե Դարբասների քաղաքը վերցվեց գրոհով, և նրա պատերը քարուքանդ եղան: Արևի Որդին իրեն ցած նետեց աստիճանավոր բուրգի կատարից: Մարեցին տաճարների վրայի կրակները: Իմաստուններից ու նվիրվածներից մի քանիսը փախան լեռներն ու անձավները:

Քաղաքակրթությունը կործանվեց:

Մեծ քաղաքի քարուքանդ եղած պալատներում, հրապարակներում, չորացող խոտերի մեջ թափառում էին ոչխարները, և դեղնամորթ հովիվը երգում էր մի տխուր երգ անապատային միրաժի պես երանավետ ու նվիրական երկրի մասին, որտեղ հողը երկնագույն էր, իսկ երկինքը՝ ոսկեգույն:

Քոչվորները հարցնում էին իրենց առաջնորդներին. «Մենք էլ ո՞ւր պիտի գնանք»: Առաջնորդները պատասխանում էին. «Մենք ձեզ բերեցինք ավետյաց երկիրը, բնակվեցեք ու հաշտապրեք»: Բայց քոչվորական շատ ցեղեր չլսեցին և շարունակեցին գնալ դեպի արևմուտք՝ Փետրավոր Օձի երկիրը. բայց այստեղ նրանց կոտորեց տիրակալ Պտիտլիգուան: Քոչվորներից ոմանք մտան հասարակած: Սրանց էլ ոչնչացրին նեգրերը, փղերի նախիրներն ու ճանճային տենդը:

Ուչկուրների դեղնամորթ առաջնորդները զորապետներից ընտրեցին ամենաիմաստունին և նրան դարձրին նվաճված երկրի կառավարիչ: Նրա անունը Տուբալ էր: Նա հրամայեց նորոգել պատերը, մաքրել այգիները, վարել դաշտերը և վերակառուցել բնակարանները: Նա հրատարակեց պարզ ու խելացի շատ օրենքներ: Նա իր մոտ կանչեց անձավները փախած իմաստուն ու նվիրված

մարդկանց և նրանց ասաց. «Իմ աչքերն ու ականջները բաց են իմաստությունների առաջ»: Նա նրանց խորհրդականներ դարձրեց, թույլ տվեց տաճարներ բաց անել և սուրհանդակների միջոցով ամենուրեք լուր ուղարկեց, որ հաշտություն է ցանկանում:

Այդպիսին էր ատլանտների քաղաքակրթության երրորդ, ամենաբարձր պիքի սկիզբը: Բազմաթիվ ցեղերի՝ սևամորթների, կարմրամորթների, ձիթենագույնների, սպիտակամորթների արյան մեջ ներարկվեց ասիական խաշնարածների, աստղապաշտների, դիվային Մու Խուտամ Լուի սերունդների երազկոտ ու թափառաշրջիկ արյունը:

Քոչվորները արագ ձուլվեցին ուրիշ ցեղերին: Յուրտերից, հոտերից ու վայրի ազատությունից մնացին միայն երգեր ու ավանդություններ: Հանդես եկավ ամուր կազմվածքով մի նոր ցեղ, որն ուներ սև մազեր ու մուգ դեղնագույն մաշկ: Ուշկուրների ձիավորների ու զորապետների սերունդները դարձան քաղաքի ազնվականները: Նրանք սիրում էին գիտությունը, արվեստն ու պերճանքը: Նրանք քաղաքը զարդարեցին նոր պատերով և յոթանկյունանի աշտարակներով, ոսկով շարեցին վիթխարի բուրգի քսանմեկ աստիճանները, անցկացրին ակվեդուկներ և ճարտարապետության մեջ առաջին անգամ սկսեցին սյուներ օգտագործել:

Երկարատև պատերազմներում նորից նվաճեցին նոր-նոր քաղաքներ ու երկրներ: Հյուսիսում կռվեցին գտարյուն կիկլոպների և Ջեմգեի վայրենացած սերունդների հետ: Մեծ նվաճող Ռաման հասավ մինչև Հնդկաստան: Նա արիականմանը ցեղերին միավորեց Ռա թագավորության մեջ: Եվ այսպես, դեռևս չտեսնված չափերով նրանք կրկին անգամ ընդարձակեցին ու ամրացրին Ատլանտիդայի սահմանները՝ Փետրավոր Օձի երկրից մինչև Խաղաղ օվկիանոսի ասիական ափերը, որտեղից մի ժամանակ դեղնամորթ հսկաները քարեր էին նետում նավերի մեջ:

Նվաճողների երազկոտ հոգին գիտության էր ձգտում: Նորից ընթերցվեցին Ջեմգեի հնագույն և Աամի որդիների իմաստուն գրքերը: Փակվեց նախկինը և սկսվեց նոր շրջան: Անձավներում կիսափակ դրությամբ գտնվեցին «Քնածի յոթ պապիրուսները»: Այս հայտնագործությունից հետո գիտությունն սկսեց ավելի արագ զարգանալ: Այն, ինչ չունեին Աամի որդիները (ստեղծագործական խելահեղ ուժ), այն, ինչ չունեին Ջեմգե ցեղի որդիները (պարզ ու սրամիտ բանականություն), բոլոր կուտակվելով հոսեց ուշկուրների անհանգիստ ու կրքոտ արյան մեջ:

Նոր գիտության հիմքը այդպիսին էր.

«Մարդու մեջ նիրհում է աշխարհի ամենահզոր ուժը՝ մաքուր բանականության մատերիան: Ճիշտ այնպես, ինչպես վստահելի ձեռքով աղեղի լարից արձակված նետը խփում է նպատակին, այդպես էլ նիրհող բանականության մատերիան կարող է նետվել գիտության ձեռքով արձակված կամքի աղեղալարով: Նպատակադրված գիտության ուժը անսահման է»:

Գիտելիքներին լրիվ տիրապետելը և կուլտուրայի դեռևս անկրկնելի ու անօրինական ծաղկումը Երկրի վրա շարունակվեցին մեկ դար, չորս հարյուր հիսունից մինչև երեք հարյուր հիսուն թվականները, նախքան Ջրհեղեղը, այսինքն՝ մինչև Ատլանտիդայի կործանումը:

Երկրի վրա համընդհանուր խաղաղություն էր: Երկրի ուժերը, որ կյանքի էին կոչվել գիտելիքներով, առատորեն հիանալի կերպով ծառայում էին մարդկանց: Այգիներն ու դաշտերը հսկայական բերք էին տալիս, բազմանում էին հոտերը, աշխատանքը հեշտացել էր: Ժողովուրդը վերհիշեց հին սովորություններն ու տոները, և ոչ ոք նրան չէր խանգարում ապրել, սիրել, բազմանալ, ուրախանալ: Հետագայում այս դարը կոչվեց ոսկեդար:

Այդ ժամանակ Երկրի արևելյան սահմանում կառուցվեց մի սֆինքս, որը մի մարմնի մեջ պատկերում է չորս տարերք որպես քնած բանականության գաղտնիքի խորհրդանիշ: Կառուցվեցին աշխարհի յոթ հրաշալիքները. լաբիրինթոսը, Միջերկրական ծովի վիթխարի կոթողը, Ջիբրալթարից դեպի արևմուտք ընկած սյուները, աստղագուշակների աշտարակը՝ Պոսեյդոնում, Տուբալի նստած արձանը և Լեմուսների քաղաքը՝ խաղաղօվկիանոսյան կղզիներում:

Գիտության լույսը թափանցեց սևամորթ ցեղերի մեջ, որոնք առաջ տանջվում էին արևադարձային ճահիճների մեջ: Նեգրերը արագորեն յուրացրին քաղաքակրթությունը և Կենտրոնական Աֆրիկայում սկսեցին խոշոր քաղաքներ կառուցել:

Զեմզեի իմաստության հատիկը ամբողջական ու փարթամ ծաղիկներ տվեց: Բայց ահա գիտությանը նվիրված ամենաիմաստունները սկսեցին հասկանալ, որ ամբողջ քաղաքակրթության հիմքում ընկած է սկզբնական մեղքը, և որ գիտության հետագա զարգացումը կործանում կբերի, մարդկությունը հենց ինքը կոչնչացնի իրեն, ինչպես որ օձը խայթում է իր պոչը:

Ամենաառաջին չարիքը այն էր, որ կեցությունը, այսինքն՝ երկրի ու էակների կյանքը, ըմբռնվում էր որպես մի ոչնչություն, որ դուրս է եկել մարդու բանականությունից: Ճանաչելով աշխարհը, մարդը ճանաչում էր միայն ինքն իրեն: Բանականությունն էր միակ իրականը, իսկ աշխարհը սրա պատկերացումն էր: Կեցության այսպիսի հասկացողությունը պետք է հանգեցներ այն բանին, որ յուրաքանչյուր մարդ կսկսեր պնդել, թե միայն ինքը կա և գոյություն ունի, իսկ մնացած բոլորը՝ ամբողջ աշխարհը, միայն իր երևակայության պտուղն է: Այնուհետև ամեն ինչ անխուսափելի էր. պայքար միայն սեփական անձի համար, ամենքի պայքարը ամենքի դեմ, մարդկության բնաջնջում, արհամարհանքու զզվանք դեպի կեցությունը որպես չար խաբկանք:

Այդպիսին էր Զեմզեի իմաստության սկզբնական չարիքը:

Գիտությունը բաժան-բաժան եղավ: Ոմանք հնարավորություններ չէին տեսնում դուրս քաշելու չարիքի սերմը և ասում էին, որ չարիքը կեցության միակ արարիչ ուժն է: Նրանք իրենց կոչում էին սևամորթներ, քանի որ գիտությունը սևամորթներից էր եկել:

Ուրիշները, ընդունելով, որ չարիքը գտնվում է ոչ թե բնության մեջ, այլ բնականությունից շեղված բանականության տատանումների մեջ, սկսեցին չարիքին հակազդիչ ուժ որոնել:

Նրանք ասում էին. «Արևի ճառագայթը ընկնում է գետնին, մեռնում, ապա հարություն է առնում հողից ծնվող պտուղների մեջ. սա է կյանքի հիմնական օրենքը»: Այդպես է նաև համաշխարհային բանականության շարժումը. անկում, անձնագոհություն և մարմնի մեջ հարություն առնել:

Ամենահիմնական մեղքը՝ բանականության մենակությունը, կարող է ոչնչացվել մեղանչումով: Բանականությունը պետք է ընկնի մարմնի մեջ և անցնի մահվան կենդանի դռներով: Այդ դռները սեռերն են: Բանականության անկումը կատարվում է սեռային հակումներով կամ Էրոսի ուժով:

Այսպես պնդողները իրենց կոչում էին սպիտակներ, որովհետև կրում էին քաթանե խուլրեր, որը Էրոսի նշանն էր: Նրանք ստեղծեցին գարնանային տոն ու մեղանչումների ծես, որ կատարվում էր արևի հնագույն տաճարի ճոխ այգիներում: Իրական պատանին իրենից ներկայացնում էր որպես բանականություն, կինը՝ մարմնի մահվան դուռ, օձը՝ Էրոս: Այս տեսարանները նայելու համար մարդիկ էին գալիս հեռավոր երկրներից:

Երկու գիտությունների միջև եղած ճեղքը վիթխարի էր: Սկսվեց պայքարը: Այդ ժամանակ կատարվեցին սքանչելի հայտնագործություններ. հնարավոր դարձավ մի ակնթարթում ազատել բույսերի սերմերում նիքոտին կենսաբեր ուժը: Այդ ուժը շատաչուն հրասառն մատերիան է, որը

ազատվելով ձգտում էր դեպի տարածությունները: Սևամորթներն այդ ուժը օգտագործում էին պայքարի համար, պատերազմների գենքի համար: Նրանք պատրաստեցին վիթխարի թևավորնավեր, որ սարսափ էին առաջացնում: Վայրենի ցեղերը սկսեցին երկրպագել այդ թևավոր վիշապներին:

Սպիտակամորթները հասկացան, որ մոտ է աշխարհի կործանումը և սկսեցին նախապատրաստվել: Նրանք հասարակ մարդկանցից ընտրեցին ավելի ազնիվներին, ուժեղներին և տարան դեպի հյուսիս ու արևելք: Նրանց դուրս բերեցին բարձր լեռնային արոտավայրեր, որտեղ նորաբնակները կարողանային ապրել նախնադարյան էակների պես:

Սպիտակամորթների նախագագուսումը կատարվեց: Ոսկե դարը այլասերվեց: Ատլանտիդայի քաղաքներում վրա հասավ ձանձրույթը: Ոչինչ այլևս չկարողացավ զսպել անսանձ երևակայությունը, այլասերության ծարավը, սնամեջ բանականության անմտությունները: Այն ուժը, որին տիրապետում էր մարդը, շուտ եկավ իր դեմ: Մահվան անխուսափելիությունը մարդկանց դարձրեց տրտում, կատաղի, անգույթ:

Եվ ահա եկան վերջին օրերը: Դրանք սկսվեցին մեծ դժբախտությամբ: Հարյուր Ոսկե Դարբասների քաղաքի կենտրոնական մասը երեքաց ստորգետնյա ցնցումից, շատ երկրներ իջան օվկիանոսի հատակը, Ատլանտիդայի ծովի ալիքները ընդմիջտ մեկուսացրին Փետրավոր Օձի երկիրը:

Սները մեղադրում էին սպիտակներին, որ նրանք անեծքի ուժով հանեցին կրակի ու հողի հոգիները: Ժողովուրդը դժգոհեց, սները քաղաքում գիշերային կոտորածներ կազմակերպեցին: Քաթանե խույր կրող բնակիչներից կեսից ավելին սպանվեց, մնացածները փախան Ատլանտիդայի սահմաններից:

Հարյուր Ոսկե Դարբասների քաղաքում իշխանությունը գրավեցին Սև միաբանության ամենահարուստ քաղաքացիները, որոնք կոչվում էին մագացիտլներ, որ նշանակում է «անգույթ մարդիկ»: Նրանք ասում էին. «Կոչնչացնենք մարդկությունը, որովհետև նա բանականության անմիտ երազն է»: Որպեսզի լրիվ հաճույք ստանային մահվան տեսարանից, նրանք ամբողջ երկրով մեկ հայտարարեցին տոն ու խրախճանք, բաց արին պետական գանձարաններն ու խանութները, հյուսիսից սպիտակ աղջիկներ բերեցին ու տվեցին մարդկանց, բաց արին տաճարների դռները բոլոր նրանց համար, ովքեր անբնական հաճույքների ծարավ մարդիկ էին, շատրվանները լցրին գինիներով, հրապարակներում սկսեցին միս խորովել: Խելագարությունը տիրապետեց ժողովրդին: Դա կատարվեց աշնանը՝ խաղողահավաքի ժամանակ:

Գիշերը, խարույկներով լուսավորված հրապարակներում, գինուց, պարից, ուտելուց և կանանցից բթացած ժողովրդի մեջ հայտնվեցին մագացիտլները: Նրանք ծակոտող կատար ունեցող բարձր սաղավարտներով ու զրահավոր գոտիներով էին և առանց վահանի: Աջ ձեռքով նրանք նետում էին բրոնզագույն գնդակներ, որոնք բռնկվում էին սառն ու կործանիչ բոցերով, իսկ ձախով սրախողխող էին անում հարբածներին ու խելացնորներին:

Արյունահեղ օրգիան ընդհատվեց ստորգետնյա սարսափելի ցնցումից: Գետնին տապալվեց Տուբալի արձանը, դողողացին պատերը, փուլ եկան ակվեդուկի սյուները, խոր ձեռքերից բոցեր դուրս թափվեցին, ծխով ծածկվեց երկինքը:

Առավոտյան արևի արյունոտ ու աղոտ սկավառակը լուսավորեց փլատակները, այրված այգիները, շռայլությունից խոշտանգված բազմությունը, խելացնոր մարդկանց և դիակների կույտերը:

Մագացիտլները իրենց գցեցին թռչող ձվաձև ապարատների մեջ և հեռացան Երկրից: Նրանք թռան դեպի աստղային տարածությունը, դեպի վերացական բանականության հայրենիքը:

Թռան մի քանի հազար ապարատներ: Այդ ժամանակ լավեց գետնի չորրորդ, ավելի ուժեղ հարվածը: Հյուսիսից մոխրե մշուշի միջով բարձրացավ օվկիանոսի մի մեծ ալիք, անցավ գետնի վրայով՝ ոչնչացնելով ամեն մի կենդանի շունչ:

Սկսվեց փոթորիկը, կայծակներն ընկնում էին գետնին, բնակարանների մեջ: Հորդ անձրև էր թափվում, թռչում էին հրաբխային քարերի կտորները:

Աստիճանավոր, ոսկեգօծ բուրգի կատարից ու հսկայական քաղաքի պատերից այն կողմ մագացիտլները շարունակում էին թռչել և անցնելով ցած թափվող ջրի օվկիանի, ծխի ու մոխրի միջով, նրանք գնում էին դեպի աստղային տարածությունները: Միմյանց հաջորդող երեք հարված քարուքանդ արին Ատլանտիդան: Ոսկե Դարբասների քաղաքը սուզվեց եռացող ալիքների մեջ:

ԳՈՒՄԵՎԸ ԴԻՏՈՒՄ Է ՔԱՂԱՔԸ

Իխան խելքը բոլորովին կորցրել էր: Ինչ էլ որ Գուսը խնդրեր, նա կնայեր նրա անթափանց աչքերին ու անմիջապես կկատարեր: Ե՛վ ծիծաղելի էր, և՛ ցավալի: Գուսը նրա հետ վարվում էր խիստ, բայց արդարացի: Երբ Իխոշկան բոլորովին ուժասպառ էր լինում իրեն պաշարող զգացմունքներից, Գուսը նրան նստեցնում էր իր ծնկներին, շոյում գլուխը, խտտում ականջի ետևը և պատմում ամեն տեսակի զվարճալի պատմություններ: Իխան ապուշ կտրած լսում էր:

Գուսնի գլխում մեխվել էր քաղաք ծլկելու միտքը: Իրենց տեղը կարծես մկան թակարդ լիներ. մի բան պատահելու դեպքում ո՛չ պաշտպանվել կարող էին, ո՛չ էլ փախչել: Իսկ Գուսը չէր էլ կասկածում, որ իրենց լուրջ վտանգ է սպառնում: Լոսի հետ ունեցած զրույցները ոչ մի արդյունք չտվին: Լոսը միայն կնճռոտվեց: Տուսկուբի աղջկա փեշը նրա աչքերից ծածկել էր ամբողջ աշխարհը:

«Անհանգիստ մարդ եք, Ալեքսեյ Իվանովիչ: Ինչ անենք որ կսպանեն, ես ու դուք մահից չպետք է վախենանք: Այլապես կմնայինք Պետրոգրադում, որն ավելի անվտանգ էր»:

Գուսը Իխոշկային կարգադրեց բերել այն տան բանալիները, որտեղ գտնվում էին թևավոր նավակները: Նա լապտերով գաղտագողի ներս մտավ և ամբողջ գիշեր զբաղվեց մի փոքր, ըստ երևույթին, արագընթաց, երկթևանի նավակով: Նրա մեխանիզմը հասարակ էր: Փոքրիկ շարժիչը սնվում էր սպիտակ մետաղի հատիկներով, որոնք գերբնական ուժով քայքայվում էին էլեկտրական կայծերի ազդեցության տակ: Ապարատն էլեկտրական էներգիա ստանում էր օդից, թռիչքի ժամանակ, քանի որ Մարսը ծածկված էր բարձր լարվածության էլեկտրականությամբ, որն ուղարկում էին բևեռների կայանները: (Այդ մասին պատմել էր Աելիտան):

Գուսը նավակը քարշ տվեց նավատան դարբասի մոտ և բանալին վերադարձրեց Իխային: Անհրաժեշտության դեպքում դժվար չէր ձեռքով պոկել կողպեքը:

Հետո նա որոշեց հսկողության տակ վերցնել Սոացերա քաղաքը: Իխան նրան սովորեցրեց, թե ինչպես միացնել մշուշապատ հայելին: Տուսկուբի տան խոսող էկրանը կարելի էր միացնել միակողմանի, այսինքն՝ տեսնողը մնում էր անտեսանելի ու անլսելի:

Գուսը հետախուզեց ամբողջ քաղաքը. հրապարակները, առևտրական փողոցները, ֆարքիկաները, բանվորական ավանները: Թխպոտ հայելու մեջ բացվեց մի տարօրինակ կյանք և

անցավ նրա աչքերի առջևով: Ֆաբրիկաների աղյուսաշեն ցածրիկ դահլիճներ, փոշոտ լուսամուտներից թափանցող աղոտ լույս, բանվորների վիատ, անիմաստ խոր ընկած աչքեր, կնճռապատ դեմքեր, անվերջ ու անդադար շարժվող հաստոցներ, մեքենաներ, անհանգիստ կերպարանքներ, աշխատանքի կտրուկ շարժումներ. հուսահատ, մրջնային անլույս կյանք:

Երևացին բանվորական թաղամասերի ուղիղ ու միատեսակ փողոցները, որտեղ գլուխները կախ` քարշ էին գալիս նույն վիատ կերպարանքները: Հազարամյա վիշտը փչում էր այդ աղյուսաշեն, մաքուր ավլած ու միատեսակ միջանցքներից: Այստեղ, ըստ երևույթին, արդեն ոչ մի բանի վրա այլևս հույս չունեին:

Երևացին կենտրոնական հրապարակները. աստիճանաձև տներ, գետնատարած երփներանգ բույսեր, արևի շողն անդրադարձնող լուսամուտներ, շքեղ հագնված կանայք: Փողոցների մեջտեղում դրված էին փոքրիկ սեղաններ, ծաղիկներով լի նեղլիկ սափորներ, երևում էին ջրապտույտի պես շարժվող գուգված ամբոխ, տղամարդկանց սև խալաթներ, տների ճակատներ... Այս ամենը անդրադարձել էր փողոցի սալահատակի կանաչավուն պարկետի մեջ: Ցածր թռչում էին ոսկյա նավակներ, որոնց թևերի ստվերները սահում էին գետնի վրայով, նավակներից ծիծաղում էին գլուխները ետ թեքած դեմքեր, օդի մեջ ծածանվում էին խայտաբղետ թեթև վզնոցներ...

Քաղաքում երկու կյանք կար: Գուսնն այդ բոլորն ընդունեց որպես ի գիտություն: Որպես մեծ կենսափորձ ունեցող մարդ, գլխի ընկավ, որ այդ երկուսից բացի, կա նաև երրորդը` ընդհատակյա: Եվ իրոք, քաղաքի հարուստ փողոցներում ու զբոսայգիներում, ամենուրեք թրև էին գալիս մեծ քանակությամբ անփույթ հագնված ու խմած երիտասարդ մարսեցիներ: Ձեռքերը գրպանները դրած` նրանք պարապ-սարապթրև էին գալիս ու նայում շուրջը: Գուսնը մտածեց. «Հը՛մ, եղպիսիներին մենք էլ ենք տեսել»:

Իխոշկան ամեն ինչ մանրամասնորեն բացատրեց նրան, բայց չհամաձայնեց էկրանը միացնել Ինժեներների բարձրագույն խորհրդի տունը:

Նա սարսափով թափահարեց շիկակարմիր մազերն ու բացասաբար շարժեց ձեռքը.

— Մի՛ խնդրիր ինձ, Երկրի Որդի, ավելի լավ է սպանես ինձ, թանկագին Երկրի Որդի:

Մի անգամ, տասնչորսերորդ օրը, առավոտյան, Գուսնը սովորականի պես նստեց բազկաթոռին, ծնկներին դրեց թվածածկ տախտակը և ձգեց լարը:

Հայելու մեջ հայտնվեց մի տարօրինակ պատկեր. կենտրոնական հրապարակում խումբ-խումբ մարսեցիներ մտահոգ դեմքով քչփչում էին իրար ականջի: Անհետացել էին փոքրիկ սեղանները, ծաղիկներն ու խայտաբղետ հովանոցները: Երևաց զինվորների մի ջոկատ, որը քայլում էր եռանկյունաձև: Նրանք նման էին սառած դեմքերով տարօրինակ տիկնիկների: Այնուհետև երևացին առևտրական փողոցում վազվզող մարդիկ, տուրուղմփոց և թևավոր մեքենայով նրանց միջից դուրս թռչող մի հրացանավոր մարսեցի: Զբոսայգում քչփչացողների նույնպիսի անհանգիստ խմբեր էին կանգնած: Ֆաբրիկաներից մեկում դզգում էր կատաղած ու մռայլադեմ բանվորների խռովահույզ բազմությունը:

Ըստ երևույթին, քաղաքում տեղի էր ունեցել արտակարգ կարևոր մի իրադարձություն: Գուսնը ցնցեց Իխոշկայի ուսերը. «Ի՞նչ է պատահել»: Իխան չպատասխանեց. նայում էր իր անփայլ ու սիրահարվածի աչքերով:

ՏՈՒՄԿՈՒՔ

Քաղաքը տազնապի մեջ էր: Առկայծում ու մոթմոթում էին հայելիավոր հեռախոսները: Փողոցներում, հրապարակներում ու զբոսայգիներում քչփչում էին մարսեցիների խմբերը: Ինչ-որ բանի սպասելով, նրանք շուտ-շուտ երկինք էին նայում: Ասում էին, թե ինչ-որ տեղ չորացած կակտուսի պահեստներ են վառվում: Կեսօրին մարսեցիները բաց արին քաղաքի ջրատար խողովակների ծորակները և շատ չանցած ամբողջ ջուրը ցամաքեցրին: Շատերը հարավարևմտյան կողմից հեռավոր պայթյուն լսեցին: Թղթերով սկսեցին խաչաձև սոսնձել տների ապակիները:

Տազնապը գալիս էր քաղաքի կենտրոնից, որտեղ Ինժեներների Բարձրագույն խորհրդի տունն էր, և տարածվում ամբողջ քաղաքում:

Խոսում էին Տուսկուրի երեքացող իշխանության առաջիկայում կատարվող փոփոխությունների մասին:

Տազնապալից հուզմունքը ընդհատվեց հետևյալ ձայներից.

«Գիշերը լույսերը կմարեն»:

«Կանգ կառնեն բևեռային կայանները»:

«Կանհետանա մագնիսական դաշտը»:

«Բարձրագույն խորհրդի տան ներքնահարկերում ինչ-որ անձնավորություններ են բանտարկված»:

Քաղաքի ծայրամասերում, ֆաբրիկաներում, բանվորական ավաններում, հասարակական խանութներում այդ ձայները այլ կերպ էին ընդունվում: Ըստ երևույթին, նրանց առաջացման պատճառների մասին այստեղ ավելի շատ բան գիտեին: Տազնապալից չարախնդությամբ խոսում էին, որ իբր թե տասնմեկերորդ խոշորագույն կրկեսը պայթեցվել է ստորգետնյա բանվորների կողմից, ասում էին, որ կառավարության գործակալները ամենուրեք փնտրում են զենքի պահեստները, իսկ Տուսկուրը գորք է քաշում դեպի Սոացերա:

Կեսօրվա կողմ գրեթե ամենուրեք դադարեց աշխատանքը, և հրապարակում խոնված բազմությունը ավելի մեծացավ: Հավաքվածները ինչ-որ իրադարձության սպասելով, նայում էին չգիտես որտեղից երևացող ձեռքերը գրպանները դրած և անփույթ հագնված երիտասարդներին:

Կեսօրին քաղաքի վրա բարձրացան կառավարական նավակները, և երկնքից սպիտակ աֆիշաների անձրև տեղաց փողոցներում:

Կառավարությունը բնակչությանը նախազգուշացնում էր, որ այդ չարամիտ լուրերը տարածում են ժողովրդի թշնամիները: Ասվում էր, որ իշխանությունը դեռևս երբեք այսպես ուժեղ ու վճռականությամբ լի չի եղել:

Քաղաքը մի պահ լռեց, և նորից սկսեցին տարածվել մեկը մյուսից ավելի սարսափելի լուրեր: Հաստատապես գիտեին միայն մի բան, որ այդ օրը երեկոյան Ինժեներների Բարձրագույն խորհրդի տանը կսկսվի Տուսկուրի վճռական պայքարը Սոացերայի աշխատավոր բնակչության առաջնորդի հետ՝ ի դեմս ինժեներ Գորի:

Երեկոյան կողմ ժողովուրդը լցվեց Բարձրագույն խորհրդի տան առջևի հսկայական հրապարակը: Զինվորները պահպանում էին սանդուղքը, մուտքերն ու կտուրը: Սառը քամին այդտեղ քշեց

մառախուղը, և խոնավ ամպերի մեջ սկսեցին ճոճվել կարմրավուն շողեր սփռող լապտերները: Անորոշ բուրգերով մշուշի մեջ կորան տան մռայլ պատերը, որի բոլոր պատուհանները լուսավորված էին:

Ծանրանիստ կամարների տակ, կլոր դահլիճում, ամֆիթատրոնի նստարաններին նստել էին Բարձրագույն խորհրդի անդամները: Բոլորի դեմքերը ուշադիր ու լարված էին: Հատակից մի քիչ բարձր, պատի վրա գտնվող մշուշապատ հայելու միջով մեկը մյուսի ետևից արագ անցնում էին քաղաքի պատկերները. ֆաբրիկաների ներսը, մութ խաչմերուկների վրա վազվզող կերպարանքները, էլեկտրամագնիսական աշտարակները, պահեստների միատեսակ ու դատարկ շենքերը, որ պաշտպանում էին զինվորները: Եկրանը անընդհատ միանում էր քաղաքի բոլոր վերստուգիչ հայելիների հետ: Ահա երևաց Ինժեներների Բարձրագույն խորհրդի տան առջևի հրապարակը. մշուշի պատառներով ծածկված գլուխների օվկիանոս և լապտերների սփռված լույս: Դահլիճի կամարները լցվել էին ամբոխի չարագուշակ տրտունջներով:

Բարակ սուլոցը գրավեց ներկա գտնվողների ուշադրությունը: Եկրանը հանգավ: Ամֆիթատրոնի առջև, սևադեղին զառքաբով ծածկված բարձրադիր տեղում երևաց Տուսկուրը: Նա գունատ էր, հանգիստ ու մռայլ:

— Քաղաքում խռովություն է սկսվել,— ասաց Տուսկուրը,— քաղաքը վրդովված է այն լուրերից, որ իբր թե այսօր այստեղ ինձ պետք է ընդդիմախոսեն: Այդպիսի մի լուրը բավական էր, որպեսզի խախտվեր պետական հավասարակշռությունը: Իրերի նման դրությունը ես համարում եմ հիվանդագին ու չարագուշակ: Անհրաժեշտ է մեկընդմիջտ ոչնչացնել այդպիսի վրդովմունքի պատճառները: Ես գիտեմ, մեր մեջ այստեղ ներկա եղողներից կան այնպիսիները, որոնք հենց այս գիշեր ամբողջ քաղաքով մեկ կտարածեն իմ խոսքերը: Ես առանց թաքցնելու ասում եմ, որ քաղաքում անարխիա է տիրում: Իմ գործակալների տված տեղեկությունների համաձայն քաղաքում ու ամբողջ երկրում դիմադրության համար չկան բավականաչափ ուժեր: Մենք գտնվում ենք աշխարհի կործանման նախօրյակին:

Դժգոհություն տարածվեց ամֆիթատրոնում: Տուսկուրը գարշանքով քմծիծաղ տվեց.

— Համաշխարհային կարգ ու կանոնը կործանող ուժը՝ անարխիան, գալիս է քաղաքից: Հոգու անդորրությունը, կյանքի նկատմամբ եղած բնական ազատությունն ու զգացմունքների ուժերը այսօր ծախսվում են կասկածելի զվարճությունների և անօգուտ հաճույքների վրա: Խավրայի ծուխը դա քաղաքի ոգին է, ծուխ և ցնորք: Փողոցային խայտառակություն, աղմուկ, ոսկյա նավակների պերճանք և նրանց նախանձը, ովքեր ներքևից նայում են այդ նավակներին: Մեջքերն ու փորերը մերկացրած և գրգռիչ բուրմունքով օծված կանայք, հասարակական տների ճակատներին վետվետացող կրակներ, փողոցների վրայով թռչող նավակ-ռեստորաններ. ահա քաղաքը: Հոգու անդորրությունը վառվում է մոխրի մեջ: Հոգու ամայացման ցանկության միակ պատճառը ազախությունն է, ինքնամոռացման տենչը... Հոգուն կարող է հազեցնել միայն արյունը:

Տուսկուրը սա ասելով, մատը ճոճեց օդի մեջ: Դահլիճը բվվաց գուսպ ձայնով: Նա շարունակեց.

— Քաղաքում անարխիայի կազմակերպիչը մի անձնավորություն է, որի ամբողջ կամքն ու կիրքը կործանելն է: Կարծում եմ, թե անարխիան ազատություն է, ո՛չ, անարխիան միայն անարխիա է տենչում: Պետության պարտքն է պայքարել այդ կործանարարների դեմ, այդպես է օրենքը: Անարխիային մենք պետք է հակադրվենք կարգ ու կանոնի նկատմամբ ունեցած մեր կամքով: Մենք պետք է մեր երկիրը հրավիրենք առողջ ուժեր և ամենանվազագույն կորուստներով նրանց նետենք անարխիայի դեմ մղվող պատերազմի մեջ: Մենք անհաշտ պայքար ենք հայտարարում անարխիայի

դեմ: Պահպանության ձևերը միայն ժամանակավոր միջոցներ են. անխուսափելիորեն կգա այն ժամը, երբ ոստիկանությունը բաց կանի իր խոցելի տեղը: Այն ժամանակ մենք կրկնակի կմեծացնենք ոստիկանության գործակալների թիվը, որովհետև անարխիստները կմեծանան եռակի անգամ: Մենք պետք է առաջինը անցնենք հարձակման, դիմենք դաժան ու անխուսափելի գործողությունների, մենք պետք է կործանենք ու ոչնչացնենք քաղաքը:

Ամֆիթատրոնի կեսը ոռնում ու ցատկոտում էր նստարաններին: Մարսեցիների դեմքերը գունատ էին, աչքերը՝ հրավառ: Տուսկուրը հայացքով վերականգնեց լռությունը:

— Քաղաքը, այսպես թե այնպես, անխուսափելիորեն պետք է կործանվի, մենք ինքներս պետք է կազմակերպենք այդ կործանումը: Հետագայում ես կառաջարկեմ քաղաքի բնակչության առողջ մասին գյուղական ավանները վերաբնակեցնելու պլանը: Այդ նպատակի համար մենք պետք է օգտագործենք Լիզազիրայի լեռների մյուս կողմի հարուստ երկիրը, որը ներքին կռիվներից հետո լքված է բնակիչների կողմից: Հսկայական աշխատանք է նախատեսվում: Բայց նպատակը մեծ է: Ենթադրվում է, որ քաղաքը կործանելով, մենք չենք փրկի քաղաքականությունը, մենք նույնիսկ չենք էլ երկարաձգի նրա կործանումը, բայց մենք մարսեցիներին հնարավորություն կտանք մեռնել հանգիստ ու հանդիսավոր կերպով:

— Ի՞նչ է ասում նա,— վախեցած ու բարձր ձայնով գոչում էին ունկնդիրները:

— Ինչո՞ւ մենք պետք է մեռնենք:

— Նա խելքը թոցրել է:

— Գորչի Տուսկուրը:

Հոնքերի շարժումով Տուսկուրը ամֆիթատրոնին նորից ստիպեց լռել:

— Մարսի պատմությունը վերջացած է: Կյանքը մեռնում է մեր մոլորակի վրա: Կանցնի մի քանի դար, և վերջին մարսեցին սառած հայացքով հրաժեշտ կտա արևի մայրամուտին: Մենք անկարող ենք կանգնեցնել մեր վախճանը: Մենք պետք է դաժան ու խելացի միջոցներով ճոխությամբ ու բերկրանքով շրջապատենք աշխարհի վերջին օրերը: Առաջինն ու հիմնականը այն է, որ մենք ոչնչացնենք քաղաքը: Քաղաքակրթությունը նրանից վերցրեց ամեն ինչ, հիմա էլ նա է քայքայում քաղաքակրթությանը և պետք է կործանվի:

Ամֆիթատրոնի կենտրոնում բարձրացավ Գորը, այն լայն երեսով երիտասարդը, որին Գուսևը տեսավ հայելու մեջ:

Նրա ձայնը խուլ էր և նման էր շան հաչոցի: Նա ձեռքը մեկնեց Տուսկուրի կողմը և ասաց.

— Նա ստո՛ւմ է: Նա ուզում է ոչնչացնել քաղաքը, որպեսզի պահպանի իշխանությունը: Նա մեզ մահվան է դատապարտում, որպեսզի պահպանի իշխանությունը: Նա հասկանում է, որ միայն միլիոնավորներին ոչնչացնելով կարելի է դեռևս պահպանել իշխանությունը: Նա գիտե, թե ինչքան են իրեն ատում նրա՛նք, ովքեր չեն թոչում ոսկե նավակներով, նրա՛նք, ովքեր ծնվել ու մեռնում են ֆաբրիկաների ստորգետնյա քաղաքներում, ովքեր տոներին հուսահատությունից հորանջելով քարշ են գալիս փոշոտ միջանցքներում, նրա՛նք, ովքեր գայրույթից, մոռացություն փնտրելով շնչում են անիծյալ խավրայի ծուխը: Տուսկուրը մեզ համար մահվան մահի՛ճ է պատրաստել, թող ինքը պառկի նրա մեջ: Մենք չե՛նք ուզում մեռնել: Մենք ծնվել ենք ապրելու համար: Մենք գիտենք, որ վտանգը Մարսի այլասերումն է: Բայց մենք փրկություն ունենք: Մեզ կփրկի Երկիրը, Երկրի

մարդիկ նոր ժողովուրդ են, առողջ, արյունները՝ տաք: Ահա թե աշխարհում նա ամենից շատ ումից է վախենում: Տուսկո՛ւ ր, դու քո տանը թաքցրել ես այն երկու մարդկանց, որոնք եկել են Երկրից: Դու վախենում ես Երկրի Որդիներից: Դու ուժեղ ես միայն թույլերի և խավրայով թմրածների մեջ: Երբ կգան տաք արյունով ուժեղները, դու ինքդ կդառնաս ստվեր, գիշերային մղձավանջ, դու կչքվես ստվերի պես: Ահա թե ինչից ես ամենից շատ վախենում աշխարհի երեսին: Դու դիտմամբ հնարեցիր անարխիան, դու նոր մոգոնեցիր քաղաքի կործանման խելացնոր միտքը: Հենց քե՛զ է հարկավոր արյուն՝ հազենալու համար: Դու ուզում ես ցրել բոլորիս ուշադրությունը, որպեսզի աննկատելի կերպով վերջ տաս այդ երկու խիզախ մարդկանց՝ մեր փրկարարներին: Ես գիտեմ, որ դու արդեն հրաման ես տվել...

Գորը հանկարծ խոսքը կտրեց: Նրա դեմքը լարվածությունից սկսեց սևանալ: Տուսկուրը հոնքերի տակից խիստ-խիստ նայում էր նրա աչքերի մեջ:

—... Չե՛ս կարող լռեցնել... Չե՛մ լռի... Գորն սկսեց խոստովել.— Ես գիտեմ՝ դու նվիրված ես հնագույն սատանայություններին... Ես չե՛մ վախենա քո աչքերից:

Գորը լայն ափով դժվարությամբ սրբեց ճակատի քրտինքը, խորը շունչ քաշեց և երերաց կանգնած տեղում: Ամֆիթատրոնի անշշուկ լռության մեջ նա ընկավ նստարանին և գլուխը հենեց ձեռքերին: Լսվում էր, թե ինչպես նա կրճտացնում է ատամները:

Տուսկուրը բարձրացրեց հոնքերը և հանգիստ շարունակեց.

— Հույս դնել Երկրից եկածների՞ վրա: Ուշ է: Թարմ արյուն ներարկել մեր երակների մեջ: Ուշ է: Ուշ է և անողորմ: Մենք միայն կերկարաձգենք մեր մոլորակի հոգեվարքը: Մենք միայն կմեծացնենք տառապանքը, որովհետև անխուսափելիորեն կդառնանք նվաճողների ստրուկները: Քաղաքակրթության խաղաղ ու հոյակապ մայրամուտի փոխարեն, մենք նորից մեզ կենտենք դարերի տանջալից շրջապատույտի մեջ: Ինչո՞ւ: Մենք, որ հնագույն ու իմաստուն ժողովուրդ ենք, ինչո՞ւ պիտի աշխատենք նվաճողների համար: Որպեսզի ազահ վայրենիները մեզ դո՞ւրս քշեն մեր տներից ու այգիներից ստիպեն կառուցելու նոր կրկեսներ, փորելու նոր հանքե՞ր, որպեսզի Մարսի հարթավայրը նորի՞ց թնդա պատերազմի գոռում գոչունով, որպեսզի մեր քաղաքները նորից լցվեն անառակներով ու գժերով: Ոչ: Մենք պետք է հանգիստ մեռնենք մեր բնակարանների շեմքին: Թող Տալցետլի կարմիր ճառագայթները մեզ լուսավորեն հեռվից: Մենք մեզ մոտ օտարականների չենք թողնի: Մենք բևեռներում նոր կայաններ կկառուցենք և մոլորակը կշրջապատենք անանցանելի գրահով: Մենք կկործանենք Սոսցերան, անարխիայի և անմիտ հույսերի այդ բույնը: Այստե՛ղ, այստե՛ղ է ծնվել Երկրի հետ հարաբերություններ ստեղծելու այդ հանցագործ ծրագիրը: Մենք գութանով կանցնենք հրապարակները: Մենք կթողնենք միայն կյանքի համար անհրաժեշտ հիմնարկներն ու ձեռնարկությունները: Նրանցում մենք կստիպենք աշխատել հանցագործներին, հարբեցողներին, գժերին. բոլոր նրանց, ովքեր անիրակնալին են երագում: Մենք նրանց շղթայակապ կանենք: Նրանց կբաշխենք իրենց կյանքը, որը այդքան ափսոսում են: Բոլոր նրանց, ովքեր համաձայն են մեզ հետ, ովքեր կենթարկվեն մեր կամքին, մենք կտանենք գյուղական վայրեր և կապահովենք նրանց կյանքն ու ապրուստը: Տաժանակիր աշխատանքի քսան հազարամյակները մեզ վերջապես իրավունք կտան ապրելու ուրախ, խաղաղ և խելացի կերպով: Քաղաքակրթության վերջը պետք է ծածկվի ոսկեդարի պսակով: Մենք կկազմակերպենք մասսայական տոներ և գեղեցիկ զվարճություններ: Գուցե կյանքի տևողությունը, որ հիշատակեցի ես, կերկարաձգվի էլի մի քանի հարյուրամյակով, որովհետև մենք պետք է ապրենք հանգիստ կյանքով:

Ամֆիթատրոնը լսում էր լուռ, հմայված: Տուսկուրի երեսը ծածկվել էր բծերով: Նա փակել էր աչքերը, ասես նայում էր ապագային: Հանկարծ Տուսկուրը լռեց խոսքի կեսից...

... Ամբոխի խուլ, բազմաժխոր թնոյունը դրսից տարածվեց դահլիճի կամարների տակ: Գորը ոտքի կանգնեց: Նրա դեմքը գայրույթից այլայլվել էր: Նա հանեց իր գլխարկը և շարտեց մի կողմ, ապա ներքևից, նստարանների վրայով ձեռքերը մեկնեց դեպի Տուսկուրը: Նա բռնեց Տուսկուրի բկից ու Ջառբաբե բարձունքից ներքև գցեց նրան: Այդպես էլ, ձեռքերը պարզելով ու մատները չռելով, նա շուտ եկավ ամֆիթատրոնի կողմը: Ասես պոկելով չորացած լեզուն, գոռաց.

— Լավ: Մահ: Թող մահ լինի, բայց ձեզ համար, իսկ մերը՝ պայքարն է:

Մի քանի մարսեցի վեր թռան նստարաններից, աղմկեցին և ներքև վազեցին դեպի երեսնիվայր ընկած Տուսկուրը:

Գորը նետվեց դեպի դուռը: Արմունկով մի կողմ հրեց այնտեղ կանգնած զինվորին: Գորի սև խալաթի փեշերը աղոտ կերպով երևացին հրապարակի կողմի ելքի մոտ: Լավեց նրա հեռացող ձայնը: Բազմության միջով ասես ոռնացող քամի անցավ:

ԼՈՍՐ ՄՆՈՒՄ Է ՄԵՆԱԿ

— Հեղափոխություն, Մստիսլավ Սերգեևիչ, ամբողջ քաղաքը տակնուվրա է լինում: Հրաշալի է:

Գուսեր կանգնած էր գրադարանում: Նրա միջոտ քնկոտ աչքերում ուրախ կայծեր երևացին, քիթը վեր ցցվեց, բեղերը բիզ-բիզ կանգնեցին: Ձեռքերը նա խորունկ մտքեց գոտկի տակ:

— Նավակի մեջ արդեն ամեն ինչ դրել եմ. ուտելիք, նոնակներ, նրանց հրացաններից էլ եմ ճարել: Շո՛ւտ արա, դեն գցիր գիրքը՝ թռչենք:

Լոսը հանգիստ նստել էր բազմոցի անկյունում և այնպես էր նայում Գուսեևին, որ ասես չէր տեսնում նրան:

Երկու ժամից ավելի էր արդեն, որ նա սպասում էր Աելիտայի սովորական դարձած այցելությանը, մոտենում էր դռանը և ակնաջ դնում: Աելիտայի սենյակներում լռություն էր տիրում: Նա նորից նստում էր բազմոցի անկյունին և սպասում, թե երբ կլսվեն նրա ոտնաձայները: Նա գիտեր, որ այդ թեթև քայլերը նրա հոգում արձագանքում էին երկնային թնոյունով: Ուր որ է Աելիտան դուրս կգար, ինչպես միշտ, սպասածից ավելի զեղեցիկ ու սքանչելի դարձած, կանցներ վերևի լուսավոր պատուհանների տակով, և հայելանման հատակի միջով կթռչեր նրա սև շրջագգեստը: Եվ նրա մեջ ամեն ինչ կցնցվեր: Նրա հոգու տիեզերքը կցնցվեր ու կնվաղեր, ինչպես ամպրոպից առաջ:

— Մստիսլավ Սերգեևիչ, տենդի մե՞ջ եք, ինչ է: Ինչո՞ւ եք աչքերդ չռել: Ասում եմ՝ թռչենք, ամեն ինչ պատրաստ է, ես ուզում եմ ձեզ մարզկոմ հռչակել: Մաքուր գործ է: Գուսեր այնպես էր նայում նրան, որ Լոսը կախեց գլուխը և կամաց հարցրեց.

— Ի՞նչ է կատարվում քաղաքում:

— Սատանան գիտե: Փողոցներում լիքը ժողովուրդ է, աղմուկ ու աղաղակ: Լուսամուտներին են խփում:

— Հասեք նրանց, Ալեքսեյ Իվանովիչ, միայն թե կվերադառնաք հենց այս գիշեր: Ես խոստանում եմ օգնել ձեզ ամեն ինչում, ինչ որ ասեք՝ կանեմ: Հեղափոխություն արեք, ինձ կոմիսար նշանակեք, իսկ

Եթե պետք կլինի՝ գնդակահարեցեքինձ: Բայց այսօր, աղաչում եմ ձեզ, ինձ հանգիստ թողեք: Համաձայն եք:

— Լավ,— ասաց Գուսեր,— ա՛խ, նրանցից է ամբողջ անկարգությունը, սատանան նրանց հետ, հա՛: Ուզում ես յոթերորդ երկինքը գնա, միննույն է՝ այնտեղ էլ կին կա: Թյո՛ւ: Կես գիշերին կվերադառնամ: Իխոշկան կհետևի, որպեսզի ինձ չմատնեն:

Գուսեր գնաց: Լուսը նորից վերցրեց գիրքը և մտածեց.

«Ինչո՞վ կվերջանա: Կողքի՞ց կանցնի սիրո ամպրոպը: Ոչ, չի անցնի: Ինքը ուրա՛խ է այդ մահացու սպասումի ու բուռն զգացմունքի համար, թե ուր որ է կհայտնվի անակնկալ մի լույս: Դա ո՛չ ուրախություն է, ո՛չ տխրություն, ո՛չ երազ, ո՛չ ծարավ, ո՛չ հագեցում... Այն, ինչ զգում է նա, երբ Աելիտան իր կողքին է, դա հենց կյանքի ներարկումն է իր մարմնի սառցային մենության մեջ: Նրա մեջ կյանքը մուտք է գործում շողշողուն լուսամուտների միջով, հայելափայլ հատակի վրայով: Բայց չէ՞ որ դա էլ երազ է: Թող լինի այն, ինչ տենչում է ինքը: Եվ նրա՝ Աելիտայի մեջ կսաղմնավորվի կյանքը, նա ամբողջովին կապրի իր մեջ թրթռացող սաղմի մարմնավորումով, իսկ իրեն նորից բաժին կմնան լուկ տանջանքն ու մենությունը»:

Լուսը դեռ երբեք այդպիսի հստակությամբ չէր զգացել սիրո անհույս ծարավ, դեռ երբեք այդպես չէր հասկացել սիրո այն պատրանքը, իր այն ահավոր փոփոխությունը, որին ենթարկել էր մի կին: Դա այրական էության նգովքն է: Բացել գիրկը, ձեռքերը աստղից աստղ մեկնել, սպասել, տիրել կնոջը: Եվ այդ կինը կվերցնի քեզնից ամեն ինչ ու կապրի: Իսկ դու, սիրելյան կամ հայր կմնաս, դատարկ ստվերի պես ձեռքդ տարածած մի աստղից մյուսը:

Աելիտան իրավացի էր. Լուսն իգուր տեղը շատ բան իմացավ այդ օրերին, չափազանց լայնորեն բացահայտվեց նրա գիտակցությունը: Նրա մարմնի մեջ դեռ տաք արյուն էր հոսում, նա դեռ ամբողջովին լցված էր կյանքի տազնապալի սերմերով. նա Երկրի Որդի էր: Բայց բանականությունը առաջ էր անցել հազար տարով: Այստեղ, օտար հողի վրա, նա իմացավ այն, ինչ դեռ պետք չէր իմանալ... Բանականությունը բացահայտվեց որպես սառցային անապատ: Իսկ ի՞նչ բացահայտեց նրա բանականությունը: Ամայություն, իսկ այնտեղ, նրա սահմաններից այն կողմ՝ նորանոր գաղտնիքներ: Ստիպիր, որ արևի տաք ճաճանչների տակ, փակ աչքերով՝ քնքուշ հիացմունքի մեջ երգող թռչունը հասկանա մարդկային իմացության գեթ մի մասնիկը. թռչունը անշնչացած ցած կընկնի:

Լուսամուտից լավեց թռչող նավակի երկարաձիգ սուլոց: Հետո գրադարանում հայտնվեց Իխայի գլուխը.

— Երկրի Որդի, եկեք ճաշելու...

Լուսն շտապ գնաց սպիտակ ու կլոր ճաշասենյակը, որտեղ այդ օրերին նա ճաշում էր Աելիտայի հետ: Այստեղ շոգ էր: Սյուների մոտ դրված բարձր սափորների մեջ ծանր հոտով բուրում էին ծաղիկները: Իխան նրա կողմը դարձնելով լացից կարմրած աչքերը, ասաց.

— Դուք պետք է մենակ ճաշեք, Երկրի Որդի,— և Աելիտայի սպասքը ծածկեց սպիտակ ծաղիկներով:

Լուսը մթագնեց: Մոայլ նստեց սեղանի մոտ: Ուտելիքին նա ձեռք չտվեց, միայն խմեց մի քանի գավաթ գինի և սկսեց մատներով փշրել հացը: Սեղանի վրայի ապակյա գմբեթից լավեց թույլ երաժշտություն, որպիսին լսվում էր ամեն օր ճաշի ժամանակ: Լուսը սեղմեց ծնոտները:

Գմբեթի խորքից գալիս էին երկու ձայն՝ լարային և փողային: Հնչյունները հոսում էին, միանում միահյուսվում, երգում էին անիրականալիի մասին: Բարձր, մարող հնչյունների տակ նրանք բաժանվում էին, իսկ այժմ արդեն ցածր հնչյունները անդրշիրիմյան թախծոտ ձայնով կանչում էին. կանչում էին, հուզումնալից արձագանքվում և նորից երգում հանդիպման մասին, մոտենում ու պտտվում էին հնագույն վալսի նման:

Լոսը նստել էր, ափի մեջ սեղմելով նեղ գավաթը: Իխան անցնելով սյան ետևը, մի քիչ վեր բարձրացրեց շրջագգեստի փեշերը և ծածկեց դեմքը: Նրա ուները ցնցվում էին: Լոսը գցեց անձեռոցիկը և վեր կացավ: Հոգեմաշ երաժշտությունը, ծաղիկների բուրմունքը, թունդ գինին՝ բոլորը, բոլորը իզուր էին:

Նա մոտեցավ Իխային:

— Կարո՞ղ եմ տեսնել Աելիտային:

Չբացելով երեսը, Իխան թափահարեց շիկակարմիր մազերը: Լոսը բռնեց նրա ուներին:

— Ի՞նչ է պատահել: Նա հիվանդ է: Ես պետք է նրան տեսնեմ:

Իխան դուրս պրծավ Լոսի ձեռքերից և դուրս փախավ: Հատակին, սյան մոտ մնաց Իխոշկայի մոտից ընկած լուսանկարը: Դա Գուսևի լուսանկարն էր, որ թրջվել էր Իխայի արցունքներով: Այդտեղ Գուսևը լրիվ մարտական վիճակի մեջ էր. մահուդե գլխարկ, կրծքի վրա կաշեգոտի, մի ձեռքը դրած սրի կոթին, մյուսը՝ ատրճանակին, իսկ հեռվում պայթող նռնակներ: Լուսանկարի մյուս կողմում գրված էր. «Անմոռաց հիշատակ սքանչելի Իխոշկային»:

Լոսը մի կողմ նետեց լուսանկարը, դուրս եկավ տնից և մարգագետնով քայլեց դեպի պուրակը: Նա մեծ-մեծ ուսայուններ էր անում և, չնկատելով այդ, փնթփնթում.

— Չի ուզում տեսնել՝ պետք չի: Անօրինակ ջանք թափելով ընկնել մի այլ աշխարհ, որպեսզի նստել բազմոցի մի անկյունում և սպասել, թե երբ, վերջապես երբ ներս կմտնի այդ կինը...

Խելագարությունն է: Ցնորամոտությունն է: Գուսևն իրավացի է, տենդի մեջ եմ: «Քաղցր բանի հոտ ես առել»: Սպասել քնքուշ հայացքի, ինչպես ահեղ դատաստանի... Սատանան տանի...

Մտքերը անգթաբար խոցում էին նրան: Լոսը գոռում էր, ինչպես ատամի ցավից: Մոռանալով իր ուժի չափը, նա մեկ սաժենաչափ վեր էր ցատկում և ցած ընկնելով, հազիվ էր կարողանում ոտքերի վրա պահել իրեն: Նրա սպիտակ մազերը ծածանվում էին: Նա կատաղորեն ատում էր իրեն:

Նա վազեց մինչև լիճը: Ջուրն ասես հայելի լիներ. մուգ կապույտ մակերևույթի վրա հուրհրատում էին արևային ճաճանչների խրճերը: Տոթ էր: Լոսը բռնեց գլուխը, նստեց մի քարի:

Լճի թափանցիկ խորքից դանդաղորեն բարձրանում էին ծիրանագույն ձկները, շարժում իրենց երկար ասեղները և ջրային աչքերով անտարբեր նայում Լոսին:

— Դուք լսո՞ւմ եք, ձկներ, դուրս պրծած աչքերով, հիմար ձկներ,— կիսաձայն ասաց Լոսը,— ես հանգիստ եմ, խոսում եմ խելքը գլխիս: Հետաքրքրությունն ինձ տանջում է, այրում. առնեն թներիս մեջ, երբ նա ներս մտնի սև շրջագգեստով: Լսեմ, թե ինչպես է տրոփելու նրա սիրտը... Նա ինքը, տարօրինակ շարժումով, կմոտենա ինձ... Ես կնայեմ, թե ինչպես են վայրի փայլ ստանում նրա աչքերը... Տեսնո՞ւմ եք, ձկներ, ես կանգ առա, խոսքս ընդհատեցի, չեմ խորհում, չեմ ուզում: Բավական է: Թե լը կտրված է. վերջ: Վաղը կգնամ քաղաք: Պայքա՛ր՝ սքանչելի է: Մա՛հ՝ սքանչելի է: Միայն թե ո՛չ երաժշտություն, ո՛չ ծաղիկներ, ո՛չ էլ նենգավոր գայթակղություն: Տոթ այլևս չեմ

ուզում: Գրողը, գրողը տանի նրա ձեռքի կախարդական գնդիկը... Այս ամենը խաբեություն է, տեսիլք...

Լուսը վեր կացավ, վերցրեց մի մեծ քար և նետեց դեպի ձկների վտառը: Գուլիսը ցավում էր: Լուսը ծածկում էր աչքերը: Հեռվում իր սառույցներով շողշողում էր պուրակի ետևում վեր խոյացող լեռնային սրագագաթ բարձունքը: «Հարկավոր է փոքր-ինչ սառցային օդ շնչել»: Լուսը, աչքերը կկոցելով, նայեց ադամանոյա լեռանը և երկնագույն մացառուտների միջով գնաց այնտեղ:

Ծառերը վերջացան. նրա առջև փռված էր բլրապատ ամալի սարահարթը: Իսկ սառցապատ բարձունքը շատ հեռու էր: Ճանապարհին, ոտքերի տակ, փռված էին խրամ ու խիճ, ամենուրեք երևում էին լքված հանքահորերի անցքեր: Լուսը քմահաճորեն վճռեց հեռվում պսպղացող այդ ձյունից մի կտոր պոկել իր ատամներով:

Հովտում փոշու դարչնագույն ամպ էր բարձրանում: Տաք քամին նրա ականջին հասցրեց բազմաթիվ ձայներ: Բլրի վրայից Լուսը տեսավ, որ ցամաքած ջրանցքի հունի մոտով մարսեցիների մի մեծ խումբ է անցնում: Նրանք տանում էին երկար ձողեր, որոնց ծայրերից կապված էին հանքափորիչ դանակներ, մուրճեր: Գնում էին սայթաքելով, թափահարում գենքերը և կատաղորեն գորգոռում: Նրանցից այն կողմ, դարչնագույն ամպերի վերևում լողում էին գիշատիչ թռչունները:

Լուսը հիշեց կատարված իրադարձությունների մասին: Գուսնի քիչ առաջ ասած խոսքերը: Մտածեց. «Ահա՛ ապրիր, կովիր, հաղթիր, կործանվիր... Իսկ խռովահույզ ու դժբախտ սիրտդ պահիր շղթայված»:

Բազմությունը կորավ սարերի ետևում: Լուսը գնում էր արագ՝ շարժումից, պայքարից հուզված, և հանկարծ կանգ առավ, ետ գցեց գլուխը: Կապույտ բարձունքից լողալով ցած էր իջնում մի թևավոր նավակ: Ահա փայլատակեց, պտույտ գործեց, ցածրացավ, ցածրացավ, սահեց նրա գլխի վրայով ու իջավ գետնին: Նավակի միջից ոտքի ելավ ինչ-որ մեկը՝ փաթաթված սպիտակ, ձյան պես սպիտակ մորթու մեջ: Մորթու միջից, կաշվե գլխարկի տակից Լուսին էին նայում Աելիտայի հուզումնալից աչքերը: Լուսի սիրտը ջերմորեն բաբախեց: Նա մոտեցավ նավակին: Աելիտան դեմքից ետ քաշեց շնչառությունից խոնավացած մորթին: Մթազնած հայացքով Լուսը նայեց նրան: Աելիտան ասաց.

— Ես քեզ համար եմ եկել: Ես եղա քաղաքում: Մենք պետք է փախչենք: Ես մեռնում եմ քո կարոտից:

Լուսը միայն մատներով սեղմեց նավակի կողը, դժվարությամբ շունչ քաշեց:

ԿԱՆԱՐԴԱՆՔ

Լուսը նստեց Աելիտայի ետևը: Մեքենագետը, որ կարմրամորթ մի տղա էր, սահուն ցնցումով թևավոր նավակը բարձրացրեց դեպի երկինք:

Մտը քամին ընդառաջ նետվեց: Աելիտայի ձյան պես սպիտակ մուշտակը ներծծված էր լեռնային սառնությամբ, ամպրոպային թարմությամբ: Աելիտան շրջվեց դեպի Լուսը, նրա այտերը վառվում էին:

— Ես տեսա հորս: Նա ինձ պատվիրեց սպանել քեզ ու քո ընկերոջը:— Աելիտայի ատամները փայլվեցին: Նա բռունցքը բացեց: Մատանու շղթայից կախված էր քարե փոքրիկ սրվակ:— Հայրս ասաց, թող նրանք հանգիստ քնեն, նրանք արժանի են երջանիկ մահվան:

Աելիտայի գորշ աչքերը խոնավացան: Բայց անմիջապես նա ծիծաղեց և դուրս քաշեց մատանին: Լոսը բռնեց նրա ձեռքից:

— Մի՛ գցիր,— նա վերցրեց սրվակն ու դրեց իր գրպանը,— սա քո նվերն է, Աելիտա: Այս մուգ կաթիլները քունու հանգստություն են: Այժմ թե՛ կյանքս և թե՛ մահս դու ես:— Նա խոնարհեց գլուխը, որ զգա Աելիտայի շնչառությունը:— Երբ վրա կհասնի մենակության սարսափելի ժամը, ես նորից քեզ կզգամ այս կաթիլների մեջ:

Ջանալով հասկանալ, Աելիտան փակեց աչքերը, մեջքով հենվեց Լոսին: Ոչ, միևնույն է, հասկանալ չի լինի: Աղմկող քամին, Լոսի կուրծքը, Աելիտայի ուսին դրված սպիտակ մորթու մեջ թաղված ձեռքը կարծես ասում էին, որ նրանց արյունը միևնույն շրջանառությամբ է հոսում, մի մարմին դարձած՝ նույն զմայլանքով նրանք թռչում են ինչ-որ շողշողուն ու հին հուշերի գիրկը: Ոչ, միևնույն է, հասկանալ չի լինի:

Անցավ մեկ րոպե, փոքր-ինչ ավելի: Նավակը հավասարվեց Տուսկուրի կալվածատան բարձրությանը: Մեքենագետը շրջվեց. Աելիտայի և Երկրի Որդու դեմքերը տարօրինակ էին: Նրանց դատարկ բերում շողշողում էին արեգակնային կետեր: Քամին խաղացնում էր մուշտակի վրայի ձյունանման բուրդը: Աելիտայի հրճվանքով լի աչքերը նայում էին երկնային լույսի օվկիանին: Պատանի մեքենագետը սուր քիթը թաղեց օձիքի մեջ և սկսեց անձայն ծիծաղել: Նավակը թեքվեց մի թևի վրա և օդը շեշտակի ճեղքելով վայրէջք կատարեց տան մոտ:

Աելիտան սթափվեց, սկսեց արձակել մուշտակի կոճակները, բայց նրա մատները սահում էին թռչնային գլխիկներ հիշեցնող խոշոր կոճակների վրայով: Լոսը Աելիտային բարձրացրեց նավակի միջից, դրեց խոտի վրա և կռացած կանգնեց նրա առջև: Աելիտան մեքենագետին ասաց.

— Պատրաստիր ծածկած նավակը:

Աելիտան չնկատեց ո՛չ Բիտշկայի կարմրած աչքերը, ո՛չ էլ կառավարչի դեղին ու դդմանման, սարսափահար դեմքը: Նա ժպտալով, մտացրիվ շուռ եկավ դեպի Լոսը և նրան առաջնորդեց դեպի տան խորքը, իր սենյակները:

Լոսն առաջին անգամն էր տեսնում Աելիտայի սենյակները. ոսկեգույն, ցածրիկ կամարներ, պատերին ստվերանման պատկերներ, որ չինական հովանոցի նկարներ էին հիշեցնում: Տաք, դառնահամ հոտից Լոսի գլուխը պտտվեց.

Աելիտան կամացուկ ասաց.

— Նստիր:

Լոսը նստեց: Աելիտան նստեց նրա ոտքերի մոտ, գլուխը դրեց ծնկներին, ձեռքերը՝ կրծքին և մնաց անշարժ:

Լոսը քնքշությամբ նայում էր նրա ծոծրակի վերևում հավաքված մազերին, սեղմում ձեռքերը: Աելիտայի կոկորդը դողդողաց: Լոսը կռացավ:

Աելիտան ասաց.

— Գուցե ձանձրանո՞ւմ ես ինձ հետ: Ներիր: Ես դեռ չգիտեմ սիրել: Ես հուզված եմ: Ես Բիսային ասել եմ. «Ավելի շատ ծաղիկներ դիր ճաշասենյակում, երբ նա մենակ մնա, թող ուլան նվազի նրա համար»:— Աելիտան արմունկներով հենվեց Լոսի ծնկներին: Նրա դեմքը երազկոտ էր:

— Դու լսո՞ւմ էիր, դու հասկացա՞ր: Դու մտածո՞ւմ էիր իմ մասին:

— Դու տեսնում ես և գիտես,— ասաց Լուսը,— երբ քեզ չեմ տեսնում, անհանգստությունից խելագարվում եմ: Իսկ երբ տեսնում եմ, անհանգստությունս ավելի սուկալի է դառնում: Հիմա ինձ թվում է, որ քո կարոտն էր ինձ ձգում աստղերի միջից:

Աելիտան խորը հառաչեց: Նրա դեմքը երջանիկ էր թվում:

— Հայրս ինձ թույն տվեց. բայց ես տեսա, որ նա ինձ չի հավատում: Նա ասաց. «Ես կապանեմ քեզ էլ, նրան էլ»: Մենք երկար չենք ապրի: Բայց դու զգում ես, որ ընկերներն հոսում են անվերջ, երանության մեջ:

Աելիտան չկարողացավ շարունակել և նայեց, թե ինչպես սառը վճռականությամբ բռնկվեցին Լուսի աչքերը, բերանը սեղմվում էր համառորեն:

— Լավ,— ասաց Լուսը,— ես պիտի պայքարեմ:

Աելիտան ավելի մոտեցավ և շշնջաց.

— Դու իմ մանկական երազների հսկան ես: Դու սքանչելի դեմք ունես: Դու ուժեղ ես, Երկրի Որդի: Դու առնացի ես, բարի: Ձեռքերդ երկաթից են, ծնկներդ՝ քարից: Հայացքդ մահացու է: Քո հայացքից կանայք մի ծանր բան են զգում իրենց սրտում:

Աելիտայի գլուխը թուլացած ընկավ Լուսի ուսին, աղջկա շշնջումը դարձավ անորոշ, հազիվ լսելի: Լուսը հեռացրեց նրա երեսին թափված մազերը:

— Ի՞նչ պատահեց քեզ:

Այդ ժամանակ, Աելիտան երեխայի պես թափով փաթաթվեց նրա պարանոցին: Աչքերում երևացին արցունքի խոշոր կաթիլներ ու հոսեցին նրա վտիտ դեմքի վրայով:

— Ես չգիտեմ սիրել,— ասաց նա,— ես երբեք չեմ իմացել դա... Խնայիր ինձ, մի խորշիր ինձանից: Ես քեզ համար հետաքրքիր պատմություններ կանեմ: Կպատմեմ սարսափելի գիսաստղերի, օդային նավերի ճակատամարտի, սարերից այն կողմը գտնվող հոյակապ երկրի կործանման մասին: Դու չես ձանձրանա, եթե ինձ սիրես: Ինձ ոչ ոք չի փաղաքշել: Երբ դու առաջին անգամ եկար, ես մտածեցի. «Ես նրան տեսել եմ մանուկ հասակում, դա ինձ համար հարազատ հսկա է»: Ես կուզեմայի, որ դու ինձ ձեռքերի վրա բարձրացնեիր, տանեիր այստեղից: Այստեղ ամեն ինչ մռայլ է, անհույս, մահ, մահ... Արևը սակավ է տաքացնում: Բնեռներում սառույցն այլևս չի հալչում: Ցամաքում են ծովերը: Տուման ծածկված է անձայրածիր անապատներով ու պղնձագույն ավազներով... Երկի՛ր, Երկի՛ր... սիրելի հսկա, տար ինձ ձեր Երկիրը: Ես ուզում եմ տեսնել կանաչ լեռներ, հոսող ջրեր, ամպեր, պարարտ գազաններ, հսկաներ... Ես չեմ ուզում մեռնել...

Աելիտան ողողվեց արցունքներով: Այժմ արդեն նա բոլորովին անչափահաս աղջիկ թվաց Լուսին: Ծիծաղելի էր և հաճելի, երբ նա հսկաների մասին խոսելիս, ծափ տվեց:

Լուսն համբուրեց նրա արցունքոտ աչքերը: Աելիտան հանդարտվեց: Նա փոքրիկ բերանը ուռեցրեց: Ոտից գլուխ սիրահարված, ինչպես հեքիաթային հսկային, Աելիտան նայում էր Երկրի Որդուն:

Հանկարծ սենյակի կիսախավարում հնչեց մի ցածր սուլոց, և արդուզարդի սեղանի վրա ամպագույն լույսով բռնկվեց ձվաձև իրը: Երևաց Տուսկուրի գլուխը:

— Այստե՞ղ ես,— հարցրեց նա:

Աելիտան կատվի պես ցատկեց գորգի վրա և վագեց դեպի էկրանը:

— Այստեղ եմ, հայր:

— Երկրի Որդիները դեռ կենդանի՞ են:

— Ոչ, հայր, ես նրանց թույն տվի. նրանք մեռան:

Աելիտան խոսում էր սառը խստությամբ: Նա մեջքով կանգնել էր դեպի Լոսը, ծածկելով էկրանը:

— Ինձանից էլ ի՞նչ ես ուզում, հայր:

Տուսկուբը լռեց. Աելիտայի ուսերն սկսեցին բարձրանալ, գլուխը ետ ընկավ: Պռոթկաց Տուսկուբի կատաղի ձայնը.

— Ստում ես: Երկրի Որդին քաղաքում է: Նա ապստամբության գլուխն է անցել:

Աելիտան երերաց: Հոր գլուխը չքացավ:

ՀԻՆԱՎՈՒՐՑ ԵՐԳ

Աելիտան, Իխոշկան ու Լոսը քառաթև նավակով թռչում էին դեպի Լիզիազիրայի լեռները:

Անդադար աշխատում էր էլեկտրամագնիսական ալիքների ընդունիչը՝ լարակտորներով կայմը: Աելիտան փոքրիկ էկրանին թեքված՝ լսում էր, դիտում:

Դժվար էր գլուխը հանել հուսահատ հեռախոսագրերից, կոչերից, կանչերից, տագնապալի պահանջներից, որ թռչում, պտտվում էին Մարսի մագնիսական դաշտերում: Բայց և այնպես, գրեթե առանց դադարի լավում էր Տուսկուբի պողպատաձայն մոթմոթոցը, որը կտրում, անցնում էր այդ ողջ քառսը, հնչում տիրաբար: Հայելու մեջ սահում անցնում էին տագնապահար աշխարհի ստվերները:

Հնչյունների խառնաշփոթության մեջ Աելիտայի լսողությունը մի քանի անգամ որսաց ինչ-որ տարօրինակ ձայն, որը ծոր տալով աղաղակում էր.

«... Ընկերներ՛ ը, մի՛ լսեք փսփսացողներին... Մեզ ոչ մի զիջում պետք չէ... Ի գե՛ն, ընկերներ՛ ը, հասել է վերջին ժամը... Ամբողջ իշխանությունը սով... սով... սով...»

Աելիտան դարձավ Իխոշկային.

— Ընկերդ խիզախ է ու հանդուգն, իսկական Երկրի Որդի է, մի վախեցիր նրա համար:

Իխոշկան այծի նման դոփեց ոտքերով, տմբոմբացրեց շիկահեր գլուխը: Աելիտային հաջողվեց ստուգել, որ իրենց փախուստը աննկատ է մնացել: Նա ականջներից հանեց լսափողը, մատներով սրբեց լուսանցույցի քրտնած ապակին:

— Նայիր,— ասաց նա Լոսին,— մեր ետևից թռչում են իխիները:

Նավակը լողում էր Մարսի վերևում վիթխարի բարձրության վրա: Երկու կողմերից, շլացուցիչ լույսի միջով գալարաձև թռչում էին թաղանթանման թևերով բրդոտ, տեղ-տեղ մագաթափ, մուգ

դարչնագույն մորթով երկու կենդանի: Նրանց ատամնավոր, տափակ կտուցներով կլոր գլուխները դարձած էին լուսամուտների կողմը: Ահա մեկը, տեսնելով Լուսին, մոտեցավ ու երախով կափկափեց ապակուն: Լուսը ետ քաշեց գլուխը: Աելիտան՝ ծիծաղեց:

Անցան Ագորան: Ներքևում արդեն Լիզիազիրայի սրագագաթ ժայռերն էին: Նավակը ցածրացավ, թռավ Մոսամ լճի վրայով և իջավ անդնդի վրա կախված ընդարձակ հարթակին:

Լոսն ու մեքենագետը նախ նավակը տարան քարայրը, ապա ուսերն առան զամբյուղները և կանանց ուղեկցությամբ ապառաժների մեջ հազիվ նկատելի ու մաշված աստիճաններով սկսեցին իջնել ձորն ի վար: Աելիտան առաջ էր գնում հեշտ ու արագ: Բռնելով ժայռերի ելուստներից, նա ուշադիր նայում էր Լուսին, որի վիթխարի ոտքերի տակից թռչում էին քարերը, արձագանք տալիս անդնդախոր ձորում:

— Այստեղ է իջել Մագացիտը, իր հետ բերելով մի գավազան, որից թել կար կապած,— ասաց Աելիտան:— Հիմա դու կտեսնես այն տեղերը, ուր շրջանաձև վառվում էին սրբազան կրակները:

Անդունդի մեջտեղում սանդուղքը մտավ ժայռի խորքը: Նեղ թունելի խավարից փչում էր գաղջ խոնավություն: Ուսերը քարերին քսելով, կուզեկուզ, Լուսը դժվարությամբ էր շարժվում հղկված պատերի արանքով: Խարխափելով, նա գտավ Աելիտայի ուսը և նույն պահին էլ իր շուրթերին զգաց նրա շունչը: Նա շնչաց ռուսերեն. «Միրելի՛ս»:

Թունելը վերջացավ կիսով չափ լուսավորված քարայրով: Ամենուրեք փայլփլում էին բազալտե սյուներ: Խորքերից դուրս էին թռչում գոլորշու թեթև քուլաներ: Խոխոջում էր ջուրը, աննշմարելի կամարներից միապաղաղ ցած էին ընկնում կաթիլները:

Աելիտան առջևից էր գնում: Նրա սև թիկնոցն ու սրածայր թասակը սահում էին լճի վրայով, երբեմն ծածկելով գոլորշու ամպերով: Նա խավարի միջից ասաց. «Զգույշ», և հայտնվեց հինավուրց կամրջի նեղ ու զառիթափ կամարի վրա: Լոսն զգաց, թե ինչպես ոտքերի տակ դողում է կամրջի կամարը, բայց նա միայն նայում էր կիսախավարի մեջ սահող թեթև թիկնոցին:

Սկավեց ավելի լուսանալ: Գլխավերևում շողշողացին բյուրեղները: Անձավը վերջանում էր քարե ցածրիկ սյունաշարով: Նրանց ետևից տեսանելի դարձան գարնանային վերջալույսի շողերով ողողված Լիզիազիրայի ժայռոտ գագաթների ու լեռնային կրկեսների հեռանկարը:

Սյունաշարի այն կողմում ընկած էր ժանգագույն մամուռով ծածկված մի ընդարձակ դարատափ: Նրա եզրերը գառիթափ էին: Հազիվ նկատելի սանդուղքներն ու կածանները տանում էին վեր, դեպի քարանձավային քաղաքը: Դարատափի մեջտեղում ընկած էր կիսով չափ հողի մեջ խրված ու մամռապատ Սրբազան Դուռը: Դա ձուլածո ոսկուց շինված մի մեծ տապանաքար էր, որը չորս կողմից պատած էր թռչունների և գազանների կոպիտ կերպարանքով: Տապանաքարի վրա պատկերված էր հանգուցյալ մարսեցու կերպարանքը. նա իր մի ձեռքը դրել էր գլխի տակ, իսկ մյուսով կրծքին էր սեղմել ուլան: Փլված սյունաշարի մնացորդները շրջապատել էին այդ զարմանալի քանդակը:

Աելիտան իջավ Ս. Դռան առջև և համբուրեց քանդակված ննջեցյալի սիրտը: Երբ նա բարձրացավ տեղից, դեմքը մտախոհ էր ու հեզահամբույր. Իխան էլ ծնկի եկավ ննջեցյալի ոտների մոտ, գրկեց ու երեսը հպեց նրա ոտներին:

Ձախ կողմից, ժայռի մեջ, կիսով չափ ջնջված մակագրությունների մեջտեղում երևում էր մի եռանկյունաձև ոսկե դռնակ: Լուսը պոկեց մամուռները և դժվարությամբ բաց արեց այն: Դա Ս. Դռան

պահապանի հինավուրց բնակարանն էր. մի մուօ քարայր, քարե նստարաններով, օջախով և գրանիտից կերտված թախտով: Այստեղ բերին զամբյուղները: Իխան խսիրով ծածկեց հատակը, Աելիտայի համար անկողին փռեց, յուղ լցրեց առաստաղից կախված ճրագի մեջ և վառեց: Մեքենագետը գնաց հսկելու թնավոր նավակը:

Աելիտան ու Լոսը նստեցին անդնդի եզրին: Արևն անցել էր սեպաձև գագաթների ետևը: Երկար ստվերները ձգվում էին լեռներից, բեկվում կիրճերի ճեղքերում: Մռայլ, ամուլ ու ամայի էր այդ երկիրը, որտեղ մի ժամանակ մարդկանցից իրենց փրկությունն էին գտել հնադարյան Առլները:

— Մի ժամանակ այս լեռները ծածկված էին բուսականությամբ,— ասաց Աելիտան,— այստեղ նախիրներ էին արածում, իսկ կիրճերում աղմկում էին ջրվեժները: Տուման մեռնում է: Փակվում է երկար, երկար հազարամյակների շրջագիծը: Գուցե մենք վերջիններն ենք. կհեռանանք, և Տուման կամայանա:

Աելիտան լռեց: Արևը մայր մտավ մոտակա վիշապաձև լեռնաշղթայի ետևում: Վերջալույսի հորդառատ արյունը թափվեց բարձունքին, մանուշակագույն խավարի մեջ:

— Բայց իմ սիրտն այլ բան է ասում,— ասաց Աելիտան, վեր կացավ և քայլեց զառիթափի եզրով, գետնից վերցնելով չոր մամուռի ծվեններն ու չոր ճյուղերը: Դրանք լցնելով թիկնոցի փեշը, նա վերադարձավ Լոսի մոտ, դարսեց խարույկի համար, քարայրից բերեց ճրագը, ծնկի գալով վառեց խոտերը: Խարույկը ճարճատելով վառվեց:

Ապա Աելիտան թիկնոցի տակից հանեց փոքրիկ ուլան, նստեց, արմունկով հենվեց ծնկանը, խփեց լարերին: Լարերը մեղունների պես մեղմիկ հնչեցին: Աելիտան գլուխը բարձրացրեց դեպի գիշերային խավարի մեջ առկայծող աստղերը և տխուր ու ցածրաձայն սկսեց երգել.

Չոր տերևներ հավաքիր և ճյուղերի բեկորներ,

Բեր և դարսիր քրտնաջան,

Խփիր քարը քարին, կին, երկու հոգու առաջնորդ,
Կայծ տուր, և թող այդ կայծից քո խարույկը հուրհրա:
Կրակի մոտ նստիր դու, ձեռքդ պարզիր բոցերին,
Քո ամուսինն է պարող լեզուների ետևում:
Դեպի աստղերը ելնող ծխի միջից խարույկի
Տղամարդն իր աչքերով հոգուդ հատակն է տեսնում,
Թափանցում է հայացքով մթության մեջ արգանդիդ:
Վառ են աչքերն աստղերից, կրակից էլ բոցկլտուն
Եվ համարձակ են չափ ֆոսֆորափայլ աչքերից:
Գիտցիր, արևը մի օր մարած ածուխ կդառնա,
Եվ կամարից երկնքի աստղերը ցած կթափվեն,
Չար Տալցետլը կմարի տիեզերքի վերևում,
Բայց դու նստած ես, ո՛վ կին, անմահության խարույկի
Բոցերի մոտ և նրան քո ձեռքերն ես կարկառել:
Կյանքի ուրախ զարթոնքի ձայներն ես դու ունկնդրում,
Ձայներ, որոնք արգանդիդ մթին խորքից են գալիս:

Խարույկը հանգչում էր: Ուլան դնելով ծնկին, Աելիտան նայում էր շիկացած ածուխներին, որոնք կարմրավուն հրացուլքով լուսավորել էին նրա դեմքը:

— Ըստ հնավանդ սովորության,— ասաց նա խստորեն,— ուլայի երգը տղամարդու համար երգող աղջիկը նրա կինն է դառնում:

ԼՈՍԸ ԹՈՂՈՒՄ Է ԳՈՒՄԵՎԻՆ ՕԳՆԵԼՈՒ

Կես գիշերին Լոսը նավակից ցատկեց Տուսկուրի կալվածատան բակը: Տան լուսամուտներից լույս չէր երևում. ուրեմն Գուսնը դեռ չի վերադարձել: Զառիթափ պատը լուսավորված էր աստղերով, որոնց երկնագույն կայծերը փայլփլում էին ապակիների սևության մեջ: Տանիքի ատամնավոր քիվերից ցցվել էր տարօրինակ ու սուր մի ստվեր: Լոսը նայում էր դրան. ի՞նչ կարող է լինել:

Մեքենագետ պատանին թեքվեց նրա կողմը և վախվխելով շշնջաց.

— Մի՛ գնացեք այն կողմ:

Լոսը պատյանից դուրս քաշեց մատուցերը: Ներծծեց գովաշունչ օդը: Նա վերհիշեց անդունդի վրայի խարույկը, այրվող խոտերի բուրմունքը, Աելիտայի մթագնած ու հրաբորբ աչքերը...

«Կվերադառնա՞ս,— հարցրեց նա, կանգնելով կրակի վերևը,— կատարի պարտքդ. պայքարի, հաղթի, բայց մի՛ մոռացիր, որ այս բոլորը լոկ երազ է, ամեն ինչ՝ ստվեր... Այստեղ, կրակի մոտ դու կենդանի ես, դու չես մեռնի, մի մոռացիր, վերադարձիր...»: Նա մոտ եկավ: Լոսի հայացքի դեմ Աելիտայի աչքերն ասես մի աստղազարդ ու անհուն գիշեր լինեին... «Վերադարձիր, վերադարձիր ինձ մոտ, Երկրի Որդի...»

Մինչ Լոսը կարձակեր ատրճանակի պատյանը, հիշողությունը մի պահ պարզվեց ու էլի մթագնեց: Նայելով տան կտրին երևացող տարօրինակ ստվերին, Լոսը զգաց, որ իր մկանները պրկվում են, տաք արյունը ցնցում է սիրտը, պայքա՛ր, պայքա՛ր:

Թեթև թռիչքներով նա մոտեցավ տանը: Ականջ դրեց, սահելով անցավ կողքի պատի երկայնքով և նայեց անկյունը: Տան մուտքի մոտ կար կողքի ընկած ու ջախջախված մի նավ: Նրա մի թևը բարձրացել էր կտուրից վեր՝ դեպի աստղերը... Լոսը խոտերի վրա ընկած պարկերի նման բաներ նկատեց. դրանք դիակներ էին: Տանը խավար էր, լռություն:

«Մի՞ թե Գուսնն է»: Լոսը մոտ վազեց սպանվածներին: «Ո՛չ, մարսեցիներ են»: Մեկը գլխիվայր ընկած էր աստիճանների: Մեկն էլ կախված էր նավի բեկորներից: Ըստ երևույթին, խփվել էին տնից արձակած կրակոցներից:

Լոսը վազեց աստիճաններով: Դուռը կիսաբաց էր: Ներս մտավ:

— Ալեքսեյ Իվանովիչ,— կանչեց Լոսը:

Լռություն էր: Նա միացրեց լուսավորությունը, և ամբողջ տունը բռնկվեց լույսով: «Ինչ անզգույշ եմ»,— անցավ մտքով և իսկույն էլ մոռացավ այդ մասին: Կամարների տակով անցնելիս ոտքերը սայթաքեցին հատակին լճացած ինչ-որ մածուցիկ հեղուկից:

— Ալեքսեյ Իվանովիչ,— նորից կանչեց նա:

Ականջ դրեց. ձայն չկար: Ապա Լոսը գնաց նեղլիկ դահլիճը, որտեղ մշուշապատ հայելին էր դրված, նստեց բազկաթոռին և եղունգներով բռնեց ծնոտը: «Սպասել նրան այստե՞ղ: Թռչել օգնությա՞ն: Բայց ո՞ւր: Ո՞ւմն է այս ջախջախված նավը: Մեռածները զինվորների նման չեն, ավելի շուտ՝

բանվորներ են: Ուլքե՞ր են այստեղ կռվել: Տուսկուրի մարդի՞կ, թե՞ Գուսեր: Այո, հապաղել չի կարելի»:

Նա վերցրեց թվատախտակը և միացրեց հայելին. «Ինժեներների բարձրագույն խորհրդի տան հրապարակ»: Ձգեց լարը, և իսկույն մի որոտ նրան պոկեց հայելուց. այնտեղ՝ լապտերների կարմրավուն փայլի տակ թռան ծխի քուլաներ, չրթացին կրակի բռնկումներ, կայծեր: Ահա, ձեռքերը տարածելով, հայելու մեջ հայտնվեց աչքերը արյունով լցված մի կերպարանք:

Լուսը քաշեց լարը և էկրանից դարձրեց երեսը:

«Մի՞ թե նա չի տեղեկացնի, թե ինչպես գտնել նրան այս խառնաշփոթության մեջ»:

Լուսը ձեռքերը դրեց ետևը և սկսեց անցուդարձ անել նեղ միջանցքում: Հանկարծ նա ցնցվեց, կանգ առավ, արագ շուռ եկավ և ձեռքը տարավ դեպի մաուզերի պահպանակը: Դռան ետևում, հենց ուղղակի հատակին ցցվել էր կարմիր մագերով ու խորշումած կարմիր դեմքով մի գլուխ:

Լուսը թռավ դեպի դուռը: Դռան այն կողմը, պատի տակ, արյան լճակում պռոկել էր մի մարսեցի: Լուսը նրան առավ ձեռքերի վրա, տարավ ու դրեց բազկաթոռին: Նրա փորը պատռված էր:

Լիզելով շուրթերը, մարսեցին մրմնջաց հազիվ լսելի ձայնով.

— Շտապիր, մենք կործանվում ենք: Երկրի Որդի, փրկիր մեզ... բաց արա ձեռքս...

Լուսը բացեց մեռնողի փայտացող բռունցքը, ափից դուրս քաշեց մի գրություն: Դժվարությամբ կարդաց.

«Ձեր ետևից ուղարկում եմ ռազմանավ և յոթ բանվոր. հուսալի տղաներ են: Ես պաշարում եմ Ինժեներների բարձրագույն խորհրդի տունը: Իջե՛ք հրապարակի մոտ, որտեղ աշտարակն է: Գուսեր»:

Լուսը թեքվեց վիրավորի վրա՝ հարցնելու, թե այստեղ ի՞նչ է տեղի ունեցել: Բայց մարսեցին միայն խոխոաց, բռնելով բազկաթոռից:

Լուսը նրա գլուխն առավ ափերի մեջ: Մարսեցին դադարեց խոխոացնել: Նրա աչքերը դարձան ուռուցիկ և լուսավորվեցին «սարսափով ու երանությամբ». «Փրկիր...» Աչքերն աղոտացան, ատամները դուրս ցցվեցին:

Լուսը կռճկեց բաճկոնը, պարանոցը փաթաթեց վզնոցով և գնաց դեպի դրսի դուռը: Բայց հազիվ էր բաց արել, առջևից, նավի կմախքից նետվեցին կապտավուն կայծեր. հնչեց թույլ, բայց սուր ձայնություն: Գնդակները Լուսի սաղավարտը թոցրին գլխից:

Լուսը ատամները սեղմած, աստիճաններից ցած նետվեց, թռավ դեպի նավը, ուսը դեմ տվեց և, մկանները ճռճացնելով, նավի կմախքը շուռ տվեց նրանց վրա, ուլքեր թաքնվել էին նրա ետևում:

Լավեցին կոտրվող մետաղի ձայնություններն ու մարսեցիների թռչնային ճիչերը: Վիթխարի թևեր ճռճվում էր օդում և շրմփացնում նավի բեկորների տակից սողացող կերպարանքներին: Մարսեցիները կուզեկուզ դես ու դեն էին փախչում մթության մեջ: Լուսը մի թռիչքով հասավ նրանց ու կրակեց: Մաուզերի թնոյունը սարսափելի էր: Ամենամոտիկ մարսեցին շրմփաց խոտերի մեջ: Մյուսը զենքը ցած նետեց, պպգեց և ափերով ծածկեց երեսը:

Լուսը բռնեց նրա արծաթավուն բաճկոնի օձիքից և բարձրացրեց ինչպես լակոտի: Դա զինվոր էր: Լուսը հարցրեց.

— Քեզ Տուսկո՞ւրն է ուղարկել:

— Այո, Երկրի Որդի:

— Ես քեզ կսպաննեմ:

— Լավ, Երկրի Որդի:

— Ինչն՞վ եք թռել եկել: Ո՞ւր է նավը:

Երկրի Որդու ահարկու դեմքի առաջ կախված մարսեցին սարսափից չռած աչքերով ցույց տվեց ծառերը. նրանց ստվերում կանգնած էր մի փոքր ռազմանավ:

– Դու քաղաքում տեսե՞լ ես Երկրի Որդուն: Դու կարո՞ղ ես նրան գտնել:

— Այո:

— Դե տար:

Լուսը թռավ ռազմանավը: Մարսեցին նստեց դեկի մոտ: Շարժվեցին պտուտակները: Գիշերային քամին փչում էր դիմացից: Սև բարձունքում օրորվում էին վիթխարի, վայրի աստղերը:

ԳՈՒՍԵՎԻ ԱՆՅԱԾ ՕՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Առավոտյան ժամը տասին Գուսևը Տուսկուրի դաստակերտից թռավ դեպի Մոսկերա: Նա իր հետ վերցրել էր ավիացիոն քարտեզ, զենք, ուտելիք և վեց հատ ձեռքի նոնակ, որ Լուսից գաղտնի նա վերցրել էր դեռ Պետրոգրադում:

Կեսօրին Գուսևը ներքևում տեսավ Մոսկերան: Կենտրոնական փողոցները դատարկված էին: Ինժեներների խորհրդի տան մոտ, աստղաձև վիթխարի հրապարակում երեք համակենտրոն կիսաշրջաններով կանգնած էին ռազմանավեր ու զորքեր:

Գուսևն սկսեց իջնել: Եվ ահա, ըստ երևույթին, նրան նկատեցին: Հրապարակից պոկվեց վեցթևանի փայլփլուն մի նավ, թրթռաց արևի շողերի տակ և պտտվելով ուղիղ վեր բարձրացավ:

Նավակողերին կանգնած էին արծաթավուն կերպարանքներ: Գուսևը նավակի վրա մի շրջան գործեց և պարկից զգուշորեն դուրս քաշեց նոնակը:

Նավի վրա պտտվում էին գունավոր անիվները, շարժվում էին կայմի մետաղալարե մագիկները:

Գուսևը նավակի վրայից ցած թեքվեց ու բռունցքով սպառնաց: Ռազմանավից լսվեց մի թույլ ճիչ: Արծաթավուն կերպարանքները բարձրացրին իրենց կարճլիկ զենքերը: Դուրս թռան դեղնավուն ծխի փոքրիկ քուլաներ: Երգեցին գնդակները: Գուսևի նավակից պոկվեց մի կտոր ու ներքև ընկավ:

Գուսևը մի ուրախ հայիոյանք նետեց նրանց հասցեին և, բարձրացնելով դեկը, սուրաց դեպի ռազմանավը: Մրրիկի նման իջնելով նրա վրա, նա նետեց նոնակը: Որոտաց խլացուցիչ մի պայթյուն: Գուսևն ուղղեց դեկը, և ետ դարձավ: Ռազմանավը անփութորեն պտտվեց օդում և, ծխալով ու քարուքանդ լինելով, տապալվեց կտուրների վրա:

Հենց դրանից էլ սկսվեց ամեն ինչ:

Սավառնելով քաղաքի վրա, Գուսեր ճանաչեց հայելու մեջ տեսած հրապարակները, կառավարական շենքերը, զինանոցը, բանվորական թաղամասերը: Գործարանային երկարավուն պատի տակ, տազնապահար մրջնանոցի նման, արկեկոծվում էր մարսեցիների բազմահազարանոց ամբոխը: Գուսերն սկսեց ցածրանալ: Ամբոխը մի կողմ նետվեց: Նա վայրէջք կատարեց մաքրված տեղում՝ կրճտացնելով ատամները:

Նրան ճանաչեցին: Վեր բարձրացան հազարավոր ձեռքեր, կոկորդները ոռնացին. «Մագացի՛ տլ, Մագացի՛ տլ...» Ամբոխը երկչոտ կերպով սկսեց մոտենալ: Գուսերը տեսավ դողացող դեմքեր, աղերսող աչքեր, բողկի պես կարմիր, ճաղատ գանգեր: Դրանք բանվորներ էին, թշվառ, խաժամուժ:

Գուսերը ցած իջավ նավակից, պարկը գցեց ուսը և ձեռքը պարզեց օդի մեջ.

— Ողջո՛ւյն ձեզ, ընկերներ՛ք:— Տիրեց մի այնպիսի լռություն, ինչպիսին լինում է երագում: Այդ փոքրամարմին ժողովրդի մեջ Գուսերը հսկա էր թվում:— Ընկերներ՛ք, այստեղ խոսելո՞ւ էք հավաքվել, թե՞ կովելու: Եթե խոսելու համար եք եկել, ապա ես ժամանակ չունեմ, մնաք բարով:

Ամբոխի միջով մի ծանր հառաչ անցավ: Հուսահատ ձայներով կանչեցին մի քանի մարսեցիներ, և ամբոխը ձայնակցեց նրանց կանչերին.

— Փրկի՛ր, փրկի՛ր, փրկի՛ր մեզ, Երկրի Որդի:

— Ուրեմն կովե՞լ էք ուզում,— ասաց Գուսերը և բղավեց խոպոտ կոկորդով:— Կռիվն սկսվել է: Նոր ինձ վրա հարձակվեց մի ռազմանավ: Ես նրան սատանայի ծոցն ուղարկեցի: Ի զե՛ն, իմ ետևի՛ց:— Նա այնպես ճանկեց օդը, ասես սանձ էր բռնում:

Ամբոխը ճեղքելով դուրս եկավ Գորը (Գուսերը իսկույն ճանաչեց նրան): Գորը հուզմունքից գունատվել էր, շուրթերը դողդողում էին: Նա մատներով կառչեց Գուսերի կրծքից:

— Ի՞նչ եք ասում: Ո՞ւր եք մեզ կանչում: Մեզ կոչնչացնեն: Մենք զենք չունենք: Պետք են պայքարի այլ միջոցներ...

Գուսերն իր կրծքից մի կողմ հրեց նրա ձեռքը:

— Գլխավոր զենքը սիրտ անելն է: Ով սիրտ արեց, իշխանությունն էլ նրանն է: Ես Երկրից նրա համար չքոռա այստեղ, որ խոսակցությամբ զբաղվեմ... Ես Երկրից նրա համար եմ թոել եկել, որ ձեզ համարձակություն սովորեցնեմ: Մամռոտել եք, ընկեր մարսեցիներ: Ով որ մահից չի վախենում, թող գա իմ ետևից: Որտե՞ղ է ձեր զինանոցը: Ի զե՛ն: Բոլորդ իմ ետևից դեպի զինանոց...

— Է-հե՛յ,— վնգվնգացին մարսեցիները:

Սկսեցին սեղմվել ու հրել միմյանց: Գորը հուսահատորեն ձեռքը պարզեց դեպի բազմությունը:

Այսպես սկսվեց ապստամբությունը: Առաջնորդ գտնվեց: Սկսվեց եռուզեռ: Անհնարինը հնարավոր թվաց: Գորը ապստամբությունը նախապատրաստել էր դանդաղ ու գիտականորեն, բայց անգամ նախորդ օրվա դանդաղկոտությունից ու անվճռականությունից ասես թե նա հանկարծ սթափվեց: Նա արտասանեց տասներկու կատաղի ճառեր, որոնք աղոտ հայելիներով հաղորդվեցին բանվորական թաղամասերը: Քառասուն հազար մարսեցիներ սկսեցին ձգվել դեպի զինանոցը: Գուսերը ջախջախեց մի քանի հարձակվող խմբերի, որոնք տների, հուշարձանների ու ծառերի ետևը թաքնվելով փախուստի դիմեցին: Նա կարգադրեց այն բոլոր վերստուգիչ էկրանների մոտ, որոնց միջոցով կառավարությունը հետևում էր քաղաքի անցուղարձին, նստեցնել կանանց ու

երեխաներին, և պատվիրեց, որ նրանք հայիոյեն Տուսկուբին: Ասիական այդ խորամանկությունը որոշ ժամանակով կթմրեցներ կառավարության զգոնությունը:

Գուսերը վախենում էր ռազմանավերի օդային գրոհից: Որպեսզի գոնե մի փոքր շեղի նրանց ուշադրությունը, նա հինգ հազար անգն մարսեցիների ուղարկեց քաղաքի կենտրոնը, որ գոռոռան, պահանջեն տաք հագուստ, հաց, խավրա: Նա նրանց ասաց.

— Ձեզանից ոչ ոք այդտեղից կենդանի ետ չի գա: Դուք դա հիշեցեք: Դե գնացեք:

Հինգ հազար մարսեցիներ միաբերան «է-հե՛յ» բացականչելով բացեցին վիթխարի հովանոցները, որ մակագրություններ ունեին իրենց վրա, և գնացին մեռնելու, տխուր ողբալով մի հին, արգելված երգ.

Կամարների տակ ապակե,
Կամարների տակ երկաթե,
Դրված է մի քարե աման,
Ուր ծխում է, ծխում խավրան:
Մենք ուրախ ենք, ուրախ ենք, ջա՛ն,
Քարե ամանը մեզ տվեք:
Է-հե՛յ, էլ մենք ետ չենք դառնա
Նորից քարհանք ու հանքահոր,
Ետ չենք դառնա
Միջանցքները ահեղ, մեռյալ,
Նորից դեպի մեքենանե՛ր, մեքենանե՛ր,
Հե՛յ, ապրել ենք ուզում, ապրել:
Քարե ամանը մեզ տվեք:

Աղաղակելով ու պտտեցնելով վիթխարի հովանոցները՝ նրանք ծածկվեցին նեղլիկ փողոցներում: Ջինանոցը, որ քաղաքի հին թաղամասում գտնվող քառակուսի մի ցածրիկ շենք էր, պաշտպանում էր մի փոքր գործարան: Ջինվորները կիսաշրջանաձև կանգնել էին հրապարակում՝ բրոնզաձույլ դարբասների մոտ, պաշտպանելով երկու տարօրինակ մեքենա, որոնք սարքված էին պարուրաձև մետաղալարից, սկավառակներից, գնդերից (այդպիսի մի բան Գուսերը տեսել էր լքված տանը): Հարձակվողներն անցան բազմաթիվ ծուռումուռ նրբանցքներով, մոտեցան ու շրջապատեցին զինանոցը, որն ուղիղ և ամուր պատեր ուներ:

Ուշիուշով նայելով անկյուններից և ծիկրակելով ծառերի ետևից, Գուսերը ուսումնասիրեց դրվածքը. պարզ է, զինանոցը պետք էր վերցնել ճակատից, դարբասի կողմից: Գուսերը հրամայեց հանել մուտքերից մեկի բրոնզե դուռը և այն փաթաթել պարաններով: Հարձակվողներին հրամայեց խուժել լավայի նման, որքան կարելի է ահարկու գոռալով՝ «է-հե՛յ»:

Դարբասը պաշտպանող զինվորները հանդարտ նայում էին նրբանցքներում կատարվող իրարանցմանը, միայն մեքենաներն էին առաջ տվել, որոնց պարուրաձև մետաղալարերից ճթճթում էր մանուշակագույն լույսը: Ցույց տալով դրանք, մարսեցիները աչքները կկոցած՝ ցածրաձայն սվսվում էին. «Վախեցիր դրանցից, Երկրի Որդի»:

Ժամանակ կորցնել չէր կարելի:

Գուսերը չոտեց ոտքերը, բռնեց պարանից և բարձրացրեց բրոնզե դուռը: Ծանր էր, բայց ոչինչ, կարելի էր տանել: Այսպես նա, տան պատի տակ ծածկվելով, անցավ մինչև հրապարակի ծայրը, այդտեղից արդեն մինչև դարբասը մի քայլ էր միայն: Ցուրայիններին ցածր ձայնով հրամայեց.

«Պատրաստվեք»: Թևքով ճակատը սրբելով, մտածեց. «Այ թե բարկություններս մի լավ հանեինք, է՛»: Ապա բարձրացրեց դուռը և ծածկվեց նրա ետևը:

— Տո՛ւր զինանոցը... Տո՛ւր, թե չէ՝ հոգիդ կհանեն,— բղավեց նա անսովոր ձայնով և հրապարակով ծանր-ծանր վազեց դեպի զինվորները:

Պտպտացին մի քանի կրակոցներ և ծակող պայթյուններով հարվածեցին դռանը: Գուսեր օրորվեց: Ապա շատ ջղայնացած ու զզվելի հայհոյանքներ տալով, սրընթաց առաջ վազեց: Իսկ շուրջը արդեն ոռնում, վնգվնգում էին մարսեցիները, դուրս թափվում բոլոր անկյուններից, մուտքերից ու ծառերի տակից: Օդում պայթեց որոտացող գունդը: Բայց հարձակվողների հորդ հորձանքները ոտնատակ տվին զինվորներին և ահավոր մեքենաները:

Գուսեր հայհոյելով վազեց մինչև դարբասը և բրոնզե դռան անկյունով խփեց դարբասի կողպեքին: Դուռը ճոնչալով վայր ընկավ: Գուսեր վազեց դեպի քառակուսի բակը, որտեղ շարքով կանգնած էին թևավոր նավակները:

Զինանոցը վերցված էր: Քառասուն հազար մարսեցիներ զենք ստացան: Գուսեր հայելահեռախոսով կապվեց Ինժեներների խորհրդի տան հետ և պահանջեց հանձնել Տուսկուբին:

Դրան ի պատասխան՝ կառավարությունը օդային էսկադրիլա գրոհի նետեց զինանոցի վրա... Գուսեն իր ամբողջ նավատորմով թռավ նրան ընդառաջ: Կառավարության նավերը փախան: Բայց ապստամբները հասան դրանց, շրջապատեցին և ոչնչացրին հինավուրց Սոսցերայի ավերակների վերևում: Նավերը երկնքից թափվեցին փակ աչքերով ժպտացող Մագացիտլի վիթխարի արձանի ոտքերի մոտ: Վերջալուսի շողերը առկայծում էին նրա թեփուկավոր սաղավարտի վրա:

Երկինքը ապստամբների ձեռքին էր: Կառավարությունը ոստիկանական զորքը քաշել էր բարձրագույն խորհրդի տան մոտ: Նրա կտուրին դրված էին կլոր կայծակների հրագնդեր արձակող մեքենաներ: Ապստամբ զորքերի մի մասը արդեն շարդված էր դրանց կողմից: Գիշերը Գուսեր վայրէջք կատարեց Բարձրագույն խորհրդի տան հրապարակում և սկսեց աստղաձև հրապարակից ձգվող փողոցներում բարիկաղներ կառուցել:

«Ես ձեզ կտվորեցնեմ հեղափոխություն անել, դարչնագույն սատանաներ»,— ասաց Գուսեր, ցույց տալով, թե ինչպես պետք է մայթերից հանել սալերը, տապալել ծառերը, կործանել դռները, վերնաշապիկները ավագով լցնել:

Բարձրագույն Խորհրդի տան դեմ-դիմաց դրեցին զինանոցից գրաված մեքենաները և դրանցով սկսեցին հրագնդեր արձակել զորքի վրա: Բայց կառավարությունը էլեկտրամագնիսական դաշտով պատեց հրապարակը:

Այնժամ Գուսեր արտասանեց այդ օրվա իր վերջին ճառը, որը շատ կարճ էր, բայց արտահայտիչ: Ապա մագլցեց բարիկաղի վրա և մեկը մյուսի ետևից շարտեց երեք նոնակ: Դրանց պայթյունի ուժը սարսափելի էր. բոցի երեք խորձբարձրացավ, օդ թռան քարեր, զինվորներ, մեքենաների կտորներ, հրապարակը ծածկվեց բոցով ու կծու ծխով: Մարսեցիները ոռնացին ու անցան գրոհի (դա հատկապես այն պահին էր, երբ Լոսը մշուշապատ հայելու մեջ տեսավ տուսկուբյան կավվածատունը):

Կառավարությունը վերացրեց մագնիսական դաշտը, և երկու կողմերից վրա պրծան դեպի հրապարակը: Կռվողների գլխավերևում, կապտավուն բոցերի առվակներ հորդելով, պարում էին հրագնդերը: Թնայունից ցնցվում էին բրգաձև մռայլ տները:

Մարտը երկար չտևեց: Գուսերը՝ ընտիր ջոկատի գլուխն անցած, դիակներով ծածկված հրապարակով ներխուժեց դեպի Բարձրագույն խորհրդի տունը: Տունը դատարկ էր: Տուսկուրը և բոլոր ինժեներները փախել էին:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱԴԱՐՁ

Ապստամբների զորքերը գրավել էին քաղաքի բոլոր կարևորագույն կետերը, որ ցույց էր տվել Գորը: Գիշերը ցուրտ էր: Մարսեցիները սառում էին պահակակետերում: Գուսեր կարգադրեց խարույկներ վառել: Դա արտառոց մի բան էր թվում, արդեն հազար տարի էր, ինչ քաղաքում կրակ չէին վառում, պարող բոցերի մասին միայն հինավուրց երգերում էր հիշվում:

Բարձրագույն խորհրդի տան առաջ Գուսեր ինքը սարքեց առաջին խարույկը, վառելով կահույքի կտորտանքներ: «Ուլա՛, ուլա՛», — նվաղ ձայներով ոռնացին մարսեցիները և շրջապատեցին կրակը: Եվ ահա խարույկներ բռնկվեցին բոլոր հրապարակներում: Կարմրավուն լույսը օրորուն ստվերով կենդանություն տվեց տների թեք պատերին, առկայծեց ապակիների վրա:

Լուսամուտներից երևում էին երկնագույն դեմքեր՝ տազնապահար ու վշտագին: Նրանք նայում էին անսովոր կրակին, ապստամբների մոռյլ, պատառոտված կերպարանքներին: Այդ տներից շատերը ամայացան նույն գիշեր:

Խաղաղություն էր քաղաքում: Միայն ճթճթում էին խարույկները, զնգում էին զենքերը, ասես թե վերադարձել էին իրենց հազարամյա ուղին, վերսկսվել էր նրանց տանջալի թռիչքը: Նույնիսկ փողոցների ու կտուրների վրայի խավոտ աստղերը օտար էին թվում. խարույկի մոտ նստածը ակամայից բարձրացնում էր գլուխը և նայում մոռացված, ասես թե վերակենդանացած պատկերին: Գուսերը թևավոր թամբով թռավ դեպի զորքերի դասավորությունը: Աստղային խավարից նա իջավ և քայլեց հրապարակով՝ նետելով վիթխարի ստվեր: Նա ասես իսկական Երկրի Որդի լինելը, քարե պատվանդանից իջած կուռք: «Մագացի՛ տլ, մագացի՛ տլ», — սնահավատ սարսափով շշնջում էին մարսեցիները: Շատերը առաջին անգամ էին տեսնում նրան և սողեսող մոտենում էին, որպեսզի շոշափեն: Ոմանք լաց էին լինում մանկան պես. «Հիմա մենք չենք մեռնի, մենք երջանիկ կլինենք... Երկրի Որդին մեզ կյանք բերեց»:

Փռշոտ, միատեսակ հագուստներով ծածկված վտիտ մարմիններ, կնճռոտ, սրաքիթ ու խամրած դեմքեր, անիվների փայլփլոցին ու հանքահորերի աղջամուղջին դարերով սովոր տխուր աչքեր, խնդության ու համարձակության շարժումներին անվարժ ու նիհար ձեռքեր... դեմքեր, ձեռքեր և խարույկների կայծերով շողշողացող աչքեր էին ձգվում դեպի Երկրի Որդին:

— Մի՛ վախեք, մի՛ վախեք, տղերք: Ուրախ նայեք, — ասում էր Գուսերը նրանց, — այդպիսի օրենք չկա, որ առանց մեղքի տառապեք մինչև դարի վախճանը: Մի՛ վախեք: Կհաղթահարենք, վատ չենք ապրի:

Ուշ գիշերով Գուսերը սոված ու սառած վերադարձավ Խորհրդի տուն: Կամարաշուք սրահի հատակին, ոսկե ցածրիկ կամարների տակ, զենքերը կախել ու քնել էին երկու տասնյակ մարսեցիներ: Հայելաշող հատակը ծածկված էր տրորված խավրայով: Սրահի կենտրոնում փամփուշտների թիթեղյա արկղի վրա նստած էր Գորը և էլեկտրական լապտերի լույսի տակ գրում էր: Սեղանին թափթփված էին բաց պահածոներ, տափաշշեր, հացի չորուկներ:

Գուսերը նստեց սեղանի ծայրին ու սկսեց ազահաբար ուտել: Ձեռքերը սրբեց շալվարի վրա, տափաշշից մի բան խմեց, կոնչաց ու խոպոտ ձայնով ասաց.

— Ո՞ւր է հակառակորդը: Ահա թե ինչ է ինձ պետք...

Գորը նրա վրա բարձրացրեց իր կարմրած աչքերը, նայեց արյունոտ փալասին, որ կապված էր Գուսերի գլխին, այլայլված դեմքին, ցցված այտոսկրերին, ցից բեղերին, ուռած ռունգերին:

— Չեմ կարողանում գտնել. ո՞ր սաստանայի գիրկը կորան կառավարական գորքերը,— շարունակեց Գուսերը,— հրապարակում փոխված են մի երեք հարյուր հոգի, իսկ գորքը տասնհինգ հազար է եղել: Տապալվեցի՞ն: Թաքնվել չէին կարող, հո ասեղ չէին, թե որ տապալվեին, ես դա կիմանայի: Զգվելի վիճակ է: Ամեն բոսպե թշնամին կարող է հայտնվել թիկունքումդ:

— Տուսկուբը, կառավարությունը, մնացած գորքն ու բնակչության մի մասը հեռացան Մագր թագուհու քաղաքամերձ լաբիրինթոսները,— ասաց Գորը:

Գուսերը ցատկեց աթոռից:

— Էլ ինչո՞ւ եք լռում:

— Տուսկուբին հետապնդելը անօգուտ է: Նստեք ու կերեք, Երկրի Որդի:— Գորը, մոռյվելով, հագուստի տակից հանեց բիբարի նման կարմիր, չոր խավրայի մի փունջ, կոխեց բերանը և սկսեց դանդաղ ծամել: Նրա աչքերը խոնավացան, խամրեցին, կնճիռները հարթվեցին:— Մի քանի հազարամյակ սրանից առաջ մենք մեծ տներ չէինք կառուցում, մենք չէինք կարող դրանք տաքացնել. էլեկտրականությունը մեզ անհայտ էր: Չմեռային սառնամանիքներին բնակչությունը քաշվում էր գետնի տակ, ահագին խորությամբ: Վիթխարի դահլիճները, ջրի քանդած-հարմարեցրած անձավները, սյունաշարերը, թունելներն ու միջանցքները տաքացվում էին մոլորակի ներքին ջերմությամբ: Հրաբուխների խառնարաններում այնքան մեծ ջերմություն էր լինում, որ մենք այն օգտագործում էինք շոգի ստանալու համար: Մինչև այժմ էլ մի քանի կղզիներում դեռ աշխատում են այն ժամանակների անձոռնի շոգեմեքենաները: Ստորգետնյա քաղաքները միացնող թունելները ձգվում են համարյա ողջ մոլորակով մեկ: Այդ լաբիրինթոսում Տուսկուբին փնտրելը անմտություն է: Միայն նա գիտի Մագր թագուհու լաբիրինթոսի հատակագիծն ու գաղտնարանները, մի թագուհու, որը երկու աշխարհի տիրակալ էր, իսկ մի ժամանակ էլ իշխում էր ողջ Մարսին: Մոացերայի տակից թունելների ցանցը տանում է դեպի հինգ հարյուր կենդանի և ավելի քան հազար մեռած ու ամայացած քաղաքներ: Այնտեղ ամենուր կան գենքերի պահեստներ, նավակայաններ: Մեր ուժերը ցրված են, մենք վատ ենք զինված: Տուսկուբը բանակ ունի, նրա կողմն են գյուղական կալվածատերերը, խավրայի պլանտատորները, և բոլոր նրանք, ովքեր երեսուն տարի սրանից առաջ, ավերիչ պատերազմից հետո դարձան քաղաքային տների սեփականատերեր: Տուսկուբը խելացի է և նենգ: Նա դիտմամբ հրահրեց բոլոր այդ իրադարձությունները, որպեսզի ընդմիջտ ջախջախի դիմադրության մնացուկները... Ա՛խ, ոսկե դար... Ոսկե դար...

Գորը օրորեց թմրած գլուխը: Նրա այտերին երևացին մանուշակագույն բծեր: Խավրան սկսեց ազդել նրա վրա:

— Տուսկուբը ոսկե դար է երազում և ուզում է Մարսի վերջին դարաշրջանը ոսկեդար դարձնել: Միայն ընտրյալները կարող են հասնել նրան, միայն երանության արժանիները: Հավասարությունը անհաս բան է, հավասարություն չկա: Համընդհանուր երջանկությունը դա խելագարների, խավրայով հարբածների գառանցանքն է: Տուսկուբն ասում էր. հավասարության ծարավը և

համընդհանուր արդարությունը կործանում են քաղաքակրթության բարձրագույն նվաճումները:—
Գորի շրթունքներին կարմրավուն փրփուր երևաց:— Ետ գնալ դեպի անհավասարությունը, դեպի
անարդարությունը: Թող անցած դարերը իխիների նման թափվեն մեզ վրա: Մտրուկներին շղթայել,
կապկապել մեքենաներն ու հաստոցները և իջեցնել հանքահորերը: Թող թախիժ լինի ամենուրեք:
Իսկ երանելիներին՝ լիուլի երջանկություն: Ահա ոսկե դարը: Ատամների կրճտոց ու խավար: Թող
անիծյալ լինեն իմ հայրն ու մայրը, որ աշխարհ են բերել ինձ: Թող անիծյալ լինեմ ես:

Գուսեր նայում էր նրան և փստփստացնելով ծամծամում գլանակը.

— Այ, ես ձեզ ասեմ, դուք երկար եք ապրել այստեղ...

Գորը զառամյալ ծերունու պես կռացած փամփշտատուփի վրա՝ երկար ժամանակ չէր խոսում:

— Այո, Երկրի Որդի: Մենք, վաղեմի Տումայի բնակիչներս, չլուծեցինք առեղծվածը: Այսօր ես ձեզ
տեսա կովի մեջ: Ձեր մեջ կրակի պես պարում էր խիհղը: Դուք երազկոտ եք, և անփույթ: Դուք՝
Երկրի որդիներդ, երբևէ կլուծեք առեղծվածը: Բայց ոչ մենք, մենք ծերացած ենք: Մեր մեջ մոխիր է:
Մենք ձեռքից բաց ենք թողել մեր ժամը:

Գուսեր ձգեց գոտին:

— Դե, լավ: Մոխի՛ր: Վաղը նախատեսեք, թե ի՞նչ անենք:

— Առավոտյան հայելահեռախոսով պետք է փնտրել Տուսկուբին և նրա հետ բանակցությունների
մեջ մտնել փոխադարձ զիջումների համար...

— Դուք, ընկեր, անվերջ գլխից դուրս եք տալիս,— վրա տվեց Գուսեր,— ահա վաղվա ձեր
դիրքավորումը՝ դուք Մարսով մեկ հայտարարեք, որ իշխանությունն անցել է բանվորների ձեռքը:
Պահանջեցեք անհապաղ հնազանդություն: Իսկ ես կհավաքեմ քաջերին և ողջ նավատորմով
կշարժվեմ դեպի բևեռները, կգրավեմ էլեկտրամագնիսական կայանները: Անհապաղ կսկսեմ
հեռախոսել Երկիր, Մոսկվա, որ ինչքան հնարավոր է շուտ, մեզ համար օգնական ուժեր ուղարկեն:
Կես տարում նրանք ապարատ կսարքեն, իսկ թռչելը՝ ընդամենը...

Գուսեր օրորվեց ու ծանրորեն նստեց սեղանին, ողջ տունը ցնցվեց: Կամարների խավարից
թափվեցին ծեփազարդերը: Հատակին քնած մարսեցիները վեր թռան, շուրջը նայեցին: Նոր, առավել
ուժգին մի դղրդոց ցնցեց տունը: Ջրնագցին փշրվող ապակիները: Բացվեցին դռները: Ցածր,
ճայթուններով ուժգնացող որոտը լցվեց սրահը: Հրապարակից լավեցին կանչեր ու կրակոցներ:

Մարսեցիները, նետվելով դեպի դռները, ետ-ետ գնացին ու ցրվեցին: Ներս մտավ Երկրի Որդին՝
Լոսը: Դժվար էր նրա դեմքը ճանաչել: Խոշոր աչքերը փոս էին ընկել ու խամրել, բայց արտասովոր
լույս կար նրանցում: Մարսեցիները ետ-ետ քաշվեցին ու պազեցին: Լոսի ձերմակ մազերը բիզ-բիզ
էին կանգնել:

— Քաղաքը պաշարված է,— ասաց Լոսը բարձր ու հաստատ,— երկինքը լիքն է նավերի
կրակներով: Տուսկուբը պայթեցնում է բանվորական թաղամասերը:

Լոսը և Գորը այն պահին դուրս եկան տան սանդուղքին՝ այունազարդ կամարների տակ, երբ լսվեց երկրորդ պայթյունը: Հովհարաձև կապտավուն բոցը տարածվեց քաղաքի Հյուսիսային մասում: Պարզորոշ կերպով նշմարվեցին բարձրացող ծխի ու փոշու քուլաները: Որոտից հետո սուրավով անցավ մրրիկը: Շառագույն հրացուլքը բռնեց երկնքի կեսը:

Այժմ ոչ մի ձայն չկար զորքերով լեցուն աստղաձև հրապարակում: Մարսեցիները լուռ նայում էին հրացուլքին: Մոխրանում էին նրանց բնակարանները, ընտանիքները: Հույսերը չքանում էին որպես սև ծխի քուլաներ:

Գուսը, Լոսի և Գորի հետ կարճ խորհրդակցելուց հետո կարգադրեց օդային նավատորմը նախապատրաստել մարտի: Բոլոր նավերը զինանոցում էին: Այդ վիթխարի ճպուռներից միայն հինգն էին գտնվում հրապարակում: Գուսը նրանց հետախուզության ուղարկեց: Նավերը վեր սուրացին, կրակի պես փայլատակեցին նրանց թևերը:

Զինանոցից պատասխանեցին, որ հրամանը ստացված է, և զորքերն սկսել են տեղավորվել նավերի մեջ: Անցավ բավականին երկար ժամանակ: Ծխացող հրացուլքը բորբոքվում էր: Քաղաքում չարագուշակ լռություն էր տիրում: Գուսը ամեն բոլոր մարսեցիներին ուղարկում էր հայելահեռախոսի մոտ, որ շտապեցնեն զորքերի տեղադրումը: Նա՝ ինքը, որպես վիթխարի ուրվական, հրապարակում դես ու դեն էր նետվում, խոպոտ ձայնով գոռոռում, շարասյունների վերածում զորքերի անկանոն կուտակումները: Մոտենալով սանդուղքին, նա բաց արեց ասամները, բեղերը ցցվեցին:

— Ասացեք զինանոցում գտնվողներին (այնուհետև լսվեց Գորի համար անհասկանալի մի արտահայտություն), ասացեք, որ շտապեն, շո՛ւտ վերջացնեն, շո՛ւտ...

Գորը մոտեցավ հեռախոսին: Վերջապես հեռախոսագիր ստացվեց, որ զորքերի տեղադրումն ավարտված է, ու նավերը օդ են բարձրանում: Եվ իրոք, քաղաքի վրա ոչ այնքան բարձր, թանձր հրացուլքի մեջ հայտնվեցին ճախրող ճպուռները: Գուսը, ոտները չռած, գլուխը ետ գցած՝ բավականությամբ նայում էր կռունկային այդ երամին: Այդ ժամանակ լսվեց երրորդ, առավել ուժգին պայթյունը:

Կապտավուն բոցի թրերը կտրատում էին նավերի ուղին: Նավերը վեր սլացան, պտույտ գործեցին ու անհետացան: Նրանց տեղում բարձրացան փոշու խրձեր, ծխի քուլաներ:

Սյունաշարի առաջ հայտնվեց Գորը: Նա գլուխը ուսերի մեջ էր քաշել: Դեմքը ցնցվում էր, բերանը՝ ձգվում: Երբ լռեց պայթյունի որոտը, Գորն ասաց.

— Զինանոցը պայթեցված է, նավատորմը՝ կործանված:

Գուսը չոր կոնչաց և սկսեց կրճոտել բեղերը: Թիկունքով սյանը հենված՝ Լոսը կանգնել ու նայում էր հրացուլքին: Գորը բարձրացավ ոտքերի ծայրերին և կանգնեց նրա ապակեփայլ աչքերին դեմ առ դեմ:

— Վա՛յ նրան, ով այսօր կենդանի կմնա:

Լոսը չպատասխանեց: Գուսը հաստատակամորեն տարուբերեց գլուխը և գնաց հրապարակ: Հնչեց նրա հրամանը: Եվ ահա, մարսեցիները գորասյուն առ գորասյուն գնացին դեպի փողոցի խորքը, դեպի բարիկաղները:

Թռչող թամբին նստած Գուսնի թևավոր ստվերը ճախրում էր հրապարակի վրա:

— Շտապէք, շտապէք, — գոռում էր նա վերևից, — շուտ եկէք, սատկած սատատաներ:

Հրապարակը դատարկվեց: Հրդեհի վիթխարի մի հատված այժմ լուսավորում էր հակառակ կողմից մոտեցող ճպուռների շարքերը: Այդ նավերը ավիք առ ավիք բարձրանում էին հորիզոնից և սավառնում քաղաքի վրա:

Դրանք Տուսկուրի նավերն էին:

Գորն ասաց.

— Փախէք, Երկրի Որդի, դուք դեռ կարող եք փրկվել:

Լոսը միայն ուները թոթվեց: Նավերը մոտեցան ու սկսեցին ցածրանալ: Փողոցի խավարի միջից դուրս թռավ մի հրագունդ և սլացավ նրանց կողմը, դրան հաջորդեց երկրորդը, երրորդը: Դա ապստամբների մեքենաներն էին կլոր կայծակներ նետում: Թևավոր նավերի շարանները շրջան գործեցին հրապարակի վրա և, իրարից բաժանվելով, սկսեցին սավառնել փողոցների ու տանիքների վրա: Կրակոցների անընդմեջ բռնկումներից փայլփլում էին նրանց կողերը: Մի թիանավ շուռեկավ ու փշրված թևերով ընկավ տանիքների արանքը: Ուրիշները իջան հրապարակի անկյուններում, որոնց միջից դուրս թռան արծաթավուն բաճկոններով զինվորները: Նրանք վազեցին դեպի փողոց: Հրաձգություն սկսվեց լուսամուտներից և անկյուններից: Թռչում էին նաև քարեր: Ավելի ու ավելի էին շատանում նավերը, հրապարակով անդադար սահում էին դրանց բոսորային ստվերները:

Լոսը տեսավ, որ մոտակա տան աստիճանավոր պատշգամբում բարձրացավ Գուսևի թիկնեղ կերպարանքը: Հինգ-վեց նավ հենց այդ պահին դարձան նրա կողմը: Նա մի վիթխարի քար բարձրացրեց գլխից վեր և շպրտեց ամենամոտիկ նավի վրա: Նույն պահին շողշողուն թևերը շրջափակեցին նրան բոլոր կողմերից:

Այդ ժամանակ Լոսը հրապարակի միջով վազեց այնտեղ: Նա համարյա թռչում էր, ինչպես դա լինում է երագում: Նրա գլխավերևում պտուտակների ջղագար ռոնոցով, ճայթյունով ու շողշողուն բռնկումներով պտտվում էին նավերը: Լոսը սեղմել էր ատամները, աչքերը պարզորոշ տեսնում էին ամեն մի մանրուք:

Մի քանի ոստյունով Լոսն անցավ հրապարակը և նորից անկյունի տան պատշգամբում տեսավ Գուսևին: Նրան բոլոր կողմերից շրջապատել էին մարսեցիները և մագլցում էին դեպի նա: Գուսևը արջի նման շուռումուռ էր գալիս այդ կենդանական կույտի վրա, շպրտում նրանց, խփում բռունցքներով: Ահա նա մեկին պոկեց իր կոկորդից, շպրտեց մի կողմ, իսկ մնացածներին քարշ տալով իր ետևից՝ ցած իջավ պատշգամբով: Հետո ընկավ:

Լոսը բղավեց հուժկու ձայնով: Կառչելով տների ելուստներին, նա բարձրացավ պատշգամբի վրա: Ծվծվացող մարմինների կույտի միջից կրկին հայտնվեց Գուսևի գլուխը՝ դուրս ընկած աչքերով, ծեծկրտված բերանով: Մի քանի զինվոր կառչեցին Լոսից: Նա նողկանքով դեն շպրտեց նրանց, նետվեց շարժուն կույտի վրա և սկսեց խփել զինվորներին: Նրանք տաշեղների պես թռչում էին բազրիքի վրայով: Պատշգամբը դատարկվեց: Գուսևը ճիգ արեց բարձրանալ. գլուխն օրորվում էր: Լոսը նրան առավ ձեռքերի վրա և ցատկեղ դեպի բաց դուռը: Նա Գուսևին տարավ վերջալույսի շողերով ողողված մի ցածրիկ սենյակ ու դրեց գորգի վրա:

Գուսևը խռխռում էր: Լոսը դուրս գնաց: Պատշգամբի վրա սավառնում էին նավերը, որոնց միջից ցած էին նայում սրաքիթ դեմքեր: Հարձակում էր սպասվում:

– Մստիսլավ Սերգենիչ,— կանչեց Գուսեր, որն արդեն նստել էր և, ցնցելով գլուխը, արյուն էր թքում:— Մերոնց բոլորին կոտորեցին... Էս ի՞նչ բան է, Մստիսլավ Սերգենիչ... Ինչպես հարձակվեցին, է՛, հարձակվեցին ու սկսեցին հնձել... Ումանք սպանվեցին, ումանք թաքնվեցին: Մենակ ես մնացի: Ա՛խ, ափսո՛ս...— Նա բարձրացավ, ամբողջ հասակով ցցվեց սենյակի մեջ, ապա օրորվելով, գնաց ու կանգ առավ մի բրոնզե, ըստ երևույթին, ինչ-որ նշանավոր մարսեցու արձանի առաջ:— Դե սպասիր,— գրկեց արձանը և նետվեց դեպի դուռը:

— Ալեքսեյ Իվանովիչ, ի՞նչ ես անում:

— Թող: Չեմ կարող...

Նա հայտնվեց պատշգամբում: Մոտերքում լողացող նավի թևերի ետևից փայլատակեցին կրակոցները: Ապա հնչեց մի հարված, ճայթյուն:

— Վա՛խ,— բացականչեց Գուսեր:

Լոսը նրան քարշ տվեց սենյակ և փակեց դուռը:

— Ալեքսեյ Իվանովիչ, հասկացեք, մենք ջախջախված ենք, ամեն ինչ վերջացած է... Պետք է Աեփտային փրկել:

— Դուք էլ ի՞նչ եք ձեր կնկանով գլուխ տանում...

Նա իսկույն նստեց, ձեռքերով ծածկեց դեմքը, ֆշացրեց, դոփեց ոտքով, ապա ասես հոգու խորքից պորթկաց.

— Դե, թող կաշիս էլ քերթեն: Աշխարհում ամեն ինչ սխալ է, անարդար: Անարդար է և այս մոլորակը, թող անիծյալ լինի նա... «Փրկիր, ասում են, փրկիր մեզ...» Պոկ չեն գալիս... «Ինչ կերպ էլ լինի, ասում են, միայն թե ապրենք...»: Ապրել... Ես ի՞նչ կարող եմ անել... Ահա թափեցի արյունս: Ճնշեցին: Դե, Մստիսլավ Սերգենիչ, չէ՞ որ ես շան որդու մեկն եմ, ես չեմ կարող դա տեսնել... Ատամներովս կպատառոտեմ տանջողներին...

Նա դարձյալ ֆշացրեց և գնաց դեպի դռները, Լոսը բռնեց նրա ուսերից, ցնցեց ու խիստ-խիստ նայեց նրա աչքերին:

— Այն, ինչ տեղի ունեցավ, մղձավանջ էր ու զառանցանք: Գնա՛նք: Գուցե մի կերպ գլուխներս կազատենք: Գնա՛նք: Դեպի տուն, դեպի Երկի՛ր:

Գուսերի դեմքը ծածկված էր արյունով ու ցեխով:

— Գնանք:

Նրանք սենյակից դուրս եկան դեպի օղակաձև հարթակը, որ կախված էր մի լայն հորի վրա: Պտուտակավոր սանդուղքը ոլորաձև իջնում էր դեպի ներսը: Հրացուլքի նվազ լույսը ապակե ծածկոցի միջով թափանցում էր գլուխ պտտեցնող այդ խորության մեջ:

Լոսն ու Գուսերը նեղլիկ աստիճաններով սկսեցին իջնել: Ներքևում լռություն էր տիրում, իսկ վերևում ավելի ուժգնորեն ճարձատում էին կրակոցները, ճոնչալով զարկվում նավերի կտուրներին ու հատակին: Ըստ երևույթին, սկսվել է գրոհը Երկրի Որդիների վերջին ապաստարանի վրա:

Լոսն ու Գուսը փախչում էին ոլորապտույտ ու անծայր աստիճաններով: Լույսը աղոտանում էր: Եվ ահա նրանք ներքևում նշմարեցին մի փոքրիկ կերպարանք, որը դժվարությամբ սողալով ընդառաջ էր գալիս: Մեկ էլ նա կանգ առավ ու թույլ ձայնով ասաց.

— Նրանք հիմա կներխուժեն: Շտապեցեք: Ներքևում մուտք կա դեպի լաբիրինթոսը:

Դա Գորն էր, որը գլխից վիրավորված էր: Շրթունքները լիզելով նա ասաց.

— Գնացեք մեծ թունելներով: Հետևեցեք պատերի վրա եղած նշաններին: Գնաք բարով: Եթե Երկիր վերադառնաք, պատմեցեք մեր մասին: Գուցե դուք Երկրի վրա երջանիկ լինեք: Իսկ մեզ բաժին են ընկել չոր անապատներ, մահ, վիշտ... Ախ, մենք ձեռքից բաց թողինք հարմար պահը... Պետք էր դաժան ու տիրաբար, տիրաբար սիրել կյանքը...

Ներքևում աղմուկ լսվեց: Գուսը ցած վազեց: Լոսն ուզեց իր հետ քաշել, տանել Գորին, բայց մարսեցին սեղմեց ատամները, կառչեց բազրիքից:

— Գնացեք, ես ուզում եմ մեռնել:

Լոսը հասավ Գուսին: Նրանք անցան վերջին օղակաձև հրապարակը: Այնտեղից մի սանդուղք ուղիղ իջնում էր դեպի հորի հատակը: Այստեղ նրանք մի մեծ սալաքար տեսան: Դժվարությամբ բարձրացրին սալը, մթին անցքից փչեց չոր քամի:

Գուսը առաջինը սողաց ներքև: Լոսն, իր ետևից շարժելով սալը, տեսավ, թե ինչպես օղակաձև հրապարակի վրա հայտնվեցին աղջամուղջում հազիվ նշմարվող զինվորների կերպարանքները:

Նրանք վազեցին ոլորապտույտ աստիճաններով: Գորը նրանց կողմը պարզեց իր ձեռքերը և ընկավ հարվածների տակ:

ՄԱԳԻ ԹԱԳՈՒՀՈՒ ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ

Լոսն ու Գուսը զգուշորեն առաջ էին շարժվում նեխահոտ ու հեղձուկ խավարում:

— Պտտվում ենք, ետ ենք դառնում, Մստիսլավ Սերգևիչ...

— Նե՞ղ է:

— Լայն է, ձեռք չի հասնում:

— Էլի ինչ-որ սյունաշարեր են երևում: Որտե՞ղ ենք մենք...

... Մոտ երեք ժամ էր անցել այն պահից, ինչ նրանք լաբիրինթոս էին իջել: Լուցկիները վերջացել էին: Գուսը լապտերիկը կորցրել էր դեռ տուրուղմիոցի ժամանակ: Նրանք շարժվում էին անթափանց խավարում:

Թունելներն անվերջ ճյուղավորվում էին, խաչվում, գնում դեպի խորքերը: Երբեմն լսվում էր ընկնող կաթիլների պարզ ու միօրինակ աղմուկը: Լայնացած բիբերով նրանք նշմարում էին աղոտ, գորշավուն ուրվագծեր, բայց այդ աղոտ բծերը միայն խավարի պատրանքներ էին:

— Կանգ առ:

— Ի՞նչ կա:

— Հատակ չկա:

Նրանք ականջ դրեցին: Դեմքներին փչեց հաճելի, չոր քամին: Հեովից, ասես խորքից, հասան ինչ-որ հառաչներ, ներշնչման ու արտաշնչման ձայներ: Անորոշ տազնապով նրանք զգացին, որ իրենց առաջ անդունդ կա: Գուսերը ոտքով մի քար շոշափեց ու նետեց խավարի մեջ: Մի քանի վայրկյան անց լսվեց անկման թույլ ձայնը:

— Անդունդ է:

— Իսկ այդ ո՞վ է շնչում:

— Չգիտեմ:

Նրանք շուտ եկան ու դեմ առան մի պատի: Շոշափեցին աջ ու ձախ. ավերը սահում էին փլփլվող ճեղքերի վրայով ու կամարների ելուստներով: Անտեսանելի անդունդի եզրը բոլորովին մոտ էր պատին. մերթ աջից, մերթ ձախից, մերթ նորից աջից: Հասկացան, որ մոլորվել են և չեն գտնի այն անցքը, որով եկան ու կանգնեցին այդ նեղ քիվի վրա:

Նրանք հենվեցին խորդուբորդ պատին՝ կողք-կողքի, ուս-ուսի տված: Կանգնել ու լսում էին խորքից եկող քնաբեր հառաչները:

— Վե՞րջ, Ալեքսեյ Իվանովիչ:

— Այո, Մստիսլավ Սերգեևիչ, կարծես թե՛ վերջ:

Մի պահ լռելուց հետո Լոսը տարօրինակ, ցածր ձայնով հարցրեց.

— Հիմա ոչինչ չե՞ք տեսնում:

— Ո՛չ:

— Ձախ կողմում, հեռվում:

— Ո՛չ, ո՛չ...

Լոսը ինչ-որ բան շնչաց ինքն իրեն՝ մի ոտքից մյուսի վրա հենվելով:

— Դաժան ու տիրաբար սիրել կյանքը... Միայն այդպես...

— Դուք ո՞ւմ մասին եք ասում:

— Նրանց մասին: Եվ, իհարկե, մեր մասին էլ:

Գուսերը թառանջ արձակելով, նույնպես հենվեց մյուս ոտքին:

— Ահա նա, լսո՞ւմ եք, շնչում է:

— Ո՞վ, մահը:

— Մատանան գիտի, թե ով,— մրմնջաց Գուսերը, ասես մտորելով:— Ես այդ մասին շատ եմ մտածել, Մստիսլավ Սերգեևիչ: Հրացանդ գրկած պառկած ես դաշտում, անձրև է, մութ: Ինչի մասին էլ որ

մտածում ես, կրկին մահն է միտո՞ղ գալիս: Եվ տեսնում ես քեզ, վեր ես ընկած ճամփեզրին փայտացած, ատամներդ բաց, ինչպես գումակի ձի: Չգիտեմ, ինչկլիինի մահից հետո, դա չգիտեմ: Բայց այստեղ, քանի դեռ կենդանի եմ, պետք է իմանամ՝ ձիու լե՞ջ եմ ես, թե՞ մարդ կամ գուցե դա միննո՞ւյն է: Երբ մեռնելու լինեմ՝ աչքերս կոլորեմ, ատամներս կսեղմեմ իրար ու ջղաձգորեն կտապալվեմ, վերջ... Այդ բուպեին կփոխվի՞ արդյոք ամբողջ աշխարհը, այն ամենը, ինչ որ ես տեսել եմ իմ աչքերով, թե՞ չէ: Այ թե ինչն է սարսափելի, ընկնում եմ մեռած, ատամներս բաց, բայց դա ե՞ս եմ. չէ՞ որ ես ինձ հիշում եմ երեք տարեկանից... Իսկ ամեն ինչ աշխարհում գնո՞ւմ է իր կարգով... Դա անհասկանալի է, ինը հարյուր տասնչորս թվից մարդ ենք սպանում և մենք ընտելացել ենք դրան. ի՞նչ է մարդը: Հրացանով նշան ես բռնում վրան. ահա և քեզ մարդը: Ո՛չ, Մստիսլավ Սերգենիչ, դա այնքան էլ հասարակ բան չի: Մի անգամ, գիշերը, սայլի վրա պառկած, վիրավոր, քիթս դեպի վեր՝ նայում էի աստղերին: Ձանձրո՞ւյթ, նողկա՞նք: Մտածում եմ ոջիլն ու ես միննույն բաները չե՞նք: Ոջիլը ուտել, խմել է ուզում, ես էլ: Ոջիլի համար էլ մեռնելը դժվար բան է, ինձ համար էլ: Վերջը մեկ է: Մեկ էլ տեսա աստղերը թափվում էին կորեկի պես. աշուն էր, օգոստոս: Ինչպե՞ս էր դողում փայծաղս: Ինձ թվաց, Մստիսլավ Սերգենիչ, թե բոլոր աստղերը իմ մեջ են: Ո՛չ, ես ոջիլ չեմ: Ո՛չ: Ինչպե՞ս էին թափվում արցունքներս: Ի՞նչ է սա: Մարդը ոջիլ չէ: Իմ գանգը փշրելը սարսափելի բան է, մեծ ոտնձգություն: Այնինչ թունավոր գազեր են հնարել: Ես ապրել եմ ուզում, Մստիսլավ Սերգենիչ: Ես չեմ կարող մնալ այս անիծյալ խավարի մեջ... Եվ իրոք, ինչո՞ւ ենք մենք այսպես սառել կանգնել:

– Նա այստեղ է,— ասաց Լուսը նույն տարօրինակ ձայնով:

Այդ ժամանակ հեռվից, անհամար թունելների միջով թնայուն եկավ: Նրանց ոտքերի տակ դողաց քիվը, ցնցվեց պատը: Մթության մեջ քարերը թափվեցին: Որոտի ալիքները գլորվելով մոտեցան, ապա հեռացան ու լռեցին: Դա յոթերորդ պայթյունն էր: Տուսկուրը իր խոսքի տերն էր: Ըստ պայթյունի հեռավորության, կարելի էր որոշել, որ Սոսցերան մնացել էր հեռու արևմուտքում:

Որոշ ժամանակ աղմկում էին թափվող քարերի կտորները: Լռություն տիրեց, անդորրն ավելի խորացավ: Գուսննառաջինը նկատեց, որ ներքևից եկող թառանչները դադարեցին: Այժմ այնտեղից գալիս էին տարօրինակ ձայներ՝ շշնջում ու թշնոց, թվում էր, թե այնտեղ ինչ-որ թեթև հեղուկ է եռում: Գուսնն ասես խենթացավ, ձեռքերը պատին խփեց ու վազեց: Աղաղակելով, հայիոյելով նա քարեր էր շպրտում:

— Քիվը բոլորածն է: Լսո՞ւմ եք: Պետք է որ ելք լինի: Մատանան տանի, գլուխս կտրեցի:— Որոշ ժամանակ նա լուռ առաջ շարժվեց, ապա սկսեց հուզված խոսել ինչ-որ տեղից: Իսկ Լուսը շարունակում էր անշարժ կանգնած մնալ պատի տակ:— Մստիսլավ Սերգենիչ... Բռնակ... Հոսանքահատիչ... աստված վկա, հոսանքահատիչ է...

Լսվեց խզզացող, ժանգոտ մի ճոխնչ: Փոշոտ լույս բռնկվեց աղյուսե նեղ գմբեթի տակ: Նրա հարթ կամարների եզրերը հենվել էին քիվի նեղ օղակին, որ կախված էր կլոր, տասը մետր տրամագծով հանքախորշի վրա:

Գուսնը դեռ բռնած պահում էր հոսանքահատիչի կոթը: Հանքահորի այն կողմում, գմբեթի կամարի տակ, պատին դեմ առավ Լուսը: Նա ափով աչքերը ծածկեց կուրացուցիչ լույսից: Հետո Գուսնը տեսավ, թե ինչպես Լուսը ձեռքը ետ քաշեց ու նայեց ներքև՝ հանքահորի մեջ: Կոացած և ուշադիր նայում էր նա: Ձեռքը դողողաց, կարծես մատներով ինչ-որ բան էր թափահարում: Երբ գլուխը վեր բարձրացրեց, նրա ձեռնակ մազերը փայլում էին, աչքերը չռվել էին, ասես մահվան սարսափից:

Գուսնը կանչեց նրան:

— Էդ ի՞նչ էք նայում,— և այդ պահին նոր միայն նայեց աղյուսաշար հորի խորքը: Այնտեղ ճոճվում, գլորվում էր մուգ դարչնագույն մի մորթի: Այդտեղից էր գալիս անծանոթ ձայնը, ուժգնացող ու չարագուշակ մշոշոջ: Մորթին բարձրանում էր, փքվում: Այն ամբողջովին ծածկված էր ձիային խոշոր աչքերով, բրդոտ թաթերով...

— Մա՛հ,— բացականչեց Լուսը:

Դա սարդերի մի վիթխարի կույտ էր: Նրանք, ըստ երևույթին, բազմացել էին տաք հանքահորի խորքում, պայթյունը տազնապահար էր արել նրանց, և նրանք սկսել էին բարձրանալ ամբողջ զանգվածով: Նրանք էին Ֆշշում և անսովոր ձայներ հանում... Ահա սարդերից մեկը իրանկյունաձև ցցված թաթերի վրա բարձրացավ՝ փախավ քիվի վրայով:

Դեպի քիվ տանող մուտքը հեռու չէր Լուսից: Գուսնը ձայն տվեց.

— Փախիր,— և թափով ցատկեց հանքահորի վրայով՝ գլուխը կպցնելով գմբեթի կամարին: Ապա պազեց Լուսի մոտ, բռնեց նրա ձեռքը և քաշեց դեպի թունելի մուտքը: Վազեցին ինչքան ուժ ունեին:

Թունելի կամարների տակ իրարից բավականին հեռու վառվում էին խոշոր լապտերներ: Թանձր փոշին նստել էր հատակին, սյունաշարերի և արձանների բեկորներին, նեղ դռների շեմքերին, որոնք տանում էին այլ անցուղիներ: Գուսնն ու Լուսը երկար քայլեցին այդ միջանցքով, որը վերջացավ հարթ կամարներ ու նեղ սյուներ ունեցող մի դահլիճով: Մեջտեղում կանգնած էր պարարտ, դժնաղեմ մի կնոջ կոտրատված արձան: Խորքում սևին էին տալիս ինչ-որ օթևանների մուտքեր: Այստեղ էլ էր փոշի նստել թե՛ Մագր թագուհու արձանին և թե՛ կահույքի ջարդված կտորտանքներին:

Լուսը կանգ առավ, նրա աչքերը ապակեփայլ էին, բիբերը՝ լայնացած:

— Նրանք այնտեղ միլիոններ են,— ասաց նա նայելով շուրջը,— նրանք սպասում են, նրանց ժամը կգա, նրանք կտիրանան կյանքին, կբնակեցնեն Մարսը:

Գուսնը նրան տարավ միջանցքից դուրս եկող մի ավելի լայն թունել: Լապտերները հազվադեպ էին պատահում և աղոտ էին: Երկար գնացին: Անցան կլոր կամուրջը, որի տակ գտնվող լայն փոսի խորքում ընկած էին վիթխարի մեքենաների կմախքներ: Հեռվում դարձյալ ձգվում էին փոշոտ ու գորշ պատեր: Վհատություն իջավ նրանց հոգուն: Հոգնածությունից ծալվում էին նրանց ոտքերը: Լուսը մի քանի անգամ ցածրաձայն կրկնեց.

— Թողեք պառկեմ:

Նրա սիրտը կանգ էր առնում: Մարսափելի թախիծը համակել էր նրան, փոշու միջով, սայթաքելով քարշ էր գալիս Գուսնի ետևից: Դեմքից թափվում էին սառը քրտինքի կաթիլները: Լուսը նայեց այնտեղ, որտեղից վերադառնալ չէր լինի: Այնուամենայնիվ, ավելի հզոր մի ուժ նրան կտրեց այդգծից, և նա կիսամեռ քարշ էր գալիս ամայի ու անձայր միջանցքներով:

Թունելը միանգամից թեքվեց: Գուսնը ճչաց: Կիսով չափ կլոր շրջանակի միջից նրանց աչքերի առաջ բացվեց մուգ կապույտ ու շլացուցիչ երկինքը, ձյունափայլ ու սառցապատ լեռնագագաթները, որ այնքան լավ մնացել էին Լուսի հիշողության մեջ: Նրանք լաբիրինթոսից դուրս եկան դեպի Տուսկուրի դաստակերտը:

ԽԱՌ

— Երկրի Որդի, Երկրի Որդի,— կանչեց մի բարակ ձայն:

Գուսնն ու Լոսը դաստակերտին մոտեցան պուրակի կողմից: Լաջվարդ թփուտներից դուրս ցցվեց մի սրաքիթ դեմք: Աելիտայի մեքենագետն էր՝ գորշ մուշտակով տղան: Նա ծափ զարկեց և սկսեց պարել, փոքրիկ դեմքը կնճռոտեց գետակինճի նման: Ճյուղերը ետ տանելով, նա ցույց տվեց կրկեսի ավերակներում թաքցրած թևավոր նավակը:

Նա պատմեց, որ գիշերը խաղաղ անցավ, իսկ լուսաբացից առաջ հնչեց հեռավոր մի որոտ, և հրացույք երևաց: Կարծելով, թե սպանվել են Երկրի Որդիները, նա ցատկել էր նավակը, թռել դեպի Աելիտայի ապաստարանը: Աելիտան նույնպես լսել էր որոտը և ժայռի բարձունքից տեսել հրդեհը: Նա տղային ասել էր. «Դաստակերտ վերադարձիր և սպասիր Երկրի Որդուն: Եթե Տուսկուրի ծառաները քեզ բռնեն, մեռիր լուռ ու մունջ: Իսկ եթե Երկրի Որդին սպանված լինի, մի կերպ մոտեցիր նրա դիակին, գրպանից հանիր քարե սրվակը և բեր ինձ»:

Լոսը, ատամները սեղմած, լսեց տղայի պատմածը: Հետո Լոսն ու Գուսնը գնացին լճափ, լվացին իրենց վրայի արյունն ու փոշին: Գուսնը ծառից կտրեց ձիու ոտքի հաստության մի մահակ: Ապա նավակ նստեցին, սլացան դեպի շողափայլ կապույտը:

Գուսնն ու մեքենագետը նավակը տարան քարայր և պառկելով մուտքի մոտ, բաց արին քարտեզը: Այդ ժամանակ վերնից, ժայռն ի վար սահեց Իխան. Գուսնին տեսնելով, նա երեսն առավ ափերի մեջ: Արցունքները հեղեղի նման թափվեցին նրա սիրահարված աչքերից: Գուսնն ուրախ-ուրախ ծիծաղեց:

Լոսը միայնակ իջավ դեպի Սրբազան Դուռը տանող անդունդը: Ասես թե գեփյուռի թևով էր իջնում նա գառիվար աստիճաններով, նեղ անցուղիներով ու փոքրիկ կամուրջներով: Ի՞նչ կվիճակվի Աելիտային, իրենց. կփրկվե՞ն արդյոք իրենք, թե՞ կկործանվեն, նա չգիտեր. սկսում էր մտածել, ապա դադարում մտածելուց: Գլխավորը, ցնցողը կլինի այն, որ նա հիմա նորից կտեսնի իր «աստղալուսից ծնված էակին»: Նայել միայն նրա նիհար ու երկնագույն դեմքին, իրեն մոռանալ ուրախության ալիքների մեջ:

Սրընթաց անցնելով գոլորշու ամպերով պարուրված սապատաձև կամուրջը, որ զցված էր ստորգետնյա լճի վրա, Լոսը, ինչպես և նախորդ անգամ, ցածրիկ սյուների այն կողմում տեսավ լեռների լուսնկա հեռանկարը: Նա զգուշորեն դուրս ելավ անդունդի վրա կախված հարթակը: Ոսկու աղոտ փայլով շողում էր Սրբազան Դուռը:

Տոթ էր, անդորր: Լոսը ցանկություն էր զգում գորովանքով ու քնքշությամբ համբուրել շիկակարմիր մամուռը, սիրո վերջին ապաստանում մնացած ոտնահետքերը:

Ցածում երևում էին լեռների լերկ կատարները: Թանձր կապտության մեջ փայլփլում էին սառույցները: Տանջալի թախիծը ճնշում էր սիրտը: Ահա խարույկի մոխիրը, տրորված մամուռը, որի վրա Աելիտան երգեց ուլայի երգը: Ողնաշարավոր մի մողես \$22ալով փախավ քարերի վրայով, ապա կանգ առավ, շրջելով գլուխը:

Լոսը մոտեցավ ժայռին, կիսով չափ բացեց եռանկյունաձև դուռը, և կուզեկուզ մտավ անձավը:

Առաստաղից կախած ճրագի լույսով ողողված, սպիտակ բարձերի մեջ քնած էր Աելիտան: Նա պառկած էր մեջքի վրա՝ մերկ արմունկը գլխի տակ դրած: Լղարիկ դեմքը տխուր էր ու հեզահամբույր: Մեղմված թարթիչները դողդողում էին. երևի երագի մեջ էր:

Լոսը կռացավ, գորովանքով ու հուզված նայեց երջանկության և վշտի իր ընկերուհուն: Ի՞նչ տանջանքներ ասես չէր կրի հիմա, որ երբեք չմոայլվեր այդ հրաշալի դեմքը, որ այս սքանչելիքի, ջահելության, անմեղ էակի կործանման առաջն առներ: Այտին ընկած մոխրագույն մազերի հյուսքը շնչառությունից բարձրանում էր ու իջնում:

Լոսը մտածեց նրանց մասին, ովքեր խավար լաբիրինթոսի խորխորատում շնչում էին, շշնջում ու ֆշշում, սպասելով իրենց օրհասին: Նա տնքաց սարսափից ու վշտից. Աելիտան հառաչեց ու արթնացավ: Նրա աչքերը մի պահ անիմաստ նայեցին Լոսին: Ջարմանքից հոնքերը վեր բարձրացան: Երկու ձեռքով նա հենվեց բարձին ու նստեց:

— Երկրի Որդի,— ասաց նա քնքշորեն ու մեղմ.— իմ որդի, իմ սե՛ր...

Նա չծածկեց իր մերկությունը, միայն հուզմունքից կարմրեցին այտերը: Լոսին թվում էր, թե նրա բաց երկնագույն ուսերը, նորաբողբոջ կուրծքն ու նեղ ազդրերը աստղերի լույսից են ծնված: Լոսը շարունակեց ծնկած մնալ անկողնու մոտ, որովհետև չափազանց մեծ էր սիրած աղջկան նայելու բերկրանքը: Ամպրոպային խավարի նման Լոսի վրա էր փչում մի դառնանուշ բուրմունք:

— Երագումն քեզ տեսա,— ասաց Աելիտան,— դու ինձ ձեռքերիդ վրա առած՝ տանում էիր ապակե սանդուղքով ավելի ու ավելի վեր, լսում էի սրտիդ տրոփյունը: Արյունը հորդում էր սրտիդ մեջ և ցնցում: Ինձ համակեց անձկությունը: Ես սպասում էի, թե երբ դու դադար կառնես, երբ կվերջանա տանջանքը: Ես ուզում եմ հասկանալ սերը: Ինձ ծանոթ են միայն տանջանքի սարսափն ու ծանրությունը... Դու ինձ արթնացրիր:— Նա լռեց, հոնքերը վեր բարձրացան:— Այնպես տարօրինակ ես նայում: Օ՛, իմ հսկա...

Նա արագ ետ քաշվեց անկողնու հեռավոր ծայրը: Շուրթերը կիսով չափ բացվեցին, ասես թե պաշտպանվել էր ուզում, որպես մի փոքրիկ գազան: Լոսը ծանրորեն ասաց.

— Եկ ինձ մոտ:

Աելիտան շարժեց գլուխը:

— Դու սոսկալի նման ես Չաին:

Լոսն իսկույն ձեռքով ծածկեց դեմքը, որը կամքի լարում էր արտահայտում, և կարծես մի բոց համակեց նրան. այժմ նրա մեջ ամեն ինչ կրակի պես այրվում էր: Նա ետ քաշեց ձեռքը: Աելիտան կամացուկ հարցրեց.

— Ի՞նչ:

— Մի՛ վախեցիր:

Նա մոտեցավ և նորից շշնջաց.

— Ես վախենում եմ Խառյից: Ես կմեռնեմ:

— Մի վախեցիր: Խառն դա կրակ է, դա կյանքն է... Մի՛ վախեցիր Խառայից: Մոտեցիր, իմ սեր:— Լոսը ձեռքերը պարզեց նրա կողմը: Աելիտան անլսելի հառաչեց, խոնարհեց թարթիչները. ուշադիր, փոքրիկ դեմքը նիհարել էր: Հանկարծ նա վեր թռավ անկողնուց և փչեց ճրագը:

Աելիտայի մատները խճճվեցին Լոսի ձյունաթույր մազերի մեջ:

Քարայրի դռան ետևից աղմուկ լսվեց, ասես մեղուների բզզոց լիներ: Ո՛չ Լոսն էր լսում, ո՛չ Աելիտան: Ոռնացող աղմուկը ուժգնանում էր: Եվ ահա հրեշավոր կրետի նման, անդունդի ժայռերը քթով չանկռելով, դանդաղ բարձրանում էր մի ռազմանավ:

Նավը հավասարվեց հարթակին: Նավեզրից կախվեց մի սանդուղք, որով իջան Տուսկուրը և մետաղե կողերով գլխարկներ դրած, զրահակիր զինվորների մի ջոկատ:

Զինվորները կիսաշրջանաձև կանգնեցին քարանձավի առաջ: Տուսկուրը մոտեցավ եռանկյունի դռանը և խփեց ձեռնափայտի ծայրով:

Լոսն ու Աելիտան քնած էին խոր քնով: Տուսկուրը դարձավ զինվորներին ու ձեռնափայտով ցույց տալով քարայրը, հրամայեց.

— Վերցրեք դռանց:

ՓԱԽՈՒՍ

Ռազմանավը որոշ ժամանակ պտտվեց Սրբազան դռան ժայռերի վրա, ապա սավառնեց դեպի Ագորայի կողմերը և ինչ-որ մի տեղ իջավ: Միայն այդ ժամանակ Իխան և Գուսևը կարողացան ցած իջնել: Տրորված հարթակի վրա նրանք տեսան Լոսին, որը քարայրի մուտքի մոտ, մամուռների վրա երեսնիվայր ընկած էր արյան լճակում:

Գուսևը գրկեց ու բարձրացրեց նրան: Լոսը չէր շնչում, աչքերը փակ էին, կրծքին ու գլխին չորացել էր արյունը: Աելիտան չկար ոչ մի տեղ: Իխան լաց ու կոծով նրա իրերն էր փնտրում քարայրում: Նա չգտավ միայն կնգուղով թիկնոցը. հավանաբար Աելիտային մեռած, թե կենդանի, փաթաթել են թիկնոցով և դրել նավի մեջ:

Իխան կապոց արեց այն բոլորը, ինչ մնացել էր «աստղալույսից ծնված էակից», Գուսևը Լոսին շալակն առավ, և նրանք վերադարձան խավարում եռացող լճի վրայի կամրջով ու միգապատ անդունդի վրա կախված սանդուղքով, որով երբևէ վերադարձել էր Մագացիտը, բերելով իր հետ Առլների աղջկա՝ ճախարակին կապած գուլավոր գոգնոցը, որպես կյանքի ու խաղաղության ավետիք:

Վերևում Գուսևը քարայրից դուրս քաշեց նավը և նրա մեջ դրեց սավանի մեջ փաթաթած Լոսին, ձգեց գոտին, սաղավարտը պինդ քաշեց գլուխը և ասաց խստորեն.

— Կենդանի մնացածներս չենք հանձնվի: Ինչ խոսք, եթե Երկիր հասնենք... մենք նորից այստեղ կվերադառնանք... (դրան հետևեց երեք անհասկանալի բառ):— Նա ցատկեց նավի մեջ և կարգի բերեց դեկը:— Իսկ դուք, տղերք, գնացեք տուն, կամ ուր կուզեք: Բարի հիշեք:— Նա կռացավ, ձեռքով հրաժեշտ տվեց մեքենագետին և Իխային.— Քեզ հետս չեմ տանում, Իխոշկա, որովհետև թոչում եմ դեպի իսկական մահը: Շնորհակալություն սիրուդ համար, սիրելիս, դա մենք՝ Երկրի Որդիներս, երբեք չենք մոռանա: Մնաս բարով:

Արևի դեմ նա կկոցեց աչքերը, շարժեց ծնոտը և սլացավ դեպի կապույտը: Իխան և գորշ մուշտակ հագած մեքենագետը երկար ժամանակ նայում էին թռչող Երկրի Որդուն: Նրանք չնկատեցին, որ հարավային կողմի լուսնկա ժայռերից մի թևավոր կետ բարձրացավ ու կտրեց նրա ճանապարհը: Երբ Գուսեր սուզվեց արևի հեղեղի մեջ, Իխան այնպիսի հուսահատությամբ զարկվեց մամռոտ քարերին, որ տղան վախեցավ, թե նա փչեց իր վերջին շունչը ու հրաժեշտ տվեց վշտագին Տումային:

— Իխա, Իխա,— խղճալի ձայնով կրկնում էր նա,— խոտուա միրրատուա, մուրբա...

Գուսեր անմիջապես չնկատեց իր ճանապարհը կտրող նավը: Աչքը քարտեզին ու ներքևում լողացող Լիզիազիրայի ժայռերին հառած՝ նա ուղղություն բռնեց դեպի արևելք, դեպի կակտուսի դաշտերը, որտեղ թողել էին ապարատը:

Գուսերի ետևում, նավի մեջ մեջքով ինչ-որ բանի հենված՝ նստել էր Լուսի մարմինը, որը դիմացից փչող քամուց ծածկված էր սավանով: Նա անշարժ էր և քնածի տպավորություն էր թողնում, չէր զգացվում դիակի հրեշավոր անմտությունը: Գուսեր նոր միայն զգաց, թե ինչքան թանկ էր իր համար ընկերը:

Դժբախտությունը այսպես պատահեց. Երբ Գուսեր, Իխոշկան և մեքենագետը քարայրում նավի մոտ նստած՝ ծիծաղում էին, հանկարծ ներքևից կրակոցներ եկան: Ապա մի ճիչ լսվեց: Եվ մի րոպե անց անդունդի խորքից ուրուրի նման բարձրացավ մի ռազմանավ, և հարթակի վրա նետելով Լուսի անզգա մարմինը, անմիջապես հեռացավ:

Նավի միջից Գուսեր թքեց ներքև, այնքան որ նրան զզվելի թվաց Մարսը: «Միայն թե հասնեի ապարատին և Լուսին մի կույս սպիրտ տայի»: Նա ցնցեց Լուսի մարմինը, որը մի քիչ տաք էր. այն պահից, երբ Գուսեր նրան հարթակի վրայից վեր բարձրացրեց, նրա մեջ փայտացման նշաններ չկային: «Աստված տա շնչեր»: Գուսեր իր վրա զգացել էր մարսեցիների գնդակի թույլ ներգործությունը: «Բայց չափազանց երկար տևեց ուշաթափությունը»: Նա տազնապալի դարձավ դեպի արևը, որն արդեն մայրամուտ էր թեքվել: Եվ այդ պահին էլ տեսավ, որ վերևից մի նավ է գալիս:

Գուսերն իսկույնսեթ մեքենան շուտ տվեց դեպի հյուսիս, որ չհանդիպի նրան: Շուտ եկավ նաև եկող նավը: Ժամանակ առ ժամանակ նրա վրա երևում էին կրակոցների դեղնավուն քուլաներ: Գուսեր սկսեց ավելի վեր բարձրանալ, նկատի ունենալով, որ վայրէջքի ժամանակ հնարավոր կլինի կրկնապատկել արագությունը և խուսափել հետապնդումից:

Ականջներում սուլում էր սառը քամին, աչքերը արցունքով էին լցվում և սառչում թարթիչների վրա: Անփութորեն թափահարելով թևերը, նողկալի իխիների երամը պիտի նետվեր նավի վրա, բայց վրիպեց ու ետ մնաց: Գուսեր վաղուց արդեն կորցրել էր ուղղությունը: Արյունը խփում էր քունքին, սառցային մտրակները ծեծում էին դատարկ օդը: Այն ժամանակ Գուսեր ամբողջ թափով ցած իջավ: Հետապնդող նավը ետ մնաց ու ծածկվեց հորիզոնի ետևում:

Այժմ ներքևում, որքան աչքը կտրում էր, տարածված էր պղնձակարմիր անապատը: Շուրջը ո՛չ մի ծառ, ո՛չ մի կյանք: Միայն նավի ստվերն էր թռչում տափակ բլուրների, ավազի ալիքների և ապակու նման փայլվիլուն, ճաքճքված գետնի վրայով: Տեղ-տեղ բլուրների վրա խղճուկ ստվեր էին գցել տների ավերակները: Ամենուրեք այդ անապատը ակոսում էին ցամաքած ջրանցքները:

Արևը թեքվեց դեպի ավազուտների հարթ եզրը, սփռելով վերջալույսի՝ պղնձագույն ու թախծալի շողերը, բայց Գուսեր անընդհատ տեսնում էր ավազե ալիքներ, բլուրներ, մեռնող Տումայի մոխրածածկ ավերակներ:

Գիշերն արագ իջավ: Գուսեր վայրէջք կատարեց ավազե հարթության վրա: Ցած թռավ նավից, մի կողմ քաշեց Լուսի երեսին գցած սավանը, բարձրացրեց կոպերը, ականջը դրեց սրտին: Լուսը նստած էր ոչ այն է՝ մեռած, ոչ այն է՝ կենդանի: Նրա ճկույթին Գուսեր մի օղակ նկատեց և շղթայիկով կախված մի բաց սրվակ:

— Է՛ խ, անապատ,— ասաց Գուսեր, հեռանալով նավից:

Սառցենման աստղերը փայփլում էին անհունորեն բարձր ու մթին երկնքում: Նրանց աղոտ լույսի տակ ավազը գորշ էր թվում: Այնպես խաղաղ էր, որ լսվում էր խոր ոտնատեղերում լցվող ավազի խշշոցը... Ծարավը տանջում էր: Սկսեց թախծել:— Է՛ խ, անապատ:— Գուսեր շուռ եկավ դեպի նավը և նստեց դեկի մոտ: Ո՞ւր թռչել: Վայրի ու անծանոթ էր աստղածիրը:

Գուսեր միացրեց շարժիչը, բայց պտուտակը ծուլորեն պտտվելով կանգ առավ: Շարժիչը չէր աշխատում, պայթուցիկ փոշու տուփը դատարկ էր:

— Դե լավ,— քրթմնջաց Գուսեր: Նորից իջավ նավից և մահակը մեջքի կողմից մտցրեց Լուսի գոտու մեջ,— գնա՛նք, Մստիսլավ Մերգենիչ,— նրան իր ուսին առավ և քայլեց՝ մինչև կոճերը խրվելով ավազի մեջ: Երկար քայլեց: Հասավ մի բլրի, Լուսին դրեց ինչ-որ խարխլված սանդուղքի վրա, աստղերի լույսի տակ նայեց բլրի միայնակ սյանը և պառկեց երեսնիվար: Մահացու հոգնածությունը հեղեղի նման աղմկում էր արյան մեջ:

Նա չիմացավ, արդյոք երկա՞ր էր այդպես անշարժ մնացել պառկած: Ավազը սկսեց սառել, սառչում էր և արյունը: Այնժամ Գուսեր նստեց և թախիծով բարձրացրեց գլուխը: Անապատի վրա, ոչ շատ բարձրում կանգնած էր կարմրավուն, մոայլ մի աստղ: Այն մեծ թռչունի աչքի էր նմանվում: Գուսեր նայեց աստղին ու բաց արեց բերանը:

— Երկի՛ր:— Գրկեց Լուսին ու վազեց աստղի կողմը: Գուսեն այժմ արդեն հասկացավ, թե որ կողմում է գտնվում ապարատը:

Շնչասպառ, քրտնքի մեջ կորած, մոլեգին ճիչեր արձակելով ու հսկայական ոստյուններ անելով, Գուսեր բախվում էր քարերին ու վազում, վազում: Իսկ նրա դիմաց լողում էր անապատի մութ հորիզոնը: Երբեմն նա երեսնիվար պառկում էր պաղ ավազին, որպեսզի գոնե խոնավության գոլորշիով զովացնի չորացած բերանը: Ապա նորից վերցնում էր ընկերոջը և շարունակում առաջ գնալ՝ նայելով Երկրի կարմրավուն ճառագայթներին: Նրա վիթխարի սովերը միայնակ շարժվում էր համաշխարհային գերեզմանոցի միջով:

Երևաց Օլայի սուր մանգաղը: Կես գիշերին դուրս եկավ կլոր Լիխտան, որի լույսը մեղմ էր ու արծաթավուն: Կրկնակի սովեր էին գցել ավազաթմբերը: Այդ երկու արտասովոր լուսիններից մեկը լողում էր դեպի վեր, մյուսը՝ մայրամուտ: Նրանց լույսի մեջ խամրում էր Տայցետյուրը: Հեռվում վեր էին խոյացել Լիզիազիբայի սառցապատ գագաթները:

Անապատը վերջացավ: Լուսաբացը մոտ էր: Գուսեր դուրս եկավ կակտուսի դաշտերը: Ոտքի հարվածով գետնին տապալեց մի բույս և ազահաբար խժոեց՝ մսալի էր, հյութեղ: Աստղերը մարեցին: Մանուշակագույն երկնքում երևացին ամպերի վարդագույն ծայրերը: Եվ ահա Գուսեն սկսեց ականջ դնել. վաղորդյան լռության մեջ պարզորոշ կերպով ասես լսվում էին գլանիկների հարվածներ ու մետաղի միակերպ չիկոց:

Գուսերը իսկույն իմացավ բանն ինչ է. կակտուսի թփուտների վրա ցցվել էին հետապնդող ռազմանավի երեք ցանցապատ կայմերը: Հարվածներն այդտեղից էին գալիս: Մարսեցիները ջախջախում էին նրանց ապարատը:

Գուսերը՝ կակտուսների ետևը ծածկվելով, մոտ վազեց ու միաժամանակ տեսավ թե՛ մարսեցիների նավը, և թե՛ իրենց ապարատի ժանգոտած վիթխարի սապատը: Երկու տասնյակ մարսեցիներ մեծ-մեծ մուրճերով փշրում էին նրա կողերի ձուլակապերը: Երևում էր, որ աշխատանքը նոր էր սկսվել: Գուսերը Լոսին դրեց ավազին և մեջքից քաշեց մահակը:

— Շան լակոտներ, ես ձեր...— ոչ իր ձայնով ճչաց Գուսերը և դուրս թռավ կակտուսների տակից: Մոտ վազեց նավին և ձեռնափայտի հարվածներով փշրեց մետաղե թևը, խփեց կայմերին ու նավեզրին, ասես տակառի էր հարվածում: Նավի միջից զինվորներ դուրս թռան: Նրանք զենքերը ցած գցեցին, սիսեռի պես թափվեցին տախտակամածից ու ցիրուցան փախան: Ապարատը ջարդող զինվորները ցածր ծղրտոցներով սողացին ակոսներով և թաքնվեցին թփուտների մեջ: Ամբողջ դաշտը բուսեապես դատարկվեց. այնքան որ մեծ էր ամենհոգր և անխոցելի Երկրի Որդու սարսափը:

Գուսերը բացեց ապարատի դռնակը, քարշ տվեց Լոսին, և Երկրի երկու Որդիները ծածկվեցին ձվաձև ապարատի ներսում ու շրխկացնելով փակեցին կափարիչը: Այնժամ կակտուսների ետևում թաքնված մարսեցիները տեսան անսովոր ու ցնցող մի տեսարան:

Տան մեծության, ժանգոտված ու վիթխարի ձուն հոնդաց: Նրանից բարձրացան բոցի և ծխի դարչնագույն ամպեր: Ահավոր հարվածների տակ ցնցվում էր Տուման: Վիթխարի ձուն մոնչոցով ու որոտալից թնդուններով վեր թռավ կակտուսի դաշտի վրա: Ապարատը մի պահ կախված մնաց փոշու ամպերի մեջ, ապա ասուպի պես թռավ դեպի երկինք՝ դաժան մագացիտլներին տանելով իրենց հայրենիքը:

ԱՆԷՈՒԹՅՈՒՆ

— Հը՛, Մստիսլավ Սերգենիչ, կենդանի՞ եք:

Բերանն այրվում էր: Հեղուկ կրակն անցել էր ողջ մարմնով, երակներով ու ոսկորներով: Լոսը բաց արեց աչքերը: Նրանց գլխավերևում, բոլորովին ցածր, վառվում էր մի փոշոտ աստղիկ: Երկինքը տարօրինակ էր. դեղին, շերտ-շերտ, արկղի նման: Ինչ-որ բան էր թխկթխկում, թխկթխկում էր հավասարաչափ հարվածներով. դողդողում էր մշուշված աստղիկը:

— Ժամը քանի՞ սն է:

— Ցավոք սրտի, ժամացույցը կանգնել է,— եղավ պաստասխանը:

— Մենք վաղո՞ւց ենք թռչում:

— Վաղուց, Մստիսլավ Սերգենիչ:

— Իսկ ո՞ւր:

— Սատանան գիտի, գլուխ չեմ հանում. խավար ու աստղեր... Ընկել ենք համաշխարհային տարածությունները:

Լոսը նորից փակեց աչքերը, ճիգ անելով թափանցել հիշողության խորքը և որևէ բան վերհիշել, բայց ապարդյուն, ոչինչ չհիշեց և կրկին սուզվեց անթափանց քնի մեջ:

Գուսերը լավ ծածկեց նրան և վերադարձավ դիտափողի մոտ: Մարսը հիմա թեյի ափսեից փոքր էր երևում: Լուսնի բծերի նման նրա վրա նշմարվում էին ցամաքած ծովերի հատակները, ամայի անապատները: Տումայի ավազապատ սկավառակը գնալով ավելի էր փոքրանում, և ապարատն ավելի էր հեռանում նրանից՝ սավառնելով զարհուրելի խավարի միջով: Երբեմն աչք էին ծակում աստղերի ճառագայթները: Բայց Գուսերը ինչքան էլ նայում էր՝ ոչ մի տեղ կարմիր աստղ չէր երևում:

Գուսերը հորանջում էր, ատամները չխկչխկացնում, և դա փարատում էր տիեզերական դատարկ տարածության ձանձրույթը: Մտուգեց ջրի, ուտելիքի, թթվածնի պաշարները, փաթաթվեց վերմակի մեջ և պառկեց Լոսի կողքին՝ ցնցվող հատակի վրա:

Անցավ բավական երկար ժամանակ: Գուսնն արթնացավ քաղցից: Լոսը պառկած էր բաց աչքերով: Նրա դեմքը կնճռոտվել էր, ծերացել, այտերը փոս էին ընկել: Նա ցածր ձայնով հարցրեց.

— Որտե՞ղ ենք մենք հիմա:

— Էլի նույն տեղում, Մստիսլավ Սերգենիչ, տարածության մեջ:

— Ալեքսեյ Իվանովիչ, մենք Մարսում եղե՞լ ենք:

— Մստիսլավ Սերգենիչ, ձեր հիշողությունը երևի բոլորովին կորել է:

— Այո, ինձ հետ ինչ-որ բան է պատահել... հիշում եմ, և հիշողություններս, չգիտես ինչու, ընդհատվում են: Չեմ կարողանում հիշել, թե իսկապես ինչ է եղել. ամեն ինչ ասես երազ լինի: Խմելու բան տվեք...

Լոսը փակեց աչքերը և քիչ անց՝ դողացող ձայնով հարցրեց.

— Նա նույնպե՞ս երազ է:

— Ո՞վ:

Լոսը չպատասխանեց: Նորից փակեց աչքերը և կախեց գլուխը:

Գուսերը բոլոր դիտանցքներից նայեց երկինքը. մութ էր, խավար: Վերմակը քաշեց ուսերին, նստեց ու կուչ եկավ: Ցանկություն չկար ո՛չ մտածելու, ո՛չ հիշելու, ո՛չ սպասելու: Եվ ինչի՞ համար: Ապարատի թխկթխկոցն ու ցնցումը քուն էր բերում նրա աչքերին: Գլխապտույտ արագությամբ երկաթյա ձուն սլանում էր անհուն դատարկության մեջ:

Անցավ ինչ-որ անչափ երկար, ոչ երկրային ժամանակ: Գուսերը՝ նստած տեղում կուչ եկած, անզգա ննջում էր: Լոսը քնած էր: Հավերժի գովությունը անտեսանելի փոշի էր դնում նրանց սրտին, գիտակցությանը:

Լավեց ականջ ծակող ճիչ: Գուսերը վեր թռավ, չռելով աչքերը: Ճչացողը Լոսն էր, որը կանգնած էր այս ու այն կողմ նետված վերմակների մեջ, վիրակապը սահել էր երեսի վրա:

— Աելիտան կենդանի՞ է:

Նա բարձրացրեց ոսկրոտ ձեռքերը, և նետվեց դեպի կաշվեծածկ պատը և եղունգներով չանգռելով պատռեց կաշին:

— Նա կենդանի՛ է, թողե՛ք ինձ... խեղդվո՛ւմ եմ... Նա՛ էր, նա՛ էր:

Լոսը երկար ժամանակ խփեց իրեն, ճչաց և թուլացած ընկավ ձեռքերի վրա, Գուսևի մոտ: Եվ կրկին հանդարտվեց ու նիրհեց:

Գուսևը նորից կուչ եկավ վերմակի տակ: Հանգել ու մոխրացել էին ցանկությունները, քարացել էին զգացմունքները: Լսողությունը ընտելացել էր ձվի երկաթե զարկերակին և չէր որսում ոչ մի այլ ձայն: Լոսը քնի մեջ մոթմոթում էր, հառաչում, երբեմն նրա դեմքը շողում էր երջանկությամբ:

Գուսևը նայում էր քնածին ու մտածում:

«Քեզ լավ ես զգում երագում, սիրելի մարդ: Եվ պետք էլ չէ, մի արթնանա, քնի՛ր, քնի՛ր... Թե զարթնես, պիտի նստես այսպես, կուչ գաս վերմակի տակ, դողաս, ինչպես սառը քոթուկի վրա կծկված կաշաղակը... Ախ, գիշե՛ր, գիշե՛ր, վերջին վախճան...»

Նա նույնիսկ չէր ուզում փակել աչքերը. այդպես էլ նստեց, աչքերը հառած ինչ-որ մի փայլվուն մեխի... վրա հասավ անասելի մի անտարբերություն, որին հաջորդեց անէությունը...

Այսպես չափազանց շատ ժամանակ անցավ:

Լսվեցին տարօրինակ շշուկներ, չիկոցներ և ապարատի արտաքին կեղևին բախվող ինչ-որ մարմինների ձայներ:

Գուսևը բացեց աչքերը: Գիտակցությունը տեղն էր եկել. սկսեց ականջ դնել: Թվում էր, թե ապարատը առաջ է շարժվում քարակույտերի և խճերի միջով: Ինչ-որ բան էր թափվում ու սահում պատն ի վար, աղմկում, խշշում: Ահա խփեց մյուս կողմից. ապարատը ցնցվեց: Գուսևը արթնացրեց Լոսին: Նրանք սողացին դեպի դիտավորողը, և երկուսն էլ իսկույն ևեթ ճչացին:

Շուրջը, խավարի մեջ, սփռված էին լուսավոր դաշտեր ու ավմաստի նման փայլվուն բեկորներ: Քարերը, գուղձերն ու բյուրեղները շողշողում էին աչք ծակող շողերով: Այդ ավմաստի դաշտերից վիթխարի հեռավորության վրա սև գիշերի մեջ կախված էր ծփացող արևը:

— Հավանաբար մենք մոտենում ենք գիսաստղի գլխին,— շշուկով ասաց Լոսը:— Միացրեք ռեոստատները: Պետք է դուրս գալ այս դաշտերից, այլապես՝ գիսաստղը մեզ կքաշի դեպի արևը:

Գուսևը մոտեցավ վերին դիտանցքին: Լոսը մնաց ռեոստատների մոտ: Ապարատի կողերին տեղացող հարվածները գնալով հաճախ էին կրկնվում, ուժեղանում: Գուսևը վերևից կանչեց.

— Ավելի թեթև, աջ կողմում խոշոր զանգված կա... Լրիվընթացքով, ամբողջ թափով... Լեռ, լեռ է գալիս... Անցանք... Ուժեղացրեք, ուղեժացրեք, Մատիսլավ Սերգենիչ...

ԵՐԿԻՐԸ

Ավմաստե դաշտերը տարածության մեջ մոլորված գիսաստղի թափառումների հետքերն էին: Նրա ձգողության մեջ ընկած ապարատը երկար ժամանակ սլանում էր երկնային քարերի միջով: Ապարատի արագությունը անընդհատ մեծանում էր, գործում էին մաթեմատիկայի բացարձակ

օրենքները. ձվի թռիչքի և ասուպների ուղղությունը հետզհետե փոփոխվում էր, կազմելով անընդհատ մեծացող մի բույթ անկյուն: Ոսկեգոծ մշուշը, անծանոթ գիսաստղի գլուխն ու թողած հետքը և ասուպների հեղեղները թռչում էին հիպերբոլայի անհույս կորագծով, որպեսզի շրջանցելով արևը առհավետ չքանան տիեզերքում: Ապարատի թռիչքի կորագիծը ավելի ու ավելի մոտենում էր էլիպսային կորագծին: Երկիր վերադառնալու համարյա անիրականանալի հույսը կյանքի կոչեց Լոսին ու Գուսևին: Այժմ, չկտրվելով դիտանցքներից, նրանք նայում էին երկնքին: Արևը ապարատի մի կողմը ուժեղ տաքացրել էր. հարկ եղավ շորերը հանել:

Ալմաստե դաշտերը մնացին շատ ներքևում: Նրանք նմանվեցին նախ կայծերի, ապա դարձան ճերմակավուն մշուշ ու չքացան: Եվ ահա հեռու հեռվում հայտնվեց ծիածանաձև օղակներով շողշողացող, արբանյակներով շրջապատված Մատուրնը:

Գիսաստղի ձգողականության ոլորտից ապարատը վերադառնում էր արևային համակարգությունը, ուր նրան շարտեցին Մարսի կենտրոնախույս ուժերը:

Հանկարծ մի լուսավոր ծիր կտրեց խավարը, բայց շուտով դա էլ գունատվելով մարեց: Դրանք աստերոիդներ էին, այսինքն՝ փոքրիկ մոլորակներ, որ անհամար բազմությամբ պտտվում էին արևի շուրջը: Դրանց ձգողության ուժն ավելի ծռեց ապարատի շեղ թռիչքը: Վերջապես վերևի մի դիտանցքից Լոսը տեսավ տարօրինակ, կուրացուցիչ մի նեղ մահիկ. դա Վեներան էր: Համարյա հենց նույն պահին Գուսևը, որնայում էր մյուս դիտանցքից, սարսափելի փնչացրեց և քրտանաթաթախ ու կարմրած շուռ եկավ դեպի Լոսը.

— Նա է, աստված վկա, նա է...

Մն խավարում ջերմ կերպով շողշողում էր կապտաարծաթավուն մի գունդ: Դրա կողքին ավելի պայծառ լույս էր արձակում հաղարջի կորիզի մեծության մի գնդիկ: Ապարատը մի քիչ հեռվից անցավ նրա կողքով: Հենց այդ ժամանակ էլ Լոսը որոշեց մի վտանգավոր բան կատարել՝ շուռ տալ ապարատի բուկը, որպեսզի պայթյունների առանցքը շեղի թռիչքի հետագծից: Դա հաջողվեց: Ուղղությունն սկսեց փոխվել: Ջերմ գնդիկը հետզհետե անցնում էր զենիթ:

Թռչում, անցնում էր ժամանակի տարածությունը: Լոսն ու Գուսևը մերթ կաչում էին դիտափողերին, մերթ թավալվում ցաքուցրիվ թափված մորթիների ու վերմակների մեջ: Մպառվում էին վերջին ուժերը: Ծարավը տանջում էր նրանց, իսկ ջուրը վաղուց էր վերջացել:

Եվ ահա գրեթե ինքնամոռացության մեջ Լոսը տեսավ, որ մորթիները, վերմակներն ու պարկերը սողում են պատերի վրայով: Օդում կախվել էր Գուսևի կիսամերկ մարմինը: Այս բոլորը գառանցանքի էր նման: Պարզվեց, որ Գուսևը բերանքսիվայր պառկած է դիտանցքի մոտ: Ահա նա մոթմոթալով տեղից ելավ, բռնեց կուրծքը, ցնցեց գանգրահեր գլուխը: Դեմքը ողողվեց արցունքով, բեղերը կախ ընկան:

— Հարագատս, հարագատս, հարագատս...

Գիտակցության մրուրի միջից Լոսը, այնուամենայնիվ, հասկացավ, որ ապարատը թեքվել է և բկով առաջ է թռչում դեպի Երկիր: Նա սողաց դեպի ռեոստատները և պտտեց դրանք. ապարատը ցնցվեց ու հռնդաց: Լոսը թեքվեց դիտանցքին:

Խավարի մեջ կախվել էր արևով ողողված մի վիթխարի ջրագունդ: Օվկիանոսները կապույտ էին երևում, կղզիները՝ կանաչավուն: Ահա ամպերը ծածկեցին ինչ-որ մի մայր ցամաք: Ջրագունդը դանդաղ պտտվում էր: Արցունքները խանգարում էին նայել: Հոգին սիրուց լալով ընդառաջ էր

թոշում դեպի խոնավ ու կապտավուն լույսի սյունը: Մարդկության հայրենի՛ք... Կյանքի ծննդավա՛յր... Աշխարհի սի՛րտ...

Երկրագունդը ծածկել էր երկնքի կեսը: Լուսը ռեոստատները դարձրեց մինչև վերջ: Բայց և այնպես թռիչքը մահացու էր: Ապարատի արտաքին կեղևը շիկացել էր, ասես վառվում էր ռետինե պատյանը, ծխում էր կաշվե ծածկոցը: Վերջին ճիգերով Գուսերը շուտ տվեց դռնակի կափարիչը: Անցքից ոռնոցով ներս հոսեց սառը քամին: Երկիրը գրկաբաց ընդունում էր իր մոլորյալ գավակներին:

Հարվածը ուժգին էր: Եզրակարերը տրաքվեցին, և ապարատը բկով խորը թաղվեց խոտառատ բարձունքի մեջ:

Կեսօր էր, կիրակի, հունիսի երեքը: Անկման վայրից մեծ հեռավորության վրա, Միչիգան լճում նավակներով զբոսնողները, ռեստորանների ու սրճարանների բաց պատշգամբներում նստածները, թենիս, գոլֆ, ֆուտբոլ խաղացողները, անամպ երկինքը թղթե օդապարիկներ բաց թողնողները, բոլո՛րը, բոլո՛րը, որոնք կիրակի օրը դուրս էին եկել վայելելու կանաչ ափերի գեղեցկությունն ու հունիսյան տերևների խշշոցը, հինգ րոպե շարունակ լսում էին տարօրինակ մի ոռնոց:

Մարդիկ, որ հիշում էին համաշխարհային պատերազմի ժամանակները, երկնքին նայելով ասում էին, որ այդպես սովորաբար ոռնում էին ծանր հրանոթների արկերը: Քիչ հետո շատերին հաջողվեց տեսնել արագորեն գետնին իջնող ձվաձև մի ստվեր:

Մեկ ժամ էլ չէր անցել, երբ հսկայական բազմություն հավաքվեց ապարատի անկման վայրում: Բոլոր կողմերից վազելով գալիս էին հետաքրքրասերները, գալիս էին ցանկապատերի վրայից թռչելով, պանում էին ավտոմեքենաներով, կապուտակ լճի վրա սահող մակույկներով: Ժանգի կեղևով պատած, ծոմոված ու ջարդուխուրդ եղած ձվաձև ապարատը թեք դիրքով ընկել էր բլրակի վրա: Մեկը մյուսից անհերթեթ բազմաթիվ ենթադրություններ եղան: Բայց ամբոխի մեջ հուզումն սկսվեց հատկապես այն ժամանակ, երբ կարդացին դռնակի կիսաբաց կափարիչի վրա դուրսով փորված մակագրությունը «ՌՄՖՍՀ: Թոել է Պետրոգրադից 192... թվականի օգոստոսի 18-ին»: Դա առավել ևս նրանով էր զարմանալի, որ այդ օրը հունիսի երեքն էր, հազար ինը հարյուր... մի խոսքով, ապարատի վրա կատարված նշումը եղել էր երեք ու կես տարի առաջ:

Իսկ երբ խորհրդավոր ապարատի ներսից լսվեցին թույլ հեծեծանքներ, ամբոխը սարսափահար ետ քաշվեց և հանդարտվեց: Հայտնվեց ոստիկանական մի ջոկատ, բժիշկ և տասներկու թղթակիցներ՝ լուսանկարչական ապարատներով: Նրանք բաց արին դռնակը և մեծագույն զգուշությամբ երկաթյա ձվի միջից դուրս քաշեցին երկու կիսամերկ մարդու, մեկը նիհար էր՝ կմախքի նման, ծեր, ճերմակ մազերով, անզգա, իսկ մյուսը՝ ջարդված դեմքով ու կոտրված ձեռքերով, որն անտանելի ցավից աղեկտուր հեծեծում էր: Բազմության միջից լսվեցին կարեկցանքի ճիչեր, կանացի լաց ու կոծ: Երկնային ճանապարհորդներին դրեցին ավտոմեքենայի մեջ և տարան հիվանդանոց:

Երջանկությունից բյուրեղյա ձայնով լուսամուտի տակ երգում էր մի թոշուն: Երգում էր արևի շողի ու կապույտ երկնքի մասին: Լուսը, անշարժ պառկած բարձերի վրա, լսում էր այդ երգը: Արցունքները հոսում էին կնճռոտ դեմքի վրայով: Նա ինչ-որ տեղ արդեն լսել էր այդ բյուրեղյա ձայնը: Բայց որտե՞ղ, ե՞րբ:

Կիսաբաց լուսամուտից, որի վարագույրների վրա խաղում էր առավոտյան թեթև քամին, երևում էր խոտերի վրա շողշողացող կապտավուն ցողը: Խոնավ տերևների սավերները ճոճվում էին վարագույրի վրա: Երգում էր թռչունը: Հեռու անտառի ետևից բարձրանում էր թանձր ու ձերմակ մի ամպ:

Ինչ-որ մեկի սիրտը կարոտում էր այս հողին, այս ամպերին, աղմկոտ տեղատարափին, շողշողուն ցողերին ու կանաչ բլրակների վրա թափառող հսկաներին... Նա վերհիշեց, այդպես մի արևոտ օր թռչունը երգում էր Աելիտայի երագների մասին, բայց ոչ Երկրի վրա... Աելիտա... բայց արդյո՞ք նա եղել է: Թե՞ միայն անուրջ էր: Ո՛չ: Թռչունը բյուրեղյա լեզվով մրմնջում է այն մասին, որ երբևէ աղջամուղջի պես երկնագույն մի կին, թախծոտ ու նիհար դեմքով, գիշերը նստել էր խարույկի մոտ ու երգում էր սիրո հինավուրց երգը:

Ահա թե ինչու էին Լոսի կնճռոտ այտերով արցունքներ հոսում: Թռչունը երգում էր այն մասին, ինչ մնացել էր աստղերից այն կողմ, ինչպես նաև ձերմակահեր, կնճռոտ, տիեզերքը ձեռքած երազկոտ ծերունու մասին:

Քամին ավելի ուժգին էր խփում վարագույրին, որի ներքևի ծայրը մեղմորեն պարում էր. սենյակով մեկ լցվեց մեղրի, հողի ու խոնավության հոտը...

Մի այդպիսի առավոտ հիվանդանոցում հայտնվեց Սքայլսը: Նա ամուր սեղմեց Լոսի ձեռքը. «Շնորհավորում եմ, թանկագին բարեկամ»: Նստեց անկողնու մոտ դրված աթոռին, ծոծրակին իջեցրեց լայնեզր գլխարկը:

— Ձեզ խիստ խեղճացրել է այս ճամփորդությունը, ծերուկ,— ասաց նա:— Հենց նոր եղա Գուսևի մոտ. ա՛յ թե քաջն է նա, ձեռքը գիպսի մեջ է, ծնոտը ջարդված, բայց անվերջ ծիծաղում է. շատ գոհ է, որ վերադարձել է: Ես Պետրոգրադ՝ նրա կնոջը, ուղարկեցի հեռագիր և երեք հազար դոլար: Ձեզ համար էլ հեռագրել եմ իմ թերթին. «Ճամփորդական նոթերի» համար մեծ գումար կստանաք: Բայց դուք պետք է կատարելագործեք ապարատը, դուք վատ վայրէջք եք կատարել: Սատանան տանի. տես է, համարյա չորս տարի է անցել Պետրոգրադի այն խելացնոր գիշերից: Խորհուրդ եմ տալիս ձեզ, ծերուկ, խմել մի բաժակ լավ կոնյակ, դա ձեզ կյանքի կկոչի:

Սքայլսը մրմնջում էր, գվարթ ու հոգատար նայելով զրուցակցին, որի այրված դեմքը անհոգ էր, աչքերը լի էին անհազ հետաքրքրության: Լոսը ձեռքը մեկնեց նրան.

— Ուրախ եմ, որ եկաք, Սքայլս:

ՄԻՐՈ ՁԱՅՆԸ

Ձյան ամպերը լողում էին Ժդանովյան գետափով մեկ, սողում մայթերով, խելագար փաթիլները պտտվում էին օրորվող լապտերների շուրջը, ծեփում շքամուտքերն ու լուսամուտները: Գետի մյուս ափին, զբոսայգում, ոռնում էր մոլեգին բուրբ:

Օձիքը բարձրացրած, դեմից փչող քամուց կուչ եկած, գետափով անցնում էր Լոսը: Տաք վզնոցը ծածանվում էր նրա մեջքին, ոտքերը սայթաքում էին, ձյունը կտրում էր դեմքը: Մովորական ժամին նա գործարանից վերադառնում էր տուն, իր միայնակ բնակարանը: Գետափի բնակիչները վարժվել էին նրա լայնեզր գլխարկին, վզնոցին, որ ծածկում էր դեմքի ներքնամասը, կորացած ուսերին, և նույնիսկ այն բանին, երբ կռանալիս քամին խառնում էր նրա սպիտակ մազերը: Ոչ ոքի այլևս չէր

զարմացնում նրա աչքերի տարօրինակ նայվածքը, աչքեր, որ մի ժամանակ տեսել էին այն, ինչ ոչ ոք դեռևս չի տեսել:

Այլ ժամանակներում ջահել բանաստեղծները անպայման կոզկտրվեին նրա անհեթեթ կերպարանքով, ձյան ամպերի մեջ ծածանվող նրա վզնոցով: Բայց հիմա ժամանակներն այլ էին. բանաստեղծներին հրապուրում էին ոչ թե բուքը, ոչ թե աստղերը, ոչ թե անդրաստեղյան երկրները, այլ ամբողջ երկրով մեկ լսվող մուրճերի զնգոցը, սղոցների խզոցը, մանգաղների խշշոցը, գերանդիների սուլոցը, երկրային ուրախ երգերը:

Կես տարի էր անցել այն օրից, ինչ Լոսը Երկիր էր վերադարձել: Անցավ այն հետաքրքրությունը, որով բռնվել էր ողջ աշխարհը, երբ հայտնվեց առաջին հեռագիրը Մարսից երկու մարդու ժամանման մասին: Լոսն ու Գուսը կերան իրենց հասանելիք կերակուրները հարյուր հիսուն ճաշկերույթների, ընթրիքների և գիտական ժողովների ժամանակ: Գուսը Պետրոգրադից կանչեց Մաշային, զարդարեց տիկնիկի նման, տվեց մի քանի հարյուր ինտերվյու, մոտոցիկլետ ձեռք բերեց, սկսեց կլոր ակնոց դնել: Կես տարի շրջեց Ամերիկայում ու Եվրոպայում, պատմեց մարսեցիների հետ իրենց ունեցած կռիվների մասին, սարդերի և գիսաստղի մասին, այն մասին, թե ինչպես ինքն ու Լոսը քիչ էր մնացել թոչեին դեպի Մեծ Արջը: Վերադառնալով Սովետական Ռուսաստան, Գուսը հիմնադրեց «Մարս մոլորակի վրա ապրող աշխատավորության մնացորդներին փրկելու նպատակով մարտական ջոկատների տեղափոխության ընկերություն»:

Պետրոգրադի մեխանիկական գործարաններից մեկում Լոսը կառուցում էր մարսյան տիպի ունիվերսալ շարժիչ: Երեկոյան ժամը վեցին նա սովորաբար տուն էր վերադառնում: Մենակ էր ընթրում: Քնելուց առաջ բաց էր անում գիրքը. բանաստեղծների տողերը մանկական թոթովանք էին թվում, իսկ վիպասանների հնարքները՝ մանկական շաղակրատանք:

Հանգցնելով լույսը, նա երկար պառկում էր, նայում խավարին: Հոսո՛ւմ, հոսում էին նրա մենավոր խոհերը:

Այդ օրը, սովորական ժամին, Լոսը անցնում էր գետափով: Ջյան ամպերը պատվելով վեր էին բարձրանում և կորչում ոռնացող բքի մեջ: Ծխում էին քիվերն ու կտուրները: Ճոճվում էին լապտերները: Շունչ էր կտրվում:

Լոսը կանգ առավ ու բարձրացրեց գլուխը: Քամին ցրեց մրրկաբեր ամպերը: Անհատակ, սև երկնքում մի աստղ էր առկայծում:

Լոսը անիմաստ հայացքով նայեց նրան: Այդ աստղի ցուլը թափանցեց նրա սիրտը... «Տումա, Տումա, տխրության աստղ...» Ամպերի լողացող ծվենները նորից փակեցին երկնի անհունը, ծածկեցին աստղը: Այդ կարճատև ակնթարթում Լոսի հիշողության մեջ տսկալի հստակությամբ հառնեց մի տեսիլք, որ մինչ այդ միշտ էլ խուսափում էր նրանից...

Երազի միջով ականջին հասավ մեղունների գայրացկոտ բզզոցի նման մի աղմուկ: Լսվեցին կտրուկ հարվածներ, բախյուն: Քնած Աելիտան ցնցվեց, հառաչեց և զարթնելով, դողդողաց: Լոսը նրան չէր տեսնում քարայրի մթության մեջ, միայն գգում էր, թե ինչպես է սրոփում նրա սիրտը: Դռան բախյունը կրկնվեց: Դրսից հնչեց Տուսկուբի ձայնը. «Բռնեցե՛ք դրանց»: Լոսը գրկեց Աելիտայի ուսերը: Աղջիկը հագիվ լսելի ձայնով ասաց.

— Իմ ամուսի՛ն, Երկրի Որդի, մնաս բարո՛վ:

Նրա մատները արագ սահեցին Լոսի դեմքով: Այնժամ Լոսը շոշափելով գտավ նրա ձեռքը և վերցրեց թույնի սրվակը: Աեղիտան արագ-արագ մի շնչով, մրմնջաց նրա ականջին:

— Ինձ վրա արգելք կա դրված, ես նվիրված եմ Մագր թագուհուն: Հնավանդ սովորության համաձայն, Մագրի սեղ Օրենքով, սուրբ պատվիրանը խախտող կույսին նետում են լաբիրինթոս, հորը: Դու տեսել ես այն... Բայց ես չկարողացա ընդդիմանալ Երկրի Որդու սիրուն: Ես երջանիկ եմ: Շնորհակալ եմ քեզնից կյանքիս համար: Դու ինձ վերադարձրիր Խառյի հազարամյակը: Շնորհակալ եմ քեզնից, իմ ամուսին...

Աեղիտան համբուրեց նրան, և Լոսը աղջկա շուրթերի վրա զգաց թույնի դառը հոտը: Այնժամ նա խմեց մուգ հեղուկի մնացորդը, որը դեռ բավական շատ էր սրվակի մեջ: Աեղիտանհագիվ հասցրեց շոշափել նրան: Դռանն իջնող հարվածները Լոսին ստիպեցին բարձրանալ, բայց գիտակցությունը կորչում էր, ձեռքերն ու ոտքերը չէին հնազանդվում: Նա վերադարձավ անկողնու մոտ, ընկավ Աեղիտայի մարմնի վրա ու գրկեց: Նա տեղից չշարժվեց, երբ քարայր մտան մարսեցիները: Նրանք Լոսին հեռացրին կնոջից, ծածկեցին Աեղիտային ու տարան: Վերջին ճիգով Լոսը կախվեց Աեղիտայի սև թիկնոցի ծայրից, բայց կրակոցների բռնկումները և կրծքին տեղացող բույթ հարվածները ետ շարտեցին նրան դեպի քարայրի ոսկե դռնակը...

Հաղթահարելով քամին, Լոսը վազեց գետափով: Նորից կանգ առավ, պտտվեց ձյան ամպերի մեջ և, ինչպես այն ժամանակ՝ տիեզերական խավարում, կանչեց.

— Կենդանի՛ է, կենդանի՛ է... Աեղիտա՛, Աեղիտա՛...

Քամին կատաղի թափով խլեց Երկրի վրա առաջին անգամ արտասանված այդ անունը և շաղ տվեց ձյան թռչող փաթիլների մեջ: Լոսը ծնոտը ներս քաշեց վզնոցի տակ, ձեռքը տարավ գրպանի խորքը, օրորվելով, դանդաղ մոտեցավ տանը:

Շքամուտքի մոտ ավտոմոբիլ կար կանգնած: Մպիտակ ճանճերը պտտվում էին մեքենայի լապտերների ծխաայտների մեջ: Թավամազ մուշտակով մի մարդ սառած ոտքերով թռչկոտում էր մայթի վրա:

— Ես եկել եմ ձեզ տանելու, Մստիսլավ Սերգենիչ,— կանչեց նա զվարթաձայն,— նստեք մեքենան՝ գնանք:

Դա Գուսնն էր: Նա անմիջապես բացատրեց. այսօր երեկոյան ժամը յոթին ինչպես և այս ողջ շաբաթվա ընթացքում ռադիոհեռախոսային կայանն սպասում է արտակարգ ուժեղ ազդանշանների ինչ-որ հաղորդում: Նրանց ծածկագիրը անհասկանալի է: Ամբողջ շաբաթը աշխարհի բոլոր մասերի թերթերը զբաղված են այդ ազդանշանները մեկնաբանելու գործով. ենթադրվում է, որ դրանք Մարսից են գալիս: Ռադիոկայանի վարիչը Լոսին հրավիրում է այսօր երեկոյան ընդունելու խորհրդավոր ալիքները:

Լոսն անխոս թռավ ավտոմոբիլի մեջ: Ճերմակ փաթիլները կատաղորեն պարում էին կոնաձև ընկած լույսերի մեջ: Ձյունախառնքամին թափով բախվում էր դեմքներին: Նևայի ձյունե անապատի վրա բոցկլտում էր քաղաքի մանուշակագույն հրացուլքը, գետեզրի երկայնքով շարված լապտերների փայլը. կրակնե՛ր, կրակնե՛ր...

Հեռվից գալիս էր ինչ-որ տեղում սառույցներ ջարդող սառցահատի շչակի ձայնը:

Կարմիր Արշալույսի փողոցի ծայրում, ձյունոտ բացատում, սուլող ծառերի տակ, կլոր տանիքով մի տնակի մոտ ավտոմոբիլը կանգ առավ: Ոռնում էին ճաղապատ, ամայի աշտարակներն ու ձյան ամպերի մեջ սուզված մետաղալարի ցանցերը: Լոսը բացեց դռնակը, որ բուքը ծածկել էր ձյունով, ներս մտավ տաք տնակը, դեն նետեց վզնոցն ու լայնեզր գլխարկը: Կարմրաթուշ հաստիկ մի տղամարդ սկսեց ինչ-որ բան բացատրել նրան, իր տաք ու փափիկ ավիում պահելով ցրտից կարմրած Լոսի ձեռքը: Ժամացույցի սլաքը մոտենում էր յոթին:

Լոսը նստեց ընդունիչ ապարատի մոտ և հագավ ականջակալները: Ժամացույցի սլաքը սողում էր: Օ՛, ժամանակ, սրտի անհամբեր զարկէ՛ր, տիեզերքի սառցե տարածություն՝ ւն...

Մեղմ շշուռ լավեց նրա ականջներում: Լոսն իսկույն փակեց աչքերը: Նորից կրկնվեց հեռավոր, տագնապալի ու հանդարտ շշուռունը: Կրկնվեց ինչ-որ տարօրինակ բառ: Լոսը լսողությունը լարեց: Փայլակի պես նրա սիրտը թափանցեց հեռավոր մի ձայն, որը տխուր ու ոչ-երկրային ձայնով կրկնում էր.

— Ո՛ւր ես, ո՛ւր ես, ո՛ւր ես, Երկրի Որդի...

Ձայնը լռեց: Լոսը նայում էր սպիտակած, չռված աչքերով... Աելիտայի ձայնը, սիրո, հավերժության ու վշտի ձայնը թռչում էր ողջ տիեզերքով մեկ, կանչելով, խնդրելով, աղերսելով՝ ո՛ւր ես, ո՛ւր ես, իմ սե՛ր...